


ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍՆՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

851.581

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՉԱՓԱԾՈ

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԱՌԱԿՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

851.581
A108458

ՀՏԴ 891.981-8 Իսահակյան
ԳՄԴ 84 Հ
Ի 755

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ
Ա.Վ.Իսահակյան (գլխավոր խմբագիր),
Վ.Գ. Դևրիկյան, Վ.Ա. Կիրակոսյան, Ա.Վ.Մուշեղյան,
Ս.Պ. Մուրադյան, Ս.Ն.Սարիմյան,
Ա.Մ.Վարդանյան (գլխավոր խմբագրի տեղակալ)

Բնագիրը հրատարակության պատրաստեց
Ավիկ Իսահակյանը

Հատորը կազմեցին Ավիկ Իսահակյանը և Անահիտ Վարդանյանը,
բնագրային տարբերությունները և տարբերակները պատրաստեց
Անահիտ Վարդանյանը, ծանոթագրությունները գրեցին Ավիկ
Իսահակյանը և Անահիտ Վարդանյանը

Հատորի խմբագիր՝ Վարդան Դևրիկյան

Իսահակյան Ավետիք

Ի 755 Հատոր երրորդ /Ավ.Իսահակյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գի-
տություն» հրատ., 2014, 340 էջ:

ՀՏԴ 891.981-8 Իսահակյան
ԳՄԴ 84 Հ

ISBN 978-5-8080-1119-9

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2014

© ՀՀ ԳԱԱ Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2014

© ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔ, 2014



ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԲԵԹՂԵՀԵՄԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ

*Հեռների լանջում, քարայրի խորքում
Շողում է կրակ. – երկնային կյանքի,
Մի նորոգ կյանքի շողում է կրակ
Այնտեղ հավիտյան լույսը չի հանգչում,*

5 *Հուլիս չի խաբվում:*

Նե՛րս մտիր այրը,- հովիվ ու գառներ,
Գառների մսուր,- անշուք խանձարուր.
Ահա Մանկիկը անմեղ ու անբիծ
Ժպտում է պայծառ - սիր է մեզ շնչում.
10 Ահա լալիս է, այդ նրա սիրտն է,
Որ կյանքի շնչից, ծաղիկ օրերից
Մարդկանց վշտերի համար տանջվում,
Մարդկանց մեղքերին ներումն աղերսում.

15 Անկեղծ զղջումով, մաքուր արցունքով
 Խոնարհվի՛ր, ընկե՛ր, Համբուրի՛ր Նրան.
 Նա քեզ կներե, Նա քեզ Հույս կուտ.
 Եվ դու զորացած կրի՛ր քո խաչը, -
 Է՛լ շղթա չկա,
 Է՛լ արյուն չկա:

1893, Հունվարի 5, Թիֆլիս

I

Եվ Բաբելոնի հորձուտ գետերի
Ճոխ ափերի մոտ վշտահար նստած՝
Լուռ լալիս էինք, երբ մեր պանծալի
Սիրոնն հիշում... Եվ կախում էինք
5 Մենք ուռիների դալար ճյուղքերից
Սուրբ կտակները մարգարեների...

II

–«Ինչո՞ւ եք լալիս»,– մեր գերիչները
Ասում էին մեզ,– ինչո՞ւ չեք հնչում
Զքնաղ Սիրոնի անուշ երգերը...»
10 Եվ ի՞նչ – մենք մի՞թե օտար աստղերի
Ցուլցլանքի տակ կարող ենք երգել՝
Վեհ սաղմոսները Տեր Սաբավոթի...

III

–Օհ, Երուսաղեմ,... եթե ուրանամ,
Ես քեզ մոռանամ, թո՛ղ իմ բազուկս
15 Եվ ինձ մոռանա, լեզուս հավիտյան
Թող կպչի քմքիս, եթե միշտ չհիշեմ,
Զփառաբանեմ Քեզ, իմ նազելիս,
Բերկրանքիս աղբյուր, Սուրբ Երուսաղեմ...

- Տե՛ր Վրեժխնդի՛ր, Տե՛ր Իսրայելի,
 20 Հիշի՛ր Եդովմի բիրտ որդիներին,
 Որոնք Սաղեմի դժբախտ օրերի
 Տառապանքներում մոռնում էին, —
 —Վո՛ւհ, տապալեցե՛ք, հիմնիվեր քանդե՛ք,
 Սիոնն ու Մորիան՝ թող փոշում թաղվին...

- 25 Օ՛, թշվառ Դո՛ւստր, գողող Բաբելոն,
 Անհուն երանի, որ ոճիրներիդ
 Արդար հատուցումն պիտի ընդունես.
 Օ՛, երնե՛կ նրան, որ պիտի փութա,
 Որպես հուր-հեղեղ կլանելու քեզ
 30 Եվ մանուկներիդ արյամբ հագնես...

1893, մայիսի 20,
 Ալեքսանդրապոլ

* Մորիա — Երուսաղեմի երկրորդ քարաբլուրը, որի վրա բարձրանում է Սողոմոնի տաճարը:

ԻԳԻԹ ՍԱՐԴԱՐ
(Ձրույց գալոց օրերից)
Ա

- Աչըդ. - Մշուշի պես մեր թշնամին
Ծով ու ցամաք պատել է,
Սարդա՛ր, վե՛ր ել, քու սուր թրին
Ժանգ ու փոշին պատել է:
- 5 Մեր վաթանը սգի մեջ է,
Ջարն է կապել մեր աստղին,
Մեր ու մանուկ բանտի մեջ են,
Լուծ է դրած մեր վզին:
Մշուշի պես մեր թշնամին
- 10 Շեն ու շեմքին հասել է,
Շուտ վե՛ր ելեք, դուռ ու դրվից,
Կռվի օրը հասել է:
Հագար ամոթ՝ ով ձին գտնում,
Թուրը պատին մնում է,
- 15 Ով զովերում, յարի գրկում
Վարդ ու գինով քնում է:

Բ

- Սարի ուսից լույսը շողաց,
Արև դիպավ կա՛ս-կարմիր,
Սարդարն ելավ ասպապ մտած,
- 20 Ձեռքին բայրադ խա՛ս կարմիր:
- Աչըդ.- Մշուշի պես մեր թշնամին
Դուռ ու երդվին հասել է,
Տղա՛, վե՛ր ել, աղջի՛, վե՛ր ել,
Փառքի օրը հասել է:
- 25 էս ի՞նչ օր է, տարի ու դար,

Որ փախնում եք կռվելուց,
Մեր վաթանի սիրու համար
Վախենում եք մեռնելուց...

Սարգար.- Մնա՛ք բարով, հերի՛կ, մերի՛կ,

- 30 Տուն ու օջախ պապերի,
Մնա՛ք բարով, քուրի՛կ, յաբի՛կ,
Ալ վա՛րդ, ալ թո՛ւշ, ալ գինի՛.
Արունս աչքիս կռիվ կերթամ
Դեմ ու դիմաց թշնամուն,
35 Թիկունք տվեք՝ կուրծքս թոշ տամ,
Ջարդեմ, փչրեմ թշնամուն:

Սանամ.- Երթա՛ս բարով, ադի՛ց յար ջան,

- Անճարին չարա էղնիս.
Սուրբ Յոթնանուն քեզ թուր ու թև,
40 Ետ դառնաս, մուրազդ առնիս:

Խալխը.- Երթա՛ս բարով, իգի՛թ Սարգար,
Մեր դարդին դարման անես,
Սուրբ Յոթըվերք վերքիդ մահլամ,
Բարո՛վ գաս, կոսպանդ կապես...

- 45 Սարգարն եռաց, Սարգարն թնդաց,
Ալ ձին հեծավ, չափ տվավ,
Երկինք հանեց թող ու դուման,
Ղոշունի գլուխն անցավ:

9.

- Խորունկ ձորը, կռվի ձորը,
50 Ագռա՛վ, ի՞նչ ես վռագում,

Ա՛խ, Սարդարի լուռ դիակը,
 Ագռա՛վ, ի՞նչ ես քրքրում:
 Դարդլու յարին խաբար տարեք,
 Սև-սև ամպեր ու թռչնակ,
 55 Որ Սարդարը զարկեց-զարկվավ,
 Երկինք թռավ, աստղ դարձավ:

Դ

Ամպերն եկան, սև-սև դիզվան,
 Թռչնակն էլ տխուր երգեց,
 Վա՛յ քեզ, Սանա՛մ, նստել կուլաս,
 60 Յարաբ սիրտդ վկայե՞ց...

Սանամ.- Իմ Սարդարից խաբար չկա,
 Չարքաշ տարիս բոլորեց,
 Սգվոր եմ ես, սև չոր հագիս,
 Սիրտս կուտե ցավ ու ցեց:
 65 Տեղ չեմ մտնում, դադար չունիմ,
 Աչքըս ճամփին՝ ծով կտրավ,
 Գարունն անցավ, վարդը դարձավ...
 Ա՛խ, յարս էլի չդարձավ...

1894, Լայպցիգ

«ԻՐԻՅԱՆԿԱ ԱՂԲՅՈՒՐԸ»
(Շիրակի ավանդավեպ)

«Դի՛ն-տո՛, դա՛ն-տո՛», առավոտու զանգը հնչեց մեղմաձայն,
Տերտերն ելավ, փիլոնն առավ, աղոթելով գնաց ժամ:

Իրիցկինն էլ դուռը բացեց, կով, հավ ու ճիվ դուրս արավ,
Հարեանին, հանդեպին բարև տվավ ու առավ:

- 5 Հացի խմորը հասել էր. արագ հագավ մխնոցը,
Կրակ տվավ թոնրի շենքին, բոցը ելավ, վառ բոցը:
Լույս-խմորից գնդեր շինեց, գնդեր շինեց, գրտնկեց,
Բաթաթն առավ, թոնրի շուրթին աղոթեց ու ծունկ վարկեց:
Բաթաթն առավ, բոցը կպցուց, խփեց թոնրի բարկ պատին,
10 Վարդի գույնը թշերն օծեց, քրտինքն իջավ ճակատին:
Տա՛ք-տա՛ք լավաշ, ծաղիկ-լավաշ հանեց թոնրից ու փռեց,
Նորահացի անուշ հոտը դուռ ու երդիկը բռնեց:

Մեկ էլ, կամա՛ց դուռը ճրճա՛ց, աղքատ մի մարդ կուզեկուզ,
Ցուպը՝ ձեռին, պարկը՝ ուսին, տունը մտավ սուսուսի ուս:

- 15-«Բարաջողում, իրիցկին ջան, աղոթանի լույս դառնաս,
Ճամփորդ մարդ եմ, աղքատ մարդ եմ, օրհնած հացեղ ինձ մաս
տա՛ս»:

-«Գալըդ բարին,- պատասխանեց իրիցկինը հոգատար, -
Նստի՛ր ու կեր, ճամփուդ համար քանի մ՛հատ էլ պաշար տար»:

- Սե սյունի տակ աղքատ մարդը բեռը դրավ ու նստավ,
20 Իրիցկինն էլ քաղցր ձեռքով սալան առաջը դրավ:
Սալան լեցուն շարմաղ լավաշ, անքաշ պանիր ու կանաչ,
Աջ կողքին էլ անուշ ջրով, սառը ջրով լիքը փարջ:
-«Աստված տունըդ միշտ շեն պահե, գլխավորըդ ողջ լինի,
Յոթն ողջով սեղան նստիս, կարոտ մնաս թաց աչքի»:
25 Կերավ, խմեց անցորդ մարդը, օրհնեց հագար օրհնենքով,
Իրիցկինն էլ առատ-առատ պարկը լցրեց պարենով:

իրիցկինը շա՛տ սիրուն էր, թուխ մազերը՝ ծամավոր,
վառ աչքերը՝ աստղոտ գիշեր, թշիկները՝ հուր խնձոր:
Խեղճ աղքատի սիրտը լցվեց անուշ մեղքով, ու ասաց.

30 –«Իրիցկին ջան, աստծու սիրուն, ալ-թշերեդ պա՛գ մի տաս...»:

Իրիցկինը շատ բարկացավ, ապա խղճաց իր մտքում.

–«Աղքատ ախպեր, որ դու էդպես աստծու սերն ես ձգում,
ես ի՞նչ ասեմ, աստծու սիրուն, մի պագիկ ա՛ռ ու գնա,
Մեղքը վիզդդ, դու քո խիղճդդ, դուռ ու դրկից չիմանա»:

35 –«Մեղքը վիզդս, իրիցկին ջան», - ասաց աղքատն ու թռավ,
Գրկեց ամուր, պապակ սրտով կսկոծ-կսկոծ պագ արավ:

Մինու վրա դուռը դարձավ, վա՛յ, տերտերը ներս մտավ,
իրիցկնկա գույնը թռավ, սիրտը վախից թև առավ:

–«Վա՛յ ինձ, աստված, մեղքըս շատ է, ես խաբեցի տերտերին,

40 Գետին, պատուի՛ր, ինձի կո՛ւլ տուր, էլ չտեսնեմ տերտերին»:

Խեղճ տիրուհու հույսը մարեց, չարը նստավ սրտի մեջ,

եվ հույսը՝ մար, սիրտը՝ խավար, վառ թոնրի մեջ գլորվեց:

Մեկ էլ հանկարծ, վառ թոնիրը աստվածային հրաշքով

Աղբյուր դառավ, զով ու վճիտ, պայծառ շողքով ու երգով:

45 Ու սարսափած, ապուշ կտրած՝ դողաց ձայնը տերտերի.

–«Մեղա՛ աստծու, ա՛յ տիրուհի, էդ ո՛ւրտեղ ես, դո՛ւրս արի»:

Եվ հատակից զով աղբյուրի, ջինջ աղբյուրի, մեղմորեն,

Երեսն ելավ իրիցկինը՝ դառած մի ձուկ ոսկեղեն:

Եվ ոսկեղեն ձուկը նայեց՝ դարձ ու զղջում աչեքում,

50 Նայեց սիրով հեգ տերտերին, որ աղոթք էր մրմնջում:

Հանկարծ թրը՛պ, պոչը շարժեց, սուզվեց ձուկը ջրի տակ,

Փրփուր հանեց, տիղմը ելավ, սեցավ աղբյուրն անապակ:

Այն օրվանից իրիցկինը անմեռ, անմահ ձուկ դառավ,

Եվ թոնիրն էլ «Իրիցկնկա աղբյուր» անունը առավ:

1897, Ղազարապատ

ՊԱՆԴՈՒՄՏ ՈՐԴԻՆ

Դարդը՝ սըրտիս, աղքատ ու խեղճ, ցուպը ձեռիս, գլխակոր,
Շա՛տ տարիներ պանդուխտ եղած՝ նորեն դարձա Հայրենիք.
Կյանքի բեռով մեջքս ծըռած, միտքըս չվար ու մոլո՛ր,
Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա նորեն Հայրենիք:

5 Իմ Հայրենի գեղի Հանդում տեսա մանկութ ընկերիս.-
Ա՛խ, ընկեր իմ, կարոտ սրտով նըրա առաջ վագեցի,
Ասի.-« Բարո՛ւմ, անգի՛ն ընկեր, չե՞ս ճանաչում դուն ինձի»:
- Ախր ես չա՛տ փոխվեր էի... չըճանաչեց նա ինձի:

Ցուպը ձեռիս գեղը մտա, անցա յարիս տան ճամփով.
10 Տեսա յարըս վարդը ձեռին՝ մենակ կանգնած դռան մոտ.
Ասի.-«Քուրի՛կ, ազիզ տեսքիդ արժանացա ես բարով...»:
Նա էլ ինձի չըճանաչեց...- աղքատ էի ու փոշոտ...

Դարդը սրտիս Հասա մեր տուն, տեսա ծերուկ, խեղճ մորըս.
Ասի.- «Նանի՛, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր
կընդունեն՞»:
15 Ա՛խ, մերի՛կ ջան... վզովս ընկավ, սըրտին գըրկեց ու լացեց.
«Ա՛խ, բալա՛ ջան, դարիբ բալա՛, էդ դո՛ւն ես...»:

1902, Շուշի

ՄԱՅՐԸ
(Շիրակի ավանդավեպ)

- Անտառներում՝ աշնան թափուր,
Երբ թաց խավարն է իջնում,
Երբ դաշտերում մերկ ու տխուր,
Ցուրտ քամին է շառաչում, –
- 5 Ամեն անգամ ըզգում եմ նոր
Զրույցն այս խեղճ պառավ մոր:
Եվ խորհում եմ՝ թե արդյոք ո՞ր,
Մեզնից մոտիկ կամ հեռուն,
Ո՛ր անտերունջ խեղճին հիմա
- 10 Զարի ձեռքն է հարվածում...
- Զգիտեմ՝ ե՛րբ և ո՛ր շենում
Իրեն որդու, հարսի քով
Մի խեղճ պառավ մայր էր կենում,
Ծանրը ականջ, կույր աչքով:
- 15 Ոտ ու ձեռից ընկած, անճար,
Հաց չըտային, չէր ուզում.
Եվ օրն ամբողջ նրանց համար
Աղոթքներ էր մրմնջում:
- Օ՛ֆ, – ասում էր հարսն ամեն օր, –
- 20 Մերըդ բեռ է իմ վրրա.
Բանրա թողած՝ օրը բոլոր
Փեշն եմ բռնել ես նրրա:
Աչքը՝ անկուշտ, ինչքան որ տամ,
Միշտ անեծքը բերանին,
- 25 Նստել է մեր շնչի վրան,
Տար, կորցրո՛ւ՝ ազատվիմ...

– Ա՛յ կի՛ն, ի՞նչ չար բան կըխոսաս,
Մարդ էլ ծնող մորն էսպես...

Կբարկանա աստված վրաս,
30 Մեղա՛ սատոժու, մեղա՛ քեզ:

Բայց ամեն օր հարսն անողորմ
Ամուսնու սիրտն էր կրծում,
Եվ խստաբար պահանջում էր
Իր չար կամքին գոհացում:

35 Ու մի օր էլ ճըչաց, լացեց,
Պոկեց մազերը գլխից,
Վրա պրծավ, դուռը բացեց,
Թե մորըդ տար իմ տնից.

Թե ոչ՝ հիմի դուրս կթռնի
40 Ու կըձենե աշխարհում,
Թե մարդն իրեն օր չի տալի,
Թե ուրիշին է սիրում:

Թշվառ մարդն էր. ճարը կտրած,
Վերցրեց մորը պառավ,

45 Անգուլթ հարսի աչքի առաջ
Պարկը դրեց, ուսն առավ:

Գլուխը կոր՝ ճամփա ընկավ,
Միաքը՝ մուսյլ ու խոլոր,


Սև ամպերից գիշերն իջավ,

50 Ճամփան՝ մթին ու մոլոր:

Ուշ գիշերին հասավ անտառ,
Խոր ծմակում, ծառի տակ,

Պարկը ձրգեց – մորը անճար
Ձրգեց անտեղ ու մենակ:

55 Աչնան քամին էր հեծկտում,



Գայլն էր տալիս կալանչին.
Ոտքը փոխեց, որ դառնար տուն,
Մոր ձայնն հասավ ականջին.
– Երթաս բարով, աստված քեզ հետ,
60 Ոտքըդ քարի թող չըգա.
Տըղա՛ս, վերցրո՛ւ պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կըգա:

1907, Ալեքսանդրապոլ

ԼԵՅՆԻ ՈՒ ՄԵՋԼՈՒՄ

- Կտրիճ Մեջլում քնավ, երազի մեջ տեսավ Լեյլին:
Տեսավ, սեր տվավ ու սեր առավ:
– Ա՛յ նանե–մերիկ, գլուխս կդնեմ բարձին, կբարձրացնեմ,
Դրախտի Հյուրին երազիս կտեսնեմ:
- 5 Ա՛յ նանե–մերիկ, Հալալ արա ինձի քու ծծի կաթ,
Երթամ՝ աշխարհ ժուռ գամ՝
Գտնեմ Լեյլին:
- Ասավ Մեջլում նանե–մորը. ասպապ Հազավ ու գնաց:
Գնաց, գնաց,
- 10 Բինգյուլի աղբյուրի վրա հոգին վկայեց,
Ու կանգ առավ:
- Կես–գիշերին, մեջ–գիշերին
Քոչվոր եկավ Բինգյուլի սարը:
Քոչվոր եկավ, վրան զարկեց Բինգյուլի սարը:
- 15 Սիրուն Լեյլին քնավ, երազի մեջ տեսավ Մեջլումին,
Տեսավ, սեր տվավ ու սեր առավ:
- Առավոտ բարի լույս բացվի ձեր վրա,
Առավոտ բարի լույս բացվավ Լեյլիի վրա,
Առավ կուժն ու գնաց աղբյուրը՝ ջրի,
- 20 Հոգին վկայեց, ու եկավ Բինգյուլի աղբյուրը՝ ջրի:
– Ա՛յ Մեջլում, բարե քեզ, – ասավ Լեյլին:
– Հազար բարին քեզ, աչքիս վրա,
Սրտի սիրական Լեյլի:
- Մեջլում նայեց Լեյլիին
- 25 Ու կանգնավ մնաց.
Լեյլին նայեց Մեջլումին

- Ու կանգնավ մնաց:
 Լեյլի աչքերը գիշերվա երկինք են՝
 Արևներով վառ.
- 30 Լեյլի մազերը աբրշումն առտներ են՝
 Ծուփ-ծուփ կթափվին
 Մարմարե կրծքին...
 Յոթն օր, յոթ գիշեր
 Ուտքի վրա կանգնան էնոնք,
- 35 էլի կիմանային, թե նոր են եկած:

- Յոթն օր, յոթ գիշեր բոլորավ,
 Լեյլին ասավ. –
 – Այ՛ Մեջլում, իմ սեր ու իմ սրտի տեր,
 Ինձ հրաման տուր՝
- 40 Սի կուժ ջուր տանեմ հորս վրանը,
 Առավոտ էլի քու մոտը կուգամ:

- Խոսքերը Լեյլի բերնեն անո՛ւշ կթափվեին
 Շիրազի մեղրի գինուց գովական:
 Լեյլի մատները լուսնյակի շողեր են. –
- 45 Մնաս բարևի ձեռք տվավ Մեջլումին:
 Մեջլում լացեց, ասավ.
 – Լեյլի՛ ջան, Լեյլի ջանջան, մի՛ գնա,
 Ես քու սպանվածն եմ առանց վերքի.
 Քեզի փեշքեշ կանեմ Հնդուքուշը
- 50 Մինչի Ջինմաչին:
 Լեյլի՛, քու հասակ ոսկի բուրջ է,
 Մի սև խաչ կա քու թշի վրա,
 Լեյլի՛, անխիղճ Լեյլի, մի՛ գնա...

- Լեյլին ջուրն առավ ու գնաց,
 55 Մեջլում աչքը հետևեն քցած մնաց,

Ձեռքը ծոցին, մոլո՛ր, մոլո՛ր...
Լեյլին գնաց: Գնաց ի՞նչ տեսավ.
Հոր վրաններ բարձած քոչվոր կերթան.
Լեյլին գնաց Հոր քոչի հետ...

- 60 Իմ վրա բարով անցնի աշնան խաղալը.
Քու վրա բարով անցնի ձմռան ձուներ.
Իմ վրա բարով ծաղկի գարնան լալեն,
Քու վրա բարով ծաղկի գարնան վարդը:
Լեյլին տեսավ գարնանը
- 65 Մի հավք վերև ման կուգար:
– Ա՛յ թռչուն, – ասավ Լեյլին, –
Դուն կուգաս Սիփանա քարեն,
Քու ճամփեն կանցնի Բինգյոլա սարեն,
Մի հարցում տամ, պատասխա՞ն տուր. –
Ձե՞ս ի՞նչ ել յարաբ Բինգյոլի աղբյուրի վրեն,
- 70 Ձե՞ս տեսել Մեջլումի Բինգյոլի աղբյուրի վրեն:
– Ո՛վ խճե–Լեյլի, – ասավ հավքը երկնուց, –
Ես կուգամ Սիփանա քարեն,
Իմ ճամփեն կանցնի Բինգյոլա սարեն,
- 75 Ես տեսա աղբյուրի գլուխ մի կտրիճ մեռած,
Միսը կերա, ոսկորները իրար վրա ժողվեցի...

- Լեյլին ծամեր քանդեց,
Մոխիր լցավ ծամերու վրա,
Գնա՛ց, գնա՛ց Բինգյոլի աղբյուրի վրա,
- 80 Տեսավ Մեջլումի ոսկորները ծաղկունանց մեջ,
Կարմիր ու նիսշուն ծաղկունանց մեջ:
Լաց լացեց, լաց լացեց ու մեռավ
Տնավեր Մեջլումի ոսկորների վրա:

- Աստծու հրամանով երկունսն էլ աստղ դառան,
85 Անմուրազ Մեջլում ու երազ Լեյլին,
Երկինք թռան, աստղ դառան.
Մեկը շողաց հարավակողմ,
Մեկը՝ հյուսիսա:
Աստծու հրամանով տարին մեկ անգամ
90 Լեյլիի ու Մեջլումի աստղերը իրար կուգան,
Կարոտ-ծարավ սրտով կփաթաթվեն իրար,
Պաչ կուտան ու պաչ կառնեն:
Նորեն իրարուց կհեռանան,
Լեյլին Մեջլումի տեղը,
95 Մեջլում Լեյլիի. –
Լեյլին՝ հարավակողմ,
Մեջլում՝ հյուսիսա...

1910, Ղազարապատ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ

I

Լուսակերտ է ապարանքը Թադմորի,
Անապատում, որպես երազ ոսկեհյուս.
Յոթն Հարյուր սյունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը երկնասույգ:

- 5 Շուրջը նազուկ արմավենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք-հավքեր կարոտով,
Շատրվաններն հուրհրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով:

- Գահի վրա երիտասարդ էլ-Սաման
10 Մեղմ գրկել է հրաշագեղ բամբիչին.
Կրծքի վրա հյուսքը նրա - ծփծփան,
Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին:

- Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի՝
15 Չունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ձյունաթուղյ,
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիչի:

- Արքայական գահի շուրջը զվարթուն
Մանկրավիկներ և նաժիշտներ ոսկեհեր
Նվագում են, կաքավում են ու երգում
20 Գիշերները, առավոտուց մինչ գիշեր:

II

Երբ Հանգչում են ապարանքի ջահերը,
Եվ արծաթյա կարապի պես լուսնկան
Փայփայում է ավազանի ջրերը,

Շշնջում է սյուլքի նման էլ-Սաման:

25 Շշնջում է լուսաթաթախ բամբիչի
Ականջն ի վար այնպես քնքուշ, հեղասահ,
Ինչպես լուսնի շողակաթը թավիչի
Այն հոյակապ սյուլներն ի վար մարմարյա:

– Բարձր են երկնի ձեղունները, նագելի՛ս,
30 Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նագելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից:

Արուսեկը, որ ներկում է ծիրանի
Շրթունքները գառնուկների Տյուրոսի,
35 Այնքա՛ն կարմիր, այնքա՛ն կարմիր բոց չունի,
Ինչքան որ քո համբույրները սնդուսի:

Կխորտակվի ապարանքս գեղանի,
Եվ կծածկվի անապատի շնչի տակ,
Կբարձրանա անհուն ծովը Սիդոնի
40 Եվ կըգերե անապատը ծագեծագ,–

Ժամանակը իր վախճանին կհասնի,
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...

45 Ձէացնող համբույրներում դյուլթական,
Հանց հինավուրց հեքիաթական գինու մեջ,
Թալկանում է և հալչում է էլ-Սաման...
Ժամանակը դառնում՝ վայրկյան ու հավերժ...

- Ապարանքի երենոսյան դռներից
50 երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.
Մանկլավիկներ ու նաժիշտներ ցնծալից
Նվագում են, ու երգում են, ու պարում...

III

- Լոռեթյունը մահվան թևով ծվարած՝
Առկայծում է կանթեղն աղոտ, մենավոր,
55 Եվ մեռնում է հեղ բամբիչը դալկացած
էլ-Սամանի կրծքի վրա սգավոր:

- Նա մեռնում է, ինչպես ցողը բողբոջում,
Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական.
Եվ հըծծում է, աղոթքի պես շշնջում
60 Հեգ բամբիչի ականջն ի վար էլ-Սաման:

- Կըխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս.
Ե՛վ կվանեմ, և՛ կհաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս:
65 Եվ գրկել է դժգունացող բամբիչին,
Մահվան հանդեպ սուր ու վահան է շարժում.
Եվ բամբիչի սառած-մեռած չրթներին
Իր հրեղեն սերն ու շունչը ներարկում:

IV

- Լուսիններ են եկել՝անցել, ու կրկին
70 Մեռած բամբիչն ամուր գրկած էլ-Սաման
Շշնջում է ականջն ի վար մեղմագին,
Ինչպես դեղին սյուներն ի վար լուսնկան:

Եվ լքել են ապարանքը սարսափից
Մանկլավիկներն ու նաժիշտներ ոսկեհեր.
75 Արմավներն են լուռ սոսավում թախծալից,
Եվ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր:

Շատրվաններն հեծկլտում են ու լալիս,
Եվ սյունից սյուն սարդը ոստայն է հյուսում.
Անապատի հողմն է միայն այց գալիս
80 Եվ գահի շուրջ կաղկանձում ու փսփսում:

Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ–Սամանի ոսկորների լուռ փոշին,
Բայց էլ–Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հյուծված բամբիշին:

85 Եվ քայքայուն ականջն ի վար լռեցայն
Մեռած, սառած չրթունքներով էլ–Սաման
Շշնջում է հավերժաբար ու անձայն,
Ինչպես խարխուլ սյուններն ի վար լուսնկան:

Պուրակները չորացել են, չքացել,
90 Եվ շիջել է լույս երազը սյունների.
Անապատը դեղին քղանցքն է փռել
Եվ ծածկել է ապարանքը Թաղմորի...

Եվ ավազուտ շիրմի վրա մենավոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկա,
95 Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ–Սամանի սերը հզոր ու անմա'հ:

Որ աշխարհին պատմեն սերը Հաղթապան՝
Էլ-Սամանի սերը՝ անա՛հոյ, հավերժո՛ղ,
Քարավաններն ու ճամփորդներն երկյուղած
100 Հեռուներից հեռուն եկող-գնացող...

1914, նոյեմբերի 27, Բեռլին

ՀԱՅԱՍՏԱՆԸ
(ավանդություն)

Հայերի վրա զայրացավ աստված,
Որ նրանք ունեն թեև ճիշ հանճար,
Բայց չեն միաբան, և ոխով լցված,
Դավով, նախանձով ատում են իրար:

5 Եվ աստված պատժեց հայ ժողովրդին,
Եվ Հայաստանից հավաքեց տարավ
Գետեր, վտակներ, աղբյուրներ հորդուն,
Եվ թողեց հողերն անջուր ու ծարավ:

10 Եվ աստված տվեց դրանց փոխարեն
Բոցակեզ ժայռեր, առապար ու քար,
Եվ դարեր անդուլ զարկող խատաղեմ
Մի նենգ հարևան, ամբարիշտ ու չար:

1915

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

I

Եկավ հապճեպ սուրհանդակ՝ փոշիների մեջ թաթավ,
Ուրարտուի արքայի առջև խոնարհ ծունը իջավ:

– Որդի՛ հզոր խալդիի, տեր գետերին Նաիրի,
Ինձ առաքեց բղեչիւը քո այն հեռու աշխարհի,

5 Ուր արևն է մայր մտնում:

Հաղթո՛ղ գլուղ Ասուրի,

Մի թշնամի, որ նման մթնում փայլող մի սուրի,
Մխրճվել է մեր կողը, և քանդելով բուրգ–պատվար՝
Ներս է խուժում մեր հողը, հեղեղների պես վարար:

10 Ձենք իմանում, չգիտենք նրանց տոհմը, ու՞րքե՞ր են,
Ո՞վ է նրանց աստվածը, նրանց լեզուն. ուսկի՞ց են:
Եվ մըրրի՞ն են սանձել, թե՞ արծիվը ամպերի,
Նրանց ձիերը թռչում են պատնեշներով բերդերի...

Սարդուրիաի ճակատին մռայլ վիհեր բացվեցին,

15 Եվ արձակեց հրաման ուրարտական թագերին.

Կազմեց ամուր այրուձի, կազմեց բանակ մեծաուժ,
Եվ մեկնեցին ռազմադաշտ թշնամու դեմ խուժաղուժ...

II

Գամիրք, Մոսոք ու Թափալ ծունկ են իջել գլխահակ՝
Հաղթողներին բերելով հարկ ու ընծա անքանակ. –

20 Ցորեն, մեղրը ու երկաթ, իրենց չքնաղ կույսերը,

Որոնց միայն գգվել են երկնի մաքուր հովերը:

Նետեր ունին սայրասուր և աղեղներ լայնալիճ,

Որ արծիվին սրտախոց վայր են բերում երկնքից,

Պարսեր ունին ամեհի, սուրեր ունին կուռ–կոփված,

- 25 Կայծակների ամպեղեն դարձնոցում ջրդեղված:
 Փոյուզիական գդակներ և գոտիներ երկաթի,
 Եվ վիթխարի ուսերին վագրների վառ մորթի,
 Որոնց բռնել են շտապ իրենց անցած վայրերում,
 Եվ ճակատներն արևառ, ինչպես կավը քուրայում:
- 30 Վաչենների մեջ կորյուն ժիր մանուկներ ոսկեհեր,
 Բագուկները՝ ջլապինդ, աչիկները՝ արևներ:
 Եվ նրանց հետ ալեհեր և իմաստուն ծեր պապեր՝
 Պիրկ ձեռներին գինով լի էտրուրական սափորներ:
 Վիթի նման աղջիկներ՝ գարունքվա պես բռնկված՝
- 35 Զրահի տակ ստինքներ՝ սերն ու կարոտ անթեղած.
 Եվ մայրերը սիրաշատ ու նրանց սուրբ արգանդում
 Կյանքն է աճում, ինչպես որ վիշապաձագն անդնդում:

III

- Ինչպես ծովը դուրս պոռթկա իր վիհերից անպարփակ,
 Հորձանքներ տա և հորդի՝ որոնելով նոր հատակ,
- 40 Այնպես հորդում է առաջ նրանց արշավն ահավոր,
 Որոնելու նոր աշխարհ, իրենց երդի համար նոր:
 Եվ հորդում են, և նրանց խոլ բարբառից սարսափուն
 Վարազներն են թաքթաքում շամբուտների գուբերում:
 Եվ հորդում են, և հարթում նժույգների ոտքի տակ
- 45 Խոչեր-խութեր ու լեռներ, ազգեր-ցեղեր ու բանակ.
 Եվ նրանց վերև հաճում է սաղավարտով պղնձի՝
 Նահապետը, քաջ Գեստրաս, ինչպես արև քաջաձի:

IV

- Ելավ արքան Սարդուրիս, և արքաներ Նաիրի
 Ոսոխի դեմ մահի, հեռու, անհայտ աշխարհի.
- 50 Երկաթեղեն պատերով պատվար կեցան դարեդար,

Եվ սուր սրի զարկեցին, ճակատ ճակտի անդադար.
 Սերունդ իջավ գերեզման, սերունդ ելավ օրրանից,
 Եվ կռեցին նոր սուսեր, պայքարեցին նոր-նորից:
 Ծակատ ճակտի բախեցին և սուր սրի զարկեցին,
 55 Ծակատ ճակտի բախեցին և սուր սրի զարկեցին:
 Փչովեցին նետ ու սուր, Ուրարտուի այրուձին,
 Եվ նորեկներն հաղթապանծ՝ կուռ պատերը ճեղքեցին:

Ռազմիկները խայրերի փախսան պարտված ու նվաստ՝
 Թողած բալիչ ու ավար իրենց հողը հացաշատ,
 60 Ոստանները ոսկեդուռ, իրենց կիներն սևաչվի,
 Փախսան մինչև ծովածեծ կողալանջերն Կավկասի:

V

Եվ վաչերը շառաչուն՝ հաղթողների կանգ առան
 Արարատյան դաշտի մեջ, Մասիսների հանդիման.
 Գեստրասները կախեցին վահանն իրենց պողպատի
 65 Աղամանդից լուսեղեն Ավագ-Մասսա ճակատի:
 Հիմ դրեցին, վառեցին իրենց երգը սրբազան,
 Եվ ծուխն ելավ ու փռվեց գետերն ի վար Նաիրյան.
 Եվ բազինը կանգնեց<ը> ին իրենց արև-աստծու՝
 Քաջ Վահագնի, բաշխիչը հաղթանակի և գինու.
 70 Եվ Աստղիկի, բամբիչը Վիշապաքաղ Վահագնի,
 Աստվածուհին գեղեցկի, հզոր սիրո և կյանքի:

Եղան նրանք քաջ պետեր՝ հայեր սեպուհ, հաղթական,
 Աշխարհն եղավ Հայաստան և պիտ մնա Հայաստան՝
 Մինչև արևը հանգչի, և ցուրտ աճյունը նրա
 75 Զյունե համայն ազգերի հայրենիքների վրա...

1917, հունվար, Ժնև

ԱՍՊԵՏԻ ՍԵՐԸ

Հին ժամանակ իր ամրոցում ոսկեղեն
Կրքնակվեր հուր ու հրաշք մի աղջիկ.
Ու կսպասեր, որ հեռավոր տեղերեն
Իր երազի ասպետը գար գեղեցիկ:

5 Եվ ձին հեծած, բանակներով հաղթադեն,
Եկավ մի օր կանաչ-կտրիճ մի իշխան...
Սանձը ձգեց ու քար կտրեց հիացքեն,
Երբ որ տեսավ պատշգամբում աղջկան:

10 – Հրաշք-աղջիկ, թագավորիս զորքերով
Կես աշխարհը դրոշակիս տակն սուռ.
Քեզ սիրեցի, սիրտդ տո՛ւր ինձ, քո սիրով
Մյուս կեսն էլ տիրեմ, բերեմ քեզ ընծա:

15 – Այդ ի՞նչ սեր է, – ասաց աղջիկն ասպետին, –
Քաջ ես, գիտե՛մ, գիտե՛մ, չկա քեզ նման.
Դու կարող ես տիրել արար-աշխարհին,
Բայց այդ երբե՛ք հզոր սիրու չէ՛ նշան:

20 – Ինչպե՛ս հայտնեմ սրտիս հուրը, նազելի՛ս.
Կուզե՞ս պատռեմ կուրծքս հիմա այս սըրով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քո սիրով:

– Այդ չէ՛ սերը, – ասաց աղջիկն ասպետին, –
Գիտե՛մ, քաջ ես, բայց շա՛տ վախկոտ, թուլեր կան,
Որ հուսահատ՝ քաջի նման կըմեռնին,
Բայց այդ երբեք անշեջ սիրու չէ՛ նշան:

25 Ու կտրիճը մնաց մոլոր ու շվար,
Աչքերն հանգած՝ լույս-երեսին աղջկա.

– Ի՜նչ որ կուգես, ասա՛, անեմ քեզ համար,
Արևի տակ իմ սիրուն պես սեր չկա:

30 – Թե կսիրես, թո՛ղ ինձ հիմա ու գնա՛,
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կըբախնեմ:–
Այսպես ասաց ու իր ծոցին մարմարյա
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղեն:

Ասպետն առավ վարդը, քնքո՛ւշ համբուրեց,
Վերջին անգամ նայեց, նայեց սիրածին:
35 Սիրուն վարդը պահեց այրվող ծոցի մեջ.
Ու խթանեց, ու սլացավ նժույգ–ձին:

Եվ նստել է ամրոցի մեջ մեն–մենի
Այն իշխանը երազներում երջանիկ,
Վարդը ծոցում, ու ականջը մի ձենի...
40 Եվ թե առան, թռան օրեր ու տարիք:

Աչքերը դոց՝ պատած ոսկի մշուշով,
Ուր կըժպտար սեր–աղջիկը աննման,
Քաջ ասպետը բոց կարոտով, լի հույսով
Սիրտը ձենի՛ լուռ սպասեց աղջկան...

45 Եվ թե առան, թռան օրեր ու տարիք,
Վառ կտրիճը դառավ դողդոջ մի ծերուկ,–
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցեն վարդը խամրած ու դալուկ:

Սիրո վարդը աչքին դրեց փափագով,
50 Ու համբուրեց, ու համբուրեց, ու... մեռավ՝
Հոգին լցված բլբուլների երգերով.–
Եվ գրույցս էլ ա՛յսպես տխուր վերջացավ...

1917, Ժնև

ՄՈՐ ՍԻՐՏԸ
(հայկական ավանդավես)

Կա Հինավուրց մի զրույց,
Թե մի տղա,
Միամորիկ,
Սիրում էր մի աղջկա:

5 Աղջիկն ասավ.- «Ինձ բնավ
Դու չես սիրում,
Թե չէ գնա՛,
Գնա՛ մորըդ սի՛րտը բեր»:

10 Տղան մոլոր, գլխիկոր
Քայլ առավ,
Լացեց, լացեց,
Աղջկա մոտ ետ դառավ:

Երբ նա տեսավ, զայրացավ.
- Է՛լ չերևես
15 Շեմքիս,- ասավ,-
Մինչև սիրտը չըբերես:

Տղան գնաց և որսաց
Սարի այծյամ,
Սիրտը հանեց,
20 Բերեց տվեց աղջկան:

Երբ նա տեսավ, զայրացավ.
- Կորի՛ր աչքես,
Թե հարազատ
Մորըդ սիրտը չբերես:

25 Տղան գնաց՝ մորն սպանեց,
 Երբ վազ կըտար
 Սիրտը՝ ձեռքին,
 Ոտքը սահեց, ընկավ վար:

 Եվ սիրտը մոր ասավ տխուր,
30 Լացակմած.
 - Վա՛յ, խեղճ տղաս,
 Ոչ մի տեղի չըցավա՞ց...

1919, մարտի 15, Ժնև

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Եղել է Հնում, պերճ արևելքում
Մի քաջ զորավար՝ Հայրենապաշտպան,
Առանց ընկճելու երկրի թշնամուն՝
Նըրա սուրը երբեք չի մտել պատյան:

5 Նըրա արձակած տեղը խողական
Թշնամու Հողում ցըցվել է ահեղ,
Նըրա սարսափը օրհասի նման
Թշնամու գլխին կախվել ամեն տեղ:

10 Եվ ժողովրդի քնարը ազնիվ
Փառաբանել է անունը նըրա,
Հաղթանակները փայլուն ու անթիվ՝
Սուրբ Հայրենիքի ոսոխի վըրա:

Բայց թագավորը՝ նենգ ու փոքրոգի,
Նախանձում էր խիստ նրա Հռչակին.
15 Վառ լույսերի մեջ նըրա մեծ փառքի
Զգում էր իրեն նվաստ ու չնչին:

Անհուն նախանձի կրքով տոչորուն՝
Մի օր խնջույքում արքայական տան,
Մի զորականի՝ անհայտ, անանուն,
20 Ժպտաց սիրալիր, դրվատեց նըրան:

Եվ նա փոխարեն զորավարին մեծ՝
Տեղ տվեց նըրան առնթեր գահի,
Հյուրերին բոլոր՝ զարմանք պատճառեց
Այնքան ապերախտ վարմունքն արքայի:

25 Մյուս օրը շքով այն զորականին
Սպարապետի սուր տվեց արքան,
Եվ հրամանատար կարգեց բանակին,
Իսկ զորավարին՝ թիկնապահ նրբան:

Ջայրացավ հոգին քաջ զորավարի,
30 Համհարզները իր սաստիկ զայրացան,
Առավ ընկերներն հին կռիվների,
Եվ հողն հայրենի թողին, հեռացան:

Գնացին նրա սուրի հետևից,-
Ճակատապիլը սուրն է քաջերի,-
35 Հողեր գրավեց բռնակալներից
Եվ դառավ իշխան տիրած հողերի:

Եվ երբ հրճվանքով լսեց թշնամին,
Թե անպարտելի զորավարը քաջ
Լըքել է անդարձ երկիրն հայրենի,
40 Եվ բաց են դռներն արշավի առաջ,-

Մոռացան խակույն և՛ փորձ, և՛ սարսափ,
Հնչեց շեփորը դու սլափերազմի,
Հին թշնամու դեմ խոյացան շտապ՝
Լուծելու անմոռ վրեժն արյունի:

45 Սահմաններն անցան և խուժեցին խոր,
Հըրի մատնեցին գյուղեր ու ավան,
Սպարապետը փախավ գլխիկոր,
Ջորք ու ժողովուրդ խուճապի ընկան:

50 Խուռըն խռնվեց հրապարակներում
Ժողովուրդը ողջ, հեղեղանման.
- Ո՛ւր է, - գոչեցին, - զորավարը մեր՝
Սուրբ Հայրենիքի փրկիչ ու պաշտպան:

Նախարարներին ու թագավորին
Կարդացին բուռն, խիստ սպառնալիք,
55 Որ խնդրեն իրենց քաջ զորավարին,
Պատվով ու փառքով բերեն Հայրենիք:

Եվ ավագանին նստեց խորհրդի,
Երեք փորձաշատ ծերեր ընտրեցին,
Որ թագավորի և ծերակույտի
60 Խնդիրքը տանեն քաջ զորավարին:

Պատվիրակները Հասան Հոգնաբեկ,
Իշխանի առաջ կանգնեցին ոտի,
Ողջույններ տվին զորավարին սեգ
Եվ աղերսները մեծ ծերակույտի:

65 Զրույց էր անում զորավարը մեծ
Ընկերների հետ իր հավատարիմ,
Եվ պատմում էին հին արկածներից,
Հիշում մարտերը՝ վարած միասին:

Տարածեց ձեռքը իշխանը փութով,
70 Լռեց դահլիճը պերճ ապարանքի.
Պատվիրակները պատմեցին վշտով
Թշվառ վիճակը մայր Հայրենիքի:

Լսում էր տխուր պատգամը նրանց,
Վարանմունքի մեջ վշտակոծ հոգին,

75 Վաղեմի քենը բռնկվեց հանկարծ
Եվ ձեռքը ժխտող տարածեց ուժգին:

Ոսոխն օրեցօր մխրճվում է խոր,
Ուր ոտք է դնում՝ ավեր ու ավար,
Եվ ժողովուրդը վհատ ու մոլոր
80 Հնար է փնտրում, չի գտնում հնար:

- Մայրենի տաղով, հայրենի հողով
Կերթանք նրա մոտ մեր գուսանն ու ես,-
Ձայնում է ուժով մի ծեր շինական,-
Կբերենք նրան, նա չի լքի մեզ:

85 Եվ ժողովուրդը ուղի է դնում
Իր հին գուսանին և ծեր գեղջուկին.
- Ողջույններ տարեք, մեր սերը անհուն,
Նա չի մոռանա իր ժողովրդին:

Գնացին նրանք, սահմանը չանցած՝
90 Շինականն արտից առավ մի բուռ հող,
Լցրեց քսակը, և արագընթաց՝
Հասան իշխանի ապարանքը ճոխ:

Երեկո էր ուշ. կանթեղները լուռ
Նշույլում էին պերճ ձեղուններից,
95 Զորավարը հին՝ նստել էր տխուր,
Ընկերների հետ՝ մռայլ, թախծալից:

Տավիղն հինավուրց հանելով ուսից՝
Գուսանը կանգնեց դահլիճում մարմար,

Ձարկեց լարերին թափով, խանդալից,
100 Եվ լեզու առավ տավիրն ոսկեյար:

Հին հայրենիքի մեղեդիներն հին
Մեղմ կարկաչեցին առվակների պես.
Գուսանը վառման՝ երգեց սրտագին
Ճերմակ լեռների կատարները վես:

105 Արծըվի կանչը՝ ժայռի գագաթին,
Ծրփուն արտերի զմրուխտը պայծառ,
Վիթերի վազքը՝ կիրճերում մթին,
Հոտերը բարի՝ դաշտերում դալար:

Երգեց ձիերի խրխինջը խրոխտ
110 Հայրենի փոշուս ճանապարհներում,
Խաղողը՝ ոսկի, հնձանները՝ հորդ,
Եվ խրճիթների ծուխը՝ ոլորուն:

Երգեց սիրազեղ վարդ-աղջիկներին,
Որոնք կարոտով կանչում են նրան,
115 Երգում են նրա փառքը սիրազին,
Որ շողշողում է արևի նման:

Մռայլ ճակատը դողդոջուն ձեռքին
Եվ աչքերը գոց՝ երազով տարված,
Լսում էր քաջը գուսանի երգին,
120 Լսում էր՝ սրտին ականջը դրած:

Ինչպե՞ս մայրենի խոսքերով անուշ
Կանչում են նրան, կանչում կարոտած.
Եվ վաղուց մեռած մոր ձայնը քնքուշ
Անհուն քաղցրությամբ լսում է հանկարծ:

- 125 Եվ թաց աչքերը սրբում է ափով.
Սակայն ծերունին քայլերով ամուր
Մոտեցավ, դրեց քսակը հողով
Իշխանի առաջ և կանգնեց անդորր:
- Իշխանը սուզված նայում է անթարթ,
130 Անհագ հայացքով նայում է հողին,
Հողը խոսում է նրա սրտի հետ,
Եվ սիրտը նրա խոսում է հողին:
- Հայրենի հողը քաշում է իրան,
Ինչքա՞ն ուժով է, ի՞նչ անպարտելի.
135 Եվ ինչպե՞ս քաղցրը հուշում է նրան
Վառ մանկությունը՝ հրազներով լի:
- Այդ հողն է նրան ծընել ու սընել,
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,
Եվ Հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,
140 Եվ նախնիքները, որ հող են դառել:
- Հսում է խորին այդ անհուն ձայնին,
Մայր ժողովրդի կոչին դարավոր,
Օ՛, ինչքա՞ն ուժով քաշում է նրան
Հայրենի հողի խորհուրդը հըզոր:
- 145 Եվ կարկառում է ձեռները դողդոջ,
Քսակը փոքրիկ վերցնում երկյուղած,
Զգում է այնպես՝ թե աշխարհի ողջ
Գանձերը ունի ափի մեջ բռնած:

Աչքերը լցված սրտի արցունքով՝
150 Խոնարհում է հեզ գլուխն արքենի,
Եվ երեք անգամ անհուն կարոտով
Համբուրում է նա հողը հայրենի:

Եվ ապա ընդոստ կանգնում է ոտի,
Հեծնում հըրաբաշ նժույգը ռազմի,
155 Ընկերների հետ փառքի և վշտի
Սլանում է սուրբ հողը հայրենի:

1920

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՐԱՋԸ

- Մեծ քաղաքի մի ամայի փողոցում,
Աղքատիկ տան վերնահարկի մի խուցում,
Պառկած էր մի հիվանդ, անոթ բանաստեղծ,
Աչքերը՝ մար, դեղին, հյուծված, մահամերձ:
- 5 Ցուրտ էր խուցում, և խավարը գիշերվան
Խտացած էր շոշափելու աստիճան:
- Ես մեռնում եմ, - խոսում է նա հուսաբեկ. -
Աղքատ ու խեղճ, և չապրեցի ես երբեք,
Տանջանք եղան վայրկյանները իմ բոլոր.
- 10 Անցա կյանքի պողոտայից ես մոլոր՝
Լուկ տեսնելով ապրողների դճներից
Վայելքների ոսկի դինին փրփրալից,
Որ թափվում էր համբույրների շառաչով,
Սիրտս խոցում, սիրտս լցնում հառաչով:
- 15 Կյանքս անցավ մի՛շտ կարոտով, մի՛շտ ունայն,
Եվ չունեցա ոչինչ, ոչինչ իբրական.
Նյութեղենը մի՛շտ խուսափեց ինձանից,
Երազները մի՛շտ եղան ինձ ուղեկից...
Կյանք եմ ուզում, ունիմ բախտի իրավունք.
- 20 Ա՛խ, վայելեմ գոնե մի օր լիակուրծք,
Ապա մեռնիմ, սրտիս վրա հավիտյան
Թո՛ղ հող դիզվի լեռների չափ, անսահման...
Ե՛կ, կատարի՛ր հուր - փափագը իմ կյանքի,
Թե կարող ես, բարի և կամ չար ոգի...
-
- 25 Մի լույս-ոգի կանգնեց նրա պնարին.
- Ահա՛ եկա, ես եմ բարի, մեծ ոգին:

- Բարի թե չար, միևնույն է ինձ համար,
Ա՛խ, կյանք տուր ինձ, տե՛ս՝ ճակատս դալկահար:
- 30 - Այդ ոչինչ է. ասա՛, ուրիշ ի՞նչ կուզես:
- Ես տխուր եմ, մի՛շտ տխուր եմ եղել ես.
Վիշտը եղավ իմ շապիկը անբաժան:
- Նետի՛ր քեզնից այդ ցնցոտին անարժան,
Ես քեզ իսկույն կըհագցնեմ ծիրանի:
- Թռցրո՛ւ հոգիս լույս-գահերը լեռների,
35 Շո՛ւտ այս գութից, խեղդող գութից հանի՛ր ինձ.
Տո՛ւր ինձ երգող անտառները բուրավի,
Կապո՛ւյտ, կապո՛ւյտ լուռթյունը ծովերի,
Կուզեմ ծծել մաքուր շունչը հովերի...
- Այդ դյուրին է, ասա՛, ուրիշ ի՞նչ կուզես:
40 - Ա՛հ, ուրեմն, եթե երբեք կարող ես,
Գոհացրո՛ւ, գերերջանիկ դարձրո՛ւ ինձ:
- Ես կարող եմ,- ասաց ոգին խոստմնալից:

-
- Անըջածուփ ծովի ափին լուսալիք
Կառուցված է մի ապարանք հրաշալիք.
- 45 Մարմարիոնի սանդուխներով, սալերով,
Մեծ դռները եբնոսյա փեղկերով:
Սարդիոնի և լաջվարդի անհամար
Քնքուշ սյուները՝ գեղաքանդակ, շարեշար.
Ողջ որմերը ոսկեքարով, բյուրեղյա,
50 Եվ զարդարված սուտակներով, շափյուղա:
Եվ սյուները երկնասլաց, հոգեթով,
Որ բանված են տոպազներով, հակինթով՝
Բռնած ունին արքայական թագի պես
Մեծ դահլիճի լույս-գմբեթը բարձր ու վեհ:
55 Գմբեթի տակ շատրվաններն են ցայտում՝
Վարդաջրով՝ քաղցր ու օրոր, անհատնում.

- Միածանի յոթնակամարն է անշեջ
 Բարձրաթռիչ լուսացնցող ջրի մեջ:
 Եվ գեղանի սափորներում ոսկեհուռ
 60 Մեղմ այրվում են խունկերն անուշ, հեշտաբույր.
 Շողշողում են հեքիաթագեղ, հրաշալի
 Ծաղկափունջերն անոթներում օպալի:
 Հազա՛ր-Հազար արևի պես փողփողէ՛լ,
 Յոլանում է ապարանքը ծովի մեջ,
 65 Եվ տանում են կոհակները ծփծփուն
 Յուրքը նորա՝ հեռու ափերն անանուն...
 Տարածվում են ապարանքի շուրջբոլոր
 Բուրաստաններ և այգիներ մեղրածոր,
 Ուր թռչուններն երփնափետուր, նազելի՛
 70 Գեղգեղում են, դայլայլում են սիրով լի,
 Եվ խաղողը վառ գինի է հավաքում՝
 Իր ստինքում, և նռենին՝ ալ-արյուն:

-
- Դահլիճի մեջ բանաստեղծը մեն-մենակ,
 Միրանազգեստ, գլխին դսինի լույս-պսակ՝
 75 Լուռ նստած է բազմոցի մեջ փղոսկրյա,
 Ոսների տակ գորգեր, բարձեր մետաքսյա:

- Ոգին եկավ:
 - Ո՛վ բանաստեղծ, ողջո՛ւյն քեղ,
 Գեղեցի՞կ է այս ամենը. դու գո՞հ ես:
 80 - Գեղեցիկ է, այո՛, այո՛, սակայն, բայց...
 - Եվ նորի՞ց բայց, - հարցրեց ոգին զարմացած.
 Մի՞թե սա չէ մարմին հազած մի երազ:
 - Ինչի՞նչ է պետք. ես տխուր եմ հանապաղ:
 - Լսի՛ր, եղբայր, խելո՛ք եղի՛ր, իմաստուն:
 85 - Ի՜նչ է արդյոք իմաստոթյուն, իմաստուն.

- Դու որոշի՛ր. խանգարվել է իմ հոգիս:
 - Մոռացություն, - ուրիշ ոչինչ, սիրելիս,
 Գաղտնիքն այս է. գիտցի՛ր միայն մոռանալ
 Անցյալ կյանքդ, և վայելել գիտենալ
 90 Ապրիլ ներկան, որ արդ քոնն է, սեփական.
 Եվ հավատով, հույսով տեսնել ապագան:
 - Ա՛խ, մոռանա՛լ. ինչպե՞ս փախչել իր Ես-ից:
 - Շատ դյուրին է ազատվել այդ ապուշից.
 Հարբել միայն և վայելչանք խոլական.
 95 Այս երեկո ունինք չքեղ խրախճան,
 Պար ու նվագ, մոռացաբույր գինիներ,
 Դրախտագեղ և ծաղկածոց աղջիկներ.
 Կյանքն է վայելք և վայելքը - նպատակ,
 Դու վայելել միայն գիտցի՛ր անսպակ:

-
- 100 Բյուրեղ ջահերն հեղեղում են լույսի ծով,
 Բռնկված է՝ ողջ դահլիճը լույսերով:
 Դրասանգները խուփթիթ վարդերի
 Թիու են առել, ինչպես ծաղկոց եթերի.
 Եվ սեղանը սփռոցներով սնդուսի,
 105 Խորտիկ, պտուղ ափսեներում հասպիսի.
 Մեղեսիկի և բյուրեղի սափորներ,
 Արյունավառ և հրացայտ գինիներ:
 Թիկն է տվել բանաստեղծը անվրդով,
 Եվ խմում է գինին զմրուխտ գավաթով:
 110 Եվ ջութակը նվագում է մեծ ոգին,
 Երաժիշտներ ձայնակցում են նվագին.
 Մարմարիբան և հոլանի աղջիկներ,
 Ուկեփիթիթ, ինչպես գարնան ծաղիկներ,
 Կաքավում են օդասլաց ճախրելով,
 115 Թրթռում են թիթեռնիկի թևերով.

- Շղարշները, նրբին է՛ն նուրբ քողերից,
 Ուր հյուսված են զեփյուռներից, շողերից,
 Վար են իջնում ջրերի պես լուսաթույր՝
 Ուսերից ցած աղջիկների վարդաբույր:
- 120 Զյունափրփուր ստինքներով թրթռուն
 Աղջիկները երազագույն շղարշում՝
 Բանաստեղծի վրա քնքուշ հորձանքով
 Արշավում են, ծածկում՝ նրան քողերով,
 Արբեցնում իրենց մարմնի կուսական
- 125 Հեշտանքներով, սարսուռներով դյուլթական.
 Եվ կայթում են, ապա հտ-հտ հեռանում,
 Մշուշանում, անծայրանում դահլիճում...
- Եվ նվազը դափր է առնում, որոտում
 Խելակորույս գինիներով արբեցուն.
- 130 Երգն է թնդում նման հուզված հեղեղի
 Եվ պարում են մոլեգնաբար, կատաղի.
 Դղրդում է ապարանքը բովանդակ,
 Պար են դառնում աղջիկները գիսարձակ.
 Ազդրները ալին-ալին են տալիս,
- 135 Լույս-կողերը գալար-գալար են գալիս,
 Եվ թռչում են, ինչպես արծիվ տարփակոծ,
 Եվ նետվում են, ցլրվում հանկարծ, ինչպես օձ.
 Աչքերի մեջ սև կրակներ, արյան մեջ
 Տենչանքների, հատնումների սերն անշեջ.
- 140 Եվ ցանկավառ, ինչպես վարդը հարավի,
 Զովացնող համբույրների ծարավի:
 Կանգ են առնում, ինչպես սյունը ավազի
 Մրրկահույզ անապատում տոպագի.
 Իրենց վրա փշրվում են մեկին մեկ,
 145 Ինչպես սյունը անապատի հրաշեկ:
 Եվ նվազը շշնջում է մեղմանուշ,

Մրմնջում է այնպե՛ս հեզիկ ու քնքուշ,
 Երազի մեջ, կարծես, հովեր են սահում,
 Եվ պարում են երազի մեջ, հեզ պարում:
 150 Պատրանքի պես անիրական, անմարմին,
 Երեկոյան ստվերների պես նրբին.
 Ամպի նման դերձան-դերձան քրքրովում,
 Եվ հալչելով տարփանքի մեջ ցնդվում.
 Եվ թախծանո՛ւշ, և հոգեվա՛ր, նվաղո՛ւն՝
 155 Եթերանում, ուրու դառնում, չէանում...

Ավարտեցավ խրախճանը. ամեն տեղ
 Լուռ է հիմա. նշույլում է մի կանթեղ.
 Շատրվաններն, այգիները ծաղկավետ
 Քուն են մտել ծովի գգվող հովի հետ:
 160 Բանաստեղծը, ձեռքը տված ճակատին,
 Մտորում է:
 - Դու հոգնա՞ծ ես, ընկե՛ր իմ:
 - Ո՛չ, սիրելի՛ս, մի կարոտ կա իմ հոգում.
 Եվ ես տեսա, շատ վարպետ ես նվագում:
 165 Սկսի՛ր, խնդրեմ...
 Կանգնած նրա սնարին՝
 Նվագում է բարի ոգին սրտագին.
 Ինչպես բույրը մի անանուն հմայքի՝
 Կայլակում են հնչյունները ջութակի.
 170 Հավերժական հուր-աստղերն են գեղգեղում
 Իրենց սերը նրա կախարդ նվագում.
 Եվ սյուքերը, որ բերել են իրենց հետ
 Հեքիաթական աշխարհների արփավետ
 Ցնորքները ու տենչերը տոչորուն՝
 175 Շչնջում են նրա դյուլթիչ լարերում:
 Նրա երգում որոտում են ու տենչում,

- Նրա երգում արյունոտում ու հանգչում
 Գոռ մարտերը ասպետների սիրահար,
 Եվ անձնվեր նրանց սերը խելագար:
- 180 Նրա երգում օվկիանները անպարփակ
 Ալեկոծվում, պատառվում են մինչ հատակ,
 Եվ մոլուցքով իրենց անզուսպ, հայրատի,
 Նետվում հեռու եզերքները կարոտի:
 Նա երգում է տիեզերքը ողջ-համայն,
 185 Որ ապրում է սիրո համար միմիայն...

Լոեց ոգին: Բանաստեղծը ապշահար
 Բացեց աչքերն:

- Այս հրաշք էր, իմ եղբայր,
 Բայց իմացի՛ր, ես հզոր սեր եմ ուզում,-
- 190 Համայնաջինջ, հափշտակիչ մոռացում...
 Թե ոչ՝ դժբախտ մարդ կըլինիմ. շուտ բե՛ր ինձ
 Է՛ն չքնաղը բոլոր չքնաղ կանանցից.
 Երբ չըթներս հանգչին նրա չըթներին՝
 Ես կըմոռնամ անմոռնալին, ընկեր իմ,
- 195 Եվ կըլինիմ գերերջանիկ, անկասկած,
 Ժամանակից, միջոցից դուրս մի աստված...
 - Ա՛յ, դու հիմա ուղիղ ճամփու վրա ես.
 Ես կըբերեմ չքնաղ կանայք, և դու տե՛ս,
 Նայի՛ր մեկ-մեկ գեղեցիկներն աշխարհի,
- 200 Ընտրի՛ր նրան, որն ճաշակիղ հարմարի:

Ասաց. եղալ:

- Ահա եկան նազանքով
 Չքնաղ կանայք, բյուր-բյուրերից ընտրանքով,
 Հեքիաթական անհուն գեղով, մշկաբույր,
 205 Լուսաստինք, հրապույրներով բյուրաբյուր.
 Գիշերահեր, և ոսկեհեր, երկնաչվի,

Հայացքներով, ժպիտներով արևի.
 ԳերաՀրաշ շնորհներով, սոսենի,
 Բուստի շրթերով, եղունգներով վանակնի.
 210 Անո՛ւշ, ինչպես սիրո շունչը բույրերի,
 Անըջաբեր կարկաշտունը աղբյուրի.
 Քնքո՛ւշ, ինչպես թևաբախումն աննշմար
 Դրախտային թռչունների լուսավառ:

Եվ մարգարտի շարքի նման անցկացան
 215 Գեղուհիներն շուշանագեղ, աննման,
 Եվ ծածկվեցավ լուսթյունը գիշերի
 Շշուկի տակ նրանց հեզիկ քայլերի:

- Ո՞րն ընտրեցիր,- հարցրեց ոգին անհամբեր:
 - Եվ ո՛չ մեկին,- պատասխանեց անտարբեր
 220 Բանաստեղծը,- կատարյալը չգտա:
 - Կատարյալը՞. է՛հ, ի՞նչ անեմ ես հիմա.
 Հրաշք՝ մարդ ես, դժվարահաճ, անհավան,
 Երկրիս վրա սրանց նման էլ չկան.

Եվ չեմ կարող ողջացնել՝ դարերով
 225 Մեռածներին, որ գովված են երգերով:
 - Բայց մի՞թե դու անկարող ես ինձ ցույց տալ
 Այն եզակի գեղեցկուհին, կատարյալ,
 Որին Աստված ոգևորված ստեղծեց
 Եվ նրանով սքանչացած՝ էլ չուզեց

230 Եվ չկրցավ ավելի լավն ստեղծել:
 Մանկությունից ես մի տենչ եմ ունեցել՝
 Տեսնել, ապրել գեղեցիկը բացարձակ,
 Կոռչական ձևերի մեջ, ներդաշնակ,
 Մարմին առած, նյութավորված, իրացած:

235 Իմ հեգ կյանքում ես չունեցա փառք ու գանձ,

- Լոկ այս տենչը. թե այն հիմա չըտեսնեմ
 Կաղապարված, – անհուն դժբախտ պիտ մեռնեմ:
 - Դու ուզում ես մարմին հագցնել տենչանքի՞ն,
 Այն երազի՞ն, որ ստեղծել է քո հոգին:
 240 - Ինչպե՞ս թե ես, ի՞նչ ես ասում, այլ՝ Աստված:
 - Կուգեմ ասել՝ երազը չի՞ ուշնացած
 Աստվածային այն կատարյալ գործի հետ:
 - Այո՛, այո՛, դե՛հ, գլուխ բեր խկույնեթ
 Եվ հավատա՛, նրա միակ համբույրով
 245 Կանմահանամ՝ նույնիսկ փոշի դառնալով:

-
- Մի ակնթարթ: Ահա կանգնեց իր առաջ
 Մարմին հագած՝ իր երազը նյութացած,
 Կանգնեց չքնաղ և տիրաբար, անվրդով:
 Բանաստեղծը բոլոր ուշով ու սրտով
 250 Նայեց ձև ու պատկեր առած իր տենչին.
 Նայե՛ց, նայե՛ց և հառաչեց սրտազին,
 Եվ տանջակոծ գլուխն առավ ափի մեջ,
 Երազ–աղջիկն ակնթարթում ցնդվեց:
 - Ի՞նչ, դու գոհ չե՞ս:
 255 - Ո՛չ, ավելի թշվառ եմ.
 Ո՞վ սպանեց իմ երազը՝ սո՛ւրբ, վսե՛մ.
 Գեղեցիկ էր իմ երազը՝ անսահման,
 Եվ անպարփա՛կ, անպարտեղի՛, հավիտյա՛ն...
 - Որովհետև քո երազը նյութ դարձավ,
 260 Եվ որպես նյութ, պարփակվեցավ, պարտվեցավ, –
 Ասաց ոգին անկարեկից, ցուրտ ձայնով:
 Բանաստեղծը բռնեց նրան պիրկ ուժով.
 - Դո՛ւ, սատանա, դո՛ւ ամբարիշտ, փորձի՛ջ օձ,
 Սպանեցիր իմ երազը, չարագոր՛ծ.
 265 Տո՛ւր երազըս. նա էր չքնաղն իրական,

Իսկ սա միայն ցուքը նսեմ, անարժան:
- Ես չեմ կարող հարություն տալ մեռելին:
- Վա՛յ թշվառիս. ես էլ, ես էլ թո՛ղ մեռնիմ...

- Ուշ գիշեր է, և կանթեղը չի կայծում.
270 Կուչ է եկել բանաստեղծը բազմոցում:
Եվ լուսինը անըջային, գունաթափ
Դարձրել է իրերն ամեն անշուշափ,
Ստվերային, հոգիացած, անմարմին.
Հռություն է բազմախորհուրդ և խորին:
275 - Ավա՛ղ, եթե երազիս հետ մեռնեի,
Ի՞նչ բախտավոր, ի՞նչ երջանիկ կըլնեի:
Ո՛հ, սատանա, բարի՛ եղիր զեթ անգամ,
Մեռցրո՛ւ ինձ քո նվազով դյութական.
Մահվան գինին մոռացաբաշխ՝ խմցրո՛ւ ինձ.
280 Ա՛խ, մեռցրո՛ւ ինձ, այլևս չունիմ ուրիշ իղձ...

- Ստվերի մեջ կանգնած նրա սնարին՝
Նվազում է իր ջութակը նա կրկին.
Նվազում է թառամիր վաղահաս
Սիրաներազ կոկոնների չբացված,
285 Կյանքն ու սերը թիթեռնիկի մի օրվա,
Ցամաքումը աղբյուրների բյուրեղյա.
Նվազում է եղնիկներին նետահար՝
Մարած տենչը աչիկների մեջ գոհար.
Անհույս լացը որդեկորույս մայրերի,
290 Մահացումը բոլոր, բոլոր աստղերի.
Ոչնչությունն է նվազում այնպե՛ս հեզ,
Մանուշակի ստվերային բույրի պես.
Եթերային, այնպե՛ս քնքուշ, ցնորուն,
Եվ այնպե՛ս նուրբ, որ կարծես չի նվազում...

295 Եվ լսում է բանաստեղծը նվագին
Արբենալով մահվան գինին քաղցրագին.
Կաթիլ-կաթիլ հյուսվում է նա ու լուծվում
Մահվան երգի ինքնամուսյ հեշտանքում...

Առավոտուն աղքատ խուցում անտերունչ
300 Բանաստեղծին գտան մեռած, լուռ ու մունջ,
Բայց գոհունակ և անդորրած ճակատով,
Բարի մահը դրոշմել էր մոր գլխով
Նրա կարոտ, կենսածարավ շրթունքին
Իր հանգուցիչ՝ զով համբույրը կաթոգին...

<1921>, Ժնև

ՍԻՐՈ ՎԵՊԸ

- Կանա՜նչ ծառի տակ
Նստել էր մենակ
Մի մատաղ գուսան ու կրթօքի վրա՜ն
Սեղմել էր մի սազ, որ ուներ միայն
- 5 Մի դողդոջուն լար:
Կանա՜նչ դաշտն ի վար
Հոսում էր երգով
Զրմբուխտի նրման մի կանա՜նչ վրտակ
Ու մըրմընջում էր անո՛ւշ կայլակով
- 10 Ամպերի մասին ոսկի և սուտակ,
Որ ծըվարում են լեռան գագաթին,
Ուսկից ցատկեց ինքն անդունդը մըթին...
Գուսանը մեղմի՛կ զարկում էր լարին,
Լարը քընքուշի՛կ պատմում էր լրուին
- 15 Մի վեպ սիրային.–
–«Հին ժամանակում
Հակինթ դըղյակում
Ապրում էր չըքնաղ մի երազ–աղջիկ,
Այնպե՛ս գեղեցիկ, այնպե՛ս գեղեցիկ,
20 Ինչպես կարապը՝ թևերն արծաթյա,
Լըճակի փերուզ ջրերի վրա...
Հեռո՛ւ մի տեղից սիրուն մի տղա՛,
Գինով այդ սերից եկել է ահա՛,
Ծունկի է եկել հըրաշք–աղջկա
- 25 Պատուհանի տակ՝ սեր է աղերսում.
–«Զըքնաղ, քո սիրուն
Կըտրել–անցել եմ աշխարհեաշխարհ,
Թողել եմ հայր–մայր
Միա՛յն քեզ համար:

30 Վառ ցընորքիս մեջ աչերըդ տեսա,
Եվ երազելով քո դուռը հասա...»:

Աղջիկը, սակայն, չի լսում նրբան,
Ու միտքն է բերում, ինչպես մի անգամ
Շրքե՛ղ, աննըման եկավ մի ասպետ,
35 Մի հայացք նետեց,
Նըժույգը խըթեց
Եվ անցավ—գընաց ու չըդարձավ ետ:
Լըքել է կույսը դըղյակն հակինթի,
Առել է ձեռքը մի ցուպ երկաթի,
40 Ընկել է թափառ աշխարհաշխարհ՝
Սիրած ասպետին գտնելու համար:
Իսկ տըղան նորից իր սերն է հայտնում.—
—«Իմ սե՛ր հավիտյան, քաղվում է, հատնում
Հոգիս քեզ համար. դարեր կըկանգնիմ
45 Դըռանդ սեմին,—
Եվ մահը դաժան
Ինձ բաժնել քեզնից կարող է մի՛այն...»:

Աղջիկը, սակայն,
Ձի լըսում նրբան.
50 Օտար մի երկրում, անհա՛յտ, անանո՛ւն,
Գըտավ նա հետքը սիրած ասպետի.
Բայց, ա՛խ, ասպետը գնացել է հեռուն
Իր սիրու հետքից. իրեն երազին
Կա՛մ կըտիրանա, կա՛մ ետ չի դառնա,
55 Է՛լ ետ չի դառնա:
Տեղի են տալիս օրերը իրար,
Եվ խեղճ պատանին՝ ծնրադի՛ր, խոնա՛րհ,
Սեր է աղերսում...

- Հեծկըլտաց լարը, դողա՛ց, թրթռա՛ց,
 60 Եվ քնքուշ լարը կըտրվեց հանկարծ...
 Գուսանը սեղմեց կըրծքին սազն անլար.
 Ու նայեց շուրջը տըխուր ու մոլոր,
 Եվ վեպը այսպես մընաց կիս-կատար:
 Բայց մինչև այսօր
 65 Այս թերատ վեպը միշտ իմ ականջում
 Հընչում է անշեջ, և լավ էմ հիշում՝
 Արթո՞ւն եմ լըսել, թե՞ մի անուրջում.
 Ասես մի ըստույգ պատմություն լինի
 Անհաղթ մի սիրո հին ժամանակի,
 70 Որ ապրել է մի հարազատ ոգի...

<1921>

ԱՐԱՔՍԻ ԾՆՈՒՆԴԸ

(Աշուղ Վշտալիի գրույցը.
հատված «Ուստա Կարո»-ից)

Խորունկ են Հայոց ձորերը անտակ,
Սարերը բարձրը, բարձրաչեն գմբեթ. –
Այդ սար ու ձորում հնու՞թ ժամանակ
Մի հայ մայր կապրեր իրեն որդու հետ:

5 Ինչպես կը հնչե ծաղկունանց միջով
Սարի հովն անո՛ւշ, –
Այդպես մեղրաճայն՝
Հոտն առաջ ձգած, սրինգ փչելով՝
Իրկուն տուն կուգար միամոր տղան:

10 Եվ նրանց դրկից կապրեր մի աղջիկ՝
Ոսկի մազերով սարերի եղնիկ.
Ու նրանց սերը գարնան պես ծաղկած՝
Վառ–վառման ծաղիկ:

Այս փուչ աշխարհում ի՞նչ կա փոփոխուն,
15 Բան բախտը մարդուս,
Ի՞նչ կա ամպի պես անհիմն ու փխրուն,
Բան բախտը մարդուս:

Որտեղի՞ց որ էր, մեր աշխարհն մտան
Հայի թշնամիք – մարդակերպ գազան,
20 Եկան քանդեցին մեր տունն ու այգին,
Մահ, ավեր բերին մեր շեն աշխարքին:

Եվ մի օր եկավ մի վայրի հորդա,
Ու այդ հորդայի գլուխ՝բռնապետ
Տեսավ նազելի սիրուն աղջկան,
25 Խլեց մոր գրկեն ու տարավ իր հետ:

Այս տխուր անցքը երբ լսեց տղան,
Ոչխարը թողեց գայլերի բերան,
Գնաց խլելու թշնամու ձեռքեն
Սարերի եղնիկ, անբախտ աղջկան:

30 Տեսավ, ո՛չ տեսնես,–
Սարի կողերին վրանների ծով,
Ու նրանց մեջտեղ մի կարմիր վրան,
Եվ բռնապետի գրկում աղջկան՝
Մազը կըպոկեր լացով ու կոծով:

35 Ու վրա պրծավ հուսահատ տղան,
Դաշույնը խրեց սիրտը գազանի,–
Այն բռնավորի խղամներն եկան,
Փերթեցին մեկտեղ տղին, աղջկան:

Ապա թշնամին, լեշն իրենց մեծին
40 Հետներն առած,
Կատղած, փրփրած՝
Ավեր, ավարով առաջ գնացին...

Մայրը սպասեց միհատիկ որդուն,
Ու օրեր անցան, որդին չեկավ տուն.
45 Հալով, ողբալով ընկավ սար ու քար,
Որդուն կըփնտրեր, որ, ավա՛ղ, չըկար:

Եվ մի առավոտ գտավ իր որդուն,
Նազիկ հարսի հետ՝ մեկմեկու գրկին.
Սուրբ նշխարները համբուրեց լացով,
50 Ու նրանց գրկած՝ ավանդեց հոգին:

Արդար արյունը չի կորչի իզուր. –
Աստծու հրաշքով՝ մոր, հարսի, տղի
Արյուն – արցունքեն հազար ական – աղբյուր
Բխեցին նման լուսեղեն աստղի:

55 Եվ գետին թափված պուտերն արյունի
Անուշ հոտերով ծաղիկներ դառան.
Անուշ հոտերով հազարան գույնի,
Աղբերաց – արյուն, շուշան անթառամ:

Աղբյուրներն ալմաստ ու անապական՝
60 Բլբուլի ձայնով օրոր ասացին,
Ծաղիկներն անբիծ ու անմահական
Ծածկեցին անզարդ քուն մտածներին:

Այն սև օրվանեն Բյուրակն են կոչվել
Գմբեթ սարերը բյուր – աղբյուրներով.
65 Այն սև օրվանեն սարերն են գուգվել
Զոհված արյունի վառ ծաղիկներով:

Ու այդ ակաները հայոց սարերին
Իջել են, կուգան ու կիջնեն էլի,
Հյուսվելով իրար՝ մեկտեղ դառել են
70 Մեր Մայր – Արաքսը՝ հազար սիրելի:

<1922>

ՈՐԳԻԱԿԱՆ ՍԵՐ

- Մի մայր ունեւր չորս հատ որդի:
Մեկը՝ ուսած, հռչակավոր,
Ունեւր ամբիոն վարժապետի.
Սակայն մյուսը՝ կրօնավոր,
5 Մի քահանա սրբակենցաղ.
Եվ երրորդը՝ վաճառական,
Հայն ձեռնարկներ, մեծ առուծախ.
Իսկ վերջինը... Թափառական,
Կարիքի մեջ՝ աղքատ ու խեղճ:
- 10 Երբ մահն եկավ, մայրը աստծուց
Շնորհ խնդրեց – տեսնել չիրմից,
Թե ինչպիսի՞ վերաբերում
Պիտ ունենա որդիներին:
Վարժապետը գրեց ներբող,
15 Աղոթք կարդաց սուրբ քահանան,
Եվ հարուստը նվիրեց փող.
Բայց հեզ որդին Թափառական
Բեկված սիրտը մորը բերեց...

1926, Հունիսի 27, Վենետիկ

ԱԹԹԻԼԱՆ ԵՎ ԻՐ ՍՈՒՐԸ
(առասպել)

I

Կա մի հզոր, մի ահեղ սուր
Ողուզների ժամանակից,
Խորունկ թաղված մի կաղնու տակ
Վրկանա բորբ տափաստանում:

5 Հորդաները խուժ հոների,
Ակոսել են տափերն անծիր,
Եվ չեն գտել սուրը հզոր
Ժամանակի սկիզբներից:

10 Եվ Աթթիլան երազ տեսավ,
Երազի մեջ – տեղը սուրի.
Խլեց կաղնին խոր արմատից,
Հանեց սուրը հին պապերի:

15 Վրկանա մութ ծովի վրա
Կայծակն ահեղ փայլատակեց,
Երբ Աթթիլան ճոճեց սուրը
Արևմտյան աշխարհի դեմ:

20 Եվ Բոսփորի, Հռենոսի,
Եվ Դանուբի, և Տիրերի
Ալիքները մթազնեցին,
Երբ Վրկանա ծովը շողաց:

- Արդ, դողացե՛ք, սասանեցե՛ք,
Արևմուտքի խարդախ ցեղեր,

Դո՛ւք, հաստ Հռովմ, մեղկ Բյուզանդիոն,
Բերում եմ ժանտ վախճանը ձեր:

25 Պիտի փշրեմ, կրակի տամ
Ոստանները, գահերը ձեր,
Քաղաքները, դղյակները,
Դպրոցները, վանքերը ձեր:

30 Օրենքները չղթա են ձեր,
Ձեր բարքերը՝ կնամարդի.
Ձեր գրքերը սուտ են ու սին,
Ձեր աստվածը՝ չահ ու բաժին:

35 Պիտի կըքին իմ սուրի տակ
Արքա, իշխան և քահանա,
Եվ պիտի ձեր քաղաքներում
Վրկանա գոռ գայլը ոռնա:

40 Ձիուս կոխած սմբակի տակ
Եվ իմ անցած ուղիներով
Էլ չպիտի ծաղկի մի ծիլ
Ձեր հայրենի պիղծ հողերում:

Ասաց. հեծավ խուլական ձին
Առանց սանձի, վարավանդի.
Ոտներով պիրկ՝ խթանեց ձին
Եվ մխրճեց սուրն արևմուտք:

45 Մոմոացին, մոնչացին
Հորդանները հեղեղ-հեղեղ,
Եվ խաժամուժ ծով կապեցին
Վրկանա գոռ ծովի բոլոր:

50 Եվ խթանեց ձին Աթթիլան,
Վրկանա գայլն առջևն առած,
Եվ մխրճեց սուրն արևմուտք,
Վրկանա գայլն ոռնաց վայրագ...

Հորդաները մրրկվեցին,
Եվ ճեղքելով ծով ու ծապան՝
55 Անտառները տապաստ ընկան,
Գյուղ ու քաղաք մահի ավար.
Ամպերն ելան խարուկների
Եվ ծածկեցին նենգ Եվրոպան:

II

Երբ Աթթիլան խուժ հոների
60 Վրկանա բորբ տափաստանում
Կաղնու խորին ճիրաններից
Կորզեց սուրը Ողուզների, –
Վաղուց ծարավ լեզվի նման
Պապակում էր սուրն արյունի,
65 Եվ օձի պես գալարվում էր
Կուռ ափի մեջ Աթթիլայի,
Ընդվզում էր պատյան մտնել,
Եվ չէր հանգչում պատյանի մեջ,
Եվ մղվում էր պատյանից դուրս
70 Դեպի արյան արբեցումի:

Եվ Աթթիլան՝ սուրը ձեռին,
Անցավ հուռթի դաշտերն անծիր
Ըսկյութիայի և Դակիայի,
Թանայիսից մինչև Դանուբ,

- 75 Սրի քաշեց հովիվներին,
Ռամիկներին, ազատներին,
Սրի քաշեց գեղջուկներին.
Արյամբ ներկեց գետ ու գետին,
Եվ չհագեցավ սուրը սակայն:
- 80 Արդեն ծփում էր արյան մեջ
Հեգ Եվրոպան մինչ Գալլիա,
Ուր Աթթիլան վարեց սրով
Ազգեր, ցեղեր իրարու դեմ:
Եվ Կատալաւնյան ռազմադաշտում
- 85 Հազար ու բյուր ընկան տապաստ,
Ուր դեռ օդի ոլորտներում
Ուրուները ռազմիկների
Մարտնչում են կատաղաբար
Իրար անհաշտ ու ոխերիմ:
- 90 Բայց Աթթիլան և ոչ մի պահ
Դադար չառած խուժեց դեպի
Զքնաղ ափերը Վենետի.
Արյունախանձ սրին մատնեց
Աքվիլեյան հրաշակերտ.
- 95 Եվ չհագեցավ սուրը սակայն:

- Արյան անհագ արբեցումի
Տենչով վառված սուրն ահավոր
Տանջում էր հույժ Աթթիլային
Երազներում և արթըմնի:
- 100 Ընդվզում էր մտնել պատյան,
Զէր դադարում պատյանի մեջ
Եվ մղվում էր պատյանից դուրս,
Եվ օձի պես գալարվում էր
Կուռ ափի մեջ Աթթիլայի:

- 105 Պաննոնայի արձակ դաշտում
Վես Աթթիլան՝ կուրծքը բացած,
Կանգնեց մի օր առավոտյան:
Սուրը երկինք նետեց թափով,
Սուրը իջավ շառաչումով,
110 Պատռեց կուրծքը Աթթիլայի,
Մըխվեց սրտում Աթթիլայի,
Ընկավ մեռած՝ Աթթիլան վար, –
Եվ խաղաղվեց սուրը վայրագ,
Արյան ծարավը հագեցավ:

1932, Փարիզ

ԱՎԳՈՒՍՏԻՆՈՍԻ ՏԵՍԻԼՔԸ

Միշտ ի խնդիր տիեզերքի անհատնում
Խորհուրդների, հրաշքների իմացման՝
Երանելին Ավգուստինոս ծովափում
Մտալլուկ դեգերում էր մի անգամ:

5 Հանկարծ տեսավ, որ մի մանուկ հեհեհ
Իրեն քնքուշ, պստիկ փոփ, անդադրում,
Ջուր էր վերցնում անծիր ծովից և լցնում
Ավազի մեջ շինած փոքրիկ մի տաշտում:

10 Նորից վերցնում և լցնում էր նա նորից,
Եվ ջուրը հար դեպի ծովն էր ծծվում ետ:
Ի՞նչ հավատով ճիգ էր թափում ապարդյուն,
Տարերքի հետ ի՞նչ մրցում էր անհեթեթ:

- Ի՞նչ ես անում, - հարցրեց նա մանուկին:
- Ուզում եմ ծովն այս փոսի մեջ զետեղել:
15 - Ի՞նչ անմիտ խաղ. ի՞նչ հանդուգն տենչ է այդ, -
Ասաց սուրբը և կամեցավ քայլ անել:

- Հապա, ո՛վ հայր, դու ինչպե՞ս ես հանդգնում
Տիեզերքը՝ այնպես անեզր ու անբավ,
Ջետեղելու այնքան փոքրիկ քո զանդում... -
20 Մանուկն ասաց, և տեսիլքը չքացավ:

1932, Փարիզ

ՍԻՐԱՀԱՐ ՆԱԴՈՆ

- Կտրիճ Նադոն քըշեց ալ ձին
Յայլաները Ալադյադի,
Քըշեց եկավ, եկավ կանգնավ
Կոնի առաջ Գյուլիզարի:
- 5 Թռավ ձիուց, կոնի աջ դին
Ջարկած սեւից կապեց ալ-ձին,
Սուր նիզակը խըրեց գետին,
Խըրեց գետին կոնի ձախ դին:
Բանձըր բռնած գլուխը սեգ,
- 10 Ձեռքը դըրած ոսկե կոթին
Դադստանի կեռ խանչալի, -
Կտրիճ Նադոն մտավ անվախ
Հոր վրանը Գյուլիզարի:
Առանց սալամ տալու, Նադոն
- 15 Գյուլիզարի առաջ կանգնավ:
Լուռ գիտեին սրտերն իրանց,
Որ սիրում են նրանք իրար, -
Բայց երկուսն էլ հպարտ էին՝
Կտրիճ Նադոն ու Գյուլիզար:
- 20 Մեկն ուզում էր՝ մեկելն առաջ
Իրան սրտի գաղտնիքն ասե,
Որ հետո խեղճ, չինքը ծուռ,
Գուլթ պաղատե հպարտ յարից:
Էսպես առանց սալամ տալու
- 25 Նադոն դարձավ Գյուլիզարին.
- Ո՞վ է ասել քեզ,
Ա՛յ ջաղու խըճե,
Թե սեր ունիմ ես,
Սեր ունիմ վրադ:
- 30 Ո՞վ է ասել քեզ,

Այ ջադու խրճե,
Թե օր ու գիշեր
Սիրտս մըխում է
Քու տեսքին կարոտ:

- 35 Սերըդ աչքերըս մոռժով չի պատել,
Սար ու դարերը չի պատել մոռժով:
Ունեցածդ ի՞նչ է,
Այ ջադու խրճե,
Որ շուքիդ գերի՝
40 Հավիիմ ու մաշվիմ...

Շիտակ է, որ դու քառսուն ծամ ունիս,
Որ մեջքիդ բուրբ փաթուլթ են գալիս,
Բայց քու ծամերըդ մուշկի հոտ չունին,
Ու աբրեշումի փայլվիլանք չունին:

- 45 Շիտակ է, որ դու աչքեր ունիս սև,
Երկու սև օձեր՝ խոռ-խոռ ծվարած,
Բայց աչքերիդ մեջ կրակներ չկան,
Մեռած են, մարած քու սրտի պես սև:

- 50 Շիտակ է, որ քու հասակդ բանձր է,
Հասակդ բանձր է, մեջքդ բարակ է,
Բայց հասակըդ չի ծփում բարդու պես,
Ու իսան-Արագի եղեգների պես
Մեջքդ ճրկուն չէ:

- Հագել ես, կապել ատլաս, դանավուզ,
55 Ու դեմքիդ վրա երկու մոռ խալ կա,
Բայց քու թշերը վարդի թերթեր չեն,
Կարմիր ու վառման, վարդի պես անուշ:
Սերըդ աչքերս մոռժով չի պատել,
Մոռժով չի պատել աշխարքը աչքիս:

60 Լա՛վ իմացիր դու, առանց ափսոսի
 Կերթամ, կհեռանամ ես քեզնից հիմի,
 Առանց ախ քաշել կընկնեմ սար ու ձոր,
 Կռիվ կըմտնեմ՝ ով դեմքս ելնի:
 Դուժման դաշտի մեջ կընկնեմ վիրավոր,
 65 Կըմեռնեմ առանց անուներդ տալու,
 Ու չեմ փափագի, որ վերջին անգամ,
 Մեռնելուս շեմին, թեկուզ երազով,
 Քու ձայնըդ լսեմ, աչքերըդ տեսնեմ...

Էսպես ասավ Նադոն,
 70 Աղջիկը բերան չբացեց.
 Կոնից դուրս ելավ Նադոն,
 Նիզակն հանեց գետնից,
 Բռնեց ձիու բաշից,
 Բռնեց, որ հեծնի.-

75 Մեկ էլ... դառավ ետ,
 Ու կոնի շեմքին
 Ընկավ ծնկների վրա.
 - Ո՛վ մալաք, ո՛վ հյուրի-փերի,
 Սրտիս սիրական Գյուլիզար,
 80 Աստված գիտե, դու էլ գիտես,
 Որ սուտ եմ ասում, սուտ:
 Ա՛խ, մեռնում եմ քեզ համար.
 Հոգիս բերանս է եկել, յա՛ր:
 Աշխարքի մեջ, ծովերի վրա
 85 Ջկա քեզ նման, չկա քեզ նման,
 Սիրուն, գովական Գյուլիզար,
 Դու սիրուն, սիրուն, սիրուն,
 Հազար անգամ հազար...

1934, Փարիզ

ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼ

- Երբ Յահվեն մարդուն ստեղծեց հողից,
Հավաքեց հողը երկրի չորս կողմից –
Առավ հյուսիսից, հարավից առավ,
Ե՛վ արևելքից, և՛ արևմուտքից,
5 Որպեսզի մարդը, ուր որ դեգերե,
Ամեն տեղ իրան ըզգա իր երկրում.
Եվ երբ որ հոգնի, և մահը բերե
Նրա անհագուրդ տենչանքներին վերջ,
Ամեն տեղ լսե ձայնը մայրական.–
10 «Արի՛, որդյա՛կ իմ, հանգչի՛ր գրկիս մեջ»:

1935, Հուլիսի 11, Փարիզ

ՅԱՀՎԵԻ ՎՐԵԺԸ
(հրեական ավանդակեայ)

Միակ ժառանգն էր Մովսեսը ներհուն
Փարավոնների հզոր բազուկի,
Սակայն գիտեր, որ արյունն է կրում
Մեծ Իսրայելի ընտրագույն ազգի:

5 Իր եղբայրներին տեսնում էր գերի,
Գիշեր ու ցերեկ խոշտանգված մշակ,
Կարկառների մեջ դժխեմ բուրգերի
Քաղցած ու ծարավ, մտրակների տակ:

10 Եվ մորմոքում էր սիրտը Մովսեսի,
Վրեժ էր ուխտում մեծ Տան՝ դեռ դաժան,
Բայց երբ շրջում էր մի օր մեկուսի՝
«Ո՞վ ես դու», — մի մարդ հարցրեց նրան:

«Եգիպտացի եմ», — խրո՛խտ, սխրաբա՛ր
Պատասխան տվեց հրեա պատանին.
15 Հետո դեպքն այս նա մոռացավ իսպառ՝
Ձոնվելով ամբողջ իր ազգի վշտին:

Երբ փարավոնի երկրից անօրեն
Մինչ ափը կապույտ՝ Ավետյաց Երկրի,
Տոհմերի հովիվ Մովսես մարգարեն
20 Ազատեց, բերեց զարմն Իսրայելի, —

Երբ քառասուն ամ հետո ամբոխի հետ
Տոկաց, դեգերեց Սին անապատում,

* Մեծ տուն — փարավոնների տոհմը:

Կըրեց բազմազան անցքեր չարաղետ,
Մարտնչեց անդուլ, տքնեց անպատում,

25 Եվ երբ ծերունու ծունկերն հոգնատանջ
Սուրբ հողում հիմա պիտի հանգչեին,
Մահը՝ անողոք և խստապահանջ
Կանգնեց սրբամերկ նրա առաջին:

Մովսես լալագին խնդրեց Յահվին,
30 Որ վանե մի պահ ժամը օրհասի,
Մինչև Մովաբի լեռներն անցնեին,
Մինչև համբուրեր Հողը Երազի:

Սակայն Յահուվեն՝ վատին ոխերիմ,
Հագուրդ չըտվեց Մովսեսի ըղձին,
35 Միշտ մտքի մեջ էր նրա վաղեմի
Ուրացումն իրեն արյան ու ցեղին:

Եվ արդարադատ Յահվեն խստաբար
Պատժեց Մովսեսին, իբրև դրոժանի.
Օտար վայրում նա մեռավ տենչավառ,
40 Հայրերի հողին չեղավ արժանի:

1936, հունվարի 25, Փարիզ

Սովորատեսը դատապարտված էր մահվան
Աթենական ամբոխավար ատյանից:
Նա ձաղկել էր չար կարգերը պետութւթյան
Եվ համայնքի բարքերն հոռի, մեղսալից:

5 Նա փոխարեն օրենքների մարդադավ՝
Բարձրացրեց իմաստութւթյան կատարին—
Խղճի ձայնը, ազատ միտքը, սերն անբավ,
Գեղեցիկը, ճշմարիտը և բարին:

10 Եվ ահա նա շղթայակապ, բանտի մեջ,
Սպասում էր մահվան ժամին անվրդով,
Բայց մի հմուտ երաժիշտի թախանձեց,
Որ մոտը գար մի կարևոր խորհրդով:

Եկավ շուտով երաժիշտը անվանի.
- Ողջո՛ւյն, — ասաց, — ով իմաստուն Սովորատես,
15 Ինչո՞վ եղա ես քո կոչին արժանի,
Ասա, խնդրեմ, ես պատրաստ եմ եղբոր պես:

- Շատ եմ խնդրում, եղբա՛յր անգին, որ հաճիս՝
էությունը երաժշտութւթյան մեկնել ինձ.
Կյանքը կարճ է, տգիտությունը՝ երկար,
20 Սակայն լավ է՝ չհրաժարվել առիթից:

- Բայց չէ՞ որ դու... ո՛հ, պաշտելի բարեկամ... —
Եվ կարկամեց երաժիշտը ապշահար:
- Այո՛, սակայն մահիցս առաջ կըցանկամ
էությունը այդ արվեստի իմանալ:

25 Երբ մեկնում էր երաժիշտը երկյուղած
Գաղտնիքները, խորհուրդները արվեստի, –
Իմաստության անմահ լույսով ճաճանչված՝
Հրճվում էր անհաղթ ոգին Սոկրատի:

1936, Հոկտեմբերի 31, Աթենք

ՀՈՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ
(հայ ժողովրդական առասպել)

Ասում են, թե՝ կար ժամանակ, շատ առաջ,
Երկրի վրա գառ ու ոչխար չըկային.
Լոկ դրախտի արոտներում հիասքանչ
Ապրում էին գառն ու մաքին երկնային:

5 Սիրուց լքված մի պատանի սրտաբեկ
Թափառում էր Արագածի լանջերում.
Թափառում էր անմխիթար, անընկեր,
Ինչպես զրկված իր եղնիկից եղջերուն:

10 Նվագում էր ջինջ սրինգով եղեգնի
Իր կարոտը, մենությունը տխրագին,
Թախանձում էր աղբյուրներին, ժայռերին,
Որ լինեին իրան ընկեր անմեկին:

Աղբյուրները հառաչելով ասացին.
- Գնացող ենք, ինչպե՞ս մնանք մենք քեզ հետ,
15 Եվ ժայռերը հառաչելով ասացին.
- Մնացող ենք, ինչպե՞ս գնանք մենք քեզ հետ:

Ոչխարները՝ հեզ ու բարի, լսեցին
Մրմունջները այն պատանու վշտահար.
Եվ մայելով՝ դրախտից դուրս վազեցին,
20 Երգով դուլթված, եկան իջան լեռն ի վար:
Գառն ու մաքին բոլորվեցին նրա շուրջ՝
Սրտանվեր նրա քաղցր սրինգին.
Նրան խոնարհ հետևեցին ամենուր,
Եղան ընկեր սիրով, սրտով անմեկին:

25 Այն օրվանից սուրբ սարերում բույն դրին
Հոտն ու հովիվ՝ նվիրական ու արդար.
Այն օրվանից սուրբ սարերի բարձունքից
Իջավ բարին ու ծավալվեց ողջ աշխարհ:

1937, հոկտեմբերի 7, Երևան

ԺՈՂՈՎՐԴԻ ՔՆԱՐԸ
(սերբական լեզենդ 18-րդ դարի)

Փայլատակում է յաթաղանը կեռ
Արյունաթաթախ Սերբիայի վրա.
Եվ կոնչում են ագռավներն արբշիռ
Դիերով ծածկված դաշտերի վրա:

5 Աբդուլլահ փաշան, ահեղ բռնակալ,
Այսօր շատ ուրախ, երջանիկ է շատ,
Իր կազմած վայրագ ջարդերի համար
Ստացել է նա Սուլթանից խալաթ:

10 Աբդուլլահ փաշան, Սերբիայի դահիճ,
Ճերմակ Բելգրադի պերճ ապարանքում
Այսօր ի պատիվ բարձր պարգևին
Խնջույք է տալիս, փարթամ կերուխում:

Բազմել է փաշան սադաֆե թախտին,
Ոսկե գավաթով շերբեթ է խմում,
15 Ու երագում է՝ աչքը գավաթին,
Թե ուսկոկների արյունն է խմում:

Փաշայի շուրջը նստել են շարքով
Ենիչարները՝ մռայլ ու դաժան,
Սեղանն է բուրում ճոխ խորտիկներով,
20 Շերբեթն է հոսում Դունայի նման:

Զվարճանում են ենիչարները,
Հաշվում են իրենց սուր յաթաղանով
Մեկեն թուցրած սերբ գլուխները,
Եվ հռհռում են դիվական խանդով:

25 - Հե՛յ, դահլի՛ճ բերեք այն ծեր Միրկոյին,
Որի չորս ուղիւն գերի ենք առել.
Այն կույր գուլյարին, որ հզոր երգով
Սերբերի սրտում կրակ է վառել:

Գնացին, բերին գուլյարին ծերուկ.
30 Ներս մտավ Միրկոն՝ գուլին ուսից կախ,
Նստեց գլխահակ, լուռ ու անշշուկ,
Աչքերն անհայացք՝ նետեց աջ ու ձախ:

- Լսիր, դու, ծերո՛ւկ, - ասում է փաշան, -
Իմ ոտների տակ Սերբիան ճզմեցի,
35 Բայց երգիդ համար հարգանքիս նշան՝
Քո զավակների կյանքը բաշխեցի:

Ինձ պանծացրո՛ւ, երգի՛ր ինձ համար,
Ներբողի՛ր փառքըս անմահ դաստանով,
Աշխարհն իմանա իմ գործերը վեհ,
40 Քանի կան մարդիկ, կա ցամաք ու ծով:

Եվ խոստանում է ոսկի ու գոհար,
Նորից խոստանում ձիեր ու այգի.
Բայց լուռ է Միրկոն՝ գուլին ուսից վար,
Լուռ է դահլիճը պերճ ապարանքի:

45 - Միրկո՛, ա՛յ գլավուր, երգվում եմ ահա
Մեծ մարգարեի հզոր անունով,
Չորս զավակիդ էլ կարձակեմ հիմա,
Ազատ կերթաք տուն, խաղով, խնդումով:

50 Տեսնում է Միրկոն – որդիներն ուրախ
Տուն են դառնում ողջ, ազատ, միաստեղ,
Բայց լուռ է նորից, գուսլին ուսից կախ,
Լուռ է խնջույքի դահլիճը չքեղ:

Ինչպես բորենին՝ որսին ակնդետ՝
Չոքել է փաշան սադաֆե թախտին,
55 Իսկ Միրկոն, ինչպես ամպրոպ մթնաժետ,
Ըմբոստ Բալկանի խրոխտ ճակատին:

- Ո՛վ թշվառ գյավուր, – գոռում է փաշան, –
Երգի՛ր անհապաղ, հրամայում եմ,
Իսկ եթե չերգես, վկա է ալլահն,
60 Չորս դավակիդ էլ ցըցի կհանես:

Տեսնում է Միրկոն՝ հեգ որդիներին
Իր աչքի առաջ ցըցի են հանում,
Սարսափն է պատում դժբախտ գուսանին,
Բռնում է գուսլեն ձեռքով դողդոջուն:

65 Աղեղն է հպում արծաթ լարերին,
Ճգնում է Միրկոն շարժել լարերը,
Ձի հնազանդվում սիրտը աղեղին,
Եվ կարկամում են դալուկ մատները:

Ուզում է փրկել հեգ որդիներին.
70 Ճգնում է հյուսել փառքի դաստանը,
Չեն հնազանդվում խոսքերը սրտին,
Եվ կոկորդի մեջ խեղդվում է ձայնը:

Տեսնում է Միրկոն՝ յաթաղանը կեռ
Փայլատակում է Սերբիայի վրա,

75 Եվ թւածում են ագռավները դեռ
Դիերով ծածկված դաշտերի վրա:

Միրկոն ցասումով կանգնում է ոտքի,
Զարկում է թափով գոլալեն հատակին,
Եվ երեսնիվեր ահեղ փաշայի

80 Միրկոն հաղթական ճչում է ուժգին.

– « Ո՛վ սրիկաներ, ճիվադ, տմարդի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ավել, առավել,
Սակայն իմացե՛ք,
Որ ժողովրդի քնաբը երբեք

85 Ձի կարող ստել...»:

1937

ԱՌԱՎՆԵՐ

ԱՌԱԿ
(Աստվածաշնչից)

Ժողովեցան մի օր ծառ ու ծիլ բոլոր,
Որ իրենց համար ընտրեն թագավոր.
Շատ խորհուրդ արին ու դարձան ապա
Ասին ձիթենուն.-

- 5 - Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա:
- Իմ ինչի՞ն է պետք,- ասաց ձիթենին,-
Ես իմ գործն ունիմ, չէ՞ որ ամենին
Սնունդ եմ բաշխում իմ պտուղներով.
Ես ինչպե՞ս իշխեմ իմ բարությունով:

- 10 Նորից խորհեցին ու դարձան ապա
Ասին թզենուն.-
- Եղի՛ր թագավոր, իշխի՛ր մեր վրա:
- Ո՛չ, ինձ հարմար չէ,- ասաց թզենին,-
Ես հաճելի եմ չէ՞ որ ամենին՝

- 15 Քաղցրիկ ու անուշ իմ պտուղներով.
Ես ինչպե՞ս իշխեմ իմ քաղցրությունով...
Խորհրդի նստան և խաղողենուն
Եկան դիմեցին:
-«Ինչե՛ր եք ասում,

- 20 Թողնեմ իմ գինին՝ ոսկի ու պայծառ,
Որ ցնծությունով լեցնում է աշխարհ,
Զվարթ երգերով թնդում սար ու ձոր.
Ո՛չ, իմ բանը չէ՝ լինել թագավոր...»:

- 25 Երկար խորհեցին ծառ ու ծիլ բոլոր,
Որ չար տատասկին անեն թագավոր.
Ծառ ու ծիլ բոլոր հավաքված եկան
Եվ հեզ ու խոնարհ խնդիրքի կեցան.

- Եղի՛ր Թագավոր, իշխի՛ր մեր վրա:
- Կըլնիմ Թագավոր, և դրա համար
30 Իմ սուր փշերով ես շա՛տ եմ հարմար.
Կըխոցեմ խորին, վա՛յ նրա օրին,
Որ չըհնազանդի իմ օրենքներին.
Եկե՛ք, Թուփիս տակ մտե՛ք ապաստան...-
Ասաց և սրեց փշերը դաժան...

1906, Ղազարապատ

ՀԱՅՆ ՈՒ ՎՐԱՑԻՆ

- Ամռան մի օր փշոտ ճամփով
Մի վրացի ու էլ մի հայ
Գնում էին զրույց տալով
Մի մշտական խնդրի վրա:
- 5 – Դո՛ւք, հայերդ, մի՛ նեղանար,
 Փողն աշխարհում շա՛տ եք սիրում:
 – Է՛հ, ճաշակի հարց է, եղբայր,
 Դուք էլ գինի շա՛տ եք սիրում:
 Մեկ էլ ահա – ճամփու միջին
- 10 Տեսան մի վառ, ոսկի դրամ.
 Իրենց մոռցած՝ վրա տվին,
 Իրար քաշին ու վար ընկան,
 Իրար օձիք պատառեցին, –
 Փռչի ելավ ամպի նման.
- 15 Քիչ խմած էր մեր դրացին,
 Ոսկին ընկավ հայի ձեռքին.
 Իսկ դրացին մեր զայրացած
 Փռչեկոլով, քեֆը թողած,
 Հայհոյելով փողն ու հային՝
- 20 Գնաց, փարեց սոցիալիզմին...
-

Միտքը պարզ է իմ առակի,
Ու դժվար թե մարդ առարկի –
Փո՛ղ երկուսն էլ շա՛տ են սիրում,
Բայց քոռ բախտից հայն է տիրում...

<1906>

ՄՈԼԼԱՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մոլլան ելավ կեսօրվա դիմ
Բարձր ու ոլոր մինարեն.
Նեցուկ տված ձեռքն ականջին՝
Աղոթքն ուղղեց արարչին:

- 5 Հետո հենվեց շրջափակին,
 Նայեց ներքև՝ քաղաքին.
 - Պա՛հ, պա՛հ, մարդիկ ինչքա՛ն փոքր են,
 Ոտներիս տակ հավեր են:

- Խաղում էին ու վազվրզում
10 Մանուկները պարտեզում.
 - Հե՛յ, մինարի ծայրին, տղե՛ք,
 Ծիտ է նստել, նայեցե՛ք...

1910

ՀԱՃՈՒՅՔՆ ՈՒ ՄԱՀԸ
(Հայամավուրքից)

- Մի մարդ էր փախչում հոգին բերանին՝
Իր հետևն ընկած ահեղ գազանից.
Եվ փախչելիս նա ոտների տակին
Տեսավ մի խոր գուռ, որի չլթունքից
- 5 Մի թուփ էր աճել անդունդի վրա:
Եվ գուռն իջավ նա՝ թուփից կախվելով,
Ոտները խրեց խորշերում նրա,
Ու մի պահ զգաց իրեն ապահով:
- Եվ երբ աչքերը նետեց նա վերև՝
- 10 Սոսկումով տեսավ, որ երկու մեծ մուկ,
Մեկը՝ սպիտակ, և մյուսը՝ սև,
Փոխեփոխ կրծում, ուտում են ծածուկ
Այն դալար թուփի արմատներն ամեն:
Եվ ուզեց տեսնել հատակը գուռի,
- 15 Ուր մկներն իրեն վար պիտի ձգեն՝
Մաշելով հիմերն փրկարար թուփի. –
Սարսափով տեսավ – մթին խոռոչում
Մի դաժան վիշապ, ահավոր, տձև,
Ժանտ երախը բաց, սև բոց է փնչում,
- 20 Իսկ խորշերի մեջ, ոտների ներքև,
Գալարվում էին կծիկն իժերի,
Որոնք շչալով վեր էին սողում՝
Գարշապարները խայթելու խեղճի,
Որ զարհուրանքից խիստ էին դողում...
- 25 Եվ երբ վերստին նայեց նա վերև,
Տեսավ՝ այն թուփից ծորում են անուշ
Մեղրի կաթիլներ, և մարդը թշվառ
Կորցրած ամեն փրկություն և հույս,

- Սկսեց ծծել, ծծել անդադար
30 Ծորանքը մեղրի՝ քաղցր ու հմայուն:
Եվ այն ծծելով՝ անդուլ ու անհագ,
Մոռացավ իսպառ սարսափ ու սոսկում,
Իր բախտը դժխեմ, գազանին վայրագ,
Որ մոռնում էր իր գլխի վրա,
35 Ահեղ վիշապին, որ բոց էր փնջում,
Ժահրոտ իժերին, մկներին ագահ...
-

- Այս թշվառ ոգին՝ կախված անկայտն՝
Կյանքի - մահի մեջ, ո՛վ մարդ, այդ մենք ենք,
Իսկ գազանն ահեղ - կարիքն է դաժան,
40 Եվ այն գուբը մուլթ - աշխարհն է անելք.
Իսկ մկներն ագահ - գիշերն ու ցերեկ,
Որոնք կրծելով տալիս են իրար
Մեր կյանքի թելերն և ուտում մեկ-մեկ.
Կծիկն իժերի - ցավերն անհամար,
45 Ախտ, հիվանդություն՝ մեր շուրջը հավերժ,
Իրենց թույները թափում են մեր մեջ:
Եվ վիշապն ահեղ - մահն է, գերեզման,
Մթնում դարանած և երախը բաց,
Ըսպասում է մեզ վաղ թե անագան.
50 Իսկ թուփը կյանքն է անհիմն և ունայն,
Որ բողբոջում է անդունդի վրա.
Եվ մեղրը անուշ - հաճույքն է նրա,
Որով արբեցած մոռանում ենք մենք
Աշխարհն ահավոր, մեր բախտը դժնյա,
55 Ցալն ու ժամանակ, գերեզման ու մահ:

1910, Ղազարապատ

ԳԱՅԼՆ ՈՒ ՍՈՒՍԱԿԸ

Այս վաղեմի չար աշխարհում,
Գարնան մի օր, լուսածագին,
Անտառի մեջ գայլը բռնեց
Սոխակին:

5 Գայլի ճմլող, սուր ճանկերում,
Նուրբ հույզերի երգիչը հեզ
Թպրտում էր ու ծղրտում
Սրտաբեկ:

10 - Պա՛հ, - գայլն ասաց, - հռչակ ունես,
Թե երգերի մեծ վարպետ ես.
Անուշ ձայնըդ սա՞ է միթե,
Սուտասա՞ն:

15 - Այո՛, ճիշտ է, - սոխակն ասաց, -
Վարպետ եմ ես հռչակավոր,
Բայց միայն թե՛
Մայր բնության ազատ գրկում,
Եվ ո՛չ դաժան քո ճանկերում,
Ո՛վ զազան:

1915, Ժնև

ԱՌԱԿ ԱՂՎԵՍԱԳՐՔԻՑ

Չարամանկ կատուն ձըգեց իր վըրան
Փիլոն մի անգամ,
Դարձավ կարգավոր
Եվ ուղղեց պատգամ
5 Մըկնեերին բոլոր.-
- Մի՛ վախե՛ք, - ասաց, - ինձնից այսուհետ,
Ջըղջում եմ արել,
Սուրբ կարգ եմ առել՝
Արյուն չըթափեմ, և ձեզ հետ հավետ
10 Եղբոր պես ապրիմ
Սիրով մըտերիմ:

Մըկնեերը նըրան տըվին պատասխան.
- Տեսնում եմք, իլավ,
Մըտել ես կարգը աբբա Մարկոսի,
15 Բայց սուտ մի՛ խոսի,
Չես փոխի բընավ
Քո դաժան բարքը, ոճրագործ վարքը:

1922, ապրիլի 28, Վենետիկ

ՎԱՐԱՋՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

- Վարազը ժեռուտ քարերի վրա
Անխոնջ եռանդով
Սըրում էր մեկ-մեկ ժանիքներն իրա:
Հեզնող ժպիտով
- 5 Աղվեսը նրան հարց արավ, ասաց.
- Ո՛վ կտրիճ եղբայր,
Ո՛չ կռվի լուր կա և ո՛չ էլ կասկած,
Ի՞նչ ես վայրապար
Ծով-քրտինք մտել ու քեզ հարչարում:
10 Իսկ վարազն այսպես պատասխան տվավ.
- Ամբողջ աշխարհում
Խորամանկ, խելոք
Հանել ես համբավ,
Բայց խելքդ, իրոք,
15 Հավնոցից հեռու չի անցնում բնավ:
Զինվորը պիտի
Խաղաղության մեջ և ո՛չ թե մարտի,
Զենքերը սրե, և պատրաստ ու կազմ՝
Ահալուրջ լինի:
20 Գիտցի՛ր, որ ժանգն է ծնել պատերազմ,
Սրբած թրի դեմ դուրս գալ ճակատի
Թշնամին նվազ ախորժակ ունի:

1922, օգոստոսի 14, Վենետիկ

ԹՈՒՐՔՆ ՈՒ ԵՎՐՈՊԱՆ

(Առակ)

Մարդու մեկը աներկյուղ
Կըհալածեր, կըծեծեր ում որ սիրտը կամենար:

Եվ մի օր էլ քաղաք – դյուղ

Խուսք մեկ արին, միացան

- 5 Ու բռնեցին այդ մարդուն, առան տարան դատարան:
Դատավորը երբ լսեց գանդատները անհամար,
Վկաների երդումով վավեր փաստեր ու ցուցմունք,
Զայրացազին հարցրեց. –Քեզ ո՞վ տվավ իրավունք
Ծեծել մարդկանց ինքնակամ, շո՛ւտ տուր ինձ պատասխան:

- 10 –Թագավորից ես ունիմ մարդ ծեծելու հրաման
Եվ կնիքով հաստատված արքայական վեհ Ֆիրման:
Շշուկ ընկավ սրահում,
Իրարանցում ու սոսկում:
–Հապա՛, տեսնեմ ֆիրմանը,– դատավորը ձայն տվավ:

- 15 Մարդը հանեց իր ծոցից թղթերի հոծ մի ծրար,
Որ միշտ ուներ պատրաստի այսպիսի օրվա համար,
Ելավ հանձնեց անխռով՝
Դատավորին իր ձեռքով:

Դատավորը ուշադիր նայեց թղթերն ամենայն.–

- 20 Հարյուրնոցնե՛ր, հազարնո՛ց արքայական գանձատան...
Ապա խոնարհ ու նկուն ա՛յսպես նրանց խոսեցավ.

–Այո՛, այո՛, պարոններ,

Մեզ բոլորիս ծեծելու մարդը ունի հրաման.

Դե՛հ, տներնիդ դարձեք ես

- 25 Եվ ջանացե՛ք այսուհետ

Նրան հլու ծառայել՝ քմայքներին ակնդետ...

<1922>

ՄԻ ՀԱՐՅՈՒՄ

Մի քահանա կիրակմուտին
Քարոզ խոսեց իրեն հոտին.-
- Աստված փռել է թե՛ ցամաք, թե՛ ծով
Իբրև ճոխ սեղան առատ բերքերով,

5 Որ այսպես իրեն
 էականերն ամեն՝
 Մարդ թե անասուն,
 Զկներ ու թռչուն,
 Ուտեն, լիանան
10 Եվ իրեն փառք տան...

Ժողովրդի միջից հանկարծ
Քահանային տրվեց մի հարց.-
- Տեր հայր, չգիտեմ,
Խնդրում եմ պարզես,

15 Այն կեր գնացող էակաները խեղճ,
 Տկար կամ չնչին,
 Պե՞տք է որ նույնպես
 Փառք տան արարչին...

1922, Վենետիկ

ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ

Վայրի աղափնին՝ կուրծքը վիրավոր՝
Ընկել էր մենակ աղբյուրի եզրին,
Ծորում էր շիթ-շիթ արյունը բոսոր.
Մեռնում էր, աչքը՝ ջրի երագին:

- 5 Քնքուչ պարիկը տեսավ դալկահար
Մեռնող աղափնուն և խոսեց այսպես.
- Տո՛ւր ինձ այն, ինչ որ թանկ է քեզ համար,
է՛ն թանկագինը, կյանք տամ իսկույն քեզ:

- Մեռնող աղափնին խորհում էր ինքնին.
10 «Է՛ն թանկագինը՝ կյանքն է, անպատճառ,
Ա՛խ, ծաղրում է ինձ աղբյուրի ոգին»:
- Էհ, լավ, թո՛ղ լինի, տո՛ւր և նորից առ:

- Պարիկը ցողեր սրսկեց վերքին,
Աղափնին բացեց աչքերը ոսկի,
15 Ու թևին տալով ծափեց խնդագին.
- Ե՞րբ կուզես կյանքըս, նազելի ոգի:
- Թևերդ կուզեմ, կյանքդ քեզ լինի:
- Թևերդս... ինչպե՞ս, ոհ, երբե՛ք, երբե՛ք.
Առանց թռիչքի կյանքը գին չունի.

- 20 Կյանքըս առ, - թռչունն ասաց սրտաբեկ:
- Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի,
Թռի՛ր ու ասա՛ ստրուկ աշխարքին,
Թե ի՞նչն է թանկը կյանքից ավելի... -
Ասաց ջրերի լուսեղենն ոգին:

1924, փետրվարի 20, Վենետիկ

ԱՐՁՆ ՈՒ ՕՁԸ

Ինչպես եղավ, որ մի անգամ
Արջն ու օձը դարձան ընկեր,
Ընկեր դարձան ու բարեկամ:

5 -«Մեկըս քնի,
Մեկըս հսկե,
Իրար շահենք,
Իրար պահենք,
Ընկերովի կյանք վայելենք»:

10 Այսպես ասին, երդվեցին,
Իրար ազնիվ խոսք տրվեցին
Օձը՝ արջին, արջը՝ օձին:

15 Անցավ այս կերպ մի ժամանակ:
Եվ շարունակ
Երկու ընկեր սիրով, սրտով
Նստան-ելան ու քուն մտան
Կարգով, հերթով:
Սակայն օձի սողքը բեկ-բեկ
Դուր չէր գալիս արջին երբեք:

20 Օրվա մեկը արջը ժայուին
Թիկն էր տվել արևկողի,
Հանկարծ օձը՝ ոլոր-մոլոր
Եկավ, ասես զաղտագողի:
Վախ ու կասկածն առավ արջին,
Ելավ կանգնեց նստած տեղում:

- 25 - «Ես ծուռ ու մուռ գնացողին,
Ընկեր լինի թե կաթնախապեր,
Ձէ, չեմ սիրում, ես չեմ ուզում»:
Գոռաց այսպես և թաթն ուժգին
Դըրեց, սեղմեց օձի գլխին
- 30 Ու մյուս թաթը օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով.
Ապա մոտիկ հոսող գետին
Հանձնեց օձի անկենդան դին:
Եվ նայելով ջրերի հետ
- 35 Նետի նման սուրող օձին՝
Գոհ մըթմըթաց բեղերի տակ.
- «Ա՛յ, ընկերը էսպես չիտակ
Պիտի լինի,
Դե՛հ, չիփ-չիտակ գընա հիմի»:

1927

ՔԱՂՅԱԾ ՀԱՎԸ

- Քաղցած հավը երազ տեսավ,
Երազի մեջ – կորեկ անբավ:
Եվ կտուցը՝ ոգևորված,
Զարկեց ուժգին
5 Մեծ կորեկին...
Բայց բերկրանքից զարթնեց հանկարծ,
Տեսավ՝ փոխան կորեկհատին,
Կտուցն, ավա՛ղ,
Առել է չոր թառի փայտին...

1932, սեպտեմբերի 16, Փարիզ

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՆ ՈՒ ԱՍՏՎԱԾ

Թույլ ու դալուկ
Մի աղքատ մարդ
Դեգերում էր պատերի տակ
Մեծ տների չքեղազարդ:

5 Երբ զանգերը եկեղեցու
Երեկոյան ղողանջեցին,
Աղքատ մարդը գլխին հանեց
 Եվ փառք տվեց

 Բարիքների պարգևողին:
10 Սակայն աստված
Աղքատ մարդու փառաբանքին
 Չըհավատաց:

1932, հոկտեմբերի 3, Փարիզ

ՊԱՐԾԵՆԿՈՏԸ

- Ջրգիտեմ, եղբայր, ո՞ւժ է, թե՞ շնորհ,
Թեհրանում էր, որ
Բռնեցինք զրազ,
Մեկ շնչով հանդարտ
- 5 Թռա քառսուն գազ,-
Սրճարանի մեջ ասում էր մի մարդ,
Որ նոր էր դարձել Իրան ու Թուրան
Կատարած հեռու ճամփորդությունից:
- Իրա՞վ ես ասում,- հարց տվին նրան
- 10 Սաստիկ զարմացած ամեն մի կողմից:
- Ի՞նչ կա զարմանք բան,
Այնտեղ Թեհերան,
Մարդիկ դեռ ողջ են, քաղաքն է վկա,
Քառսուն գազ թռա
- 15 Եվ գրազն առա:
Այո՛, ո՛չ մի մազ
Ավել կամ պակաս,
Ուղիղ քառսուն գազ:
- Ես հավատում եմ,- խոսք առավ մի մարդ,-
- 20 Այս աշխարհի մեջ չեղած բան չկա,
Սակայն, սիրելիս,
Էլ ի՞նչ կարիք կա՝
Վեր կենալ երթալ հեռավոր երկիր՝
Գտնելու վկա:
- 25 Այստեղ էլ գազ կա, այստեղ էլ գետին,
Դու էլ այստեղ ես, դե՛հ, չափենք՝ թո՛իր.
Տե՛ղ տվեք, տղե՛րք,
Գազը մեջ բերեք:

Սակայն ո՞ւր գտնես թռչող կտրիճին,
30 Մի վայրկյանում նա ծտից թև առել,
Ո՛ր պատուհանից, արդյոք, ո՛ր ծակից
Արդեն քառասուն փարսախ* էր թռել:

1932, հոկտեմբերի 14, Փարիզ

* «Մի մղոնի չափ»:

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԱՐԵՐՔԸ

Փոթորիկ էր ծովի վրա:
Ալիքները շաչում էին
Եվ լեռնանում փրփրադեզ.
Եվ փլչելով իրար վրա՝
5 Իջնում էին մռայլ անդունդ:

Եվ գունդագունդ,
Խոժոռ ամպեր կայծակնալից՝
Խոլժում էին խոլ երկնքից
Եվ որոտում որոտագին:

10 Նավակի մեջ մի խեղճ ձկնորս,
Օրհասական թռչունբռնում,
Անիծում էր իր բախտը չար,
Որ հատկապես իրեն համար
Խառնվել են տարերքն իրար:

1932, Հոկտեմբերի 23, Փարիզ

ԿԱՔԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Կաքավը մի օր քարից քար անահ
Ցատկելով, խաղով ոտ դրեց հանկարծ
Քարերի միջին միամիտ քնած

Աղվեսի վրա:

5 Սոսկալի արկած:

Հազիվ մի վայրկյան,

Կաքավն աղվեսի գրկումն էր դաժան:

- Բախտն որ ուզենա,

Քնած տեղդ էլ

10 Քո դուռը կգա:

Անոթությունից քուն էի մտել,

Բայց աստված հոգաց,-

Զվարթ քրքիջով աղվեսը ասաց:

- Աստծու ճամփածն եմ, այդ լավ գիտեմ ես,

15 Դո՛ւ, աստվածընտիր, դո՛ւ, օրհնյալ աղվես,-

Երկյուղած ասաց կաքավը նրան,-

Նաև գիտցիր դո՛ւ,

Որ ուտել առանց աստծուն փառք տալու,

Մեծ մեղք է հոգուդ:

20 - Իրավ ես, անշուշտ,-

Աղվեսն հավանեց, և ձեռներն իսկույն

Բարձրացրեց վեր և բազկառարած.-

«Փառքդ շատ, աստված...»,-

Աղոթքն ըսկսեց, հազիվ սկսած՝

25 Զարմանքով տեսավ

Ժայռի կատարին

Կաքավը թառած՝

Երգում է ուրախ.-

«Շաղկղա՛, կաղկղա՛...»:

30 Ինչ ծաղր ու ծիծաղ...

Զայրույթով լցված
Աղվեսը զարկեց գլուխը քարին՝
Դառնասիրտ ասաց.-

35 «Տեղն է հիմարին,
Թող քաղցած մնա:
Եվ աշխարհիս մեջ թող անիծվի նա,
Ով դեռ չկերած՝ աստծուն փառք կտա»:

1932, Փարիզ

ԷՇՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ

- Մի օր մի գեղջուկ, ամառվա շոգին,
էշն առաջն արած,
Դաշտով ու ձորով,
Քրտինք ծորելով՝
5 Գնում էր ջաղաց:
- Ու գնում էին ամառվա շոգին
Տերը հոգալի տակ,
էշը բեռի տակ
Կըքած երկուսով:
- 10 Իրենց բախտիցն էր - ճամփու եզերքին,
Ծառերի միջով,
Անուշ կարկաչով,
Հոսում էր մարմանդ, ինչպես մի գեփյուռ,
Մի բյուրեղ աղբյուր:
- 15 էշը՝ ներքևից, գյուղացին՝ վերից,
Անհագ խմեցին բարի աղբյուրից,
Խմեցին անվերջ, նորից խմեցին:
Ապա գյուղացին
Իշու վրայից բեռը դրեց վար
20 Ու թողեց նրան սեզի մեջ դալար:
Ու ինքն էլ պառկեց ծառի շվաքում,
Եվ մի թեթև քուն
Աչքերն սքողեց:
- Երբ խոնջենքն առած՝ աչքերը բացեց,
25 Երկյուղով տեսավ, որ ճամփու ծայրին
Շատ կասկածելի երկու մարդ, զինված,
Ցցվեցին հանկարծ:

- «Գողեր են», – ասաց գեղջուկն ինքն իրեն
 Ու ցատկեց տեղից.- է՛հ, իշու կտոր,
 30 Շուտ արի, բեռը բառնանք ու փախչենք:
 - Այսպես շտապով... Ի՞նչ պատահեց որ...
 Կրակ է դառել երկինք ու գետինք.
 Սպասենք քիչ էլ:
 - Գողեր են գալիս, ա՛յ էշ-սպանակ:
 35 - Ինձ ի՞նչ գողերը: Թող զան, երթան էլ:
 - Ինչպե՛ս թե՛ «ինձ ինչ». հենց քեզ կտանեն:
 Դե՛հ շուտ, շուտ արա. չկա ժամանակ:
 - Ինձ ի՞նչ՝ կա, չկա: Գնա քո բանին.
 Ինձ համար մեկ է, ուր էլ որ տանին.
 40 Իմ վրաս նորից բեռ են դնելու,
 Հոգիս հանելու: Ի՞նչ ունեմ հիմա,
 Այս կեծ-կրակին հե-հե վազ տալու... –

- Պատասխան տվեց էշը գեղջուկին
 Եվ սեզերի մեջ, ծառերի շուքին,
 45 Թավալվեց զվարթ՝ կռնակի վրա:

1932, Փարիզ

ԱՂՔԱՏՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԸ

- Շարվեչարան
Ուղտերի ձիգ մի քարավան՝
Բեռնավորված հազար տեսակ
Բարիքներով ու բերքերով,
5 Ապրանքներով մեծաքանակ,
Գալարվում էր ձորերն ի վար
Եվ հյուսվում էր լեռներն ի վեր:
Եվ շարժելով զիւ ու զանգակ
Ծիծփում էր ղողանջելով,
10 Շարվեչարան,
Ծանրաբեռն մի քարավան:
- Մի ձորի մեջ՝ խոր ու խավար,
Ուր ժայռերն են պատ ու պատվար,
Ապառաժներ՝ բարձր ու լերկ,
15 Քարավանի վրա հանկարծ
Գրոհ տվին՝ դարան մտած՝
Ավազակներ սուսերամերկ:
Կողոպտեցին, ավար առան
Թանկարժեք բան՝ ինչքան որ կար—
20 Ոսկի, գոհար, լալ ու մարջան,
Մետաքս, ատլաս ծաղկանկար:
Աղիողորմ լալիս էին
Ճամփորդները պաղատազին...
Մինչդեռ այնտեղ,
25 Ավարառու աչքից լքված,
Մի աղքատ մարդ
Պարկը դրեց գլխատակին,
Պառկեց հանդարտ,
Սիրտը՝ անդորր

30 Ու մտմտաց իրեն մտքում.-
«Ասեւ է որ,
Փողի, զոռի այս աշխարքում
Անտուն-անտեր աղքատ մարդն էլ
Իր հանգիստ օրն ունեցել է...»:

1932, Փարիզ

ՄԻ ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

- Իր թաքատից՝ մթին ու խոր,
Մկան մեկը ելավ մի օր,
Գանգատ զնաց բնության մոտ. –
- Քո դեմ, – ասաց, – գանգատ ունիմ,
5 Ո՛վ բնություն.
Այս ի՞նչ բախտ ես վիճակել ինձ.
Առջև՝ մահ,
Սրտիս մեջ՝ ահ,
Հանգիստ չունիմ
10 Դաժան ու չար
Կատուններից:
Կամ հոգիս առ
Եվ կամ դարձրո՛ւ
Ինձ էլ կատու:
- 15 Դաժան ու չար կատու դառած՝
Մուկը վազեց մտավ մառան,
Շուրջը սփռեց այնքան երկյուղ,
Որ մկները թավազլուխ,
Ծակ ու ծերպեր շունչներն առան:
20 Բայց շներից հալածական՝
Փախավ, եկավ բնության մոտ:
 – Կամ հոգիս ա՛ռ,
Կամ ինձ դարձրո՛ւ
 Շունն ահարկու:
- 25 Եվ ահարկու գամփռ դառած՝
Մուկը վազեց, մտավ փարախ,
Գայլերի հետ կովեց անվախ.
Բայց երբ լսեց զարհուրելի

- Մունչյունը վեա առյուծի,
 30 Լեղապատառ
 Իրեն ձգեց բնության մոտ.
 - Կամ հոգիս ա՛ռ,
 Կամ ինձ դարձրո՛ւ
 Ահեղ առյուծ,
 35 Որ վախ չունի
 Ուրիշ և ոչ մի կենդանուց:
- Առյուծ դառած՝ խրոխտ ու սեգ,
 Մուկը գնաց, մտավ անտառ,
 Անցավ դաշտեր և առապար,
 40 Մահ տարածեց ամենուրեք:
 Սակայն մի օր մարդը հանկարծ
 Առյուծի դեմ հպարտ ցրցվեց.
 Առյուծն ահեղ՝ կռվի պատրաստ՝
 Բաշը ցնցեց:
 45 Սակայն մարդը կայծակնաթափ
 Հուր արձակեց – ամպ ու որոտ:
 Եվ առյուծը մահախուճապ,
 Շունչը առավ բնության մոտ:
 - Միայն, միայն մարդ դարձրո՛ւ ինձ.
 50 Նա է հզոր մեր բոլորից:
 Նա է հզոր մեր բոլորից:
- Եվ մարդ դառած մուկը զինվեց
 Հրով–սրով սպառնալից.
 Ամեն մի շունչ ու կենդանի
 55 Փախչում էին նրա շուքից:
 Բայց ավելի մեծ սարսափով
 Վախում էր նա հիմա սաստիկ
 Իր նմանից:

- Տեսավ՝ մարդիկ
60 Իրար ահից
Ձեն երկնչում, կարծես, մահից,
Օղն են ելնում ամպերից վեր
Եվ սուզվում են ծովերի տակ:
Թնդանոթով և ումքերով
65 Եվ թույներով Հազար տեսակ
Զինվում են ու զինավառվում:
Եվ օրից օր զենքերով նոր
Զինվում են ու նորից զինվում:
Եվ բյուրավոր
70 Բանակներով
Հարձակվում են իրար վրա,
Եվ խելագար,
Անհագաբար,
Կոտորում են,
75 Կոտորում են,
Կոտորում են
Մարդիկ իրար...
Եվ ահաբեկ խորհում էր նա.
«Լավ չի՞ արդյոք,
80 Որ վերստին
Մուկիկ դառնա...»:

1933, Փարիզ

ԹԱԳԱՎՈՐԻՑ ՓԱՆՉՈՂԸ

Թագավորը այցի ելավ
Իր հարկատու,
Գահին հլու
Գավառներին, քաղաքներին
5 Մոտ ու հեռու:

Ճոխ ասպետներ – հետևորդներ՝
Հագած–կապած զենք ու ասպար,
Հեծած ընտիր նրժույզ ձիեր՝
Արծաթասանձ ու ոսկեսար:
10 Երբ ամբոխի ցնծուլթյան տակ
Թագավորը շքախմբով
Մի քաղաք էր մի օր մտնում,
Այն մյուս դռնից ելավ ճեպով
Մի խոնարհ մարդ՝ վախը սրտում:
15 Եվ վազում էր, փախչում էր պինդ՝
Հոգին բրդի մեջ հավաքած,
Հալածական երեխ պես,
Կածաններով, շավիղներով,
Անտառներով խոր ու անտես:
20 Մի մարդ կանգնեց նըրա առաջ.
- Է՛յ, դու, կեցիր, – մարդը ասաց, –
Դու ոճիր ես գործել, գիտեմ,
Որ փախչում ես գլուխդ առած:
- Ես մի արդար, անմեղ մարդ եմ,
25 Հացս եմ կերել իմ քրտինքով,
Բայց փախչում եմ թագավորից,
Որ փառահեղ հանդեսներով
Այցի եկավ մեր քաղաքին:
Հասկացի՛ր ինձ,

- 30 Եղբայր անգին.
Նըրա ուժը՝ իմ ուժից չատ,
Նըրա խելքը՝ իմ խելքից քիչ.
Է՛հ, ի՞նչ լինի, ի՞նչ չըլինի,
 Զորավորից
35 Ինչքան հեռու, այնքան բարի:
 Եվ նա նորից
 Վազեց, սուրաց
 Հետապնդված երեի պես
 Կածաններով, շավիղներով,
40 Լկնտառներով խոր ու անտես...

1935, օգոստոս, Թուրք (Փարիզ)

ԱՔԼՈՐՆԵՐԻ ՎԵՃԸ

Երկու հոխորտան աքլորների մեջ,
Մի կուտի համար թե մի վառեկի,
Ծագեց այնպիսի դժնդակ մի վեճ,
Որ բանը հասավ դանակ-դանակի:

5 Ճիչ ու աղաղակ
 Հափնոցի դռան,
 Աղմուկ ու ժրխոր
 Աղբյուսի վըրա...

 Կտցահարեցին իրարու կատար,
10 Բոսոր փետուրներ օդի մեջ թռան,
 Լանջ ու պարանոց – մերկ, արյունլիվա:
 Եվ դեռ հոսում էր արյունն անդադար-
 Աքլորներից մին թափով կատաղի
 Զարկեց ու կտրեց թևը ոսոխի:

15 Եվ թևաթափը՝ պարտրված, նրկուն,
 Փախավ, պահվրտեց
 Մացառների մեջ,

 Իսկ հաղթանակող աքլորը փքուն
 Բարձրացավ բարձր մի պատի վրա
20 Եվ թափահարեց թևերը ցնծուն
 Եվ երգեց գոռոգ՝ հաղթանակն իրա:
 Բայց այդ միջոցին
 Ահարկու մի ցին

 Լըսեց աքլորի կանչը սրնապարծ,
25 Նետի պես սուրաց, իջավ սըրարչավ,
 Կորեց հաղթողին, թոցըրեց տարավ...

1935, Փարիզ

ԱՌԱԿ
ԸՍՏ ԼՈՒՍԱՆՆԻ

- Մի մարդ, անցնելով անտառի ափով,
Լսեց ոչխարի անհույս լաց ու կոծ.
Հայացքը շրջեց,
Տեսավ, որ մի գայլ՝ ահավոր ու մեծ,
5 Ոչխարին բռնել՝ քաշում է թափով
Դեպ անտառը մութ:
Մարդը շուտափույթ
Մահակի զորեղ զարկերով անշեղ
Փչրեց գազանի գլուխն ու ժանիք.
10 Եվ ոչխարն առած՝ ուրախ գնաց տուն:
- Գիշերն ոչխարը քնեց երջանիկ.
Մյուս օրը, սակայն, վաղ առավոտյան,
Մարդը սուր սրեց դանակն ահագին,
Թշվառ ոչխարին վայր զարկեց գետնին,
15 Դանակը սրած
Դրեց կոկորդին.
Ոչխարը՝ ապշած
Նայելով մարդու աչքերին մռայլ,
Հառաչեց, ասաց.
20 - Երեկ փրկեցիր ինձ գայլի ձեռքից,
Բայց այսօր, ո՛վ մարդ, դո՛ւ ես դարձել գայլ...

1938, սեպտեմբերի 18,
Մադկաձոր-Երևան

ԱՅԾՆ ՈՒ ԳԱՅԼԸ

- Այծը կանգնել էր
Բարձր ու ապալեր
Ժայռի կատարին,
Իսկ ըստորոտում գայլը անդադրում
5 Ճգնում էր, տքնում ժայռն ի վեր ելնել,
Սակայն ապարդյուն:
Այծը վերևից
Սուր եղջյուրները ցըցած զայրագին՝
Խիստ ըսպառնալից
10 Ասում է գայլին.
«Ա՛խ, դու սրիկա, ինչպես կուզեի՝
էս կոտորչներըս փորըդ խրեի»:
Քնքշություն տալով գայլը իր ձայնին՝
Պատասխանում է պարծենկոտ այծին.
15 «Բա ե՛ս, սիրելիս, ի՞նչքան երանի
Կըտայի սրտանց էն օրհնյալ ժամին,
Որ կոտորչներդ փորըս լինեին»:

1939, Հոկտի 27, Ծաղկաձոր

ԳԱՅԼՆ ՈՒ ԵՂՆԻԿԸ

- Գայլը ճանկել էր մի մատաղ եղնիկ,
Ակռաները խոր
Խրել էր նրա քնքուշ մարմնի մեջ
Եվ ապա մեղմիկ
- 5 Լիզում էր նրա վերքը արնածոր:
- Թշվառ եղնիկը ձայնով օրհասի
Ասում է գայլին.
- Ինձ թշնամու պես
Վերք ես հասցնում
10 Եվ ընկերի պես
Վերքըս համբուրում:
Չեմ հասկանում քեզ՝ ի՞նչ հոգու տեր ես:

1939, հոկտի 28, Ծաղկաձոր

ԱԶԻԱՅԻԼ, ՄԱՀՎԱՆ ՀՐԵՇՏԱԿ
(արաբական առասպել)

Երբ աստված խորհեց ստեղծել մարդուն,
Լույս-Ջիբրայիլին ուղարկեց երկիր.
- Գնա՛, - ասաց նա, - և իմ անունով
Երկրից մի բուռն կավահող ուզիր:

- 5 Երբ կամքը վերին՝ երկիրն իմացավ,
Ողբաց դառնագին.- «Ո՛հ, ի՛նչ մեծ աղետ,
 Ի՛նչ մեծ պատուհաս, ինչքա՛ն վիշտ ու ցավ
 Պիտի կրեմ ես, ավա՛ղ, այսուհետ.
 Մարդիկ պիտ աճեն, անհուն բազմանան,
10 Եվ պիտի դառնան դաժան ու ազա՛հ,
 Եվ իրար ատեն, խաբեն, գողանան,
 Եվ արյուն թափեն իմ կրծքի վրա...

 Զե՛մ տա... Թո՛ղ աստված ինձ պատժե խստիվ,
 Բայց աղերսում եմ նրան լալագին՝

- 15 Կասելու գալիք տանջանքներն անթիվ,
 Որ մարմին չտա իր այդ բաղձանքին...»:

- Զայրացավ աստված և հղեց երկիր
 Վեա Ազրայիլին՝ անողոք, ոսոխ,
 Որ երկրի ողբին խիստ անկարեկիր՝
20 Կորզեց բռնաբար մի գուղձ կավահող,
 Եվ աստված, կավից կերտելով մարդուն,
 Իբրև վարձ տվեց վեա հրեշտակին
 Անսանձ իրավունք՝ բռնի կորզելու
 Մարդկանց անհագուրդ, մշտամարտ հողին:

1940, մարտի 5-8, Երևան

ՍԱՏԱՆԱՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ
(միջնադարյան հայ առակ)

- Սատանան ուներ երեք հատ աղջիկ,
Նաև մի աղջիկ՝
Զվարթ, գեղեցիկ:
Հասել էր նրանց մարդու գնալու
5 Ժամանակն արդեն,
 Եվ հայր սատանան
երեց աղջկան անվանեց «Գոռոզ»՝
Տալով կնուլթյան իշխանավորի:
Երկրորդ աղջկան անվանեց «Ագահ»՝
10 Ծալով կնուլթյան վաճառականի:
Երրորդ աղջկան անվանեց «Նախանձ»՝
Տալով կնուլթյան արվեստագետի:
Իսկ գեղեցկուհուն «Սեր» կոչեց հայրը
Եվ տվեց նրան ամբողջ աշխարհին:

1945, հունվարի 18, Երևան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՈՍՔ

Բուրաստանի ծեր պահակին
Մի անցորդ մարդ դիմեց խնդրով.
- Մի վարդ տուր ինձ՝ դնեմ կրծքիս,
Ուրախանամ այդ պերճ զարդով:
5 Մի ցավագին սարսուռ անցավ
Ծեր պահակի և վարդերի
Սրտի միջով.
- Ո՛հ, բարեկամ, կարելի չէ՛,
Ես ո՞ր վարդը, ասա, քաղեմ,
10 Որ մյուսը չըհառաչե:

1945, Երևան

ԻՄԱՍՏՈՒՆ ԳՈՀԱ

(Ֆելլաի առասպելական առակախոս)

- Իմ հին բարեկամ իմաստուն Գոհան
Եղավ որ մի օր վաղ առավոտյան
Էշ նստած՝ գյուղից գնում էր քաղաք.
Գլուխը՝ տը՛մբ—տը՛մբ, ականջները՝ կախ,
5 Քայլում էր էջը հանգիստ ու դանդաղ:
Աշխարհքի բանը խորհում էր Գոհան:
Աշխարհքի բանը խորհելով անվերջ՝
Աչքերը գոցել, քնել էր կարծես
Հանգիստ ընթացող իշուկի վրա:
10 Իր գյուղից մի մարդ տեսնում է ահա՝
Գնում է Գոհան իշուկին նստած,
Առապարներով՝ քար ու ապառաժ
Քաղաքից, գյուղից անչափ հեռացած:
- Ի՞նչ ունիս, ա՛յ մարդ, էս չոր, ամայի,
15 Առապարներում,—
Ձայնում էր ուժով համագյուղացին,
Խոհերի միջից հանում Գոհային:

- Այո՛, սիրելի՛ս, խելքս տվեցի
Աշխարհքի բանին, կամքս էլ՝ իշուկին,
20 Բերեց գցեց ինձ այս չոր, ամայի
Առապարները,—
Պատասխան տվեց
Իմ հին բարեկամ իմաստուն Գոհան:

1952, հունվարի 27, Երևան

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I

Լուսադեմին վարդ քաղելու
Իջա սիրուն իմ այգին
Եվ լսեցի խեղճ սոխակի
Երգը տրտում, վշտագին:

- 5 Ա՛խ, նա էլ ինձ պես խելագար՝
Վառված վարդի ջերմ սիրով՝
Ողջ ծաղկոցը կանաչավառ
Լցրել է լաց ու կոծով:

-
- 10 Վարդը կախարդ մի հյուրի է,
Վես սիրուհին սոխակի.
Նրա սիրտը չի մեղքանա
Սոխակինն էլ չի սառի:

II

- Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կըրծքիս,
Անուշ սերըս սրտովըս.
15 Ձինմաչինի թագավորը
Խեղճ աղքատ է աչքումըս.
Հիմիկուց դեն պիտի պաշտեմ
Վա՛րդն ու աղջիկն ու գինին:

- Ու ականջըս միշտ կուզենա
20 Լըսել երգեր սրտալի.
Աչքըս կուզե անթարթ նայել

Անուշ դեմքիդ նազելի:
Բույրը վարդի ու շուշանի
Ուշք ու միտքըս կըտանի...

- 25 Ձէ՛, բույր պետք է՛, քու մազերիդ
Ծըփանքն ինձ բույրի ծով է.
Ձէ՛, մեղր պետք է՛, քու շրթունքիդ
Ալ-շաքարը ինձ բավ է:
Հիմիկուց դեն էլ չեմ ապրի
30 Առանց կին ու գինի...

1893

Ս. ՅԱԿ. ՆԱԳՍՈՆ

Նորից մենակ եմ, և շուրջս նորից
Ամեն ինչ գիշեր է, մռայլ, թախծալի,
Եվ օրհասական երկբայության մեջ
Կանգնած եմ ես մերձ թարմ գերեզմանի:

- 5 Ի՞նչ եմ սպասում, ինչո՞ւ եմ ապրում,
Ինչո՞ւ եմ կռվում, ինչո՞ւ տանջվում –
Մինչդեռ ոչ ոքի ես է՛լ չեմ սիրում,
Մինչդեռ ոչ ոքի է՛լ չեմ աղոթում:

1893

ԻՄԱՍՏՈՒՆԸ ԿԵՈՍԵ

Ժողովրդին օտար,
Բայց և նրան օգտակար –
Գնում եմ ես իմ ճամփով
Նրբեմն արև, երբեմն ամպ –
5 Բայց միշտ նրա վրայով:

1895

ՍՊԱՆԱԿԱՆ ՄԻ ԵՐԳԻՑ

Երեկ սիրում էի,
Այսօր՝ տանջվում.
Վաղն էլ կմեռնեմ:
Հիմա մտածում եմ -
5 Այսօր և վաղը,-
Երեկ շա՛տ լավ էր...

<1899>

Կ. ԲՅՈՒՍՍԵ

Այս լեռներից հեռու այն կողմ
Ասում են, թե՛ բախտն է ապրում:

Գնացի ես շատերի հետ,
Աչքերս արցունք, ա՛խ, դարձա ետ:

5 Այս լեռներից հեռո՛ւն, հեռո՛ւն
Ասում են, թե՛ բախտն է ապրում...

1900, գեկտեմբեր, Յուզրիխ

ԱՊՐԻԼ

- Ես ընտրում եմ Ապրիլ ամիսն,
Ուր հնացածը կըկործանվի,
Եվ երբ նորը շաչով, բոցով,
Խորն ու ամուր արմատ կառնի:
- 5 Գերագույնը երբե՛ք, երբե՛ք
Անդորրը չէ, որ մարդ կուզե:
Ես ընտրում եմ Ապրիլ ամիսն,
Նա կհուզե ամենուրեք.
Նա կժպտա, կեռա, շողա:
- 10 Եվ կբացվի կյանքը նորեկ,-
Որովհետև ոգի ունի
Եվ վառ ամառ բերել կըղձա:

<1901>

ՔԱՂՅԱԾ ԳԱՅԼԵՐ

Ծմականերում քաղցած գեղեր
Կըթափառեն ոռնալով,
Քաղցած գեղեր – քուրդ ու թուրքեր,
Զոհ կըփնտռեն ոռնալով:

- 5 Քաջ Հովիվներ՝, զարթուն կեցեք,
 Զեր հոտերը կըջնջեն.
 Զեր աչքը ձեր հոտին պահեք,
 Քաջ Հովիվներ՝, կտրիճներ:

- 10 Էս գազաններն ո՞վ են սրանք,
 Մեզեն, եկեր, ի՞նչ կուզեն.
 Թուր ցույց կուտան, սուր ցույց կուտան
 Ու լրբաբար կխոսեն:

- Մեր պատիվն ու ազատություն
 Կուզեն խլել մեզանից.
15 Ահա լսեք՝ ի՞նչ են հաչում
 Լիրբ սուլթանի բերանից:

- Մեր գեղեցիկ, քաջ տղերքը,
 Մեր նազելի, կույս քույրերն –
 Լրբին ծառա պիտի լինին,
20 Էն լիրբ շանը՝ հարեմներ:

 Բայց մեր հողի ազատության
 Կաղնին չուզեց խոնարհվել.
 Ու նրանք էլ կատղած եկան,

Կուզեն կաղնին խորտակել:

25 Դո՛ւրս այստեղից, դո՛ւրս, թշնամիք,
էլ մենք ձեզնից ահ չունենք.
Մեռնելու չէ մեր հայրենիք,
Արուն թափել մենք գիտենք:

30 Դո՛ւք, լրբե՛րդ, գինված զենքով,
Իսկ մեր ձեռքին՝ գերանդին,
Բայց կջարդենք մենք ամենքիդ,
Ձեք դիմանա մեր ուժին:

35 Ժեռ-լեռ քարեր կըպատուենք
Մեր անառիկ լեռներեն
Ու ձեր գլխին մենք կթափենք,
Ձեզի մեկ-մեկ կըփշրենք:

40 Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, լակոտնե՛ր,
էլ մենք ձեզնից ահ չունենք,
Մեռնելու չէ մեր հայրենիք,
Արուն թափել մենք գիտենք ...

<1901>, Ժնև

Ի. Ս. ՆԻԿԻՏԻՆ

Հին կուրգանի վրա, դաշտում ամայի
Նստել է բազեն՝ զարկված շրթայի:
Նստել է արդեն հազար տարի նա,
Եվ ազատություն չկա՝ նրան, չկա':
5 Զայրույթից կուրծքն է պատռում ճանկերով,
Արյունն է ծորում կրծքից շիթ առ շիթ...
Ամպերն են թռչում կապույտ երկնքով,
Իսկ շուրջը - դաշտերն՝ անծիր ու անծիր...

1905

ԱԿԻՀԻՐՈ ՏՈՍԻՆԱՐԻ
(Ճապոն բանաստեղծ XII դարում)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԻՇՏԸ

5 Գյուղ ու քաղաք լի է դավով,
Տառապանքով, խորունկ ցավով:
Եվ ես փախա կյանքի վշտից,
Բայց, ա՛խ, իզուր, իզուր փախա.-
- Անտառի մեջ՝ մենակ, լռի՛ն՝
Տեսա լալիս եղնիկին...

1907

ՎՐԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Կըռիվ գնացող զինվոր տղերքից
Նա՛ է միշտ ուրախ, ով նժույգ ունի,
Նա՛ է միշտ ուրախ տուն դարձողներին,
Ով վարդի նման սիրուն կին ունի:

5 Ով վարդի նման սիրուն կին ունի,
Պետք է մի արթուն շուն էլ ունենա.
Նըրան կամ պետք է շունը պահպանի,
Կա՛մ թե չէ՝ ջադու կեսուրը նըրա:

10 Եվ զենքն ու գինին քաջ զինվորներին
Պետք է որ լինին անպակաս հավետ,
Որ թշնամու հետ զենքերով չափվին,
Փըրփրան գինով՝ բարեկամի հետ:

1907

ՍՈՆԵՏՆԵՐ

I

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազատությո՛ւն, ազատությո՛ւն, ներբողների մեջ չես դո՛ւ,
Եվ ո՛չ չքեղ իշխանական դարբասներում սյունազա՛րդ.
Դո՛ւ ապրում ես լուռ ափերում այն մենավո՛ր և հպա՛րտ,
Սոխակների նման քնքուշ՝ լռությունն ես սիրում դու:

- 5 Դու փախչում ես խոր ժխորից սրահների կճահարկ,
Ուր որ շվայտ ցոփերն արբչիւ վառ գինու մեջն են լողում,
Ազատությո՛ւն, դու սիրով ես խրճիթներին հյուր լինում,
Ուր արցունքներ թափվում են լուռ բաժակների մեջ դատարկ:

- 10 Հրեշտակի նման բարի՝ փակ դռներն ես այցելում,
Եվ կանգնում ես սիրածներիդ անշուք մահճի առաջին,
Եվ լսում ես շղթաների վե՛հ, երկնային շառաչին...

Եվ քեզ համար չեն պատշաճում գոռ և չքեղ տաճարներ,
Ուր որպես զոհ մեր հպարտությունն ոտներիդ տակ փռվինք.
Դու կըլնեի՞ր, ազատությո՛ւն, թե քեզ ծունր իջնեինք...

1907

II

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Գեղեցկության, ազատության որպես քուրմ
Բանաստեղծը աշխարհ եկավ վեհ հոգով.

Թո՛ղ թափառե երկրից երկիր նա անտուն,
Պսակելու վեհն ու վսեմն իր երգով:

- 5 Եվ հրգեբում հերոսական գործերին
 Նա շողշողուն անմահություն է ստալիս.
 Իր վշտերը նա գրում է ավազին,
 Հրաժարվել նա կարող է իր սրտից:

- 10 Քաջ պարտիզպան, որին այգի է հանձնած՝
 Ուրիշ կրճքեր ծաղիկներով պննելու,
 Այլոց համար որթեր սնկող անձնուրաց.

 Ծովասույզի նման կյանքը վտանգած,
 Որ հազվագյուտ մարգարիտներ կը հանես՝
 Ջարդարելու ժամանակը քո ապրած...

1907

Քաջ որսորդ է իմ սիրունհիս,
Անվախ կերթա որսի դեմ.
Իսկ ունքերը՝ հպարտ բռնած՝
Աղեղներ են հրեղեն:

- 5 Հայացքները սլաքներ են,
Որ խոցում են սիրտս խոր.
Իսկ ես վախկոտ, փախուստ տվող
Մի այծյամ եմ վիրավոր:
-

- 10 Որս է անում Սիրո Ոգին
Այս աշխարհի ծովափին,
Եվ կապել է կարթին ամուր
Մի կին, որպես հրապույր:

- 15 Սերունդներ են գալիս մարդկանց
Գլուխ կորցրած, գլխաբաց.
Եվ բռնում է նա ամենքին,
Տապկում սիրո խարույկին:

1908

ՉԻՆԱԿԱՆ

(8-7-րդ դար Քրիստոսից առաջ)

- Ոչինչ է մարդը տիեզերքի դեմ,
Օվկիանի խորքում – մի հատիկ ավազ.
Կյանքն ակնթարթ է հավերժության դեմ.
Փոթորկի առաջ – մի ծուխ է նվազ:
- 5 Ո՛վ զավակ կրքի, փայլի, խնջույքի,
Քո փառքը – ծովի փրփուր է միայն,
Որ զարդարում է բաշերն ալիքի,
Հողմի հետ խաղում, շողշողում ունայն:
- 10 Իսկ արարքներդ – տերևներ միայն,
Որ պատում էին կյանքի քո ծառը,
Օրերդ, սակայն, ահա վերջացան –
Եվ կոչնչանան քո տերևները:
- Հարուստ ու աղքատ, հաղթական ասպետ
Միապես կիջնեն մոայլ զերեզման.
15 Մոռացությունը կլափե անհետ
Նրանց գործերը՝ փառքի, զորության:
- Մահով ամեն ինչ կանցնի, կըմարի,
Երբեմն միայն մեզ կհիշեցնե
Մի թումբ՝ ծածկված խոտերով վայրի,
20 Թե ինչ–որ մի մարդ երբեմն ապրել է:

1908

ԱՔՈՒ ԱԼ ԱԼԱ ԱԼ ՄԱՀԱՐԻ
(973-1057)

Ես տեսնում եմ մարդկանց՝ տարված կռիվներով, վեճերով,
Աղանդավոր, մոլեկրոն, ապուշ ամեն կողմերով:

Թագավորներ, որ խորհում են միայն ուտել, շվայտել,
Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սոսկ
կապտել:

- 5 Որոնց անհագ ցանկությունն է՝ հպատակի տները
Ավար առնել, ավեր անել, բռնաբարել կիները:

Կա՞ն վիրված արդյոք մի վայր իրավունքին երկրիս մեջ,
Այս խավարում ման գամ, գտնեմ՝ ձեռքիս լապտեր մի անշեջ:

1908

ԳԱՅԼԸ ԵՎ ԱՐԱԳԻԼԸ

Գայլը մի օր գնաց Հացի
Մոտը իր մեծ ճոխ ազգակցի.
Այնտեղ այնպես անկարգ էերավ ու խմեց,
Որ կոկորդոմ վերջը մի ոսկոր խրվեց:

- 5 Գայլն ոռնում էր, Հառաչում
Եվ օգնության էր կանչում:

- Իրեն բախտից մեկ միամիտ արագիլ,
 Որ անցնում էր այդ տեղով,
 Հսեց կոծը խեղճ գայլի
10 Ու նրա վրա գլթալով՝
 Իր կտուցով երկարուն
 Դուրս քաշեց ոսկորն իսկույն:

Եվ Հասկացրեց լակ-լակով,
Որ գայլն իրեն մի վարձ տա:

- 15 -Ի՞նչ վարձ, ի՞նչ փող, ա՛յ տղա,-
 Գոռաց գայլը նրա վրա,-
 Եվ դեռ գոհ չե՞ս, որ վիզդ ամբողջ
 Իմ կոկորդից դուրս Հանեցիր ողջ-առողջ:

- Գնա՛ բանիդ, ա՛յ ապերախտ երկայնվիզ,
20 Ու գգույշ կաց, որ մեկ էլ ճանկըս չընկնիս:

<1910>

ՆՈՐ ՀՈՒՆԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Վա՛յ ինձ, կորցրել եմ թաշկինակըս իմ,
Որ կրում էի միշտ սրտիս վրա.
Քաղցրիկ մայրիկիս նվերն էր անգին,
Ա՛խ, սիրտըս ինչպե՞ս մըսում է հիմա:

5 Այն ծաղկափթիթ խնձորենու տակ,
Ուր ինձ գգվեցիր սիրով մտերիմ,
Այն նվիրական խնձորենու տակ
Իզուր փնտրեցի թաշկինակս անգին:

Ավա՛ղ, քո սերը երազ էր անդարձ,
10 Պատրանք էր ունայն, որ ցնդեց անհետ.
Թաշկինակըս քե՛զ պահիր, սիրելիս,
Ա՛խ, սի՛րտս, սի՛րտս, սի՛րտս տուր ինձ ետ:

1936, Հոկտեմբերի 31, Աթենք

ԵՐԵՔ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

- Ավետյաց երկրի ծովափում,
Արևի կիզող խայթերի տակ
Կռվում է սուրբ Լյուդովիկոսը:
Նա մահվան սաղմը կրում է իր սրտում,—
5 Նախագգում է, թե այլևս երբեք
Ձի տեսնելու քաղցրիկ Ֆրանսիան:
- Կիսախավար վրանը ներս է սահում
Ազնվագարմ մանկավիկը
Եվ ուրիշներ՝ նրա ետևից:
10 - Տե՛ր արքա, երեք գուսաններ են եկել,
Երեք եղբայրներ Արմենիայից,
Գնում են սուրբ գերեզմանը ուխտի:
- Ասում են՝ Հրաշալի նվագողներ են
Եղջերափողերի վրա:
15 Թո՛ւյլ տվեք՝ լեռնային մի թարմ երգ լսենք:
Հառաչում է արքան.— Ո՛վ պատրանք աշխարհի,
Իմ վրանը բերեք նրանց,
Որպեսզի ձեզ չգայթակղեցնեն:
- Երեք գուսանները փողերը չրթներին դրին
20 Եվ նվագեցին այնքան ազատ ու աշխույժ,
Որպես թե որսի են սլանում:
Հետո անտառի աղբյուրի պես,
Որ կարկաչում է հեզ ու քնքուշ
Եվ դառնում է մերթ ցնծություն, մերթ հեծեծանք...

- 25 Գուսանների երգը մարում է հանդարտ,
 Եվ խոսում է բարձր՝ Ռեման Ռուանֆալը.
 - Օ՛, սեր, սրտի սփոփանք,
 Տեսա մեկուսի պատշգամբում
 Ջքնաղ Լուսինդային, որ նվիրումով
- 30 Երագում է իր խաչակիր ուխտագնացին:
- Ես տեսա, - ասում է երիտասարդ Վալթերը, -
 Վես ու մթին կաղնիների ցուքը
 Իմ հայրենի լճակի մեջ.
 Եվ տեսա իմ նավակը՝ թիերից թափուր,
 35 Կիսով եզերք քաշված՝ եղեգների շշուռնի տակ...
- Յուրաքանչյուրը եղջերանվազի մեջ
 Իր սիրտը լսեց, իր անձկալին տեսավ
 Եվ իր տենչանքը նույնպես:
 - Տե՛ր արքա, ասացե՛ք, ի՞նչ եք խորհում դուք,
 40 Ի՞նչ եք տենչում, ի՞նչ եք սիրում դուք.
 Ինչո՞ւ եք լալիս այսպե՛ս:
- Լյուդովիկոս արքան ասաց.
 - Օ՛, երանական տեսիլ.
 Հրեշտակները տարան ինձ
 45 Երկնքի դաշտերով.-
 «Ծառա հավատարիմ, ողջույն քեզ», -
 Հնչեց մի ձայն, և ես երջանկացած՝
 Արցունքներս զսպել չկարողացա:

1936

ՊԱՐՈՆ ԹԻԳՄԱՆԸ
(դանիական հին ժողովրդական երգ)

Պարոն Թիգմանը, երբ օրը ծագեց,
Իր արդուզարդը քեֆով ըսկսեց.
Հագավ գեղեցիկ շապիկն ամբռնում,–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

5 Ոսկեթել գոտին սիրկ կապեց մեջքին,
Կանաչ բաճկոնը ձեռք թիկունքին,
Հագավ կոշիկներն սեգ ու փայլվիւում,–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

10 Կոշիկներն հագավ՝ նրբակար, սաֆյան,
Ոսկի խթաններն ամրացրեց վրան,–
Եվ գնաց, կանգնեց Հրապարակում.–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

15 Եվ չվատնելով ավելորդ խոսքեր՝
Խստիվ պահանջեց գյուղից նոր հարկեր,
Ամեն գութանից յոթ չեֆել ցորեն.–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

20 Յոթ չեֆել ցորեն ամեն գութանից,
Չորս խոզից մի խոզ, գերն էն գերերից.
Բայց մի ծերունի զայրացավ անհուն.–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

Ծերունին դարձավ կայծակ ու կրակ.
- Ոչ ոք չի կարող տալ այսքան մեծ հարկ.
Բայց նախ որ անենք մենք նոր վճարում,–
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

25 Բայց նախ որ անենք նրբան վճարում,
Զհամարձակվեք՝ քաշվեք, գնաք տուն.
Պատի պես ամուր շարվեցեք կանգուն.-
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

Տղե՛րք, կանգնեցեք ամուր, կուռ կըռնի,
30 Որ Թիդմանը մեր ձեռքից չպրծնի,-
Եվ բռունցքով պինդ զարկեց պարոնին.-
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

Ծանր բռունցքով զարկեց Թիդմանին,
Երեսի վրա տապալեց գետին.
35 Փռվեց նա անշունչ և շուրջը՝ արյուն.-
Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

Ընկավ նա անշունչ և շուրջը՝ արյուն,-
Բայց ազատ հողը գութանն է վարում,
Ազատ սնվում են խոզերն անտառում,-
40 Զյուղերգարդցիներն այս շատ են սիրում:

1938

ԾՈՎԸ ՀԱՌԱՉՈՒՄ ԷՐ

(թաթարական)

Հինգ գիշեր, Հինգ օր, Հինգ օր ու գիշեր
Ծովն էր մոլեգնում, մոնչում անդուլ,
Ճերմակ փրփուրով, չիթերով պղտոր,
Ծառս էին ելնում ալիքներն անեղ
5 Եվ զարկվելով ժայռերին հզոր՝
Փշրվում էին ու դառնում փոշի:

Հինգ գիշեր, Հինգ օր, Հինգ օր ու գիշեր
Հեծում էր ծովը, ոնց զառանցանքում.
Հանդարտվեց միայն վեցերորդ օրում,
10 Ծածանվեց, ծփաց մանրիկ ծուփերով,
Կարծես՝ ծածկվել էր ձկան թեփերով:

Վեցերորդ օրում, առավոտյան վաղ,
Կարմիր կտուցով մի սև աղալնի
Մեր ափը եկավ, գուժեց լուրը չար.-
15 «Գորկում Լենինը, Լենինը մեռավ»...

Նորից դալկադեմ իրիկնամտին
Մրրկահավերն ամեն կողմերից
Եկան, ճչացին մոլթ ծովի վրա.
Գիշերը պայթեց փոթորիկն ուժգին,
20 Զարդ-փշուր արավ նավակներ անթիվ,
Կտրեց կայմերը շոգենավերի:

Մահվան խոր վշտով ոռնում էր քամին
Բարձր Յայլայի խավար կիրճերում,
Եվ սոճիների մթին անտառում
25 Բորանն էր փչում, և ձյունն հողմածած

Ծածկում էր ամեն շավիղ ու կածան
Եվ խորճիթները հովիտների մեջ:
Եվ ահեղ ձայնով մեռելաթաղման
Երգ էր մռնչում – Լենինը մեռավ:

- 30 Շրջապատի մեջ՝ կապույտ-կապուտակ,
Մեռելի նման գունատ, դագաղում,
Այու-դաղ լեռը խոժոռ ու լռին
Լսում էր հողմի մռայլ ողբերին.
Եվ կանգնած էր նա՝ հզոր, ալեհեր,
35 Հավիտյան, ինչպես երկիրն ու օվկիան:
Լենինն էլ այդպես: Մեր միլիոնավոր
Սրտերում, կյանքում, ասես օվկիանում,
Կանգնած է նա վեհ: Եվ հավերժ է նա՝
Սեզ Այու-դաղի գրանիտների պես:

<1939>

ՀԻՎԱՆԴ ԳՈՒՍԱՆԸ

Ո՛վ դու դաժան բախտ՝ նենգ ու դավաճան,
Որ մարդուն հավերժ շեղում ես ճամփից.
Թո՛ւյլ տուր մի վայրկյան, գոնե մի վայրկյան
Թարթիմ աչքերըս... բա՛վ է տանջես ինձ:

5 Ես այս անցյալի ստվերն եմ արդեն,
Եվ ուրվականը անհայտ գալիքի:
Ո՞վ է ազատվել, որ ես ազատվեմ
Կրքերուց ծանրը լուծը աշխարհի:

10 Սակայն տենչանքը կախարդեց հոգիս՝
Վաղվա խնդումին հուսացողիս գուր.
Իմ մեջ գեղգեղեց կրկը չոնգուրիս,
Եվ կենդանացավ իմ սիրտը տըխուր:

Օ՛, չոնգո՛ւր, չոնգո՛ւր, չոնգո՛ւր իմ անգին,
Դու երազանքի ծովերում սահող,
15 Քո քաղցր ու քնքուշ դայլայլին կրկին
Կարոտեց կրկին հոգիս ավայտող:

Լարըդ նման է սոխակի լեզվի,
Վարդ-մանուշակով ձողըդ է հյուսված,
Դու. թեք ունես լեռան արծըվի,
20 Թռչում ես խրոխտ և երկնասլաց:

Աշխարհից աշխարհ, մի վայրկյանի մեջ
Թռչում ես, ինձ էլ ման ածում քեզ հետ.

Մահն էլ չի կարող զատել ինձ քեզնից
Զի՛ կարող էլ ինձ հաղթել այսուհետ...

1940

2

ՔՈՒԹԱՅԻՍԻ

25 Ո՛վ դու չքնաղ Քութայիսի,
Վայր վարդերի և մայիսի.
Ո՞վ սրտիդ մեջ փըշեր ցըցեց,
Որ քեզ մաշի և վնասի:

Քո պարիսպներն ու բերդը վեա՛
30 Կռած-կոփված, երկաթի պես, -
Արյուններով ստեպ ներկված, -
Ո՞վ խորտակեց... ո՞վ փըշրեց քեզ:

Դիտում եմ քեզ, ավերվածիդ,
Քարով, փըշով լցված սրտիդ, -
35 Ավա՛ղ, ավա՛ղ, էլ չեմ տեսնում
Ոսկյա շուքը պալատներիդ:

Ինքնահավան հին Ֆազիսին,
Ռիոն անունը տրվեցին,
Անցած դարեր վերհիշողը
40 Արդ խորհում է ինչի՞ մասին:

Հիշո՞ւմ է նա ոսկեգեղմին,
Որպես գույքի մի թանկագին,

Ալիքների վրա ահեղ
Զգուշ սահող Արգո նավին:

45 Հիշո՞ւմ է նա քաջ Յաղոնին,
Սեկտեղ նավող հելեններին,
Իր իսկ կամքով առևանդվող
Այն խորամանկ Մեդեային:

Ոսկեվազն ո՞ւր է հիմա,–
50 Թանձրր տիղմով լցվել է նա,
Վշտի սավանն է խիտ ծածկել
Արեգակն ու այգը նրա:

Հեգ Ռիոնն է քեզնից փախչում,
Հայրենիքըս լացով ցողում.
55 «Ընդունի՛ր իմ տանջանքը մեծ»,–
Սև ծովին է այսպես կանչում:

Քութայի՛սի, սիրելի՛դ իմ,
Արյունակից ի՛մ մտերիմ,
Համբերությո՛ւն, համբերությո՛ւն,
60 Վշտով հայրես քո սիրտը հին:

1940

3

ԱՊԵԼՅԱՅԻԱՅԻ ՊԻՏԱԿԸ

Բախտավոր է մեր Չանչուրը, որդի ունի գովական,
Երդրվում եմ՝ ապելյացիան ջրի պես գոց նա գիտե:
Բեղ ու մորուք, թյո՛ւ, ի՞նչ է որ... Բակենբարդը՝ ուրիշ բան,
Դա՛ նշան է բարձրը ուսման, օ՛, նա ինչպե՛ս մեծ մարդ է:

65 Վրացական զգեստն ի՞նչ է. անվայել է, որ հագնի,
Մեր հերոսին պոչով ֆրակ միայն պատշաճ ու պարտ է:
Ով չըզդիտե ըռուսերեն – նա գաղան է վայրենի,
Ո՞վ կարող է հերքել նրան, – ուսում առած նա մարդ է:

Լեզգիակայից զգվում է խիստ. չի ակորժում մեր թառին,
70 Մոզնիյ պարե՛ր – ինչպե՛ս գիտե. սալոնների նա զարդ է.
Ո՞նց կշտամբել օպերային ականջը վարժ տղային,
Դե՛հ, կատակ չէ, նա բան տեսած, ուսում առած մի մարդ է:

Գավառապետ դարձավ տղան, ո՞վ կըչափվի նրա հետ,
Երբ գոռում է խալխի վրա, հենց իմանա՜ որոտ է:
75 Աղքատ մարդկանց շատ է ատում, բարեկամ է փողի հետ.
Դուք ուրիշ բան չմտածեք – ուսում առած նա մարդ է:

Խիստ զգվում է կաշառքից նա, և նույնիսկ հավ չի վերցնում,
Սակայն... բան է, թե պատահեց, որ ոչխարը պարարտ է,
Ի՞նչ անի նա, ընծա է դա. ընծան կաշառք չի կոչվում.
80 Ուրիշ մեկին դա չի ներվում, իսկ նա չէ՞ որ մեծ մարդ է:

Թե չըզդիտես ուսաց լեզուն, դու նրան չըմոտենաս,
Վրացերեն ծամծմում է, ըռուսերեն կըջարդի.
Անուսների կոշտ շրջանում խոր ձանձրույթ է զգում նա,
Նրան հրեք է համ կշտամբի... երկնից իջած մեծ մարդ է:

85 Խեղբի ծով է, քայլում է նա՝ ուռած–փքված, քիթը վեր,
Ամբողջ ազգին չի հավանում. ազգն իսկ նրանով հպարտ է.
Ահա՛ ձեզ մի ընտիր որդի երանելի մեր երկրում,
Բայց վրացոց կարծիքով նա միանգամայն լավ մարդ է:

1940

ՍՐԲԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

- Սիրում եմ՝ սրբերի պատկերի առաջ,
 90 Երբ որ վառվում է մոմը սրբափայլ,
 Եվ խորհրդավոր լույսով երևրուն
 Ցրում է մեղմիվ խավարը մըռայլ:
- Հալվում է մոմը, և՛ լուռ, և՛ անդորր,
 Հալվում է, որպես զոհը մեծագույն,
 95 Հալվում է ցրվերջ, որ սուրբ օրհնությամբ
 Լուսավորե ողջ խավարը անհուն:
- Այս ուժի առաջ՝ մեծ ու սրբազան,
 Կանգնած եմ՝ սուզված խորին խոհերում,
 Դառն ու քաղցրագին մտորմունքի մեջ,
 100 Քարացած, որպես երկնային մի սյուն:
- Զգում եմ ինչ-որ մի նմանութուն
 Այրվող մոմի մեջ և իմ էության,
 Սակայն ես բնավ, իմ գիտակցությամբ,
 Այդ չեմ ըմբռնում, այլ զգում միայն:
- 105 Պատկերը սրբերի – Հայրենիքս է վեհ,
 Նրան պահարան – աշխարհը հանուր,
 Եվ ինքս էլ այդպես այրվել ու հալվել
 Չեմ կարող միթե, ինչպես զոհ մաքուր:
- Այո՛... բայց չկա լուսարարն հիմա,
 110 Որպեսզի բերի ինձ համար կրակ, –
 Մեր ապագայի առաքյալն է նա,
 Ինչպես ճշմոտուն զարնան ծիծեռնակ:

1940

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

Ես դուրս եմ ելնում մենակ ճանապարհ,
Փայլում է ուղին մշուշի միջից.
Լսում է աստծուն անապատը լուռ,
Եվ աստղ աստղի հետ խոսում է հեռվից:

5 Հրաշալի երկինք, չքեղահանդես,
Երկիրն է նիրհում կապույտ շողերում...
Ինչո՞ւ ցավագին տխուր եմ այսպես,
Սպասո՞ւմ եմ մի բան, անցա՞ծն եմ ողբում:

10 Ես կյանքից արդեն հուսալիք չունեմ,
Եվ չեմ ամիսոսում օրերս անցյալ,
Ես ազատություն և հանգիստ կուզեմ,
Ես կուզեմ քնել և ինձ մոռանալ:

Սակայն ո՛չ երբեք ցուրտ քնով շիրմի.
Կուզեի հավերժ ես այնպես ննջել,
15 Որ կյանքի ուժը նիրհեր իմ սրտում
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, իջներ:

Որ գիշեր-ցերեկ ինձ սիրո մասին
Սրտաբուխ մի երգ քաղցրաձայն հնչեր,
Եվ սաղարթախիտ, մթագին կաղնին
20 Հավերժ դալարուն՝ վերաս չառաչեր:

1941

ՄԱՐԻՉԱՆԻՆ

(սոնետ)

Ի՞նչ թշվառ ես, իմ բարեկամ, քեզ տեսնողը կանգ կառնի,
եվ մի վայրկյան կըբաղդատես դալուկի հետ աշունքվա.
«Ինչքան խեղճ է», – կըվշտանա ու սրտի մեջ կըսգա,
եվ թշնամին քո հիշաչար նույնիսկ անկեղծ կըտրտմի:

5 Երբ լսում եմ քո հազը ես այնքա՜ն քնքուշ ու տխուր,
Զգում եմ, որ շտապում ես դեպի անհուն գերեզման,
Սակայն մահն էլ քեզ չի կարող խորունկ սիրել ինձ նման,
Մահը – սիրո միակ լեզուն՝ հավերժապես վեհ ու լուռ:

Բայց ո՞վ գիտե – ինձնից առաջ ճակատագիրը հզոր,
10 Թե պարուրե մահաշշուռնը պատանքի մեջ, մի սև օր,
Այդ քո դեմքը՝ թախծադալուկ և գլթով լի, սիրավառ, –

Պաղատում եմ քեզ սրտագին, ի՛մ մտերիմ, ի՛մ անգին,
Որպեսզի ես որբ չըմնամ՝ քո չիրմի մոտ, քո կողքին,
Մի տեղ պահես, մինչև ես գամ, մի տեղ պահես ինձ համար:

1941

ՍԵՎ ՇՈՐԸ

Սև ագռավին գուցե դու ես խիստ հետևել և կամ նա քեզ,
Որ հագել ես այդ սև շորը, այդ սևերով զարդարվել ես.
Թե՞ մեռել է քո սերերից գուցե մեկը, ի՞նչ գիտեմ՝ ո՞վ,
Որ զուգվել ես թանաքագույն այդ կախարդիչ ծանր սևով:

5 Գուցե... սակայն հարցիս վրա ծիծաղում եմ, քո արև՛ը,

Սակայն պարզ է, որ սազում է, այնպե՛ս սազում քեզ այդ սևը.
Դեռ չի եղել այնպես գիշեր՝ խավարակուռ ու մթնասքող,
Որ քո շորից խավար լիներ, լույս-մարմնիդ պես
փայլատակող:

- 10 Միայն կուզեմ գաղտնի ասել, միայն կուզեմ խնդրել գաղտնի,
Որ դո՛ւ ՀՀանես, երբեք ՀՀանես այդ սև շորը սքանչելի,
Երնեկ մեռնիմ, արժանանամ գերեզմանին խավարամած,
Որ ինձ ողբաս, իմ վրա լաս, ա՛խ, այդ ծանրը սևը հագած:

1941

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆԵՐԻ ԵՐԳԸ

«Ո՛վ ազատություն, ո՛վ ազատություն»,
Ահա՛ այս խոսքը՝ դյուրիշ ու չքեղ,
Որպես մի նվագ, քաղցրալուր հնչյուն
Լսվում էր շուրջըդ, լսվում ամեն տեղ:

- 5 Դահլիճ, սաղրանքը նենգ հզորների,
Եվ մեր տանջանքը բա՛վ է, բավական.
Մինք վար թափեցինք քո փառքն արյունոտ,
Ա՛րդ, ժամդ հասավ, ժա՛մ օրհասական:

- 10 Ինչ որ եղել է, - այլևս չկա,
Ինչ որ կա հիմա - էլ նա չի լինի.
Նոր, պայծառ կյանքի նոր կաղապարում
Նոր միտք կձուլվի:

- Հալվի՛ր դու, ձյան հյուս, լեռան գազաթից
Գլորվի՛ր, փլվի՛ր, որոտա՛ ուժգին,
15 Քանդի՛ր, կործանի՛ր տունը կուռքերի,

Տա՛ր, ջնջի՛ր անհե՛տ մեր ցավերը հին:

Եվ երբ որ ծաղկի, և քնքուշ ծաղկի
Բաժակը լցվի երկնի շարքաթուլ,
Հաճախ սպիտակ թերթերը իրա
20 Օձն էլ է շոյում թունոտ շրթերով:

Ինչ որ եղել է, - այլևս չկա,
Ինչ որ կա հիմա - էլ նա չի լինի.
Նոր, պայծառ կյանքի նոր կողապարում
Նոր միտք կձուլվի:

1941

ԱՍՏՂԱԲԱՇԽ ՊՏՂՈՄԵՈՍ
(150 թվին մ.թ.ա.)

Մահկանացու եմ ես և վաղանցուկ,
Սակայն, ո՛վ աստղեր, երբ տեսնում եմ ես
Ծիրային ընթացքը ձեր, օ՛, այնժամ զգում եմ,
Որ այլևս ոտքս չի դիպչում երկրին,
5 Այլ Զևսին սեղանակից վայելում եմ
Ամբրոսիան աստվածային:

1945, օգոստոսի 30, Երևան

Հասմիկն է ծաղկում թավշյա պուրակում,
Ծաղկաթերթերը ընկնում են լռին,
Իմ վրա նորից ծփում է հեռվում
Քո թաշկինակը հրաժեշտի ժամին:

5 Իսկ հովը քնքուշ և բուրումնավետ
Հնչում է շղարշ շողերի միջից
Եվ խաղ է անում դալար սեզի հետ,
Եվ լռում մի պահ, աղմկում նորից,

10 Եվ կամ գրկում է իր նուրբ թևերով
Կանչը երկարուն սեզ կռունկների,
Եվ նորից ինձ հետ խոսում է կարծես
Ոսկի հեքիաթը մանուկ օրերի:

1955

ՖԻԼ. ՖՈՆ ՉԻՏԵԼՎԱԳ

5

Ով որ կուզե ճամփորդել,
Պետք է կանուխ վեր կենա,
Հետը քիչ բան վերցնե,
Հավասար քայլով գնա,
Հողաերը տանը թողնե
Եվ լուռ լսել գիտենա:

1955

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՄԱՀԸ

Վառարանիս մոտ, ձմեռը, հաճախ
Խորհում եմ վշտով, — ինչքա՞ն թռչուններ
Ցրտից, բուքերից սառչում են, ափա՛ղ...
Խեղճ ու անպաշտպան, չքնաղ էակներ:

- 5 Բայց երբ վաղ գարնան դաշտ ենք ելնում մենք,
 Ինչո՞ւ սեղեղում, անտառում երբեք
 Ձենք գտնում նրանց կմախքը քնքուշ,
 Սևանիկիս նրանք թաքչո՞ւմ են արդյոք...

1955

ԻՐ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Նա, որ հիմա հանգչում է այստեղ,
Արժանի է գուլթի, քան թե նախանձի.
Նա կյանքից զրկվելուց առաջ
Հազար անգամ մահը տեսավ:

5 Անցո՛րդ, կամա՛ց գնա,
Զգո՛ւյշ, չարթնացնես նրան.
Չէ՞ որ առաջին անդամն է ահա,
Որ խեղճ Սկարոնը քնում է:

1955

Մայրաքաղաքում ճառեր շոշոկալից,
Բանակով է բուռն, կատաղի.
Իսկ այնտեղ Հիմա, Ռուսիայի խորքում,
Խաղաղություն է դարավոր այնտեղ.
5 Միայն հողմն է, որ հանգիստ չի տալիս
Ճամփու եզերքի ուռենիներին.
Եվ կորանում են աղեղի նման
Հասկերը անծայր, անվերջ արտերի.
Եվ Համբուրվում են մայր մեր հողի հետ:

1956

* * *

Երեկ էր, և ժամը վեցին
Անցնում էի ես Սենայով,
Այնտեղ մատաղ մի գեղջկուհու
Ծնծում էին խարազանով:
5 Ձայն չէր ելնում խեղճի կրծքից,
Լոկ մտրակն էր շաչում ազատ...
Ես ասացի իմ մուսային.-
- Տե՛ս, սա քույրն է քո հարազատ:

1956

**ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ
ՏՊԱԳՐՎԱԾ ՉԱՓԱԾՈՒ ԵՐԿԵՐ**

**ԱՆՏԻՊ ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ
ԲԱԼԼԱԴՆԵՐ**

I

Ծաղկանոցում բացվել էր մի շքեղ վարդ՝
 Լուսնի շողով, երկնի ցողով շողշողուն.
 Արշալույսի ճաճանչներով լուսազարդ,
 Անուշաբույր, հազարաթերթ չքնաղ վարդ:

II

5 Թուփալով գեփյուռն եկավ դաշտերից,
 Վարդը տեսավ ու կանգ առավ կախարդված,
 Բույրից հարբած՝ փոկեց նրա ոտի տակ
 Ու մրմնջաց.- Ես չեմ գնա այստեղից:

III

10 Վարդի բույրով, վարդի գեղով հմայված՝
 Գիշեր-ցերեկ դայլայլում էր Սոխակը.
 - Այս հրաշք է, այս երազ է աննման,
 Այսպիսի վարդ դեռ չի տեսել աշխարհքը:

IV

15 Ես կյանք չունեմ, ես սեր չունեմ առանց քեզ,
 Կյանքս ու հոգիս քո բուրմունքն է, նազելիս,
 Ես քանի կամ, պիտի երգեմ հոգեգմայլ
 Անուշ բո՛ւյրդ, անուշ շո՛ւնչդ, թագուհիս:

V

20 Եվ կախարդը լսեց գովքը Սոխակի,
 Ասաց նրան.- Այսպիսի՛ գովք երկնի տակ
 Դեռ չի՛ երգվել, դեռ չի՛ լսվել, ո՛վ Սոխակ,
 Դո՛ւ ես միայն այդ գովեստին արժանի:

VI

Արի ես քեզ վարդ դարձնեմ սրա տեղ,
Ավելի պերճ, ավելի վառ, գունագեղ,
Թող սոխակներ պարտեզներից հեռավոր
Գան, քեզ երգեն, քեզ ներբողեն, միա՛յն քեզ:

VII

25 – Օ՛, ո՛չ երբեք, – Սոխակն ասաց կախարդին, –
Ես ուզում եմ սոխակ մնալ սիրահար,
Հավատարիմ հրաշաբույր իմ վարդին,
Միայն նրան գովեմ, երգեմ խանդավառ:

VIII

Շնչեմ, ծծեմ նրա բույրը հրաշալի,
30 Որ մայր երկրի խորունկ սրտից է բխում.
Որ իմ երգին ուժ է բաշխում անսպառ,
Այդ բուրմունքը հողի բույրն է մշտագոր:
Իմ թևերին ուժ է տալիս աննկուն,
Որ բարձրանամ, որ սավառնեմ, ճախրեմ վեր,
35 Իմ թևերին թափ ու թռիչք է տալիս՝
Սուրամ դեպի հեռուները, հեռունե՛ր...

1950, մայիսի 11, Երևան

- Օվկիանոսի մեջ կապույտ ծաղկեփնջի պես չքեղ
Մի կղզի կար քաղցրաբույր, մշտափթիթ ու դալար:
Եվ ասում են, որ այնտեղ բնա՛վ, բնա՛վ մահ չկար:
Ապրում էին երջանիկ, միշտ անթառամ, միշտ պայծառ
- 5 Ամեն ծաղիկ ու թիթեռ, թև ու թռչուն ու եղնիկ:
Երբ հասնում էր վայրկյանը թառամելու, թռչնելու,
Նրանց վրա իջնում էր անմահության ցողը ջինջ,
Եվ վերստին մանկացած՝ ճախրում էին ու շնչում
Ամեն ծաղիկ ու թիթեռ, թև ու թռչուն ու եղնիկ:
- 10 Երբ ծերության ցուրտ ձյունն էր նստում մարդկանց
քունքերին,
Եվ հոգնությունն էր բեկում նրանց երգերը սիրտ,
Գնում էին հապճեպով անմահության աղբյուրը,
Որ բխում էր ու հուռթում ավազանում հակինթե:
Ջրերի մեջ լուսեղեն սուղվում էին ծերերը
- 15 Եվ ավերին թողնելով իրենց մաշկը թորչումած՝
Դառնում էին դեպի տուն թիթեռների պես թեթև,
Թռչուն<ներ>ի երգերով նորից անհափ սիրելու:
Եվ հաղթական էր կյանքը և ծաղկում էր պերճ ամենուր,
Մահն անզոր էր աշխարհում մի շուղ ծառից պոկելու:
-
- 20 Այդ կղզու մեջ մի մայր էր ապրում իրեն մանկան հետ:
Շատ որդիներ ուներ նա, բայց բոլորն էլ մեծացել,
Թռել էին, գնացել հետը իրենց սերերի:
Մնացել էր մայրը սոսկ փոքրիկի հետ միասին:
Ծնրացել էր նա վաղուց ու թառամել-թարչամել:
- 25 Անմահության աղբյուրը գնալու ժամն էր վաղուց:
Դնաց մայրը և դարձավ,
Դարձավ ինչպես ծաղկածոց, դեռափթիթ մի աղջիկ.
Շողք ու ժպիտն աչերում, ձայնը՝ արծաթ սրնգի:
Գրկեց որդուն կարոտով և համբուրեց սրտագին.

- 30 -Տես, իմ սիրուն, տես՝ ինչպե՛ս գեղեցկացավ մայրիկդ,–
Ասաց մայրիկը քնքուշ, ձայնը՝ արծաթ սրնգի:
-Դու իմ մայրը չես իսկի,- ասաց որդին տխրամած:
-Ես եմ, ես եմ քո մայրը, իմ սիրունիկ, իմ հոգի:
-Գնա, դու իմ մայրը չես, գեղեցիկ էր քեզնից նա,
35 Լուսի թեւեր՝ մազերը, աչքերը՝ հեզ ու անուշ:
Լաց էր լինում մանուկը և չէր թողնում խեղճ մորը՝
Իրեն գրկե, փայփայե, և փախչում էր մոր գրկից:
-Ես եմ քո ճիշտ մայրիկը, պառավ էի, ջահելաց:
-Եթե դու իմ մայրիկն ես, դարձի՛ր առաջվա նման,
40 Որ իմանամ՝ իմ մայրն ես, իմ մայրիկն է գեղեցիկ:
Մայրն ասաց՝ կմեռնեմ, թե առաջվա պես դառնամ:
Սակայն որդին չէր լսում, չէր հասկանում՝ մահն ինչ է:
Եվ լալիս էր ու լացով փախչում հեռու մոր գրկից:
Ճարը կտրած՝ խեղճ մայրը դարձավ աղբյուրը նորից,
45 Գտավ, հագավ հին մաշկը, կորագլուխ տուն դարձավ:
Ուրախ ճիչով, կարոտով որդին փարվեց մոր կրծքին,
Կրծքին դրեց գլուխը ու քուն մտավ երջանիկ:
Սակայն հանկարծ պառաված մոր ձեռները թուլացան,
Դալուն իջավ ճակատին:
50 Այն օրվանից ցամաքեց անմահության աղբյուրը:
Հաղթանակեց չար մահը, կյանքը դարձավ սուտ ստվեր:
Եվ անպարփակ օվկիանի ալիքները մթապին
Այնուհետև հորդեցին, տարան մահի հաղթական
Հրամանը չարագործ իշխանության սասանիչ
55 Աշխարհի չորս ծայրերը, հեռու ավեր, ամեն ամի...

- ...Մենակ նստած հրեղեն ձին՝
Կես գիշերին ձորն իջա.
Պայծառ լուսնի շուշան փոշին
Մաղեց, ցողաց ինձ վրա...
- 5 Վառ աստղերը երկնի խորքում
Պար բոլորած՝ երգեցին,
Շողուն երգեր – լուս ալիքները
Լճի վրա սփռեցին...
- Աստղ լիճը փրփուր տվեց,
10 Փրփուրն իջավ ժայռերին,
Աստղոտ լճի կուրծքը պատռեց,
Փերինները դուս ցատկեցին...-
Փերինները՝ հուր աչքերով,
Ձուն կրծքերին՝ վարդ-կոկոն,
15 Դեպ ինձ եկան մեղմ ժպիտով,
Համբույր տվին – վարդ-կոկոն:
-

- Մամուտ ժայռի մուխ ստվերում
Սև պառավը լուռ նստած,
Մեծ թեչքով ինձ էր սաստում,
20 Որ չգնամ նրանց հետ...
- Ծաղիկ փնջեր – շաղաղ փնջեր
Ինձի նվեր տվեցին –
Ու խնդրեցին – շա՛տ խնդրեցին,
Որ իրենց հետ հյուր գնամ –
25 Այնտեղ՝ լճում, ճոխ պալատ կա՝
Երկնի չքնաղ զարդերով...
Այնտեղ երգ կա, ալ՝գինի կա՝
Կուսի գրկում՝ սիրո ծով...
-

Ձորի կողքին մեծ անտառ կա,
30 Մի մեծ ստվեր - սև ստվեր,
Հով քամի էր էնդուց փչում,
Ու քամու հետ՝ շա՛տ ձայներ...

Լսում էի օձի երգեր,
Գորտի անվերջ աղոթքը...
35 Մեծ Ջմրուխտի քանի՜ խումբեր,
Քավթառ քուսու՝ նվագներ...
Ու քչեցի հրեղեն ձիս
Դեպի մթին անտառը,
Ստվերն իջավ իմ ճակատիս,
40 Սիրտս վախից թև առավ...

ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ՏՊԱԳԻՎԱԾ
ԱՌԱԿՆԵՐ

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

- Կատուն օրն ամբողջ՝ քաղցած, անոթի,
Տան ու գավիթի
Ամեն ծակ ու ծուկ
Զգույշ ու ծածուկ
5 Հոտոտեց մեկ-մեկ
Ու նորից քաղցած նստավ սրտաբեկ:
- Եվ հանկարծ, ինչպես մթի մեջ ծագե
Ճաճանչը ոսկի հուր արեգակի,
Որտեղից որ է,
10 Լսվեց հոգեցունց անուշ ծվծվոց:
Կատուն շեշտակի
Ականջը լարեց, աչքերը սրեց,
Տեսավ հատակի
Անձուկ մի ճեղքից
15 Աչքերը մուկի:
- Ո՛հ, ավա՛ղ, սակայն չէր հասնի նրան
Ո՛չ ճանկ, ո՛չ ճիրան:
-Բարև, անուշիկ, մուկիկ իմ սիրուն,-
Քնքշագին ձայնով ողորեց կատուն.-
20 Վաղուց է, հոգիս, չէի տեսել քեզ,
Ձայնիկդ առա ու մոտդ թռա:
Ա՛խ, այնպե՛ս, այնպե՛ս
Կարոտել եմ քեզ:
Ինչպե՛ս կուգեի՝ պատկերդ դիտեմ
25 Պայծառ, գեղադեմ:

- Հաստագլուխ մի կրիա կար,
 Որ իր բնից ձանձրացած՝
 Ուզեց երթալ, տեսնել աշխարհ,
 Անցնել լեռներ – բարձր ու ցած.
- 5 Այս միտքն հայտնեց երկու բաղի,
 Որ խոստացան տանել նրան
 Մինչ դռները Բաղդատի:
 –Քեզ կըտանենք, որ դու տեսնես
 Նոր–նոր ազգեր, նոր բարքեր,
- 10 Շոխ պալատներ ու փառքեր,
 Միտքդ բացվի, լինիս հանճար
 Ու չմնաս խեղճ ու անճար:
 Եվ կտրելով մի բարակ ճյուղ մացառից՝
 Պինդ բռնեցին նրա երկու ծայրերից.
- 15 –Ճյուղը ամուր պիտի խածես
 Եվ չլինի թե մի խոսք ասես...
 Այսպես ասին բաղերն վայրի
 Եվ բարձրացան արագաթև
 Անտառների ու սարերի
- 20 Կստարներից վերև, վերև:
 Ով տեսնում էր, զարմանք կտրած՝
 Ցույց էր տալիս իրարի –
 –Տեսեք, տեսեք, կրիաների
 Թագուհին է երկինք ելած:
- 25 –Այո, այո, Թագուհի եմ, –
 Գոչեց կրիան հպարտ–հպարտ, –
 Ամպերի մեջ ուրախ– գվարթ
 Զբոսնում եմ, զբոսնում...
 Մեկ էլ հանկարծ շառաչով գետին ընկավ,
- 30 Ժայռին դիպավ, ձուր նման ջախջախվեցավ:

Արծաթ կասեն թեև խոսքին,
Լուսթյունն է, սակայն, ոսկին.
Եվ ով որ չի համբերում, ով որ լեզուն չի կապում,
Դիտին կըզա շատ փորձանք, – այս առակից
Հասկանում ես:

<1930>

**ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏԱՆՀՈՒ ՏՊԱԳՐՎԱԾ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կարմիր վարդը թո՛ղ ու թռի՛ր, ա՛յ բլբուլ.
էշխի ձեռքը ջիզյարս խոց է դառել.
Հերիք երգես, Հերիք կանչես, այ բյուլբուլ,
Մեջիս մարմանդ կրակը բոց է դառել:

5 Վարդի նման յարս գնաց, ի՞նչ անեմ,
Ցարս գնաց, յարես մնաց, ի՞նչ անեմ,
Աղ է երգդ՝ վերքիս ցանած, ի՞նչ անեմ,
Բյուլբյուլ, սիրտս ցավերի ծոց է դառել:

Բո վարդի հետ քեզ տեսնելիս միասին
10 Ես ո՞նց չլամ իմ յարի ու իմ մասին.
Բյուլբյուլ, թռի՛ր, թե չէ ես էլ իմ հարսին
Տաղ կկանչեմ. – իմ տաղը կոծ է դառել:

<1892-1893>

Դայլայլում է սոխակն անուշ.
Հարցնում եմ. «Ասա, սիրուն,
Այս ե՞րբ եկավ գարունն անուշ,
Թե՞ երազիս մեջն է գարուն:

5 Պիտի հարբեմ, հարբեմ անհագ.
Գինու մեջն է սեր ու գարուն:

<1892-1893>

ՊԱՐՍԿԱԿԱՆ

Ես քեզ հետ դիտմամբ կուլել եմ ուզում
 ի սեր հաշտության,
Որպեսզի գուցե գործըս համբույրով
 ըստանա վախճան:

<1892-1893>

ՊԱՐՍԿԱԿԱՆ

Ձեմ սպասում, որ երբեք
Խոստումդ անես ի կատար.
Բերկրանքը սուտ խոստումիդ
Բավ է արդեն ինձ համար:

<1892-1893>

ԻՄՆՊԱՏԱԿԸ

Վայրի խոտը կխրեմ գդակիս
 Ու կթափառեմ.
 Ի՞նչն է իմ նպատակը. —
 Մի թռչունի կանչ,
 5 Ու զանգի պես ջինջ
 Կողողանջե հեռու
 Ու խուլ խորքից:

1895

ՏԱՆՀԵՅՁԵՐԸ ՎԵՆՈՒՄԻՆ

Տիկին Վենուա, իմ սիրուն կին,
Անուշ գինուց ու պաչերից
Հոգիս հիվանդ է դարձել.—
Օ՛, դառնությանց կփափագիմ.

5 Մենք շա՛տ ծաղրեցինք, ծիծղացինք,
Հիմա արցունքներ կուզիմ.
Ու գլուխս վարդերի տեղ
Փշերով պսակել կուզիմ:

1895

HIMNUS AUF DAS LEBEN

- Անշուշտ, այնպես կսիրեմ ընկերը ընկերին,
 Որպես ես քեզ կսիրեմ, խորհրդավոր՝ կյանք,
 Արդյո՞ք քու մեջ հրճվել եմ, թե՞ լացել,
 Արդյո՞ք դու ինձ տանջանք ես տվել, թե՞ բերկրանք.
 5 –Բայց ես քեզ կսիրեմ քու բախտն ու հոգսը միասին:
 Եվ եթե դո՛ւ ինձ ջնջել կուզես,
 Ես կպոկվիմ խոր կսկծով քու գրկից,
 Ինչպես ընկերը ընկերի կրծքից...
 Ա՛խ, բոլոր ուժովս կգրկեմ քեզ,
 10 Թո՛ղ քու բոցը հոգիս տոչորեմ,
 Եվ կռվի տապի մեջ թո՛ղ լուծեմ
 Քու հուլթյան անհուն պաղտնիքը:
 Հազար տարիներ խոկամ ու ապրեմ –
 –Զգի՛ր քու բովանդակությունը այնտեղ:
 15 Բայց դուն է՛լ չունիս երջանիկ բախտ ինձ տալու,
 Դե՛, Հառաջ, տո՛ւր, ուրեմն, քու դառնությունը ինձ:

1895

[ÜBERMENSCH

Հա՛, ես լավ գիտեմ, ո՞ւրտից եմ ծագում,
Բոց-կրակի պես անկուշտ, անհաղ եմ.
Եվ ես այրվում եմ, և ես ինձ լավիում:

5 Լույս կլինի բոլորն, ինչ ո՛ր բռնում եմ,
Ածուխ՝ բոլորը, ինչ որ թողնում եմ.
-Ես բո՛ց եմ անկուշտ, ես բո՛ց եմ, անշո՛ւշտ:]

<1898>

ԲԱՆՎՈՐԻ ԵՐԳԸ
(գերմանական)

- Մենք ունենք տուն ու տեղ, մենք ունենք երեխա,
Օ՛ր, իմ կին թանկագին,
Մենք ունենք և նույնպես աշխատանք բավարար
Եվ ունենք արեգակ և անձրև, և զովեր,
5 Միայն մեզ պակսում է մի փոքրիկ, չնչին բան.
Որ ինչպես թռչուններ շեն-ուրախ լինեինք
Միմիայն ժամանակ:
-

- Եվ երբ մենք կյուրակի՝ դաշտերով ման կուգանք,
Իմ մանուկ սիրասուն,
10 Հասկերի վերայով երբ ազատ ու արձակ
Սավառնող ծիծեռնի կարավանն ենք տեսնում,
Ա՛խ, գիտես, այդ ժամին հագուստ չէ՝ որ չունինք,
Որ ինչպես թռչուններ զարդարուն լինեինք
Միմիայն ժամանակ:

<1906>

**ԲԱՔԵԼՈՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՄՆԵՐԻՅ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(5 - 7000 տարի մեր թվականից առաջ)**

ՆԵՐՔՈՂ ԱՐԵՎԻՆ

*Տե՛ր, խավարի լուսավորիչ, դու, որ մռայլը թափանցում ես,
Աստված բարի՛, որ հեղեղին բարձրացնում ես
Եվ թույլերին պահպանում.*

*Մեծ աստվածները բոլորը իրենց հայացքները լույսիդ են
ուղղում.*

*5 Ոգիները անդունդի՝ անհագ տենչով դեմքդ են որոնում:
Ինչպես մի փեսա, հանգչում ես դու լի ուրախությամբ և
շնորհներով,*

Քո պայծառությամբ անցնում ես մինչև երկնքի սահմանները.

Դու դրոշն ես այս մեծ, արձակ երկրի վրա,

Ո՛վ աստված, մարդիկ, որ ապրում են տարածությունների վրա,

10 Նայում են քեզ և բերկրում...

1908

Դեպի այն աշխարհը, առանց վերադարձի, հեռավոր այն երկիրը
Քայքայման,

Սլանում եմ ահա, թևերս փռում, ինչպես մի թռչուն.

Իջնում եմ ներքև, դեպի խավարի տունը,

Դեպի բնակարանը Իրկալա Աստծու,

5 Դեպի այն տունը, որի դռները առանց ելքի են.

Դեպի այն ուղին, որի ընթացքը վերադարձ չունի.

Դեպի այն բնակարանը, որի մուտքը զրկված է լույսից.

Այն վայրը դեպի, ուր փոշու չեղջն է նրանց սնունդը միայն,

Ուր երբեք լույս չի նայում, խավարի մեջ դեգերում է ամեն ինչ,

10 Որի դռուն ու դարպասները ծածկում է հավիտենական փոշին:

1908

ԲՈՒԴԳՀԱՅԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Մարդը՝ անհոգ, սիրտը՝ զվարթ –
Ծաղիկներ է քաղում դաշտում:
Բայց հեղեղը՝ ինչպես քնած
Գյուղի վրա – այնպես կըգա
5 Ահեղ, մահը նրա վրա...

Այս մարմինը, ավա՛ղ, շուտով
Վայր կդնեն սառը գետնին.
Որին սիրո բազուկներն են
Այսօր գրկում – վաղը նրան
10 Որդն ու ճիճուն կըքայքայեն...

1908

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎ

Ո՛չ, այսքան վառ քեզ չեմ սիրում,
Ոչ քո փայլը գեղանի.
Տանջանքներս եմ քո մեջ սիրում
Կորած, մատաղ օրերի:

5 Երբ նայում եմ աչերիդ լուռ
Ու հայացքով թափանցում
Ես քեզ հետ չեմ գաղտնի, տխուր –
Սրտիս հետ եմ զրուցում:

10 Զրուցում եմ մատաղ օրից
Ընկերոջ հետ իմ կյանքի
Ու պատկերը փնտրում նրա
Գծերի մեջ քո դեմքի:

15 Եվ այդ խոսուն շրթունքներում
Փնտրում շուրթեր, որ հիմի
Համրացած են. քո աչերում
Հուրը մարած աչերի:

<1912>

ԼԵՐՄՈՆՏՈՎ

Թե ձայնդ եմ լսում,
Քաղցրալուր, հնչուն՝
Սիրտս է թպրտում
Ոնց փակված թռչուն:

5 Թե խորունկ, կապուտակ
Հանդիպում աչերիդ՝
Հոգիս է կրծքիս տակ
Անարգել քո գերիդ:

10 Եվ ուրախ եմ կասես,
Եվ կարոտ արցունքի,
Եվ վզիդ, ա՛խ, ինչպես
Ես փարվել կուգեի:

<1912>

ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

(սառսկրիտից)

—Նայե՛, հոգ տարւ այս օրվան,
Զի կյանքն է այն, կյանքն իսկ կյանքին իրական.
Իր ընթացքին մեջ հակիրճ՝ ամփոփված են
Իրողությունը կյանքիդ,

5 Երանությունն անհունին,

Փառքն ու փայլը մեծ գործին:

Եվ ցոլքն անբիծ գեղեցկին,

Զի երեկըն երազ՝մ է, լոկ կորսւրված,

Եվ վաղըն սոսկ տեսիլք մը, դեռ անծանոթ,

10 Բայց այսօրը, լավ ապրված, բեղմնավոր,

Ամեն երեկ երջանկության մի երազի կը փոխե,

Եվ ամեն վաղ՝ տեսիլքի վառ մի հույսի:

Հո՛գ տար, ուրեմն, այսօրվան,

Այս է ողջույնը ու պատգամը արշալույսին նորաբաց:

<1918>

ԻՄ ՅՈԹԸ ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ

Ո՛վ աշխարհ.
Քեզնից ես միայն
Մարդկայնություն եմ ուզում.
Ո՛վ մարդկայնություն,

5 Ո՛վ աշխարհ:

Ո՛վ ժամանակ.
Քեզնից ես միայն
Հավերժություն եմ ուզում.
Ո՛վ ժամանակ,

10 Ո՛վ Հավերժություն:

Ո՛վ կյանք.
Քեզնից ես միայն
Հավասարություն եմ ուզում.
Ո՛վ կյանք...

15 Ո՛վ սեր.
Քեզնից ես միայն
Անեղբորություն եմ ուզում.

Ո՛վ խնդություն.
Քեզնից ես միայն
20 Անչափություն եմ ուզում.
Ո՛վ խնդություն,
Ո՛վ անչափություն:

Ո՛վ մահ.

Քեզնից ես միայն

25 Հանգստութիւնն եմ ուզում:

Ո՛վ հոգի.

Քեզնից ես միայն

Անմահութիւնն եմ ուզում:

<1920-ական թթ. առաջին կես>

Գազաթները վես
Նիրհում են անդորր,
Սաղարթների մեջ
Հագիվ կարող ես
5 Նշմարել շշուռճ.
Եվ հավք ու թռչուն
Մթին անտառում
Լռել են վաղուց –
Սպասիր դույզն-ինչ,
10 Կհանգչես և դու:

<1939>

ԽԱՂԱՂ ԾՈՎ

Խոր լռություն է տիրում
Անշարժ ծովի ջրերում...
Եվ նավավարը տրտում
Աչքն է հածում ամեն կողմ,
5 Այլաց ո՛չ մի խլրտում,
Կենդանաշունչ ո՛չ մի հողմ,
Հարթ հայրու մեջ անսահման
Համատարած ահ ու մահ:

«ՄԱՂՐԻՊԱԼՆԵՐ» ՇԱՐՔԻՑ

ԱՇՈՒՆ

Սուս, պոկվեց, ընկավ թերթը ծառից,
Քամին ամպ է ցրում նորից,
Թերթերն ասին պարզ ու հստակ՝
Կգաս դու էլ այս հողի տակ:

<1941>

ԴԱՎԻԹԻ ՍԱՂՄՈՍԻՑ

Հանգիստ չունեն իմ ոսկորները.
Իմ մեղքի հետևանքից
Ցերեկը անդորր չունեմ ես:
Իմ վերքերը գարշահոտ են
5 Եվ ժահր են հոսում:
Իմ անմտության հետևանքով
Քայլում եմ կորացած
Եվ ընկճված եմ ծայրահեղորեն:
Ես ամբողջ օրը վշտի մեջ եմ անցկացնում:
10 Իմ մոտիկները, իմ հայրենակիցները կանգ են
առնում,
Իմ ընկերները ինձնից հեռու են քաշվում...

Ես ու դու միասին, երկուսս, մեն-մենակ
Սենեկում, իրիկվան ճրագի լույսի տակ.
Դու, տարված լուռ ու մունջ քու բան ու դործով.
Ու ես էլ՝ քու կողքին իմ կար ու ձևով.
5 Եվ մեր երեխեքն՝ Աստուծո սուրբ աջում
Կըշքեն մուշ-մուշիկ երագի աշխարհում.
Եվ մեր հին ժամացույցն անդադար տիկե-տիկ
Կըզարկե մեր բախտի ժամերը երջանիկ:

**ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ**

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԲԵԹՂԵՀԵՍԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ (էջ 7)

- 2 Ար Շողում է կըրակ երկնային սիրո
3 Կայծերով վառված մի նորոգ կյանքի,
4 Շողում է կըրա՛կ – այնտեղ հավիտյան
5 Լույսը չի հանգչում,
6 Նե՛րս մտիր այրը – հովիվ և գառներ,
12 Մարդկանց վշտերի համար ճմլվում,

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ԲԱԲԵԼՄԵՆԻՄ (էջ 8)

- 1 Տգ Վես Բաբելոնի հորձուտ գետերի
4 Սիոնն հիշում... Եվ անտո՛ւն, անքո՛ւն
6 Սուրբ կտակները զաղում ու կախում:
8 Ասում էին մեզ. – «Ինչո՞ւ չեք բուրում
13 –Օ՛, երուսաղեմ: Եթե ուրանա՛մ,
18 Բերկրանքիս աղբյո՛ւր, Կո՛ւյս երուսաղեմ...
23 «Ո՛ւֆ, տապալեցեք, հիմն ի վեր քանդեք,

ԻԳԻԹ ՍԱՐԴԱՐ (էջ 10)

- Ինք. 1- ին տողի Մշուշի բառի վերևում՝ Մորելսի:
Ծով ու ցամաք պատեր է.
4 Ժանգ ու փոշին պատեր է,
Մեր Վաթանը սգի մեջն է,
Չարն է կապեր մեր աստղին.
Մեր ու մանուկ բանտի մեջ է,
10 Շեն ու շեմքին հասեր է.
17 Սարի ուսից լուսը շողաց,
45 Սարդարն ելավ, Սարդարն թնդաց

Ղոշունի Ֆիդասոնց գլուխն անցավ: Ղոշունի՝ ջնջ.
Երկինք թռավ – աստղ դառավ...
58 Թռչնուկն էլ տխուր երգեց.

«ԻՐԻՑԿՆԿԱ ԱՂՅՅՈՒՐԸ» (էջ 13)

- 3 Ապ երիցկինն էլ դուռը բացեց, կով, հավ ու ճիւղ
դուրս արավ,
5 Հացի խըմորը հասել էր. փութով հագավ մխնոցը,
14 Ցուպը՝ ձեռքին, պարկը՝ ուսին, տունը մըտավ սուս
ու փուս:
17 –Գալըդ բարին, պատասխանեց երիցկինը հոգատար,
20 Տիրուհին էլ քաղցր ձեռքով սալան առաջը դրավ:
26 Տիրուհին էլ առատ–առատ պարկը լցրեց պարենով:
27 Երիցկինը շա՛տ սիրուն էր, թուխ մազերը՝ ծամավոր,
29 Խեղճ աղքատի սիրտը լցվեց անուշ մեղքով ու
դողաց. –
31 Երիցուհին շա՛տ բարկացավ. ապա խղճաց իր
մտքում. –
38 Երիցուհու գույնը թռավ, սիրտը վախից թև առավ,
44 Աղբյուր դարձավ, զով ու վճիտ. պայծառ շողքով ու
երգով:
48 Երեսն ելավ երիցուհին՝ դարձած մի ձուկ ոսկեղեն:
53 Այն օրվանից երիցուհին անմեռ, անմահ ձուկ դառավ.

Բառեր

Մխնոց – աշխատանքի զգեստ
Շենք – վառելիքի սարքավորում
Բաթաթ – որի վրա խմոր լավաշն են փռում
Բաց – պարզած խմորը
Խալա – սակառ

ՏԱՐԲԵՐԱԿ (ինք., Տգ)

ինք. Տգ – «Տըն – դո', տըն – դո'», ժամը սովավ,
– «Լուսիդ մեռնիմ, Տեր Աստված», –
Մնչաց տերտերն ու վեր ելավ,
ինք. Փիլոնն առավ, ժամ գնաց:
Տգ Շուրջառն առավ, ժամ գնաց:
ինք., Տգ Իրիցկինն էլ ոտքի կայնավ,
ինք. – Լուսն ընկեր էր երգիկից ներս, –
Տգ Լուսն ընկեր էր երգիկն ներս,
ինք. Միսնոցն հագավ, դուռը բաց[ավ]եց,
Տգ Միսնոցն հագավ, դուռը բացավ,
ինք. Կով, հավ ու ճիվ դուրս արեց:
Տգ Կով, հավ ու ճիվ դուրս արավ:
ինք., Տգ Երես–մերես ջրով լվաց,
ինք. Մեղարի փեշով սրբեց.
Տգ Միղարի փեշով սրբեց,
ինք., Տգ Կիսատ–պուատ «Հայր–մերն» ասաց
Ու աջ ու ձախ խաչ հանեց.
Հացի խմորը հասեր էր,
Վռազ շենքեց թնդիրը.
ինք. Կրակ տվեց, բոցը ելավ,
Տգ Կրակ տվավ, բոցը ելավ,
ինք. Տգ Արևի պես վա՛ռ բոցը:
Իրիցկինը էջիտ եկավ,
Քշտեց թոթոլ թևերը.
Խառ խմորից գնդեր շինեց,
Գնդեր շինեց, գրտնկեց.
Բաթաթն առավ, թնդրի չրթին
Աղոթեց ու չոք զարկեց:

Բաթաթն վերցուց, բացը կպցուց,
 ինք. Զարկեց թնդրի կողերին.
 Տղ Զարկեց թնդրի կողքերին,
 ինք., Տղ Վարդի գույնը թշերն առավ,
 Քրտինքն իջավ խալ – ճակտին:
 Տա՛ք-տա՛ք լավա՛շ, շարմաղ լավաշ
 Հանեց թնդրեն ու փռեց,
 Թաժա հացի անուշ հոտը
 Դուռն ու երդիկը բռնեց:

Բ

Մեկ է՛լ ահան դուռը ճռռաց,
 Աղքատ մարդ՝ մ կուգեկուզ,
 ինք. Կոպալ ձեռքին, պարկը ուսին –
 Տղ Կոպալ ձեռին, պարկը ուսին,
 ինք., Տղ Տունը մտավ սուսուփուս.
 – «Բար՛աջողում, իրիցկին ջան,
 Աղոթրանի լուս դառնաս,
 Աղքատ մարդ եմ, դարիբ մարդ եմ,
 ինք. Թաժա հացեդ ինձ մաս տա՛ս»:
 Տղ Թաժա հացեդ ինձ տա՛ս»:

ինք., Տղ – «Գալդ բարին, աղքատ ախպեր,
 Թաժա հացիս բարաքյաթ,
 Բեռդ վեր դիր, նստիր ու կեր,
 Քանի՛ մ ջուխտ էլ հետդ տար»:
 Օրհնենք տալով խեղճ աղքատը
 Բեռը դրավ ու նստավ,
 ինք. Իրիցկինն էլ թոթոլ ձեռքով
 Տղ Իրիցկինը թոթոլ ձեռքով
 ինք., Տղ Սալեն առաջը դրավ. –

Սալեն լիքը տա՛ք-տա՛ք լավաշ,
 Անքաշ պանիրը ու կանանչ,
 ինք. Աջ կողքին էլ անո՛ւշ ջրով
 Տգ Աջ կողքին էլ անուշ ջրով լիքը փարչ:
 ինք., Տգ Սառը ջրով լիքը փարչ:
 Վրա պրծավ խեղճ աղքատը,
 Կերավ, խմեց կուշտ ու կուռ,
 Զուխտ ձեռքով սրբեց բերանը,
 Երեք հեղ էլ խաչ հանեց.
 Է՛լ խոսք չկա – էսպես առատ
 Հե՛չ կերած չէր աղքատը:
 – «Աստված տունդ միշտ շեն պահե՛,
 Գլխավորդ ողջ լինի.
 ինք. Օխտը որդով սեղան նստիս,
 Տգ Օխտը որդով սեղան նստես,
 ինք., Տգ Կարոտ մնաս թաց աչքի...»:
 էսպես օրհնեց խեղճ աղքատը –
 է՛լ վերջ չկար օրհնենքին.
 Իրիցկինն էլ շուխիկ խնդաց,
 Նուշիկ աչեց աղքատին:
 Իրիցկինը շա՛տ սիրուն էր,
 Թուխ մազերը ծամավոր.
 Շըթունքները – վարդի թերթեր,
 Թշիկները – ա՛լ խնճոր.
 Վառ աչքերը – աստղոտ գիշեր,
 Թերթիչները – սուր նետեր:
 Բարկ-փափազը չարի նման
 Դյուլթեց անտուն աղքատին,
 Սիրտը լցվավ անուշ մեղքով,
 Դողը առավ ծընկներին:
 «Մեղքս թող ինձ, Տեր իմ Աստված,
 Աղամա եմ – ի՞նչ անեմ», –

Մտքումն ասավ խեղճ աղքատը,
 Հազաց, թուքը կուլ տվեց.
 Մեկ էլ աչեց իրիցկնկան
 Ու սիրտ առած՝ աղաչեց.
 – «Իրիցկին ջան, Աստծու սիրուն
 Ա՛լ-թշերեդ պագ՝մ տա՛ս»:
 Իրիցկինը մնաց չճամծ.
 Հերսոտավ ու բարկացավ,
 Քիչ՝մ էլ կուղեր – հողածին էր,
 Քիչ՝մ էլ խղճաց, հերսն իջավ. –
 – «Աղքատ ախպե՛ր, որ դուն հղպես
 Աստծու սերն ես քցում,
 Ես ի՞նչ ասեմ, Աստծու սիրուն
 Թա՛ք պագ՝մ առ ու գնա՛,
 Մեղքը վիզդ, դու քու խիղճդ,
 Դուռ ու դրկից չիմանա...»:
 Իրիցկինը հսպես ասավ,
 ինք. Ու ամոթեն լալ-թշերը
 Տգ Ամոթեն լալ-թշերը
 ինք., Տգ Բոցի նման փելք տվավ:
 – «Մեղքը վիզս, իրիցկին ջան», –
 Աղքատն ասաց ու թնդաց.
 Սիրտը զարկեց, աչքը փայլեց,
 Իրիցկնկա գիրկն ընկավ.
 Ձեռքը քցեց վզով, մեջքով.
 Ծարավ սրտով, պապակ սրտով
 Կսկուծ, կսկուծ պագ՝մ առավ. – պագը հով էր,
 պագը ծով էր,
 ինք. Խմեց, ծծեց, սիրտն հովցավ...
 Տգ Ծծեց, խմեց, սիրտն հովցավ:
 ինք., Տգ – «Ղորթ են ասում, իրիցկին ջան,
 Էս փուչ աշխարքի վրա

ինք. Աղամա մեղքի պես
Տգ Աղամա մեղքի նման
ինք., Տգ Սրտանց անո՛ւշ բան չկա...»:

Գ

Մեկ էլ, ահան, դուռը ճռռաց. –
Վա՛յ, տերտերը ներս մտավ.
Իրիցկնկա գույնը թռավ,
Սիրտը վախից թև առավ.
Սուրբ պսակի օրը հիշեց,
Խաչ ու նարոտ միտքն ընկավ.
– «Վա՛յ ինձ, Աստված, մեղքս շա՛տ է,
Ես խաբեցի տերտերին.
Գետին, պատուի՛ր, ինձի կո՛ւյ տուր,
ինք. է՛լ չտեսնիմ տերտերին...»:
Տգ էլ չտեսնեմ տերտերին...»:
ինք., Տգ Իրիցկնկա հույսը մարավ,
Չարը նստավ սրտի մեջ.
Մեկ էլ, ահան, ափալ–թափալ
Բարկ թնդրի մեջ գլորվեց...
Փառքիդ մեռնիմ, արդար Աստված,
Մի երկնքի հրաշքով
Աղբուր դարձուց բարկ թնդիլը –
Աղբուր՝ գուլալ, զով ջրով:
Տերտերն եկավ, սաղմոս ձեռքին
ինք. Թնդրի կուշտը կանգնեց.
Տգ Թնդրի մոտ կանգնեց,
ինք., Տգ Թնդիր չկար– մենակ ջուր էր.
ինք. Վախից, դարդից շշկովեց
Տգ Վախից շշկովեց.
ինք., Տգ Ու ձեն տվավ, ձենն էր նման

Մեռելաթաղ զանգակին.
 «Տե՛ր, ողորմյա՛, ա՛յ իրիցկին,
 ինք. էդ ուրտե՞ղ ես, դուրս արի»:
 Տգ էդ ո՞րտեղ ես, դուրս արի»:
 ինք., Տգ Զորքիդ մեռնիմ, Տեր-Արարիչ
 էսպես հրաշք եղած չէ՛ր.
 Ախր մեկ էլ լափին տալով
 Խոր աղբուրի հատակին
 Իրիցկինը, մի ձուկ դարձած,
 ինք. Մի խատուտիկ, նշխուն ձուկ –
 Տգ Մի խոր<ու> տիկ նշխուն ձուկ
 ինք., Տգ Երեսն ելավ, մի փաթ տվավ.
 Գլուխն հանեց ջրերեն.
 Պետ-պետ աշեց [խեղճ] իր տերտերին,
 Աշեց մեղքով ու դարձով.
 Լեզու չունելու, պապանձված էր,
 Զընի՛ զղջում կաղաչեր.
 Քիչ՛մ հալե պաղ աչքերով,
 Հլպա՛տ էլ հոն մեղք չկար.
 Աշեց, տնտղեց խեղճ աղքատին,
 ինք. Որ սառել էր, քանց ժեռ քար,
 Տգ Որ սառել էր, քանց ժեռ քար:
 ինք., Տգ Մեկ էլ թրը՛սկ – պոչ<ը> շպաց,
 Սկավ ձուկը ջրի տակ.
 Փրփուր [հանեց] ելավ, տիլը շարժվավ,
 Սևցավ աղբուրն անապակ.
 էն օրվանեն իրիցկինը
 ինք. Անմեռ, անմահ ձուկ դարձավ,
 Տգ Անմե՛ռ, անա՛հ ձուկ դառավ,
 ինք. Զուր-թնդրի էլ անունն եղավ
 Տգ Զուր- թնդրի էլ անունն ելավ
 ինք., Տգ «Իրիցկնկա աղբուրը»:

ինք. Ամեն Հեղին, երբ գեղացիք
 Տգ Ամեն Հեղին, երբ գյուղացիք
 ինք., Տգ էս աղբրով անցնում են,
 ինք. Հանդ են առնում, կումըմ խմում
 Տգ Հանգ են առնում, կումըմ խմում
 ինք., Տգ Ու անցածը Հիշում են:
 ինք. Զահեղները չեն հավատում
 Տգ Զահիլները չեն հավատում
 ինք., Տգ Ու հռալով, ծափ տալով՝
 Իրիցկնկան դուրս են կանչում. –
 «Տեր ողորմյա՛, ա՛յ իրիցկին,
 էդ ո՞ւրտեղ ես, դուրս արի».
 Մեկ էլ, ահան, նշխուն ձուկը
 Դուրս է ելնում լոք տալով,
 Շուխիկ աշում, պոչը շպում,
 էլի սկում ջրի տակ.
 Փրփուր հանում, տիլը շարժում,
 Սեցնում աղբուրն անապակ:
 Ա՛խր հլպատ էսպես արավ
 Տերը ծով ու ցամաքի.
 ինք. Որ խրատվեն մարդ ու կնիկ,
 Տգ Որ խրատվին մարդ ու կնիկ,
 ինք. Հարս ու փեսա ու աղջիկ.
 Տգ Հարս ու փեսա ու այրի,
 ինք., Տգ Որ պսակի կարմիր օրեն
 Մինչև մուլթը գերեզման
 Սուրբ նարոտին, սուրբ կոսբանդին
 Հաստատ, ամուր, պինդ կենան...

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ (էջ 15)

- Մճ, Բ I Յոթը սարեն, յոթը ծովեն դարձա անուշ հայրենիք:
6 Մճ Ա՛խ, ընկե՛ր ջան...կարոտ սրտով նրա առաջ
վազեցի.
7 Բ I Ասի. – «Բարո՛վ, անգին ընկեր, մի՞թե ինձի չես
ճանչեր...»:

ՄԱՅՐԸ (էջ 16)

- 11 Խր Մի հայ գյուղում, թե այլ տեղում
ԱԾ Մամա ասում էր, թե մի չենում
օ
ԳԹ Զգիտեմ երբ կամ որ երկրում
13 Խր Մի խեղճ, պառավ մայր է լինում
ԳԹ Մի խեղճ, պառավ մայր էր ապրում
17 Խր, ԱԾ, ԳԹ Եվ օրն ի բուն նրանց համար
19 Խր –Ա՛յ մարդ, ասավ հարսը մի օր,
ԱԾ – Ա՛յ մարդ, – ասաց հարսը մի օր
ԳԹ Ո՛ւֆ, – ասում էր հարսն ամեն օր,
20 Խր, ԱԾ Բեռ է մերդ իմ վրա.
21 Խր Բանս թողած ու ամբողջ օր
22 Փեչն եմ բռնել հենց նրա.
31–34–րդ տողերի փոխարեն՝
Խր, ԱԾ Անցավ մի օր, հարսը էլի
Կպավ գլուխը մարդու.
Թե մարդս չես, թե ավելի
Խր Քավթառ մորդ ես սիրում դու...
ԱԾ Պառավ մորդ ես սիրում դու.
35 Խր Անդգրմցավ, պատռա՛վ, լացե՛ց,
ԱԾ Անըղգամցավ, ճըչաց, լացեց,

39-42-րդ տողերը իր-ում բացակայում են:

39 ԱԾ Թե ոչ՝ ինքը դուրս կըթռնի,

40 Ու չավ կանե աշխարհում,

ԳԹ Ու կձայնե աշխարհում,

41 ԳԹ, ինքն. Թե մարդն իրեն օր չի տալիս:

43 իր էս խեղճ մարդն էլ, ճարը կտրած՝

ԱԾ Ու խեղճ մարդն էր. ճարը կտրած –

ԳԹ Թշվառ մարդը՝ ճարը կտրած

Վերցրեց իր մորը պառավ

47-50 իր Ու գլխաքաշ ճամփա ընկավ

Միտքը պղտո՛ր ու խոլո՛ր.

Մուլթը փաթթեց, գիշերն եկավ,

Ճամփեն՝ ոլո՛ր ու մոլո՛ր.

47-50-րդ տողերը ԱԾ-ում բացակայում են:

51 իր Մեջ գիշերին հասավ անտառ,

ԱԾ Մուլթ գիշերին հասավ անտառ,

53 իր Պարկը քցեց – մորը անճար

54 Քցեց անտե՛ր ու մենա՛կ...

55 Քամին ահե՛ղ կըմռնչար

ԱԾ Մռնչում էր հողմը վայրագ,

56 իր Գայլերը խո՛ւ կօռնային...

57 Ուռքը փոխեց, որ տուն դառնար,

ԱԾ Ուզեց վազել, փախչիլ արագ,

58 իր Մոր ձենն հասավ ականջին –

59 ԱԾ –Կերթա՞ս, Աստծու աչքը վրե՛կ,

61 Տղա՛ս, պարկը վե՛ր առ քեզ հետ,

իւր Բալա՛ս, վերցրո՛ւ պարկը քեզ հետ,

62 Պարկը ձեզի պետք կըգա...»:

Այս տողից հետո՝ իր-ում՝

Սրտես կո՛ւց-կո՛ւց արուն կուգա,

Երբ այս մռայլ գիշերին,

Ուր ամայի ճամփոց վրա,

Կամ անտառում սև՝ մթին,
Գայլն է օռնում, քամին լալիս...
Ա՛խ, այն պառավ, խղճուկ մոր
Սև գրույցն է միտս գալիս, –
Զրույցն այս Հին, բայց միշտ նոր...
Եվ ո՞վ գիտե, որտեղ Հիմա՝
Մեզնից մոտիկ, թե հեռվում,
Անտուն, անտեր ո՞ր մոր վրա
Գայլն ու քամին են օռնում...

«Խարիսխի» տարբերակը՝ հեղինակային ուղղումներով

ԽԵՂԾ՝ ՄԱՅՐԸ
(Լեզենդ)

[Մի հայ գյուղում, թե այլ տեղում]
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝
Ժամանակով մի հայ [շենում] գյուղում

Տատս ասում էր, թե մի շենում
Մի խեղճ պառավ մայր էր կենում:

Իրեն որդու, հարսի քով
Մի խեղճ, պառավ մայր է լինում
Ծանր ականջ, կույր աչքով:
Ութից, ձեռքից ընկած, անճար
Հաց չըտային՝ չէր ուղում,
Եվ օրն ի բուն նրանց համար
Մրմնջում էր, աղոթում...
Այս տողի դիմաց՝ լուսանցքում
Աղոթքներ էր մշնջում:

—Ա՛յ մարդ,— ասավ հարսը մի օր,—
Բեռ է մերդ իմ վրա.
Բանս թողած [ու ամբողջ] օրը բոլոր
Փեշն եմ բռնել [հենց] ես նրա.
Աչքը անկուշտ, ինչքան որ տամ,
Միշտ անեծքը բերանին.
Նստել է մեր շնչի վրան,
Տա՛ր, կորցրո՛ւ, ազատվիմ...
—Ա՛յ կին, ի՞նչ չար բան կըխոսաս,
Մարդն էլ ծնող մորն էսպես...
Կըբարկանա Աստված վրաս,
Մեղա՛ Աստծու, մեղա՛ քեզ...

Անցավ մի օր, հարսը էլի
Կպավ գլուխը մարդու.
Թե մարդս չես, թե ավելի
[Քավթառ] Պառավ մորդ ես սիրում դու...
Անգգըմցավ, պատռա՛վ, լացե՛ց,
Պոկեց մազերը գլխ[ից]են ...
Վրա պրծավ, դուռը բացեց,
Թե մորդ տար իմ տն[ից]են...
Այս տողից հետո՝ լուսանցքում
[Թե չէ] Թե ոչ ինքը դուրս կըթռնի
Ու չավ կանն աշխարհում,
Թե մարդն իրեն օր չի տալիս,
Թե ուրիշին է սիրում:
էս խեղճ մարդն էլ, ճարը կտրած,
Վերցրեց մորը պառավ,
Անգութ հարսի աչքի առաջ
Պարկը դրեց, ունն առավ:
[Ու գլխաքաշ ճամփա ընկավ

Միտքը պղտո՛ր ու խոլո՛ր.
Մուլթը փաթթեց, գիշերն եկավ,
Ճամփի[են]ան՝ ոլո՛ր ու մոլո՛ր .]

[Մեջ] Մուլթ գիշերին հասավ անտառ,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ Գիշերվա մեջ:

Խոր ծմակում, ծառի տակ,
Պարկը քեցեց – մորը անճար–
Քցեց անտե՛ր ու մենա՛կ...
Քամին ահե՛ղ կը[մոնչար]մոմար,
Գայլ[եր]ը [խո՛ւ կօռնային] կուտար կալանչին...
Ոտքը փոխեց, որ տուն դառնար,
Մոր ձենն հասավ ականջին –
–Երթաս բարո՛ւ, Աստված քեզ հետ,

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ Կերթաս:

Ոտքդ քարին թո՛ղ չըդա.

Այս տողի չըգա բառի փոխարեն՝ էջի ներքևի ազատ
մասում՝ չդիպնի:

Բալա՛ս, վերցրո՛ւ պարկը քեզ հետ,

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ Տղա՛ս, իսկ վերցրո՛ւ բառի
վերևում՝ վեր առ:

Պարկը ձեզի պետք կըգա...

Այս տողի ձեզի բառի ներքևում՝ տանը:

[Սրտես կո՛ւց–կո՛ւց արուն կուգա,
Երբ այս մռայլ գիշերին,
Ուր ամայի ճամփոց վրա
Կամ անտառում սև, մթին
Գայլն է օռնում, քամին լալիս...
Ա՛խ, այն պառավ խղճուկ մոր
Սև զրույցն է միտս դալիս,–
Ջրույցն այս հին, բայց միշտ նոր...

Եվ ո՞վ գիտե, որտե՞ղ հիմա,
Մեղնից մոտիկ, թե հեռվում
Անտուն, անտեր ո՞ր մոր վրա
Գայլն ու քամին են օռնում...]

ԳԱԹ, ԱԻՖ 13-11, 6-ում պահպանվում է հետևյալ
գրառումը.

«Մայրը

Բալա՛ ջան, պարկը մոռացար, թողիր. քեզ հարկավոր կլինի,
պարկը, բալա ջան, հետդ տար...»:

ԼԵՅԼԻ ՈՒ ՄԵՋԼՈՒՄ (էջ 19)

Շ

3 Գտ –Ա՛յ նանե–մերիկ, գլուխս կըղնեմ, կըբանձրձնեմ

Հր –Ա՛յ նանե– մերիկ, գլուխս կըղնեմ, կբանձրացնեմ,

Բ II – Ա՛յ նանե–մերիկ, գլուխս կղնեմ բարձին,

կբանձրացնեմ,

5 Ա՛յ նանե–մերիկ, հալալ արա ինձի քո ծծի կաթ,

6 Գտ, Բ II Երթամ, աշխարհ ժուռ գամ, գտնեմ Լեյլին:

8 Հր, Գտ, Բ II Ասավ Մեջլում, ասպապ հագավ ու գնաց,

10 –11 Հր Բինգյուլի աղբուրի մոտ հոգին վկայեց ու
կանգ առավ:

14 Քոչվոր եկավ, վրան զարկեց Բինգյուլի սարի վրա:

17 Առավոտ բարի լույս բացվի ձեզ վրա,

Գտ, Բ II Առավոտ բարի լուս բացվի ձեր վրա,

18 Առավոտ բարի լուս բացվավ Լեյլիի վրա.

Հր Առավոտ բարի լույս բացվեց Լեյլիի վրա.

19 Գտ, Բ II, Հր Առավ կուժն ու գնաց աղբուրը՝ ջրի,

Այսուհետև աղբյուր բառի փոխարեն՝ աղբուր:

31–32 Հր Մուփ–ծուփ կթափվին մարմարե կրճքի

վրա...

38-39 -Ա՛յ Մեջուում, ինձ հրաման տուր ,

43 Հր, Գտ Շիրազի մեղրե զինուեց գտվական,

45 Մնաս բարովի ձեռք տվալ Մեջումին.

47 Հր -Լեյլի՛, սրտի սիրական Լեյլի՛, մի՛ գնա.

49 Հր, Գտ Քեզի փեշքեշ կանեմ Հնդույամանը

51 Հր Լեյլի՛, քու հասակ ոսկի բերդ է,

56-րդ տողը Յր-ում բացակայում է:

58 Հոր վրանները բարձած՝ քոչվոր երթան,

61 Քու վրա բարով անցնի ձմրան ձունը,

66 -Ո՛վ թուչուն, ասավ Լեյլին, ցա՛ծ արի,

67-68-րդ տողերը Յր-ում բացակայում են:

70 Ջե՞ս իջե՛լ յարաք Բինգյուլի աղբուրի վրա,

71-րդ տողը Յր-ում բացակայում է:

73-74-րդ տողերը Յր-ում բացակայում են:

75 Ես տեսա էնտեղ մեկ կտրիճ մեռած,

Գտ Ես տեսա էնտեղ մի կտրիճ մեռած

81 Հր, Գտ, Բ II Կարմիր ու նշխուն ծաղկունանց մեջ:

82 Հր Լացեց, լացեց ու մեռավ

85-86 Անմուրազ Մեջուում ու Լեյլին երկինք թռան, ասող
դառան.

87 Հր, Բ II Մեկը շողաց հարավակողմը,

90 Հր Իրար կուգան Լեյլի ու Մեջումի աստղերը.

91 Հր, Գտ Կարոտ-ծարավ սրտով կըփաթթվին իրար,

93 Հր Նորեն իրարուեց կըհեռանան ու կերթան,

Այս տողից հետո՝ Գտ-ում՝

Ու կերթան նորեն

94-95 Հր Լեյլին Մեջումի տեղը, Մեջումը Լեյլի տեղը.

96-97 Լեյլին հարավակողմը, Մեջում - հյուսիսա...

Ծր. նշումներ

– Բարին գա վրը արար–աշխարքին,
Բարի գարուն է վեր աշխարհքին.

– Է՛յ, նշխուն Հավքեր՝ Զգիր ու Բոտանից (Սիփանից
ու Նեմրութից)

Բարձր կըթռնիք, կելնեք Հետ երկնուց,
Ծեր ճամփան կիյնա վեր Մնջանի (Բյուրակնի)
աղբուրին. & մեծատառ

– Այ Լեյլի, – ըսին Հավքերը, – մենք Հավքերն ենք
Զգիր–Բոտանի. բարձր կըթռնինք.

– Լաց լացեյ, լաց լացեյ,
Սար ու քար իրեն Հետ լացուց.

– Իմ սեր ու իմ սրտի տեր:

– Այ Մեջլում, իմ սեր – իմ սրտի տեր.
Ինձ Հրաման տուր:

Լեյլի ջան, Լեյլի ջանեջան, մի գնա,
Ես քու սպանվածն եմ առանց վերքի.

–Այ թռչուն, – ասավ Լեյլին, – ցած արի,
Դուն կուգաս Սիփանա քարեն,
Քու ճամփեն կանցնի Բենգյոլ սարեն.
Մի Հարցում տամ, պատասխան տուր.
Չես իջե՞լ յարաբ <...>

–Ա՛յ խըճե Լեյլի,– ասավ հավքն երկնուց,
 Ես կուգամ Սիփանա քարեն,
 Իմ ճամփան կանցնի Բինգյուլի սարեն,
 Ես տեսա էնտեղ մեկ կտրիճ մեռած,
 Միսը կերա, ոսկոր...

– է՛ն մեռավ էսոր համար,
 էս էլ մեռավ էսոր համար:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ (էջ 23)

3 ինք. Երեք հարյուր սյունի վրա մարմարի

11 ինք., Ա, Գտ Հյուսքը նրա կրծքի վրա կըծփանհ

12 ինք. Հանց նունուֆար լույս–աղբյուրում՝ գիշերին:

17 ինք., Գտ Արքայական զույգի շուրջը գվարթուն

20ա ինք. Գիշերները, առավոտից մինչ գիշեր:

բ Գիշերները և առավոտից մինչ գիշեր:

22 Եվ արծաթյա վահանի պես լուսնկան

23 Բեկբեկում է [փայփայում է]

շատրվան[ներ]ի ջրերը,

23 Գտ Փայփայում է շատրվանի ջրերը՝

28 ինք. Այն հոյակերտ սյուներն ի վար մարմարյա:

33 Որդան կարմիր, որ ներկում է ծիրանի

Գտ Արուսյակը, որ ներկում է ծիրանի

34 ինք., Գտ Գառնուկների շրթունքները Տյուրոսի

43 ինք. Բայց իմ սերը վախճան չունի, ափ չունի
 (Հուն),

43–44 Գտ Բայց իմ սերը վախճան չունի, ափ չունի,

Նա հավերժ է, նա անչեղ է, նա անմահ:

48ա ինք. Եվ վայրկյանը դառնում հավերժ ու անվերջ...

բ Եվ դառնում են ժամերն վայրկյան ու

Հավերժ...

4 Ժամանակը դառնում վայրկյան ու Հավերժ...

49 Ապարանքի երեսոսի դռներից

Գտ Ապարանքի եփենոսյա դռներից

50 Ինք. Արաբական մուշկ ու կնդրուկ է բուրում.

51 Մանկլավիկներն ու նաժիշտներ ցնծալից

Գտ Մանկլավիկներն ու նաժիշտներն ցնծալից

ՀԱ Մանկլավիկներ և նաժիշտներ ցնծալից

58 Ինք. Մանկիկն, ինչպես ջերմ գրկի մեջ մայրական,
Ինքնագրի 60-րդ տողի ականջն ի վար բառերի ներքևում
(ականջը վար):

67-68 Ինք., Գտ Եվ բամբուխի սառած-լուծ չրթներին

Իր հրեղեն շունչն ու սերը ներարկում:

Ինքնագրի 72-րդ տողի սյուններն ի վար բառերի ներքևում
(սյունները վար):

74 Գտ Մանկլավիկներն ու նաժիշտներն ոսկեհեր,

ՀԱՅԱՍՏԱՆԸ (էջ 28)

2-4 Ինք. Որ նրանք թեև ունեն մեծ հանճար,

Բայց միաբան չեն և ոխով լցված՝

Նախանձով, կրքով ատում են իրար:

Եվ թողեց հողերն անջուր և ծարավ:

10-12 Բոցակեզ ժայռեր, լերի ապառաժներ,

Եվ ամեն կողմից զարկող խստաղեմ

Անգուլթ և դաժան, նենգ հարևաններ:

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ (էջ 29)

ՀԱ -Որդի՝ հզոր Խալդիի, տեր գետերին Նահիրիի,

Գծ -Որդի հզոր Խալդիի, տեր գետերին Նահիրի,

16 ՀԱ, Գծ Կազմեց ամուր արուձի, կազմեց բանակ
մեծառւյժ

17 ինք.բ Եւ մեկնեցին ճակատի թշնամու դեմ
խուժադուժ:

Այս տողից հետո՝

[Եւ կրկնեւր Վիթի պես, գարունքվա պես բռնկված,
Զրահի տակ կրծքերը՝ սերն ու կորով <...>]

18 ՀԱ Գամերք, Մոսոք ու Թափալ ծունկ են իջել գլխահակ՝

Գծ Գամերք, Մոսուլ ու Թափալ ծունկ են իջել գլխահակ

23 ինք. բ, Գծ Որ արծըվին սրտախոց վայր են բերում
ամպերից,

Ինքնագրի այս տողի բերում բառի ներքնում՝ քաշում:

23 ՀԱ Որ արծըվին սրտախոց վայր են բերում
երկնքից:

25 ինք. բ Կայծակնների երկնային դարբնոցում
ջրդեղած:

Գծ Կայծակներտ երկնային դարբնոցում
ջրդեղված:

26 ինք. բ Ֆոյուգական [գլխահակներ] գտականեր և
գոտիներ երկաթի,

Այս տողի Ֆոյուգական բառի Ֆ տառի դիմաց՝ լուսանցքում՝ Փ:

ինք. բ Եւ վիթխարի ուսերին վազորների թավ մորթի,

Այս տողի թավ բառի վերնում՝ վառ:

29 Գծ Եւ ճակատներն արևվառ, ինչպես կավը
քուրայում:

33 ինք. բ, Գծ Պիրկ ձեռներին գինով լի էտրուսկական
սափորներ:

34 ինք. բ Վիթի նման աղջիկներ, [վարդերի] գարունք-
վա պես բռնկված,

36 Եւ մայրերը սիրաշատ և նրանց սուրբ արգանդում

43 Վարազներն են թաքթաքում շամբուտների
խորշերում.

Այս տողի խորշերում բառի վերևում՝ գուրբերում:

ինք. բ, Գծ եկավ արքան Սարդուրիս, և արքաներն
Նահիրի

ՀԱ եկավ արքան Սարդուրիս, և արքաներն
Նահիրի

ինք. բ Թշնամու դեմ ամենհի հեռու, անհայտ
աշխարհի.

ինք. բ, Գծ, ՀԱ Սերունդ իջավ գերեզման, սերունդ ելավ
օրոցքից

Ինքնագրի այս տողի օրոցքից բառի վրա նշան է դրված և
էջի ներքևի ազատ մասին գրված է՝ (օրոցքից):

62 ինք. բ Եվ վաչերը շառաչուն նորեկների կանգ առան
63 [Այրար<առյան>] Ուրարտուի դաշտի մեջ,
Մասիսների հանդիման.

Հիմ դրեցին, վառեցին իրենց երդը [հայրերի]
սրբազան,

67 ինք. բ, Գծ, ՀԱ Եվ ծուխն ելավ ու փռվեց գետերն ի վար
Նահիրյան:

ինք. բ Եվ բազինը կանգնեցին իրենց բարի Աստծու
69 [Քաջ Վահագնի, բաշխիչը հզոր սիրո և
գինու.]

70-71-րդ տողերի փոխարեն՝

[Աստվածն անմահ՝ քաջության, ճշմարտության,
գեղեցկի,]

[Աստվածն [ուրա<իս>] արի և պայծառ,
ուղախության և կյանքի.]

71 Գծ Աստվածուհին գեղեցկի, հզոր սիրու և կյանքի:

I

Սուրհանդակ եկավ հեփհեփ փողինների մեջ թաթավ
Եվ Ուրարտու արքայի մարմարե պատվանդին գահույքի
Դրեց քրտնած ճակատը և ասավ.

– «Մեծ արքա, որդի մեծն ինչպիսի,
Տեր գետերին Նաիրյան աշխարհի,
Ինձ առաքեց քո բղեշխը այն հեռավոր սահմանի,
Ուր արևն է մայր մտնում:
Մի անհայտ աշխարհից անհայտ թշնամիներ են եկել
Գարնան հեղեղների պես հորդ ու վարար,
Բերդ ու պատահեչ փլչում են
Հարվածների տակ նրանց կայծակե:
[Մրրիկ են սանձել, թե արծիվ]
Մրրիկն են սանձել ծովերի, թե արծիվը լեռների –
Նրանց ձիերը ծովաբաշ ակոսում են լեռ ու դաշտ...

Վիհեր բացվեցին Սարդուրի ճակատի վրա,
Այս տողի բացվեցին բառի վերևում խորացան:
Եվ հրամանք արձակեց ուրարտական թագերին,
Կազմեց ամուր զորք ու ձի,
Եվ մեկնեցին [կռվ< ի>] ճակատի թշնամու դեմ խուժական:

II

Գամիրք, Մոսոք ու Թափալ
Ծունկ են իջել գլխկոր և նվեր են մատուցում
Հաղթողներին նորեկ, – սուր ու երկաթ,
Ոսկի ցորեն ու մեղր:
Եվ աղջիկներ լուսակուրծք, որոնց վարսերը սաթի

Միայն երկնքի հովերն են գգվել:

Ուրկի՞ց են գալիս և ո՞վ են այդ ախոյանները հզոր, խուժող,

Ո՞վ է նրանց աստվածը, ի՞նչ է խոսում նրանց լեզուն...

Աղեղ ունին լայնալիճ, նետեր ունին <սայրասուր,>

Ամպի ծոցից արծիւներին վայր են բերում սրտահատ.

Կայծաքարով ծանրաբերձ նրանց պարսերը՝ ամեհի,

Այս տողի դիմաց՝ լուսանցքում (վիթխարի):

Սուրեր ունին վիթխարի՝ կայծակներից կուռ կոփած,

Եվ լանջերին երկաթի վահաններ՝ ապառաժի պես ջրդեղած.

Եվ ուսերին՝ վագերամորթ,

Գլուխներին՝ Փռչուգլխական զլխարկներ՝ [չինված] մազերից
առյուծների,

Որոնց բռնել են հապշտապ իրենց կոխած շավիղներում.

Եյս տողի դիմաց՝ լուսանցքում՝ (անցած...վայ <րերում>):

Ջլապինդ ևն ու հսկա և կուրծքերը ժայռեղեն,

Եվ քիթերը արծվենի, աչքերը լույս – երկինք,

Ճակատները արեավառ, ինչպես կավը քուրայում.

(Եվ կայռենները կարշնեղ, բեղմնավոր ու [լուսաբ< ուխ>]

կենսաբուխ):

Վահենների մեջ՝ մանուկներ՝ աչքերն հուր– [ալիքներ]

արևներ,

Այս տողի աչքերն բառի քեր բաղադրիչի վերևում՝ իկ:

Եվ ծերուկներ ալեգարդ՝ գոգերին էտրուսկյան սափորներ
գինով լի:

Իրենց ոսկեհեր աղջիկները, [որոնց սուրբ խոպուպները
հաղթողին միայն պարգևում] վառված <վարսերով> վայրենի,

Եվ նրանց ծծերը՝ զրահի տակ, կրակի պես անթեղած,

Որոնց եթե մատդ ղիպչի, մատը կայրվի եղևնու պես:

ԱՍՊԵՏԻ ՍԵՐԸ (էջ 32)

6 ՀԱ, Բ II	Եկավ մի օր կանանչ-կտրիճ մի իշխան.
7 Գծ	Սանձը գցեց ու քար կտրեց Հիացքեն,
11 ՀԱ	Քեզ սիրեցի, սիրտդ տուր ինձ, քու սիրով
13 Գծ	—Այդ չէ սերը,— ասաց աղջիկն ասպետին,
20 ՀԱ	Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քու սիրով:
20 Գծ	Մեռնեմ ուրախ ու բախտավոր քո սիրով:
23	Որ հուսահատ քաջի նման կմեռնեն.
35 Գծ, ՀԱ, Բ	II Սիրու վարդը պահեց այրվող ծոցի մեջ.
42 Գծ	Ուր կըժպտար հուր-աղջիկը աննման,
43	Այն ասպետը ծով կտրոտով, լի հույսով,
46	Քաջ կտրիճը դարձավ դողդոջ մի ծերուկ.
46 ՀԱ, Բ II	Վառ կտրիճը դարձավ դողդոջ մի ծերուկ.
49	Սիրու վարդը աչքին դրեց փափագով,
49 Գծ	Վերջին անգամ աչքին դրեց փափագով՝
50	Վարդն համբուրեց ու համբուրեց ու ...
	մեռավ՝
50 ՀԱ	Ու համբուրեց վերջին անգամ, ու մեռավ՝

ՄՈՐ ՍԻՐՏԸ (էջ 34)

3 ինք.	Ժամանակով
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ Մեկուճարիկ <գավակը>:	
4 ինք., ԱԾ	Կըսիրեր մի աղջկա:
6	Դու չես սիրեր.
13 ինք.	Երբ նա տեսավ, բարկացավ.
15	[Աչքիս առաջ] Շեմքիս, ասավ,
16	[Թե որ] Մինչև սիրտը չբերես:
21	Երբ նա տեսավ, բարկացավ.
22	«Հեռո՛ւ աչքիս
26 ԱԾ	Երբ վազ կուտար

26-28 ինք. ա Երբ սիրտն առած (Հանած գնաց)
Վազ կուտար,
Ոտը սայթեց, ընկավ ցած:

բ Երբ վազ կուտար՝
Սիրտը [բռնած] ձեռքին,
Ոտքը սայթեց, ընկավ վար:

Այս տողի սայթեց բառի վերևում՝ սահեց.

Եժ 2-ի հեղինակային օրինակի տեքստի վերջում Ավ. Իսահակյանն արել է 25-27-րդ տողերի ևս մեկ սևագիր մշակում.

[Տղան գնաց, մորն ըսպանեց.
Երբ խելահեղ վազ էր տուլիս
Աղջկա մոտ՝ սիրտը ձեռքին ...]

○

○

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ (էջ 36)

30 ԽԳ (Բ) Համհարզներն իրա սաստիկ զայրացան,

33 ԽԳ(Բ) Եժ 2 Գնացին նրա սրբի ետևից,–

35-36 ԽԳ(Բ) Հողեր գրավեց ճոխ ավատներից,
Եվ դարձավ իշխան խլած հողերի:
Լքել է անգործ երկիրն Հայրենի,
Ու բաց են դռներն արշավի առաջ,

48-49-րդ տողերը ԽԳ (Բ)-ում բացակայում են:

Նախարարներին և Թագավորին
56-57-րդ տողերի միջև՝ Եժ 2-ում՝

Եվ արքան ընտրեց իր արքունիքից,
Իբրև պատվիրակ երկու դրանիկ,
Որ ողջույն տանեն արքայի կողմից
Եվ խնդրեն նրան դառնալ Հայրենիք:
Պատվիրակները Հասան Հոգնաբեկ,
Իշխանի առաջ ելան Հարգալից,

Ողջույններ բերին զորավարին սեգ
 Եվ ջերմ հրավեր արքայի կողմից:
 Խնջույքի մեջ էր իշխանը պանդուխտ՝
 Հին ընկերներով նստած սեղանի,
 Վառվում էր գինին թասերում զմրուխտ,
 Պար էին գալիս կույսեր գեղանի:
 Տարածեց ձեռքը զորավարը հին,
 Լռեց նվազը, և՛ ծիծաղ, և՛ պար.
 Պատվիրակները վշտով պատմեցին
 Մեր հայրենիքի վիճակը թշվառ:
 Լսում էր տխուր պատգամը երկրի,
 Սակայն տեսնում էր հրճվանքով ներքին
 Նսեմ վիճակը նենգ թագավորի, —
 Եվ ձեռքը ժխտող՝ տարածեց կրկին:
 Հնչեցին բարձր ծիծաղ ու նվազ,
 Գեղուհիները պարեցին նորից.
 Պատվիրակները՝ անհույս, գլխահակ,
 Դուրս եկան անխոս գոռ ապարանքից:
 Դեղնել է, դողում երկիրը թշվառ,
 Զինրի դոփից, զենքի շառաչից.
 Ե՛վ տազնապալից, և՛ սարսափահար
 Փախչում են ահեղ սրի առաջից:
 Որ ավագանու և ծերակույտի
 Խնդիրքը տանեն հին զորավարին:
 Արքայի կողմից և ծերակույտի:
 Խնջույքի մեջ էր իշխանը պանդուխտ
 Հին ընկերներով նստած սեղանի.
 Վառվում էր գինի թասերում զմրուխտ,
 Պար էին գալիս կույսեր գեղանի:

60 ԽԳ (Բ)

64-76

Տարածեց ձեռքը իշխանը խուտվ,
 Լռեց նրվազը, և՛ ծիծաղ, և՛ պար,

Պատվիրակները պատմեցին լացով
Մայր Հայրենիքի վիճակը թշվառ:
Լսում էր տխուր պատգամը երկրի,
Բայց տեսնում էր նա հրճվանքով ներքին
Նսեմ վիճակը նենգ թագավորի,–

76-77-րդ տողերի միջև՝ ԽԳ (Բ)-ում՝
76-77-րդ տողերի միջև՝ ԽԳ (Բ)-ում՝

Հնչեցին բարձր ծիծաղ ու նվազ,
Գեղուհիները պարեցին նորից...
Պատվիրակները անհույս, գլխահակ,
Դուրս եկան անխոս պերճ ապարանքից:

77-86-րդ տողերի փոխարեն՝ ԽԳ (Բ)-ում՝

Ոսոխն հաղթական շարժվում է առաջ,
Երկիրն հեծում է սմբակների տակ.
Եվ ավագանին ճամփեց այս անգամ
Մի վառ գուսանի, որպես պատվիրակ:

81-92-րդ տողերի փոխարեն՝ ԵԺ 2-ում՝

Ամբոխի միջից ծերունի մի մարդ
Ձայնում է ուժգին՝ «Մի՛ հուսահատվեք,
Մեր հին գուսանին ճամփենք նրա մոտ,
Հայրենիքը նա չի լքի երբեք»:
Եվ ժողովուրդը ուղի է դնում.
Հույսով, հավատով իր հին գուսանին.
«Տա՛ր մեր ողջույնը, մեր սերը անհուն,
Նա չի մոռանա իր ժողովրդին»:
Գուսանը գնաց՝ տավիղը ուսին,
Սահմանը չանցած՝ արտից մի բուռ հող
Լցրեց քսակը և խթանեց ձին,
Հասավ իշխանի ապարանքը ճոխ,

87-98-րդ տողերը ԽԳ (Բ)-ում բացակայում են:

90 ինք. ա Շինականն արտից առավ մի բուռ հող
[առավ]

98 Գուսանը մտավ դահլիճը շքեղ

98-99-րդ տողերի միջև՝ ԽԳ (Բ)-ում՝

Խնջույթի մեջ էլ իշխանը նորից,
Պար էին գալիս կույսեր աչապեղ:
Տարածեց ձեռքը իշխանը խուփ,
Լռեց դահլիճը խենթ գինարբուքի,
Ջարկեց լարերին գուսանը խանդով,
Եվ լեզու առան լարերը ոսկի:

121-124

Հին Հայրենիքի մեղեդիներ հին
Երգում են նրա փառքը սիրազին,
Օ՛, ինչպե՛ս անուշ խոսքով մայրենի
Կանչում են նրան, կանչում կաթոզին.
Սակայն դառնալից քենը վաղեմի
Դեռ բորբ կրակով այրում է հողին:

125-127-րդ տողերի փոխարեն՝ ԽԳ (Բ)-ում՝

Եվ ժխտող ձեռքը տարածեց կրկին
Ծիծաղ ու պարեր թափ առան նորից:
Գուսանն իշխանին նայեց զայրազին,
Գնաց սրտաբեկ դափան ամրոցից:
Ոսոխն օրեցօր մխրճվում է խոր,
Ուր ոտք է դնում՝ ավեր ու ավար,
Եվ ժողովուրդը վհատ ու մոլոր
Հընար է փնտրում, չի գտնում հնար:
Ամբոխի միջից մի ծերունի մարդ
Ձայնում է ուժով. – «Մի՛ հուսահատվեք.
Կըրերեմ նրան, գնում եմ ահա,
Հայրենիքը նա չի լքի երբեք»:
Եվ ուղի ընկավ խիզախ ծերունին,
Սահմանը չանցած՝ արտից մի բուռ Հող
Լցրեց քսակը և խթանեց ձին,

Եվ վստահ մտավ ապարանքը ճովս:
 Խնջույքի մեջ էր իշխանը պանդուխտ
 Հին ընկերներով նստած սեղանի,
 Վառվում էր գինին թասերում զմրուխտ,
 Պար էին գալիս կույսեր գեղանի:
 Տարածեց ձեռքը իշխանը խոտով,
 Եվ շունչը բռնեց դաշիճը բոլոր,
 Ծերունին դրեց քսակը հողով
 126-127 Եժ 2 Բռնել է շունչը դաշիճը բոլոր,
 Գուռանը դրեց քսակը հողով
 127-128 Ինք. ա [(Դնում է փոքրիկ)] Մոտեցավ, դրեց
 քսակը հողով
 Իշխանի առաջ և կանգն[<ում>] եց անդորր:
 Բ [Մոտեցավ, դրեց] Դնում է փոքրիկ քսակը
 հողով
 Իշխանի առաջ և կանգն[<եց>]ում անդորր:
 128-129-րդ տողերի միջև ԽԳ (Բ)-ում՝
 Գոցուն բերանը փոքրիկ քսակի
 Իշխանը ահա բանում է զգույշ,
 Լցվում է հանկարծ հոգին խոտված
 Հայրենի երկրի բուրմունքով անուշ:
 Իր մայրն ու հայրը այդ հողն են դարձել.
 Եվ նախնիքները, որ հող են դարձել,
 145 Եվ կարկառում է ձեռքերը դողդոջ,

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՐԱԶԸ (էջ 43)

18-19-րդ տողերի միջև Ագ-ում՝
 Երազները՝ սին ու դատարկ, անկայուն.
 Ունայնությո՛ւն, ապրել միայն երազում.
 Ողջ տիեզերքը երջանկությամբ է արբած,
 Եվ ես, որպես այդ ամբողջի մի հատված՝

Մի լույս-ոգի կանգնեց նրա սնարքին.

Տո՛ւր ինձ երգող անտառները բուրավից,

50-51-րդ տողերի միջև՝

Հաղա՛ր-Հաղա՛ր արևի մեջ փողփողէջ.

Յոլանում է ապարանքը ծովի մեջ,

Եվ տանում են կոհակները ծփծփուն

Յուքը նորա՝ հեռու ափերն անանուն...

Տարածվում են ապարանքի շուրջբոլոր

Բուրաստաններ և այգիներ մեղրածոր.

Ուր թռչուններն երփնափետուր, նագելի՛

Գեղգեղում են, դայլայլում են սիրով լի.

Եվ խաղողը վառ գինի է հավաքում

Իր ստինքում, և նռենին՝ ալ՝արյուն:

62-72-րդ տողերը Ազ-ում բացակայում են:

Կանգնած նրա սնարքին

Ահա եկան շարեշար

Ջքնաղ կանայք, չնաշխարհիկ, անհամար,

Բյուր գեղեցիկ կանանց միջից ընտրովի.

204-205-րդ տողերի միջև՝

Եվ մրահոն, արևաչվի, երկնաչվի.

Հեքիաթական անհուն գեղով, մշկաբույր,

Արշալույսի ժպիտներով, ծեքծեքուն

280

Գերահրաշ նազանքներով, սոսենի,

281

Ստվերի մեջ կանգնած նրա սնարքին

296-297-րդ տողերի միջև՝

Ունկն դնելով ոչնչության երգերին,

Որ փրկարար բալասանն է վերքերին՝

ՍԻՐՈ ՎԵՊԸ (էջ 54)

17 ինք. ա [Հակինթ] Մարմար դղյակում

19-րդ տողի *այսպես* բառերի - *այս* բաղադրիչների փոխարենն էն:

20-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ արժաթե:

23 Գինով այդ սիրուց եկել է ահա՛,

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ Գ)

*Կանաչ ծառի տակ
Նստել էր մենակ
Մի խեղճ կույր գուսան, և կրծքի վրան
Սեղմել էր մի սաղ, որ ուներ միայն
Մի դողդուջուն լար:
Կանաչ դաշտն ի վար
Հոսում էր երգով
Ջմրուխտի նման մի կանաչ վտակ,
Եվ երգում էր նա անուշ կայլակով
Ամպերի մասին՝ հակինթ ու սուտակ,
Որ ծվարում են լեռան գագաթին,
Ուրկից ցատկեց նա անդունդը մթին...
Գուսանը մեղմիկ
Ջարկում էր լարին,
Լարը քնքշիկ
Պատմում էր լռին
Մի վեպ սիրային...
- Հին ժամանակում , ոսկի դրյակում
Ապրում է չքնաղ մի աղջիկ,
Այնպե՛ս գեղեցիկ, այնպե՛ս գեղեցիկ,
Ինչպես կարապը՝ թևերն արծաթյա
Լճակի փրորուզ ջրերի վրա...
Հեռու մի երկրից
Եկել է ահա՛
Մի սիրուն տղա,*

Գինով այդ սերից
 Ծռնկի է իջել չքնաղ աղջկա
 Պատուհանի տակ, սեր է աղերսում.
 «Ջքնա՛ղ, քո սիրուն
 Կտրել, անցել եմ աշխարհաշխարհ,
 Թողել եմ հայր, մայր միայն քեզ համար:
 Վառ երազիս մեջ պատկերդ տեսա,
 Եվ երազելով քո դուռը հասա»:
 Սակայն աղջիկը չի լսում նրան,
 Եվ միտն է բերում ինչպես մի անգամ
 Շքեղ, աննման եկավ մի ասպետ
 Եվ անցավ, դնաց ու չնայեց ետ:
 Լքել է կույսը դռնակը ոսկի,
 Առել է ձեռը մի ցուպ երկաթի
 Ընկել է Թափառ
 Աշխարհաշխարհ
 Սիրած ասպետին գտնելու համար,
 Որ գնաց, գնաց... առանց վերադարձ:
 Իսկ հեռու երկրից եկած պատանին
 Իր սերն է հայտնում նրան վերստին. –
 «Հոգիս քաղվում է քեզ համար, ի՛մ սեր,
 Կրկանգնեմ սյստեղ դարեր ու դարեր,
 Եվ մահը միայն կարող է բռնի
 Բաժնել ինձ քեզնից...»:
 Աղջիկը սակայն
 Ձի լսում նրան...
 Անհայտ մի երկրում, տարիներ հետո
 Գտավ նա հետքը սիրած ասպետի,
 Բայց, ա՛խ, ասպետը գնացել է հեռու,
 Իր սիրո հետքից. կամ իր երազին
 Նա կըտիրանա, կամ էլ չի դառնա,
 Էլ ետ չի դառնա...

Եվ հետևում են օրերը իրար,
Եվ խեղճ պատանին ծնրադիր, խոնարհ
Սեր է աղերսում...

Հեծկլտաց լարը, դողաց-դողդողաց,
Եվ քնքուշ լարը կտրվեց հանկարծ...
Գուսանը սեղմեց կրծքին սազն անլար
Եվ նայեց շուրջը տխուր ու մոլոր...
Եվ վեպը այսպես մնաց կեսկատար,
Բայց մինչև այսօր
Այս թերատ վեպը միշտ իմ ականջում
Հնչում է որոշ, և լավ չեմ հիշում
Արթո՞ւն եմ լսել, թե՞ մի անուրջում.
Կարծես հինավուրց մի հեքիաթ լինի,
Որ հյուսել է մի հարազատ ոգի
Հեռու, անանուն
Մի հին աշխարհում...

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ Բ)

Ես դեռ պատանի՝
Լսեցի մի [հեղ] օր
Մի կույս գուսանի
Երգը [սրտագեղ].
Եղել է հնովթ
Հին ժամանակում մի սրտով տղա,
Սհրել է անգուլթ,
Մի չար ու անգուլթ սիրուն աղջկա:

Սիրել է [անհույս] սրտով, տարիներ անհույս
Ու կարոտ նրա տեսքին ու խոսքին,
[Լացե՛լ] Սիրել է սրտով, լացել է անհույս

Ու հառաչել է սրտից խորագին,
Եվ հոգու խորք[եր]ից կրակ է բխել
[Եվ վառել, այրել նրա] Այրելով նրան մոխիր դարձրել:

Երբ ես լսեցի,
Լաց եղա տխուր .
Ասես իմ բախտը
Պարզ նախատեսաւ.

Ես էլ սիրեցի իմ կորած կյանքում,
Սիրեցի սրտով տարիներ անհույս
Եվ հառաչեցի և հառաչելով
Սիրում եմ նորից, [և ամեն անգամ]
Եվ ամեն անգամ կրակ է բխում
Իմ վառված սրտից և այրում է ինձ
[Ու մոխիր դարձնում...]

ԱՐԱՔՍԻ ԾՆՈՒՆԴԸ (էջ 57)

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)
ԱՐԱՋԻ ԾՆՈՒՆԴԸ
(Հայկական ավանդույթուն)

1

—«Հնույթ ժամանակ Հայոց աշխարհի
Սիրուն սարերում, նման հանց գմբեթ¹,
Որին Բյուրակն ենք ասում մենք հիմի,
Մի հայ կին կապերը իրեն տղի հետ...»:

Այսպես սկսեց պապերից լսած
 Այս Հին զրույցը աշուղ Նազանին՝
 Քաղցր² մատները զարնելով սրտանց
 Անուշ հոնգուրի լացող լարերին:
 Մենք տուն կերթայինք, դեպի Հայրենիք,
 Դեպի Մուշ, Խնուս, դեպի Սալնո ձոր:
 Ու ճամփուց Հոգնած՝ Հանդ սուել էինք
 Արագի ափին աշնան մի զով օր:
 Ու խորունկ ձորում ջինջ երեկոյան
 Ափի գազկինոտ³ ուռիների տակ
 Լուռ լսում էինք դարդոտ աշուղին՝
 Խարույկի շուրջը շարված բոլորակ:
 Եվ մեր Հանգիստը մեղմիկ կօրորեր
 Խոսուն ծփանքը սզիզ Արագի:
 Ու Հին Բասենի մութ անտառներից
 Խուլ սոսափյունը մայրի-ծառերի:

—«Ու ապրում էին էս մերն ու որդին
 Գոհ ու շեն սրտով մի պարզ քողտիկում՝
 Ու զառ սարերում, ջրերի ափին
 Որդին ոչխար էր արածեցնում:
 Իսկ մերը տանը հոգում ամեն բան,
 [Համ] Ու Հաց էր թխում, գառներին պահում
 [Ու] Եվ երբ փչում էր հովը իրիկվան,
 Մեկուճար տղի ճամփին աչք դնում:
 Երբ վառ արևը պայծառ, շողշողուն
 Կապուտ սարերու էն կողմը, հեռո՛ւ,
 Ոսկի բարձերում գլուխն էր թաղում՝
 Մոր անո՛ւշ գրկում մո՛ւշ-մո՛ւշ քնելու,
 (Ու երբ հրեղեն արև-աղջկա
 Ոսկի հավքերը փունջ փռվում էին
 Ամպերու կրծքին, երկնքի վրա,—)

Հոտն առաջ քցած՝ տուն կուգար որդին:
 Ու հանց որ երկնուց հովն անուշ-մեղուշ
 Մեղմ կըշվշվա ծաղկունանց միջով,
 Իր հովվի շվին փչելով անուշ՝
 Տուն կուգար տղան խնդում երեսով:
 Մերը դեմ կերթար, կըգրկեր տղին,
 [Համբուրներ կուտար] Համբուրներ կառներ պապակ կարո-
 տով
 Ու կընստեին սեղան միասին
 [Կուտեին կարագ, կաթ, մածուն ու սեր:]
 Պարզ, հալալ հացի գոհունակ սրտով:
 Ու երբ մերն հոգնած կըմտներ խոր քուն,
 Որդին գուրս կերթար քողտիկին հուշիկ,
 Կիջներ ձորնիվար պարտեղը թաքուն,
 Ուր լուռ կապասեր մի սիրուն աղջիկ.
 Մի մարալ աղջիկ հուրնի հրեղեն.
 Էս տղի սիրած հագարան-վարդն⁵ էր,
 Ու կըխոսեին իրար գլուկ գրկի
 Երկա՛ր ու երկա՛ր, մինչև ուշ գիշեր:
 Եվ գոհ, երջանիկ բաժանվում էին
 Երկու սրտերը՝ աղափնու նման.
 Աստղի պես մաքուր՝ սիրով թանկագին,
 Ծաղկի պես անուշ՝ սիրով վառ-վառման:

—Է՛ս փուչ աշխարհում ի՞նչ կա ավելի
 Շո՛ւտ փոփոխական, քանց բախտը մարդուս.
 Ի՞նչն է միշտ ցավի, փորձանքի գերի
 Էս չա՛ր աշխարհում, քանց բախտը մարդուս:
 Որտեղից ո՛ր էր՝ մեր աշխարհ մտան
 Մեր թշնամիքը սև հեղեղի պես.
 Դրանք մարդ էին, թե վայրի գազան,
 Նենգավոր ուռում, թե քուրդ կամ չերքեզ:

Մեզ համար մեկ է, թե ով են դրանք, –
 Պարսիկ թե արապ, թե թուրք-օսմանլին.
 Նրանք քանդեցին մեր տունն ու տեղանք,
 Մահ, ավեր բերին մեր շեն աշխարհին:
 Ու մի օր եկան գմբեթ սարերով
 էս գազաններեն մի վայրի քարվան,
 Ջորսդին քանդելով՝ անցան ձորակով,
 Ուր էն աղջիկն էր ծաղկում, հանց շուշան:

2

Գլխավոր մեծը էդ գազանների
 Տեսավ աղջկան ու շա՛տ հավանավ,
 Հոր ու մոր գրկեն խլեց զոռակի՝⁶,
 Խլեց էդ ծաղկին ու հետը տարավ...
 (Կեսօրեն հետո, երբ կամաց-կամաց
 Հոտն առաջ քցած՝ տուն կուգար հանդեն,
 Մի անցորդ մարդուց լսեց պատահած)
 Էս զուլում անցքը խեղճ, անբախտ տղեն:
 Ու դալար գլխուն բոց-կրակ վառվեց,
 Թողեց ոչխարը գելերու բերան,
 [Լալով, [գոռալով] հառաչով սարնիվեր վազեց]
 Գտնելու իրա սիրած աղջկան:
 Սիրտը սև դարդով ընկավ քարեքար՝
 Գտնելու իրա շա՛տ ազիզ յարին,
 Նորեն դեպի տուն բերելու համար
 Կամ թե մեռնելու նրա ուղուրին⁷:
 Մարդուն սերն ինչե՞ր չի անել տալիս, –
 Էն թե է տալիս ու առյուծ դարձնում.
 (Էս մեր կտրիճն է՛լ թըռա՛վ նրանց հտքից, –
 Ու գտավ էնոնց գմբեթ սարերում»:

Տեսնում է՝ սարի դալար սեղերում
 էդ գազանները վրան են զարկել.
 Իսկ մեծավորի վրանը նշխուն
 Մեկերներու մեջ, հանց ուրուր բազմել:
 Ու կրակ կտրած՝ զիլ ներս կըմտնի
 Նշխուն վրանը էն գլխավոր շան.—
 Կրտեանի նրան՝ ուռած, զզվելի,
 Շոյելուս յարի մազերը դերձան:
 Կրտեանի յարին, որ խեղճը ծո՛վ-ծո՛վ
 Մարգրիտ արցունք աչքեն կըթափե.
 Ու մեծ գազանին, որ պիղծ ձեռքերով
 Կըշոյի յարի հուսքերը սաթե:
 Սրտում կըվառվի բոցը վրեժի.
 Կըհանե տղեն խանչալը գոտկեն,
 Կըկոխե կուրծքը էս անգութ իժի,
 Շանսատակ կանե մեր կտրիճ տղեն:
 Ու վրա կուգան ծառաներն էս շան,
 Իսկույն կըսպանեն մեր առյուծ տղին,
 Նազուկ աղջկա աչքերու առաջ
 Մաս—մաս կըկտրեն մեր կտրիճ տղին...
 Ա՛խ, խեղճ աղջկան աշխարհը սեցավ.—
 էլ ինչո՞ւ ապրել յարի ետեւն.
 Ինքն էլ [էր] է խրում խանչալը սրտում
 Ու մեռած ընկնում սիրածի վրեն:
 Չար թշնամիներն մեր աղիզ երկրի
 Կատղած, փրփրած ճամփա են ընկնում,
 Վերցնելով հետները լեշն իրենց մեծի՝
 Ավեր, ավարով առաջ են գնում:
 Իսկ մեր նահատակ աղջիկն ու տղեն
 Մնում են սարում, բաց երկնքի տակ.
 Իրար գրկի մեջ սուրբ հարսն ու փեսեն
 Քնում են հավքի, հովի շնչի տակ:

Բայց սուրբ Հրաշքով արյունը արդար
 Զուր տեղ չի կորուսւմ աշխարհի վրա.
 Ու նրանց խորունկ վերքերեն հաղար
 Ակնունք են բխում՝ զուլալ, բյուրեղյա:
 Իսկ գետին թափված կաթիլներն արնան
 Դառնում են խակույն ծաղկունքներ նշխուն՝
 Անուշ հոտերով ու ալվան-ալվան.
 Հաղարան-վարդեր, աղբերաց-ար[յ]ուն⁸:
 Աղբյուրներն անո՛ւշ ու անմահական
 Մեղմիկ խոխոջով նանիկ ասացին.
 Սմբուլ, լալազար, նարգիս ու շուշան
 Ծածկին էդ աղիւյ քուն մտածներին:
 –Սո՛ւրբ են էդ դմբեթ սարերը սիրուն,
 Որ էդպես մաքուր ու ազիզ սիրով
 Սրբերու ունին իրենց ծոցերում,–
 (Ա՛խ, սա՛ր ու ծոցե՛ր օրհնած արունով:)
 Մեր ողջ աշխարհը սո՛ւրբ է, ախպրտի՛ք,
 Պազնենք էդ հողը նահատակների.
 Արնով սրբացած էդ սուրբ աշխարհին,
 Մենք մեղավոր ենք, մենք չենք արժանի...

–Խեղճ, անճար մորից խաբար տանք հիմա.–
 Իրիկունն եկավ, ու որդին չեկավ.
 Լալով, կասկածով սպասում է նա,
 Գիշերանց եղավ, ու որդին չեկավ:
 Զառ⁹ աստղունքն ելան ու նորեն Հանգան,
 Խեղճն սպասում է իր աչքի լուսին.
 Վառ արևն ելավ, Հավքերը զարթնան,

3

Բա՛յց, ա՛խ, տուն չեկավ անբախտ մոր որդին:
 Գառները քցած դիլ դառնաբալետ,

Մայում են, կանչում իրենց մորերին,
Ոչխարը ցիր-ցան՝ ընկած սարերում,
Հալով կորոնեն իրենց բալեքին:
Անտերունչ մերը՝ խեղճ, սրտապատառ,
Խաբար կը հարցնեն ամեն անցորդին,
Հացով կը թրջեն ամեն քոլ ու քար,
Բայց խաբրիկ չկա, ու չկա որդին:
Խելքը թուցրած, կուրծքը ծեծելով՝
Սարերն է վազում գտնելու որդուն,
Մի որսորդ մարդու էնտեղ տեսնելով՝
Մղկտան [ձենով] լացով խաբար է հարցնում...

– «Որսկան ախպեր, սարեն կուգաս,
Սարի մարալ կը փնտռես.
Ասա՛, յարա՞ք դուն չըտեսար
Իմ մարալըս, իմ բալես.
Յարաք չըլնի՞ր դարդի ձեռքեն
Սարերն ընկավ իմ բալես,
Դարդն առավ, քարերն ընկավ
Իմ ծաղիկս, իմ լալես:

– Տեսա, քուրի՛կ, նխշուն բալեդ
Կարմիր [կոսբանդ] պսակ է կապեր.
Սիրած յարի համբուրի տեղ
Սրտին վարդեր են ծլեր:
– Որսկա՞ն ախպեր, ասա՛, յարաք
Ո՞վ է հարսը իմ բալիս.
Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ արեխ, իմ լալիս:

– Տեսա՛, քուրի՛կ, դարդոտ բալեդ
Քարն է դրեր բարձի տեղ.
Անուշ քնով սուր խանչալն է
Սրտում գրկեր յարի տեղ.
Սարի մարմանդ հովն է շոյում

Ծակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վերան սրգում
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ»:

Մերը սգավոր, մազը փետելով,
Դես-դեն է վազում, ամեն տեղ փնտռում.
Գտնում է որդուն՝ ծածկած ծաղկունքով
Ու բյուրեղ ականք չորսդին կարկաչուն:
Գրկում է որդուն ու արուն լալիս,
Սուրբ նշխարները անվերջ համբուրում.
Ու խոր կսկծից, ցավից դարդամահ՝
Ազիզ որդու մոտ հոգին ավանդում:
Բայց գետին ցողված մոր արցունքներեն
Հրաշքով իսկույն ծաղկունք են բուսնում.
Մոր սրտից թափված ալ-արտասունքներեն
Խորունկ ու հստակ աղբյուր են բխում:
Ա՛խ, սուրբ հրաշքով արյունը արդար
Զուր տեղ չի կորում աշխարհի վրա. —
Մոր, որդու, հարսի արուն-արցունքեն
Ակնունք են բխում՝ զուլալ, բյուրեղյա:
Իսկ գետին թափված կաթիլներն արնան
Դառնում են իսկույն ծաղկունքներ նշխուն,
Անուշ հոտերով ու ալվան-ալվան,
Հազարան-վարդեր, աղբերաց-արուն:
— Էդ բյուր ականքը գմբեթ սարերեն
Իջնում են ներքև իրար գիրկ գրկի.
Հյուսվելով իրար՝ մեկտեղ դառնում են
Մեր խոր Արագը՝ ազիզ, սիրելի:
Ու էն օրվանեն Բյուրակն են ասում
Գմբեթ սարերը բյուր աղբյուրներով.
Էն սև օրվանեն սարերն են նշխուն
Արյուն-արցունքի դառ-վառ ծաղկունքով:
Ու էն օրվանեն Արագն է բխում

Բյուրակնի հազար-հազար ականունքեն.
 Էն սև օրվանեն Արազն է ծնում
 Մոր, որդու, կույսի արյուն արցունքեն...
 Այս տողի կույսի բառի վերևում՝ հարս:
 -Է՛խ, Արա՛զ, Արա՛զ, քանի ու քանի
 Հարուր տարի է՝ հլե՛ր ու կերթա՛ս.
 Արյուն-արցունքը հայոց սրտերի
 Մե՛կ-մե՛կ հավաքել՝ ժողվելով կերթաս.
 Ա՛խ, նորոգվելով ու միշտ նորվելով
 Մեր սև աշխարհի ամեն կողմերում
 Թափված-ծովացած արյուն-արցունքով՝
 Կերթա՛ս, կը[զարնես] փարվես Մասսա փեշերուն:
 Մեր ար[ունք]յուն-արցունք ինչո՞ւ [կըբախես]
Հեհեաս
 Մասսա լանջքերուն, [օձուտ ժեռերուն:]

4

Քու գուռ գոչունով զարթնցընե՞լ կուզես
 [Քնած] Մաղձոտ քաջքերուն, [թմրած] ստրուկ
Հայերուն...
 Դու մռնչո՛ւմ ես, ծեծում ու ծեծկվում
 Քու քար ափերին, մեր քար սրտերին.
 Դուն բողոքո՞ւմ ես, վրե՞ժ ես կանչում
 Քու ծոցում թափված արունքի¹⁰ [մասին] համար.
 Ա՛խ, մարդկանց խղճի, դիվանի առաջ
 Աշխարհեաշխարհ ասելո՞ւ կերթաս
 Մեր արուն-արցունք՝ անչափ, անճանաչ,
 Սրբազան Արա՛զ, մեր աղիվ Արա՛զ...»:

Աշուղ Նազանու ձայնը խեղդվեց
 Հուզված կրծքի մեջ՝ լցված դարդերով.

Իսկ մեր աչքերը՝ քցած Արագին,
 Լցվեցին խոշո՛ր, ջե՛րմ արցունքներով:
 Մեր մոքերն արդեն սլացել էին
 Ա՛յն սուրբ վայրերը, ուր զուր չի կորի
 Թափված արյունը, ուր չըվում էինք
 Տուն դարձողներս՝ նոր հույսերով լի...
 Խարույկն անցնում էր... ու սև հավքի պես
 Մուլթը փռվել էր աստղե-թևերով.
 Արագը՝ կապված մի հսկայի պես,
 Խո՛ր հառաչում էր ափերին տալով:
 Բուռն հողմերը բարձր լեռներեն
 Բասենի մռայլ, մեծ անտառների
 Խուլ շառաչի հետ արշավում էին
 Դեպի անդունդը՝ խոր ձորն Արագի:
 Եվ օձապտույտ ձորում, այրերում
 Ոլորվում էին, գալարվում նոքա
 Ու օռնում էին սոսկալիորեն
 Մեր՝ երկիր չվող երամի վրա...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժողովուրդը Բարձր Հայքի լեռներին Գմբեթի սար է ասում. և մասնավորապես Բյուրակնյան լեռներին:
2. Լավ նվագողին ժողովուրդն ասում է՝ քաղցր մաստենը ունի:
3. Գազպեն – մի տեսակ մանանա, քաղցր խեժ, որ իջնում է [գիշերը] օդի միջից ծառերի տերևների վրա:
4. Խրճիթ:
5. Հազար թերթերով վարդ՝ վարդի մի ճոխ տեսակն է Հայաստանում:
6. Բռնի, ուժով:
7. Ի սեր:
8. Մի կարմիր, գեղեցիկ ծաղիկ Հայոց լեռներում. բանում է աղբյուրների շուրջը:
9. Ոսկի:
10. Ոճիք, արյունհեղություն:

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐ (էջ 60)

ՄՐՏԱՆՎԵՐԸ
[ՍԻՐՏԸ ՏՎՈՂԸ]

Ավանդավես

- 2 ինք. Մեկը ուսած, Համբավավոր,
3 Ունեւ պաշտոն վարժապետի:
4 Եվ [երկրորդը] մյուսը – կրօնավոր
6 Իսկ երրորդը, վաճառական.
8 Բայց [չորրորդը] վերջինը... Թափառական,
9 Աստանդական, աղքատ ու խեղճ...
10 Երբ մահն եկավ, մայրը Աստծուն
14 Վարժապետը մի ճառ գրեց,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ ներքող:
16 Եվ Հարուստը փող նվիրեց,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ փող:
Իսկ Հեգ որդին Թափառական
Բանաստեղծության վերջում՝ էջի ազատ մասին՝
Ներբող գրեց
Փող նվիրեց.

Գրեց ներբող,
Նվիրեց փող:

ԱԹԹԻԼԱՆ ԵՎ ԻՐ ՍՈՒՐԸ (էջ 61)

- 2 ՀԿ Ժամանակի սկիզբներից
3-4 Խորունկ թաղված մի կաղնու
Արմատակուռ ճանկերի մեջ
7 Եվ չեն գտել թուրը հզոր

Այսուհետև սուրը բառի փոխարեն ամենուրեք՝ թուր:

*Արդ, դողացե՛ք, սարսուցեցե՛ք,
Դուք, Հե՛ստ Հռովմ, նենգ Բյուզանդիոն*

30 *Ձեր բարքերը՝ ստրկային.*

32 *Ձեր աստվածը՝ շահ ու վաճառ:*

40 *Ձեր հայրերի պիղծ հողերում:*

Այս տողից հետո՝ ՀԿ-ում՝

Ա՛րդ, սարսուցեցե՛ք, սասանեցեցե՛ք,

Դո՛ւք, կեղծ ազգեր եվրոպայի,

Դո՛ւք, պիղծ ազգեր եվրոպայի

Աթթիլան է գալիս ահա՛,

Բերում է գարշ վախճանը ձեր»:

Եվ ճեղքեցին ծով ու կապան,

58 *Եվ ծածկեցին ժիտ եվրոպան:*

«Հայաստանի կոչնակի» հեղինակային ուղղումներ (տառա-տեսակը)

3 *Խորունկ թաղված մի վես կաղնու*

Արմատակուռ ճանկերի մեջ

Դո՛ւք, Հե՛ստ Հռովմ, մեղկ Բյուզանդիոն,

ՀԿ-ի՝ 40-րդ տողից հետո գրված հատվածը ջնջված է:

58 *Եվ ծածկեցին նենգ եվրոպան:*

ԱՎԳՈՒՍՏԻՆՈՍԻ ՏԵՍԻԼՔԸ (էջ 66)

2 ՀԿ *Խորհուրդների, հրաչքների ըմբռնման՝
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ իմացման, առեղծման:*

13 *– Ի՞նչ ես անում, – սուրբն հարցրեց մանուկին:*

16 *Ասաց սուրբը և կամեցավ քայլ առնել:*

18 *Տիեզերքը ա՛յնպես անեղր և անբավ*

ՍԻՐԱՀԱՐ ՆԱԴՈՆ (էջ 67)

3 ԳԹ Քչեց եկավ, եկավ կանգնեց

15 Դարձավ ասավ Գյուլիզարին.

16-25-րդ տողերը ԳԹ-ում բացակայում են, իսկ քու դերա-
նունը ամենուր օգտագործվում է քո ձևով:

ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ (էջ 70)

1 ՀՕԿ Երբ Աստված մարդուն ստեղծեց հողից,

9 Ամենուր լսե ձայնը մայրական,–

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)

ԸՍՏ ԹԱԼՄՈՒԴԻ

Երբ Աստված մարդուն ստեղծեց հողից,

Հավաքեց հողը երկրի չորս կողմից.

Առավ հարավից, հյուսիսից առավ

եվ արևելքից, և արևմուտքից,

Որպեսզի մարդը բախտի քմայքով

Իր հայրենիքից ուր մղված լինի,

Իրեն զգա նա այդ հողի որդին,

Հարազատ և մոտ քաղցր իր սրտին.

Որպեսզի մարդը, երբ ձեռքը մահվան

Բերե անհագուրդ իր տենչերին վերջ,

Ամենուր լսե ձայնը մայրական.–

«Արի, իմ որդյակ, հանգչիր [սրտ<իս>] գրկիս մեջ»:

ՍՈԿՐԱՏԵՍԸ (էջ 73)

14 ինք. –«Ողջուն սիրո, ով իմաստուն Սոկրատես,

16 ա Պատրաստ եմ քեզ ծառայելու եղբոր պես:

- բ Ի՞նչ ես ուզում, ես պատրաստ եմ եղբոր պես:
 17 –Շատ խնդրում եմ, եղբայր անգին, որ հաճիս
 18 էությունը երաժշտության պարզել ինձ.

ՀՈՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ (էջ 75)

- 2 ԽԳ Երկրի վրա գառն ու ոչխար չկային.
 22 Սրտանվեր նրա քաղցր նվագին.

ԱՌԱԿՆԵՐ

ԱՌԱԿ (էջ 82) (Աստվածաշնչից)

ԵՂԻՐ ԹԱԳԱՎՈՐ (առակ)

- 1 Եր, ԱՏ Հավաքվան մի օր ծառ ու ծիլ բոլոր,
 Փն Հավաքուած, օր մը, ծառ ու ծիլ բոլոր,
 3 ԱՏ Խորհուրդ արեցին և դառան ապա
 5, 12, 28 Երկիր «Եղի՛ր Թագավոր, իշխի՛ր մեզ վրա».
 6 Ինք. –Իմ ինչի՞ն է պետք,– ասավ ճիթենին.
 7 Ես իմ գործն ունիմ. չէ՞ որ ամեն[ք]ին
 Փն Ես իմ գործն ունիմ, չէ՞ որ ամէնքին
 9 Ես ինչպէ՞ս իշխեմ իմ բնութիւնով...
 10 Եր, ԱՏ Նորից խորհեցին և դառան ապա
 14 Փն Ես յաճելի եմ չէ՞ որ ամէնքին՝
 15 Ինք., Եր, ԱՏ Քա՛ղցր ու անո՛ւշ իմ պտուղներով.
 17 Ինք., ԱԾ Խորհուրդի նստան և խաղողենուն
 Եր, ԱՏ Խորհուրդ արեցին և խաղողենուն
 Փն Խորհուրդի նստան և սարգինային

- 19 – Ինչե՛ր կը խօսիք,
 21 ինք. Որ ցնծուիթյունով [լե<ցնում>] լցնում է
 աշխարհ
 Եր, ԱՏ Որ ուրախությամբ լցնում է աշխարհ.
 Փն Որ կը լեցնէ ցնծութեամբ աշխարհ
 22 Եւ զուարթ երգով՝ գեղեր, սար ու ձոր.
 25 ինք., ԱԾ Որ չար տատասկը անեն թագաւոր:
 26 Եր Ծառ ու ծիլ բոլոր հավաքվան, եկան
 27 Եր, ԱՏ Եվ հեղ ու խոնարհ խնդրեցին նրան.
 28-րդ տողից հետո՝
 ԱՏ Եվ սեգ ու հսկա՛րտ պատասխանեց նա.
 Փն Իսկ սէգ տատասկն է պատասխան կուտայ.
 31 ԱՏ, Եր Կըխայթեմ նրան, կըխոցեմ խորին,
 Փն Կը խայթեմ ես միշտ, վա՛յ անոր գլխուն,
 32 ԱՏ, Եր Ո՛վ չըհնազանդվի իմ հրամանին.
 Փն Որ չհպատակի իմ օրէնքներուն.
 33 Ատ, Եր Իմ թփերի տակ մտե՛ք ապաստան».
 34 ինք. Ասավ և սրեց փշերը դաժան:

ՄՈԼԼԱՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ (էջ 85)

- 7 Ագ, ԸԵ II – «Պա՛հ, պա՛հ մարդիկ ինչքան փոքր
 10 Մանուկները պարտիզում.

ՀԱՃՈՒՅՔՆ ՈՒ ՄԱՀԸ (էջ 86)

- 1 Ագ Մի մարդ էր փախչում մի եղջերուից
 3 Ագ, ԱԾ Եվ փախչելուս նա ոտքերի տակին
 6 Ագ Եվ գուրն իջավ նա՝ թփից կախվելով,
 7 Ոտքերը ամուր խրեց խորշերում
 8 Եվ մի պահ զգաց իրան ասպահով:
 13-18 Այն դալար թփի արմատներն ամեն.

- Եվ ուզեց տեսնել հատակը գրբի,
 Ուր մկներն իրան վայր պիտի ձգեն՝
 Մաշելով հիմերն փրկարար թըփի:
 Սարսափով տեսավ՝ մթին հատակում
 Մի դաժան վիշապ ահավոր, վայրագ,
 20 Իսկ խոռոչներում իր ոտքերի տակ
 23 Գարշապարները խայթելու նրա,
 25-26-րդ տողերի փոխարեն՝ Ազ՝
 Սակայն այն թփից ծորում էր անուշ
 ԱԾ Սակայն այն թուփից ծորում էր անուշ
 30 Ծորանքը մեղրի՝ քաղցր և հմայուն:
 Ազ Ծորանքը մեղրի քաղցր ու հմայիչ:
 32 Իսպառ մոռացավ նա սարսափ ու ահ.
 ԱԾ Իսպառ մոռացավ սարսափ և սոսկում,
 34 Ազ Որ մոռնում էր իր գլխի վերա.
 35 ԱԾ Ահեղ վիշապին, որ սև էր փնջում,
 37 Ազ Այս ոգին թշվառ՝ կախված անկայան
 52 Եվ մեղրը նորա – հաճույքն է սիրո,
 53 Որն արբենալով՝ մոռանում ենք մենք
 55 Ցավն ու ժամանակ, զերեզմանն ու մահ...

«Ազատամարտի» հեղինակային ուղղումներ

- Մի թուփ էր աճել անդունդի ծոցում,
 7-րդ տողը ջնջված է:
 8-րդ տողից հետո՝ հեղ. ուղղումներում՝
 Ոտները խրեց խորշերում նրա:
 18 Մի դաժան վիշապ ահավոր տձե,
 21 Գալարվում էին իժերն աժդահա,
 32 Իսպառ մոռացավ և՛ սարսափ, և՛ ահ,
 53 Որով արբեցած՝ մոռանում ենք մենք
 55 Ցավն ու ժամանակ, զերեզմանն ու մահ...

ԳԱՅԼՆ ՈՒ ՍՈՒՍԱԿԸ (էջ 88)

ինք. ա թալլտում էր ու ծղրտում

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ Բ)

Մեր այս Հնուց չար աշխարհում
Վառ մայիսյան շող ու շաղին
Անգուլթ գայլը բռնեց մի օր
Սոխակին:

Արշալույսի երգիչը հեզ
Անգուլթ գայլի սուր ճանկերում
Դողդղողում էր ու ծղրտում
Ցավագին:

—Բա՛հ,— գայլն ասաց,— հռչակ ունես,
Թե դու երգի մեծ վարպետ ես,
Անուշ ձայնդ սա՞ է միթե,
[Ստախոս,] Սուտասան:

[—Ահ ,] Այո՛, ավա՛ղ, ճիշտ է,
Ես վարպետ եմ [քաղցրաձայն,]
[աշխարհ<ահռչակ>] մեծահռչակ
Մայր բնության ազատ գրկում,
Բայց ո՛չ դաժան քո ճանկերում,
[Ով բարբարոս,] Ով զազան:

Ինքնագրի հաջորդ երեսին՝ 6-7-րդ տողերի փոխարեն՝
Գայլի ճմլող, սուր ճանկերում
Թալ[ը]լտում էր ու ծղրտում:

ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ (էջ 93)

- 6 ինք. ա Մեռնող աղափնուն ու խոսեց այսպես.
14 ինք. բ Աղափնին բացեց աչեքը ոսկի.
22 ինք. ա Թռի՛ր և ասա՛ ստրուկ աշխարքին

ԱՐՋՆ ՈՒ ՕՁԸ (էջ 94)

- 2 Փն Արջն ու օձը ընկեր դարձան
3 Դարձան ընկեր ու բարեկամ:
23 Վախ ու կասկածն առան արջին:
32-39- թդ տողերի փոխարեն՝
Ուղղեց, շիտկեց, փռեց գետին
Ծուռ ընկերի անկենդան դին...

ՔԱՂՅԱԾ ՀԱՎԸ (էջ 96)

- 1 ինք. բ Քաղցած հավը [քաղցած փորով] երազ տեսավ,
2 Երազի մեջ գարի անբավ:
3 Եվ կտուցը ուրախ-ուրախ
Ա ինք. 4-րդ տողից հետո՝
Ուրա՛խ-ուրա՛խ
5 ինք. բ Գարեհատին...
6-8 Զարթնեց, տեսավ կտուցն, ավա՛ղ,

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՆ ՈՒ ԱՍՏՎԱԾ (էջ 97)

Առակ

ՏԱՐԲԵՐԱԿ Ա

Մի աղքատ մարդ
Թույլ ու դալուկ,

Սովալլուկ,
Դեգերում էր պատերի տակ
Պալատների շքեղազարդ:

Մի աղքատ մարդ
Պատերի տակ
Պալատների շքեղազարդ
Դեգերում էր
Թույլ ու դալուկ, սովալլուկ:

[Երբ զանգերը զողանջեցին]
Երբ զանգերը եկեղեցու
Երեկոյան զողանջեցին,
Աղքատ մարդը երկյուղագին
Գտակն հանեց ու փառք տվեց
Բարիքների պարգևողին:

Սակայն Աստված
Աղքատ մարդու աղոթքներին
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ փառաբանքին:
Բնավ երբեք չըհավատաց:
Ինքնագրի վերջում՝ էջի ազատ մասին՝
Աղքատ մարդը Աստծուն
Փառք տվեց.
Աստված լսեց, չհավատաց:

ՏԱՐԲԵՐԱԿ Բ

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՈՒ ԱՂՈԹՔԸ
Առակ

Մի աղքատ մարդ՝

Խեղճ ու կորած,
Առվի ափին նստեց Հանդարտ,
Հանեց պարկից մի կտոր Հաց,
Մի գլուխ սոխ,
Կերավ, խմեց ջուրը վրան
Եվ սրտաբուխ
Աղոթք ասաց Աստվածության.–
«Գոհանամք քեզ, որ գլթությամբ
Քո անսահման
Ինձ այսօր էլ Հաց տվիր դու...»:

Ահեղ դահից լսեց Աստված,
Բայց չՀավատաց
Աղքատ մարդու
Սուտ ու անհիմ
«Գոհանամքին»...

3 Հոկտեմբ. 1932
Փարիզ

ՏԱՐԲԵՐԱԿ Գ

Վճիտ առվի ափին նստած
Մի աղքատ մարդ
Ծոցից Հանեց
Մի կտոր Հաց,
Կերավ, խմեց ջուրը վրան.
Եվ փառք տվեց
Աստծուն այսպես
«Գոհանամ քեզ,
Որ գլթությամբ քո անսահման
Ինձ այսօր էլ Հաց տվիր դու»:

Սակայն Աստված [չըհավատաց]
Անկեղծությանն աղքատ մարդու,
Եվ իր անհիմ
«Գոհանամքին»
Զըհավատաց:

ՏԱՐԲԵՐԱԿ Դ

Սովալլուկ,
Թուլլ ու դալուկ
Մի աղքատ մարդ
Դեգերում էր
Մեծահարուստ և լուսազարդ
Փողոցներում, պատերի տակ,
Երբ զանգերը եկեղեցու
Ղողանջեցին երեկոյան,
Աղքատ մարդն էլ՝ շատերի հետ
Գտակն հանեց,
Փառաբանեց
Բարիքների պարզևողին:

Բոլոր նրանց լսեց Աստված,
Բայց աղքատին [բնավ, բնավ] ամենևին
Զըհավատաց:

ՏԱՐԲԵՐԱԿ Ե

[Մի աղքատ մարդ
Դեգերում էր
[փողոցներում]
Շքեղազարդ

Փողոցներում.]
 Դեգերում էր մի աղքատ մարդ
 Փողոցներում չքեղազարդ,
 Բարիքներով ու բերքերով
 Ճոխ ու առատ
 Շուկաներում:
 Դեգերում էր սովալլուկ
 Թույլ ու դալուկ:
 Երբ զանգերը...
 Բարիքների պարգևողին.

«Գոհանամք քեզ, որ գլթուլթյամբ
 Քո անսահման
 Հաց ես տալիս ողջ աշխարհքին»:

Սակայն Աստված
 Աղքատ մարդուն
 Եվ իր անհիմ
 Գոհանամքին
 Բոլորովին
 Զրհավատաց...

ՏԱՐԲԵՐԱԿ Զ

Մի հոյակապ, չքեղազարդ
 Ապարանքի պատերի տակ
 Մի աղքատ մարդ
 Գտավ մի չոր հացի կտոր.
 Կերավ հացը և փառք տվեց
 Աստծուն այսպես. – <...>

ՏԱՐԲԵՐԱԿ Է

Մի աղքատ մարդ
Մեծահարուստ, չքեղազարդ
Դարպասների, պալատների
Պատերի տակ
Դեգերում էր
Թույլ ու դալուկ,
Սովալլուկ:

Երբ զանգերը ղողանջեցին,
Այս տողի զանգերը բառի վերևում՝ երեկոյան:
Երախտագետ շատերի հետ
Աղքատ մարդն էլ երկյուղագին
Գդակն հանեց
Ու փառք տվեց
Բարիքների պարգևողին:

Սակայն Աստված
Աղքատ մարդու անկեղծության
[Եվ քրթմնջեց]
Արի տես, որ չըհավատաց
Եվ քրթմնջեց խիստ զայրացած:

1935 թիվ. Փարիզ.

3 [սեպտեմբերի>] հոկտեմբերի:

Էջի վերջում Ավ.Իսահակյանն արել է հետևյալ գրառումը.
«Զարմանալի բան է, որ երեք տարի առաջ, նույն հոկտեմբերի 3-ին
եմ գրել այս առակի առաջին ձևը: Միստիկական բան է...»:

ՏԱՐԲԵՐԱԿ Ը

Մի աղքատ մարդ
Շքեղազարդ պալատների
Պատերի տակ զնգերում էր
Թույլ ու դալուկ, սովալլուկ:

Երբ զանգերը եկեղեցու
Երեկոյան ղողանջեցին,
Աղքատ մարդը երկյուղապին
Գդակն հանեց ու փառք տվեց
Բարիքների ստեղծողին ...

ՏԱՐԲԵՐԱԿ Թ

[Մի մեծատան] [Մեծահարուստ] Շքեղազարդ ապարանքի
Պատերի տակ մի աղքատ մարդ
Ծոցից հանեց
Մի կտոր հաց
Կերավ, խմեց ջուրը վրան
Եվ երկյուղած
Աստծուն այսպես փառաբանեց.
«Գոհանամ քեզ, որ գլթությամբ
Քո անսահման
Ինձ այսօր էլ հաց տվիր դու»:

Սակայն Աստված <բնավ> չըհավատաց
Անկեղծությանն աղքատ մարդու.
Նրա անհիմ
Գոհանամքին:

ՊԱՐԾԵՆԿՈՏԸ (էջ 98)

- 2 ինք. Բայց Թեհրան էր, որ
4 Մեկ շնչով [Թուա] հանդարտ
5 Թուա եռաուն գազ:
11 – Ի՞նչ կա զարմացք բան,
12 Այնտեղ Սպահան,
13 [Ողջ քաղաքի հետ աստված է վկա,]
15 Եվ գրավն առա:
20-րդ տողից հետո՝
[Երբ մարդ իր աչքով կարող է տեսնել,]
22-րդ տողից հետո՝
[Թերահավատին]
27 Տեղ արեք, տղերք,
30 Մի վայրկենում նա ծտից թև առել,

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԱՐԵՐՔԸ (էջ 100)

- 2 ինք. Ալիքները [գոռում էին] շաչում էին
Ինք. 5-րդ տողի մռայլ բառի վերևում՝ մթին:
7 [Մուլթն ու մթին] <1 անընթ.> և գունդագունդ:
Այս տողի գունդագունդ բառի վերևում՝ զայրագին
10 Մի խեղճ ձկնորս [մակ< ույկի>] [մակույկ<ի>]
նավակի մեջ
13 Որ հատկապես (և միմիայն [իրեն]) իրեն համար

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)

- Սարսափելի փոթորիկ էր ծովի վրա.
Ալիքները գոռում էին և լեռնանում փրփրաբաշ
[Փչում էին իրենց վրա և խորանում անդունդի պես]
Եվ փչելով իրենց վրա՝ իջնում էին [մթին] մռայլ անդունդ:
Եվ երկինքը ծովի նման մուլթն ու մթին,

Գալարելով ալիքները հոծ ամպերի,
 Որոտում էր ահեղաձայն.
 Մի խեղճ ձկնորս նավակի մեջ
 Օրհասական ժամի առաջ
 Անիծում էր ծովն ու երկինք,
 Զայրանում էր ու հայհոյում՝
 Կարծելով, թե իրեն համար
 Այս տողի փոխարեն՝ էջի ներքևի ազատ մասին՝
 ա Ու կարծելով, թե հատկապես
 բ Կարծելով, թե առանձնապես
 խառնվել են տարերքն իրար:

ՄԻ ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (էջ 107)
 (առակ)

1 ինք. Իրեն ծակից՝ մթին ու խոր,
 4 «Քո դեմ արդար գանգատ ունիմ,
 15 Դաժան ու չար կատու դարձած՝
 17 Շուրջը սփռեց այնպես երկյուղ,
 19 Ծակ ու ծերպեր չնչերն առան:
 25 Եվ ահարկու գամփռ դարձած՝
 37 Առյուծ դարձած՝ խրոխտ ու սեզ,
 50 Նա է տերը մեր բոլորի,
 Ըն II Նա է տերը մեր բոլորիս,
 51 ինք., Ըն II Նա է հզոր մեր բոլորից:
 52 ինք. Եվ մարդ դարձած մուկը զինվեց
 61 Չեն [վա< խենում>] երկնչում, կարծես, մահից,

ԹԱԳԱՎՈՐԻՑ ՓԱԽՁՈՂԸ (էջ 110)
 ԱՌԱԿ

1 ինք., Ապ [Մի] թագավորը այցի ելավ
 9 ինք. Արծաթասանձ և ոսկեսար

Ինք., Ապ 10-րդ տողից հետո՝

*Դրոշակներով հողմածածան,
Շեփորներով, ծնծղաներով,
Թմբուկներով որոտագին
Այց էր ելնում հզոր արքան*

Ինք. Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *ամուսն*:

*Քաղաքացուն և ռամիկին,
Բերդ ու քաղաք, շեն ու ավան:*

Ինք. վերջին 6 տողանոց հատվածը ջնջված է:

*Ինք., Ապ 13 Մեկել դռնից ելավ ճեպով
34 Ըն II, ԵԺ 2 Թագավորից*

ԱՌԱԿ ԸՍՏ ԼՈՒՄԱՆԻ (էջ 113)

*1 ինք. ա, բ Մի մարդ անցնելիս անտառի ափով
2 ինք. ա Լսեց ոչխարի մի անհույս մայուն.
3 ինք. բ [Աչքերը] Հայացքը չրջեց,
3-4 ինք. ա Հայացքը չրջեց, տեսավ՝ մի մեծ գայլ
5 Ոչխարին բռն[ած]ել քաշում է թափով
8 ինք. բ [Մահակը փարտերով փարտեց և զարկերով
ծռավ]*

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝

*Մահակի զորեղ զարկերով անշեղ
8-9 ինք. ա Մահակը փարտեց, փչրեց գաղանի
Գլուխն ու ժանիք.*

9-10-րդ տողերի միջև՝ լուսանցքում՝ *կենդանի*:

*11 ինք. բ [Ոչխարն այս] Գիշերն ոչխարը քնեց
երջանիկ:*

12 ինք. ա Մյուս օրը, սակայն, վաղ առավոտյան

15-16 Դրեց կոկորդին դանակը սրած:

19 Մահվան հառաչով ոչխարը ասաց.---

Այս տողի դիմաց՝ ա ինք. լուսանցքում՝ *խոր հառաչանքով*,
բ ինք. լուսանցքում՝ *հառաչով*:

21 *ինք. ա, բ Բայց Հիմա, ով մարդ, դու ես դարձել դայլ...»:*

ԳԱՅԼՆ ՈՒ ԵՂՆԻԿԸ (էջ 115)

2 *ինք. Ակռաները [խոր] սուր*

10 *Բարեկամի պես*

ԱԶՐԱՅԻԼ, ՄԱՀՎԱՆ ՀՐԵՇՏԱԿ (էջ 116)

(արաբական առասպել)

4ա *ինք. Մայր-երկրից մի [բուռ] գուղձ ընտիր հող ուզիր»:*

բ *[Նրանից] երկրից մի բուռն կավահող ուզիր»:*

12 *Եվ արյուն թափեն իմ սրտի վրա...*

13ա *Ջեմ տա մի գուղձ խակ, թո՛ղ Տերն ինձ պատժե –*

բ *Ջեմ տա, թո՛ղ Աստված պատժե ինձ խստիվ*

15 *Կասելու գալիք տանջանքները բյուր,*

18 *Վեա Ազրայիլին՝ անողոք, ահեղ,*

20 *Կորզեց բռնաբար մի բուռ կավահող:*

21 *Եվ Աստված հողից կերտելով մարդուն,*

ՏԱՐԲԵՐԱԿ

ԱԶՐԱՅԻԼԸ

(արաբական առասպել)

Երբ Աստված ուզեց ստեղծել մարդուն,

Լույս Ջիբրայիլին ուղարկեց երկիր,

Որպեսզի բերե մի բուռ հող ընտիր:

Երբ կամքը վերին՝ երկիրն իմացավ,

Ողբաց դառնապին. – «Ո՛հ, ի՜նչ մեծ աղետ,

Ի՜նչ ցավեր պիտի կրեմ այսուհետ»:

ա *Մարդիկ պիտ ածին, պիտի բազմանան,*

բ Մարդիկ պիտ աճին և պիտ բազմանան,
Այս տողի պիտ բառերի փոխարեն՝ լուսանցքում՝ անհուն:

Իրարու ձեռքից պիտ խլեն պատառ,
Պիտ արյուն թափեն, կռվին անդադար,–

Եվ պիտի դառնան ագահ և դաժան,
Ցասում[ը]ն Աստծու պիտի ծանրանա
Թե՛ ողջ մարդկության և թե՛ իմ վրա.–

Ձեմ տա մի գուղձ իսկ, թող պատժե Տերն ինձ,
Բայց աղերսում եմ նրան լալագին,
Որ մարմին չըտա իր այդ բաղձանքին...»:

Այս անգամ Աստված ուղարկեց երկիր
Հեզ Իսրաֆիլին նույն Հրամանով,
Որ դարձավ, եկավ նույն պատասխանով:

ա Աստված զայրացած՝ ուղարկեց երկիր
բ Զայրացավ Աստված և Հղեց երկիր
Սեզ Ագրայիլին, որ խստիվ, անշեղ
Կատարեց իսկույն Հրամանը ահեղ:

Եվ Աստված, մեռնող մարդուն կերտելով,
Իբրև վարձ տվեց վեա Հրեշտակին
Առնելու մարդկանց անհագուրդ հոգին:

ՍԱՏԱՆԱՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ (էջ 117)
(միջնադարյան հայ առակ)

ինք. Եվ տվեց նրան ամբողջ աշխարհը:
Այս տողից հետո՝
Եվ տվեց նրան ամբողջ աշխարհին:
Տալով կնուկթյան ամբողջ աշխարհին
Գեղեցիկին –

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՈՍՔ (էջ 118)

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)

[–Մի ծաղիկ տուր, մի վարդ, նարգիս,–
Ասաց [արքան] մի մարդ պարտիզպանին,
Որ ցնծությամբ դնեմ կրծքիս:

Եվ ցավագին մի ղող անցավ
Ծաղիկների սրտի միջով...

–Ողորմած տեր, կարելի է,
Ինչպե՞ս քաղեմ, ո՞ր ծաղիկը,
Որ կողքինը չհառաչե:

Էջի ներքևի ազատ մասին՝
չհառաչե:
Ներիր, տեր իմ, կարելի է:
Ո՞ր ծաղիկը, ինչպե՞ս քաղեմ,
Որ կողքինը (մոտինը) <1 անընթ. > չըհառաչե:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՈՒՍԱԴԵՄԻՆ ՎԱՐԴ ՔԱՂԵԼՈՒ...» (էջ 122)

6 ինք., Տգ	Վառված վարդի տաք սիրով՝
11	Նրա սիրտն երբեք չի մեղքանա

«ԳԻՆԻՆ՝ ՁԵՌՔԻՍ, ՎԱՐԴԸ՝ ԿՐԾՔԻՍ...» (էջ 122)

ՏԱՐԲԵՐԱԿ Ա (ԻՆՔՆԱԳԻՐ)

Իմ նազելուս գրկում

Խմում եմ գինի:

Շրթունքը՝ բերնիս,

Գինին՝ ձեռքիս,

Սլացիկ մակույկի մեջ,

Սիրուն աղջիկը կրծքիս

Ես կզգամ ինձ հավասար

Աստվածների հույլին մեջ:

ՏԱՐԲԵՐԱԿ Բ («ՏԱՐԱԶ»)

Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս,

Անուշ յարս սրտովս,

Ողջ աշխարհի փարթամ արքան

Խեղճ ստրուկ է աչքումս:

Այսուհետև պիտի պաշտեմ

Սիրուն կույսին ու գինին:

Եվ ահանջս միշտ կըցանկա

Լսել երգեր քնարի,

Աչքս կուգե անթարթ նայել

Չքնաղ դեմքդ նազելի:

Բույրը վարդի ու հասմիկի

Ուչք ու միտքս կըտանի...

Ո՛չ – բույր պետք է՝ – քո մազերիդ

Ծփանքն ինձ բույրի ծով է.
Ո՛չ – մեղը պետք չէ – քո շրթունքիդ
Ալ-շաքարը ինձ բավ է:
Ես – Հաֆիզս, էլ չեմ ապրի
Առանց գինու ու կույսի:

«ՆՈՐԻՑ ՄԵՆԱԿ ԵՄ...» (էջ 124)

7 Տգ Մինչդեռ ոչ ոքին ես՝ էլ չեմ սիրում,
8 Ոչ ոքի համար է՛լ չեմ աղոթում:

«ԱՅՍ ԼԵՌՆԵՐԻՑ ՀԵՌՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ...» (էջ 127)

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ Ա)

Մի հեռավոր, [երկ<րում>] հեռու երկրում
Ասում են թե՝ բախտն է ապրում.
Ես գնացի շատերի հետ,
Աչերս արցունք տուն դարձա ետ:
Ա՛խ, հեռավոր, հեռու երկրում
Ասում են թե՝ բախտն է ապրում...

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ Բ)

– Այս լեռներից հեռո՛ւ, այն կողմ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում.
Ա՛խ, մարդկանց հետ ես էլ գնացի
Ու հետ դարձա՝ աչերս արցունք:
Այս լեռներից հեռո՛ւ, հեռո՛ւ
Մարդիկ կըսեն՝ բախտն է ապրում...

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԻՇՏԸ (էջ 132)

- 1 ԽՐ Գյուղ ու քաղաք լի է ցավո՛վ,
2 Տառապանքո՛վ, խորունկ վշտո՛վ...
3 Եվ ես կյանքի վշտից փախա,

ՎՐԱՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ (էջ 133)

- 5 ԽՐ Անո՛ւշ վարդի պես ո՛վ խաս կին ունի,
6 Պետք է մի զալում շուն էլ ունենա.
7 Կամ պետք է նրան շունը պահպանի,
ԱԾ Նորան կամ պետք է շունը պահպանի,
8 Կա՛մ թե չէ ջատու կեսուրը նորա:
10 Խ Միշտ պետք է լինի նշխուն կնկա հետ.

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)

Ռազմը գնացող զինվորներից
Նա է ուրախ, ով ուումբ (ձի) ունի,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում (լավ ձի):
Դարձողներից նա է ուրախ,
Ով գեղեցիկ կին ունի:
Պետք է լավ էլ շուն ունենա,
Կամ պետք է շունը հսկե,
Կամ թե չէ սկեսուրը:
Անհրաժեշտ է մինչև մահը
Զենքով թշնամու հետ չափվել,
Բարեկամի հետ՝ գինիով:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ (էջ 134)

- 4 ԿԱ Դու փախչում ես խոլ ժխորից սրահների կճահարկ,

8 Ուր արցունքներն թափվում են լուռ բաժակների մեջ
դատարկ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ (էջ 134)

4 ԿԱ Պսակելու վսեմն ու վեհն իր երգով:
12 Ծովապետի նման կյանքդ վտանգած,

«ՔԱՋ ՈՐՍՈՐԴ Է ԻՄ ՍԻՐՈՒՀԻՍ...» (էջ 136)

Ինքնագրի 7-րդ տողի դիմաց՝ լուսանցքում (եվ):

«ՈՐՍ Է ԱՆՈՒՄ ՍԻՐՈ ՈԳԻՆ...» (էջ 136)

Ինքնագրում՝ 3-4-րդ տողերի փոխարեն՝

Եվ մի կին է կապել ամուր
Նա իր կարթի ծայրին սուր:

Եվ մի կին է կապել ամուր
Կարթին որպես հրապույր:

Եվ մի կին է կարթին ամուր
Կապել, որպես հրապույր:

ՋԻՆԱԿԱՆ (էջ 137)

(8 – 7 դար Քրիստոսից առաջ)

ՋԻՆԱԿԱՆ ՍԻ ՀԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ
(VIII կամ VII դարից Քրիստոսից առաջ)

2 ինք. <Օվկիանում> Օվկիանի խորքում – մի
հատիկ ավազ

- 8 ինք., 2 Քամու հետ խաղում, շողշողում ունայն:
 10 Որ ծածկում էին կյանքի քո ծառը,
 11 Սակայն օրերդ ահա վերջացան –
 12 ինք. Կըռչնչանան և տերևները:
 2 Կըվերջանան և տերևները:
 13 ինք., 2 Հարուստ և աղքատ, հաղթական ասպետ
 16 ինք., 2, Ագ Նրանց գործքերը փառքի, զորության:
 17 ինք., Ագ Կյանքով ամեն ինչ կանցնի, կըմարի.
 2 Կյանքը – ամեն ինչ կանցնի, կըմարի,
 18 Միայն երբեմն մեզ կըհիշեցնե

ԱՐՈՒ ԱԼ ԱԼԱ ԱԼ ՄԱՀԱՐԻ (էջ 138)
 (973 – 1057)

ԱՐՈՒԼ ԱԼԱ ՄԱՐԻ
 (աղբերական բանաստեղծ 973 – 1057 թթ.)

- ինք. Աղանդավոր, կուսակցական, ապուշ ամեն կողմերով.
 4 Նախարարներ, որ հոգում են հարկ ու տուգանք սոսկ
 գլխի:
 5 Որոնց անխոնջ ցանկությունն է հարևանի տները
 8 Այս խավարում ման գամ, գտնեմ՝ ձեռքս լապտեր մի
 անշեջ...

ԳԱՅԼԸ ԵՎ ԱՐԱԳԻԼԸ (էջ 139)
 «ԳԱՅԼԸ ՄԻ ՕՐ ՀԱՅԿԵՐՈՒՅԹ ԷՐ ԳՆԱՅԵԼ...»

- 9 ինք. [Լսեց] Որ անցնում էր այդ տեղով,
 10 Լսեց [ճիչը] կոծը [գայ<լի>] խեղճ գայլի

ՏԱՐԲԵՐԱԿ (ԻՆՔՆԱԳԻՐ)

ԱՌԱԿ

Գայլը մեկ օր հացկերույթ էր գնացել
Իր մեկ հարուստ ազգակցին.
Այնտեղ այնպես կուշտ կերան ու խմեցին.
Գառներ, այծեր և ուլեր,
Որ կոկորդում մեկ ոսկոր էր մնացել:
Գայլն օռնում էր, հառաչում
Եվ օգնության էր կանչում:
Իրեն բախտից մեկ միամիտ արագիլ
[Լսեց] Որ անցնում էր այդ տեղով,
Լսեց [ճիչը] կոծը [գայ<լի>] խեղճ գայլի,
Ու նրա վրա զթալով՝
Իր կտուցով երկարուն
Դուրս քաշեց ոսկորն իսկույն.
Եվ կարճառոտ լակ-լակով
Հասկացրեց, որ գայլն իրեն մի վարձ տա.
-Ի՞նչ վարձ, ի՞նչ փող, այ տղա,-
Գոռաց գայլը անիրավ.-
Եվ դեռ գոհ չե՞ս, որ վիզդ ամբողջ
Իմ կոկորդից դուրս հանեցիր ողջ-առողջ:
Գնա բանիդ, այ ապերախտ երկայնավիզ,
Ու զգուշ կաց, զգուշացիր, որ մեկ էլ ճանկս չընկնիս:

ՆՈՐ ՀՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ (էջ 140)
ՀՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ (ՆՈՐ ՀՈՒՆԱԿԱՆ)

1ինք. բ Ավա՛ղ, կորցրել եմ թաշկինակս անգին,
Որ [սլահում էի] (կրում էի) միշտ սրտիս վրա.
3 ա Քաղցր մայրիկիս նվերն էր, վա՛յ ինձ,

բ

Վա՛յ ինձ, նվերն էր քաղցրիկ մայրիկիս,
Այն անուշաբույր խնձորենու տակ
Այն նվիրական խնձորենու տակ
Մի՞թե երազ էր, որ անցավ անհետ.
Պահիր քեզ, պահիր թաշկինակս անգին,
Ա՛խ, սիրտս (տուր ինձ, սիրտս) տուր ինձ ետ:

Այս տողի ներքևում՝ Ա՛խ, սիրտս բառերից հետո՝ սիրտըս,
սիրտըս տուր ինձ ետ:

«ԵՍ ԴՈՒՐՍ ԵՄ ԵԼՆՈՒՄ...» (էջ 152)

ինք.

Դեռ Հո՞ւլյա ունեմ, թե՛ անցածն եմ ողբում:
Կյանքից հուսալու արդեն բան չունեմ,
Եվ չեմ ափսոսում օրերիս անցյալ,
Որ կյանքը արթուն մնար իմ սրտում,
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, շնչեր:
Միշտ կանանչելով՝ վերաս շառաչեր:

ԻՆՔՆԱԳԻՐ Ա

Գիշերով մենակ ճամփա եմ ելնում,
[Շողում] Փայլում է ուղին մշուշի միջից.
Անապատը լուռ լսում է Աստծուն,
Աստղը աստղի հետ խոսում է հեռվից...

Հրաշալի երկինք, չքեղահանդես,
Երկիրն է [չողում<մ>] նիրհում կապույտ շողերում,
Ինչո՞ւ ցավագին տխուր եմ այսպես.
Դեռ Հո՞ւլյա ունեմ, թե՞ անցածն եմ ողբում:

Կյանքից հուսալու [ոչ մի] արդեն բան չունեմ,
Բնավ չեմ ուզում անցածին ցավել.

Ես ազատություն և հանգիստ կուզեմ,
Եվ [ես] կուզե[նայի]ի ես քնել, մոռացվել:

Սակայն ո՛չ երբեք ցուրտ քնով շիրմի...
Կուզեի հավերժ ես այնպես ննջել,
Որ կյանքը մնար արթուն իմ սրտում,
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, շնչեր...

Որ գիշեր-ցերեկ ինձ սիրո մասին
Սրտաբուխ մի երգ քաղցրաձայն հնչեր,
Եվ մշտադալար, մթամած կաղնին
Խոնարհվեր վրաս և հավերժ շաչեր:

ԻՆՔՆԱԳԻՐ Բ

Դուրս ելա մենակ ճամփա գիշերով,
Փայլում է ուղին մշուշի միջից.
Անապատը լուռ լսում է աստծուն,
Եվ աստղ աստղի հետ խոսում է հեռվից:

Հրաշալի երկինք, չքեղահանդես,
Երկիրն է նիրհում կապույտ լույսերում.
Ինչո՞ւ ցավագին տիուր եմ այսպես,
Դեռ հո՞ւյս ունեմ, թե՞ անցածն ավաստում:

Կյանքից հուսալու արդեն բան չունեմ,
Եվ չեմ ավաստում օրերիս անցյալ.
Ես ազատություն և հանգիստ կուզեմ,
Ես կուզեմ քնել և ինձ մոռանալ:

Սակայն ո՛չ երբեք ցուրտ քնով շիրմի...
Կուզեի հավերժ ես այնպես ննջել,

ա Որ կյանքը արթուն մնար իմ սրտում:
բ Որ կյանքի ուժը նիրհեր իմ սրտում,
Այս տողի իմ սրտում բառերի տակ՝ կրծքիս տակ:
Եվ կուրծքս մեղմով բարձրանար, շնչեր:

Որ գիշեր-ցերեկ ինձ սիրո մասին
Սրտաբուխ մի երգ քաղցրաձայն հնչեր,
Եվ սաղարթախիտ, մթամած կաղնին
Հավերժ դալարուն՝ վերաս շառաչեր:

ԻՐ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ (էջ 160)

1 ինք. Նա, որ հիմա հանգչում է այստեղ,
2 Արժանի է գութի ավելի, քան նախանձի.
5ա Անցորդ, սո՛ւա, ծալտուն չհանես,
բ Անցորդ, լո՛ւռ, աղմուկ չանես,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում (կամաց գնա):
8 Որ քնում է խեղճ Սկարոնը:
Բանաստեղծության վերջում՝ էջի ազատ մասին՝
լռիկ, անձայն
լռիկ, լռիկ:
կամաց-կամաց:

«ԵՐԵԿ ԷՐ, ԵՎ ԺԱՄԸ ՎԵՑԻՆ...» (էջ 161)

Ինքնագրի 1-ին տողի փոխարեն՝ էջի ներքևի ազատ մասում՝

Երեկ ժամը վեցին մենակ:

ԱՆՏԻՊ ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԳՆԵՐ

«ԾԱՂԿԱՆՈՑՈՒՄ ԲԱՅՎԵԼ ԷՐ ՄԻ ՇՔԵՂ ՎԱՐԴ...» (էջ 164)

ինք. Ու մրմնջաց. — Ես այստեղից չեմ գնա:
Այս տողից հետո՝

[Վարդի բույրով, վարդի դեղով հմայված՝

Գիշեր֊ցերեկ դայլայլում էր Սոխակը. —

«Ես կյանք չունիմ, ես սեր չունիմ առանց քեզ,]

17-րդ տողի լսեց գովքը Սոխակի բառերի վերևում՝ հմայ-
ված անուշ երգով:

21-րդ տողի սրա բառի վերևում՝ հենց այս.

24-րդ տողի *Մերթողեն* բառի ներքևում՝ (*Մերթողեն*) (գովեր-
գեն):

31-32 Այդ բուրմունքը հողի բույրն է մշտապես,

Որ իմ երգին անապառ ուժ է բաշխում:

36-րդ տողի փոխարեն՝ լուսանցքում՝

Որ սլանամ դեպի հեռուն, հեռուներ...

«ՕՎԿԻԱՆՈՍԻ ՄԵՋ ԿԱՊՈՒՅՏ...» (էջ 166)

1 ինք. Օվկիանոսի մեջ [անդորր] կապույտ, ծաղկեփնջի
պես շքեղ

5 Եղնիկ, ծաղիկ ու թիթեռ, թև ու թռչուն ու մարդիկ:

7 Նրանց վրա իջնում էր անմահու[թյան] [վա<ո>] ջինջ
ցողը,

8 Եվ վերստին մանկացած՝ ճախրում էին ու երգում

9 Եղնիկ, ծաղիկ ու թիթեռ, թև ու թռչուն ու մարդիկ:

10 [Երբ [հոգնու[թյան] [ծերու[թյան] խոր ծերու[թյան]
ցուրտ ճյուղն էր նստում]

Եվ հոգնու[թյունն էր բեկում նրանց թևերը սիրո,

22-րդ տողի *հետը իրենց սերերի բառերի վերևում՝ ուրիշ ասիեր, հեռու ասի:*

Երկրորդ էջի ներքևի ազատ մասին՝ այս բառերի փոխարեն՝
Իրենց տենչի ու իրենց սերերի հետ անթառամ:

Անմահության աղբյուրը գնալու ժամն էր արդեն:

27 *Դարձավ ինչպես ծաղկաբույր, դեռափթիթ մի աղջիկ.*

32 *Ասաց մայրը քնքուշ, ձայնը՝ արծաթ սրնգի:*

33 *-Դու իմ մայրը չես իսկի,- ասաց որդին*
[<տրտ>մած] տխրամած:

34 *-Ես եմ, ես եմ քո մայրը, իմ սիրունիկ, իմ սիրուն:*

39 *-Եթե դու իմ մայրիկն ես և սիրում ես եթե ինձ,*

42 *Մայրն ասում էր՝ կըմենեմ, թե առաջվա պես*
դառնամ.

56 *[Հրամանը սասան<իչ>] Իշխանության սասանիչ*
Հրամանը չարագործ

«ՄԵՆԱԿ ՆՍՏԱԾ ՀՐԵՂԵՆ ՁԻՆ...» (էջ 168)

17 *ինք. Մթին ժայռի [մթին] մութ ստվերում*

20-րդ տողի դիմաց՝ (*լիճը ցած*):

25 *Այնտեղ՝ լճում, [մի] ճոխ պալատ կա՝*

29 *Ձորի [վրա] կողքին մեծ անտառ կա,*

31 *Հով քամի էր փնդուց [զա<լիս> փչում,*

ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ՏՊԱԳՐՎԱԾ ԱՌԱԿՆԵՐ

ՄՊԻԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ (էջ 172)

ինք. 3-րդ տողից հետո՝

[Հոտոտեց ծածուկ]

ինք. 5-րդ տողից հետո՝

[Ոչինչ չգտավ]

6 Գալարվող փորով նստավ սրտաբեկ:

10 Լսեց հոգեցունց անուշ ծվծվոց:

15 [Աչքե՜րը] աչերը մուկի:

22 Կարոտել [էի] եմ քեզ:

27-28 Այդ ծակից ելիր, այս ծակը մտիր:

33 ա Քո կարոտի մեջ ինձ համոզեին,

բ Ու կարոտիդ մեջ ինձ համոզեին,

Ինք. 36-րդ տողի շանտըղությունն բառի վերևում՝ շանոր-
դություն:

«ՀԱՍՏԱԳԼՈՒԽ ՄԻ ԿՐԻԱ ԿԱՐ...» (էջ 174)

5 ինք. Այս [մեծ խորհուրդն] միտքն հայտնեց [նա] երկու
բաղի

7 Մինչ դուռը Բաղդատի:

Ինք. 12-րդ տողից հետո՝

[Եվ քակտեցին մի ճյուղ]

[Եվ կտրեցին մեր բաղերը

Մի բարակ ճյուղ չոր մացառից

Եվ բռնելով նրա ծայրից՝]

13 Եվ կտրելով մի բարակ ճյուղ [չոր մաց<առից>]
մացառից՝

23 [Նայեք, նայ<եք>] <1 անընթ.> կրիաների

ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ՏՊԱԳՐՎԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՆՀԵՅՁԵՐԸ ՎԵՆՈՒՄԻՆ (էջ 181)

ինք. Փշերով պսակել կցանկամ:

ԲԱՆՎՈՐԻ ԵՐԳԸ (էջ 184)

- ինք. Մենք ունենք անկողին, մենք ունենք երեխա,
Օ՛ր, իմ թանկագին կին,
Բայց մեզ պակսում է մի փոքրիկ, չնչին բան.
Իմ մանուկ թանկագին,
11 Սավառնող ծիծեռնի կարվանն ենք տեսնում,
12 Ա՛խ, գիտես, այդ ժամին շորը չէ, որ չունինք,

ԲԱՐԵԼՈՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՄՆԵՐԻՑ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐՔՈՂ ԱՐԵՎԻՆ (էջ 185)

- 4 ինք. Բ Մեծ աստվածները բոլորը իրենց հայացքը լույսիդ են
ուղղում:
Ինչպես մի փեսա հանգչում ես դու լի ուրախությամբ
և շնորհքով.
7-րդ տողի հասնում ես բառի վերևում՝ անցնում ես.

«ԴԵՊԻ ԱՅՆ ԱՇԽԱՐՀԸ, ԱՌԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ...»
(էջ 186)

- 2 ինք. Ուղղվում եմ ես ահա, փռում եմ թևերս, ինչպես մի
թռչուն.
4-րդ տողի Իրկալա Աստծու բառերի վերևում՝ (մահի (երևի):
8 Այն վայրը դեպի, ուր փռու չեղջն է նրանց սնունդը,
աղբը՝ կերակուր.
10-րդ տողի դարպասները բառի վերևում՝ դրանդիներդ.

ԲՈՒԴԴԶԱՅԻ ԽՈՍՔԵՐԻՑ (էջ 187)

11 ինք. Որդն ու ճիճերն կը քայքայեն...

«Ո՛ջ, ԱՅՍՔԱՆ ՎԱՌ՝ ՔԵՉ ՁԵՄ ՍԻՐՈՒՄ...» (էջ 188)

15 ինք. Համբարցած [էին] են. քո աչերում՝

«ԳԱԳԱԹՆԵՐԸ ՎԵՍ...» (էջ 193)

ԻՆՔՆԱԳԻՐ Ա

*Բոլոր գաղաթների վրա
Անդորր է (խաղաղություն կա)
Բոլոր տերևների մեջ
Ձեռ նշմարի դու*

Այս և հաջորդ տողի դիմաց նշան է դրված և էջի ներքևի ազատ մասին նշված է՝

*Ձեռ զգա, չեռ նշմարի
Ոչ մի շունչ. չարժու՜մ:
Հազիվ մի շունչ,
Թռչունները լռել են անտառում.
Սպասիր, շուտով
Դու էլ կհանդչես:*

ԻՆՔՆԱԳԻՐ Բ

*Բոլոր գաղաթների վրա
[Հան<գատություն>] Անդորրանք կա.*

Այս տողի *Անդորրանք* բառի -անք բաղադրիչի վերևում՝ ություն.

Բոլոր սաղարթների մեջ
[Զգում ես] Կնշմարես դու
Հագլիվ մի շունչ.
Թռչունները լռել են
Անտառում.
Սպասիր, շուտով
Կհանգչես և դու:

Էջի ներքևի ազատ մասին նշված է. «*Dichten* - խտացնել, բառախաղ: Վարպետի ուժը խտացման մեջ է»:

ԽԱՂԱՂ ԾՈՎ (էջ 194)

5 ինք. Այլպես մեջ ո'չ մի հողմ,

«ԵՍ ՈՒ ԴՈՒ ՄԻԱՍԻՆ...» (էջ 197)

Ինքնագրի 5-րդ տողի աջում բառի ներքևում (բռում):

6 Շրջում են մուշ-անուշ երազի աշխարհում.

8 Զարկում է մեր բախտի ժամերը երջանիկ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՑ

Ավետիք Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակությունն հերոդոթ հատորը համախմբում է Վարպետի չափածո լեզենդները, բայլադները, ավանդությունները, առակները և չափածո թարգմանությունները: Ստեղծագործությունները դասավորված են խիստ ժամանակագրական կարգով: Որոշ գործերի չթվագրված ինքնագրերի գրություն թվականը որոշելիս նկատի են առնվել ձեռագրի յուրահատկությունները, բանաստեղծական տեսրերում դրանց նախորդող կամ հաջորդող երկերի թվագրումը և այլն՝ առաջնորդվելով Ավ. Իսահակյանի երկերի մեկհատորյակում հրատարակված ստեղծագործությունների վերջնական թվագրմամբ (հատորի բնագրերը կազմել է անվանի իսահակյանագետ Արամ Ինճիկյանը՝ Ավետիք Իսահակյանի բծախնդիր ընտրություններ և հսկողություններ): Բանահյուսական հենք ունեցող ստեղծագործությունների սկզբնաղբյուրների որոշման հարցերում, ինչպես և մի շարք բնագրագիտական տվյալներ ճշտելիս հիմնվել ենք Արամ Ինճիկյանի բերած տեղեկությունների վրա (ԵԺ 11, Ծանոթագրություններ):

ԼԵԳԵՆԴՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԲԵԹՂԵՀԵՍԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ (էջ 7, 200)

Գրել է, ըստ ինքնագրի, 1893 թ. հունվարի 5-ին Թիֆլիսում: Պահպանվում է՝ ԱԻԸԱ: Առաջին անգամ տպագրվել է՝ Ար, 1893, գիրք Ա, էջ 162, այնուհետև, որոշ փոփոխություններով՝ Բ 1, 132: Նույն տեքստը հետմահու՝ «էջմիածին», 1967, N Ա-Բ, էջ 54: Ժողովածուներում չի գետեղվել:

Տպագրվում է Բ 1-ից:

Բեթղեհեմ - Հուդա-խորայեյյան պետության թագավոր Դավթի ծննդավայրը: Ըստ Նոր Կտակարանի՝ այս սրբազան քաղաքում է ծնվել նաև Հիսուս Քրիստոսը: Այն անձավի վրա, որտեղ, ըստ ավանդության,

ծնվել է Փրկիչը (Հմմտ. Ղուկ. Բ 11-12), հետագայում կառուցվել է Ս. Ծննդյան տաճարը:

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ԲԱԲԵԼՈՆՈՒՄ (էջ 8, 200)

Գրել է, ըստ ինքնագրի, 1893 թ. մայիսի 20-ին Ալեքսանդրապոլում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԽՖ 4-II, 94, սկզբից՝ թերի: Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1893, N 25, էջ 387, այնուհետև, որոշ փոփոխություներով՝ Բ 1, 133-134: Ժողովածուներում չի գտնվել:

13-15-րդ տողերի համար տե՛ս «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս ալ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ եթէ ոչ յիշեսցից զքեզ, թէ ոչ նախ նուազեսցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ» (Սաղմոս Դավթի ՃԼԶ (136), տող՝ 5-6):

Տպագրվում է Բ 1-ից:

ԻԳԻԹ ՍԱՐԴԱՐ (էջ 10, 200)

Գրել է, ըստ ինքնագրի, 1894 թ. Լայպցիգում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԽՖ 4-II, 95-98: Առաջին անգամ տպագրվել է՝ Ար, 1894-1895, գիրք Ա, էջ 114-116: Նույն տեքստը՝ ԵԺ II, 162-164, ՀԴԳ, 286-288:

Տպագրվում է Ար-ից:

«ԻՐԻՑԿՆԿԱ ԱՂԲՅՈՒՐԸ» (էջ 13, 201)

Գրել է 1897 թ. Ղազարապատում՝ «Հացթուփ իրիցկինը» ավանդության հիման վրա: Պահպանվում է երկու ինքնագիր՝ Ա ինքնագիր (ԳԱԹ, ԱԽՖ 12-II, 24, սկզբից՝ թերի, թվագրված՝ 1891 թ. Բեչքիլիտե) և Բ ինքնագիր (ԳԱԹ, ԱԽՖ 4-II, 99-107, թվագրված՝ 1894 թ. սեպտեմբեր. Լայպցիգ). վերջինս տարբերակ է: Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1897, N 44, նոյեմբերի 16, էջ 689-691՝ «Հայկական լեզենդա» ենթավերնագրով և առաջին էջի տողատակի հետևյալ ծանոթությամբ. «Այս աղբյուրը խափանված ջերմով է Շիրակում, Երազգավորսի մոտերքը», ապա, որոշ փոփոխություներով՝ Ապ, 1936, N 72, փետրվարի 9, «Շիրակի ավանդակեպ» ենթավերնագրով և վերջում՝ որոշ բառերի բացատրություներով: Նույն տեքստը՝ ԽԳ, 1938, N 6-7, Հուհիս-Հուլիս,

էջ 95-96, Ըն II, 15-16, ԵԺ 2, 113-114, ԵՄ, 131-132, Եր II, 133-137, ԵԺ II, 159-161, ՀԴԳ, 284-285:

Այս ավանդուծյան Շիրակի տարբերակը տե՛ս Աղ. Մխիթարյան, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Թ., 1901, էջ 74:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ (էջ 15, 209)

Գրել է 1902 թ. Շուշիում: Ինքնագրի տեղն անհայտ է: Առաջին անգամ տպագրվել է՝ ՄՃ, 1902, N 11, նոյեմբեր, էջ 95, ապա, մեկ փոփոխությամբ՝ Բ 1, 89 և նույնպես մեկ փոփոխությամբ՝ Բ II, 128-129: Նույն տեքստը՝ Ըն II, 22-23, ԵԺ 2, 115, ԵՄ, 132-133, Եր II, 138-139, ԵԺ II, 165, ՀԴԳ, 288: Առաջին երեք հրատարակություններում լեզենդն անվերնագիր է:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՄԱՅՐԸ (էջ 16, 209)

Գրել է 1907 թ. Ալեքսանդրապոլում: ԳԱԹ, ԱԻՖ 262-II-ում պահպանվում են ինքնագիրը՝ սկզբից և վերջից թերի (բացակայում են 1-16-րդ և 59-62-րդ տողերը), և «Խարխախ» օրաթերթում տպագրված օրինակը՝ հեղինակային ուղղումներով: ԳԱԹ, ԱԻՖ 279-II-ում կա առաջին քառասողի երկու մշակում: Առաջին անգամ տպագրվել է՝ Խր, 1907, N 39, օգոստոսի 19՝ «Խեղճ մայրը (լեզենդ)» վերնագրով, ապա, զգալի փոփոխություններով՝ ԱԾ, 48-50, այնուհետև, որոշ փոփոխություններով՝ ԳԹ, 1938, N 5, հունվարի 31՝ «Խեղճ մայրը (Շիրակի լեզենդներից)» վերնագրով: Վերջնական մշակումը՝ Ըն II, 24-25: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 116-118, ԵՄ, 133, Եր II, 140-142, ԵԺ II, 169-171, ՀԴԳ, 291-293: Առաջին երեք հրատարակություններում ավանդապես սկսվում է 11-րդ տողից:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԼԵՅԼԻ ՈՒ ՄԵՋԼՈՒՄ (էջ 19, 214)

Գրել է 1910 թ. Ղազարապատում: Ինքնագրի տեղն անհայտ է:

ԳԱԹ, ԱԽՖ 266-II-ում պահպանվում են լեզենդի առանձին հատվածների մշակումներ: Առաջին անգամ տպագրվել է՝ Հր, 1911, N 63, մարտի 24՝ «Լեյլի և Մեջլում. Հովիվ Մախսուդի պատմածը (մի էջ «Ուստա Կարո» անտիպ վեպից)» վերնագրով, ապա, որոշ փոփոխություններով՝ Գտ, 1913, N 5, մայիս, էջ 79-80՝ «Ուստա Կարոն Հովիվների մոտ (մի գլուխ «Ուստա Կարո» անտիպ վեպից» վերնագրով, այնուհետև փոփոխված՝ Բ II, 273-277: Նույն տեքստը՝ ԸԵ, 44-46, ԵԺ 2, 119-122, ԵՄ, 134-135, Եր II, 143-147, ԵԺ II, 175-178, ՀԴԳ, 295-298:

Լեզենդի թեման համահունչ է իր իսկ՝ բանաստեղծի զգացումներին: 1901 թ., իր կորցրած սիրո ցավագին վերհուշներին անդրադառնալով, բանաստեղծը «Թախծում ու երագում » է. «...նայեցի երկինք, տեսա երկու աստղ, որ երկնքի ծայրերից սիրալիր-ճաճանչալիր հայացքներով իրար համբուլընել, ողջույններ էին ճառագայթում. հիշեցի մանկությունից լսած մի հին զրույց՝ աստղերի սերը, որը և պատմում եմ ստորև:

Երկնքում երկու աստղ կա, աստղ-սրտեր, որոնք իրար շա՛տ խորը սիրելիս են եղել, բայց իրար չեն արժանացել, իրար մոտրագի չեն հասել. չար աստղերը նրանց իրարից բաժանել են, մեկին հեռացրել են դեպի արևելք, մյուսին՝ դեպի արևմուտք: Երբ համբարձման գիշերը երկինք ու գետինք իրար համբուլում են, աստղերը իրար համբուլում են,– դրանք էլ արևելքից և արևմուտքից գալիս են, իրար հանդիպում, կեցողիներին, մի վայրկյան, իրար գրկում, համբուլում և էլի բաժանվում են. արևելքից եկողը գնում է արևմուտք, արևմուտքից եկողը՝ արևելք:

Եվ այս՝ տարին մի անգամ» (Հ, 282-283): Նույն տրամադրությունն է արտահայտված նաև Ավ. Իսահակյանի՝ 1902 թ. արված մեկ այլ գրառման մեջ: Վերապատմելով Համբարձման գիշերը, «եբր Բրիստոսի սիրով լցվում, ոգիանում է աշխարհը», միմյանց կարոտով զոնող և ան-միջապես բաժանվող սիրող սրտերի մասին ժողովրդական ավանդությունը, բանաստեղծը դառնություն մտորում է. «Չար աստղերը չեն թողնում, որ նրանք իրար հասնեն. չար աստղեր... Իսկ չար մարդիկ չեն թողնում՝ երկրում սիրող սրտերը իրար հասնեն... Ա՛յս, հանուն Բրիստոսի սիրուն,– թողե՛ք մարդկանց սրտերը իրար սիրեն. սիրո մեջն է Բրիստոսի գաճը. մի՛ փշրեք այդ դաճը մարդկանց սրտերում» (Հ, 292): Հավելենք, որ իր մորից լսած այս ավանդությունն է գիմել նաև Հովհ. Թումանյանը իր «Անուշ» պոեմի վերջերգում:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐԸ (էջ 23, 217)

Գրել է, ըստ ինքնագրի, 1914 թ. նոյեմբերի 27-ին Բեռլինում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ 267-11: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀԱ, 47-56, ապա, որոշ փոփոխություններով՝ Գտ, 1921, N 7, էջ 84-87: Նույն տեքստը՝ Բ II, 286-291, ԸԵ II, 52-55, ԸԵԵՄ, 163-165, ԵԺ 2, 123-126, ԵՄ, 136-137, Եր II, 148-153, ԵԺ II, 179-182, ՀԴԳ, 298-301: Իսահակյանագետ Հովհ. Ղանալանյանը արեւելյան «Անթար» լեզենդի խառնակա՝ նական այս մշակման առնչությամբ հիշում է բանաստեղծի խոսքերը. «Մեր նախահայրերը» սկզբնապես արձակ գրեցի, ինչպես և «Հավերժական սերը»: Հետագայում էր, որ վերածեցի այն չափածոյի, և գիտե՞ս՝ մի շնչով գրվեց: Իմ այդ երկու ստեղծագործություններն էլ, հակառակ իմ սովորության, հետագայում ոչ մի փոփոխության, վերամշակման չեմ ենթարկել» (ՄԴ, էջ 39): Լեզենդի արձակ տարբերակը լույս է տեսել՝ «Բագին» («Ազատամարտի հավելված»), 1912, N 7 (79), փետրվարի 2, էջ 8-10՝ «Հավիտենական սերը» վերնագրով:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԸ (էջ 28, 218)

Գրել է 1915 թ.: ԳԱԹ, ԱԻՖ 263- II-ում պահպանվում է ինքնագրի մի տարբերակ՝ «1916 թ. Ժնև» նշումով: Առաջին անգամ տպագրվել է՝ ԵՄ, 137: Նույն տեքստը՝ Եր II, 154, ԵԺ II, 227, ՀԴԳ, 327-328:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ (էջ 29, 218)

Գրել է 1917 թ. Հունվարին Ժնևում: Ինքնագրի տեղն անհայտ է: ԳԱԹ, ԱԻՖ 11-II, 22-25-ում պահպանվում է լեզենդի մի մշակում՝ թվագրված 1917. Հունվար. Ժնև, իսկ ԳԱԹ, ԱԻՖ 182-II-ում՝ մի տարբերակ՝ «Նախահայրերը» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԺ, 1917, N 7-8, Հուլիս-օգոստոս, էջ 63-65, ապա, որոշ փոփոխություններով՝ ՀԱ, 37-41, Բ II, 278-282: Նույն տեքստը՝ ԸԵ II, 47-49, ԸԵԵՄ, 166-168, ԵՄ, 138-139, Եր II, 155-157, ԵԺ II, 183-185, ՀԴԳ, 302-304:

Լեզենդը նախապես գրվել է արձակ տարբերակով (տե՛ս «Հավերժ

ժական սերը» բալլադի ծանոթագրությունը): Երկի գրության կապակցությամբ Հովհ. Ղանալանյանը բերում է հեղինակի վկայությունը. «Պոեմը գրել եմ 1917 թ. Ժնևում: Գրության շարժառիթը 1915-16 թվականներին գերմանացիների հրահրած և թուրքերի ձեռքով ի կատար ածված հայկական ջարդերն են: Այդ կոտորածների անմիջական սուղավորության տակ եմ գրել գործս, որը մի տեսակ հակաթեզ է, հակաթույն սուլթանիզմի այդ հոգեհարստական քաղաքականության դեմ: Ասելիքս այն էր, որ ինչքան էլ սուլթանը մոլեգնի, հայ ժողովուրդը երկրի վրա կա, պիտի լինի այնքան ժամանակ...

Մինչև արևը հանգչի, և ցուրտ աճյունը նրա

Չյունեն համայն ազգերի հայրենիքների վրա» (էջ 38-39):

Տպագրվում է ԵՄ-ից:

Ուրարտու - Ուրաշտու (ասոր.), Ուրարտ, Արարտ, Ուրարատ, Արարատ (Հին եբր.) - լեզվական ընդհանրություն ունեցող և արյունակից ցեղերի Հիման վրա ձևավորված հայկական պետական միավորում (մ.թ.ա. 9 - 6-րդ դարեր):

Խալդի - Ուրարտուի գերագույն և ռազմի աստվածը:

Ասուր - Աշուտ - Ասորիքի գերագույն աստվածը:

Սարգուրիս - Սարգուրի Ա - Ուրարտուի գահակալ (մ.թ.ա. 835-824): Ընդարձակել է Ուրարտուի սահմանները՝ հիմնադրելով Տուշպա բերդաքաղաքը:

Փոյուզիական գոյակներ - Փուլուգիա - Հնդեվրոպական ցեղերով բնակեցված հնագույն մարզ Փոքր Ասիայի Հյուսիս-արևմուտքում:

Վահագն - հայկական դիցարանի ռազմի աստվածը: Չար ուժերը մարմնավորող վիշապներին հաղթելու շնորհիվ աստցել է Վիշապաքաղ անունը:

Աստղիկ - սիրո և գեղեցկության աստվածուհին հայկական դիցարանում. Վահագնի հարսնացուն:

ԱՍՊԵՏԻ ՍԵՐԸ (էջ 32, 223)

Գրել է 1917 թ. Ժնևում: Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԾ, 1917, N 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 64-65, այնուհետև, որոշ փոփոխություններով՝ ՀԱ, 42-46, ապա, աննշան փոփոխություններով՝ Բ II, 283-285: Նույն տեքստը՝ ԸԵՆՄ, 169-170, եժ 2, 130-131, ԵՄ, 141-142 եր II, 166-168, եժ II, 186-188, ՀԴԳ, 304-306:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՄՈՐ ՍԻՐՏԸ (էջ 34, 223)

Գրել է 1919 թ. մարտի 15-ին ժնկում՝ «Հայկական ավանդու-թյուն» ենթավերնագրով՝ հայկական ժողովրդական մի ավանդու-թյան հիման վրա: «Լսել եմ 1910թ. Կարինում, - հիշում է Ավ. Իսահակյանը: - Թուրքերն էլ ունեն: Հայկականը տարբերվում է նրանով, որ երկու անգամ խուլս տալուց հետո տղան աղջկա կամքը կատարում է երրորդ անգամ: Լև Տոլստոյը, Ֆրանսիացի ժան Ռիշպեն էլ ունեն: Սրա մի վարիանտը դրել եմ «Ուստա Կարո»-ի մեջ»: Ինքնագրի տեղը հայտնի է: Եժ Ու-ում հրա-տարակվել է ինքնագրի լուսատիպ պատճենը՝ «15 մարտի. 19 թ.» նշու-մով: Առաջին անգամ տպագրվել է՝ Հք, 1922, N 3016, ապրիլի 1, այնու-հետև անփոփոխ՝ ԱԾ, 46-47, ապա, աննշան փոփոխվածքներով՝ Բ II, 271-272: Նույն տեքստը՝ Ըե II, 26-27, ԸեԵՄ, 174, Եժ 2, 132-133, ԵՄ, 142-143, Եր II, 169-170, Եժ II, 189-190, ՀԴԳ, 306-307:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ (էջ 36, 224)

Գրել է 1920 թ.: Ինքնագրի տեղն անհայտ է: ԳԱԹ, ԱԻՖ 268- Ու-ում պահպանվել են լեզենդի 21-23 և 32-րդ քառաստղերի մշակումները: Առաջին անգամ տպագրվել է՝ ԽԳ (Բ), 1940, N 9, էջ 5-9՝ «Հայ ժողովրդի սիրելի գոտանը» խմբագրական հոդվածով, այնուհետև, զգալի փոփոխու-թյուններով և ծավալուն հավելումներով՝ Եժ 2, 134-140 և վերամշակված տարբերակը՝ ԵՄ, 143-145: Նույն տեքստը՝ Եր II, 171-178, Եժ II, 191-196, ՀԴԳ, 307-312: Ժողովրդական ասքի մշակման արձակ տարբերակը տպագրվել է՝ ՀԿ, 1934, N 1, հունվարի 6, էջ 10-12:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՐԱԶԸ (էջ 43, 228)

Գրել է, հավանաբար, 1921 թ. ժնկում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 462- Ու: Նույն համարի տակ է պահպանվում նաև այս երկի արձակ

տարբերակը՝ բազմաթիվ մշակումներով, որ տպագրվել է՝ Եր II, 197-206: Առաջին անգամ տպագրվել է՝ Ագ, 1922, N 1, հունվար, էջ 9-18: Հետմահու տպագրվել է՝ ՄԳ, 1966, N 8, օգոստոս, էջ 3-9, ԵԺ II, 197-206 (Ագ-ի հեղինակային ուղղումներով օրինակից, որը չի պահպանվել): Հովհ. Ղանալանյանն իր հուշերում բերում է բանաստեղծի վկայությունը. «Գրել եմ հին ձևով, կաշկանդող չափերով: Վենետիկում եղածս ժամանակ ուզում էի վերածել արձակի: Սկզբից էլ արձակ էի ուզում գրել, բայց վենետիկցի հայերը ասին, թե նյութը բանաստեղծական է, ես էլ չափածո գրեցի» (ՄԻ, էջ 24-25):

Տպագրվում է Ագ-ի՝ հեղինակային ուղղումներով տեքստից:

ՍԻՐՈ ՎԵՊԸ (էջ 54, 229)

Գրել է, հավանաբար, 1921 թ.: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ, ԱԻՖ 255-II, 237-242-ում պահպանվում է լեզենդի սևագրությունը, իսկ ԳԱԹ, ԱԻՖ 265-II-ում՝ Ա ինքնագիրը՝ վերջից թերի (պահպանվել են 1-33-րդ տողերը՝ աննշան փոփոխություններով) և լեզենդի մի այլ մշակում (Բ ինքնագիր)՝ բոլորն էլ անթվակիր: Մեկ այլ՝ Գ ինքնագրի տեղը հայտնի չէ. այն առաջին անգամ տպագրվել է՝ ԵԺ II, 172-174, ապա՝ ՀԴԳ, 293-295: Արձակ տարբերակը գրել է ավելի վաղ՝ 1911 թ. Թիֆլիսում, որ տպագրվել է՝ Հր, 1911, N 51, մարտի 10: Առաջին անգամ տպագրվել է՝ «Նավասարդ», Նյու Յորք, 1922, N 6, հունիս, էջ 322-323, ապա՝ ԵԺ II, 172-174, ՀԴԳ, 293-295:

Տպագրվում է «Նավասարդից»:

ԱՐԱՔՍԻ ԾՆՈՒՆԴԸ (էջ 57, 233)

Գրել է, հավանաբար, 1922 թ.: ԳԱԹ, ԱԻՖ 102-II-ում պահպանվում է ինքնագրի մի տարբերակը՝ գրի առնված 1904 թ. Նոր Նախիջևանում, «Արագի ծնունդը (հայկական ավանդություն)» վերնագրով և վերջում որոշ բառերի բացատրություններով: Առաջին անգամ տպագրվել է՝ Ագ, 1922, N 2, փետրվար, էջ 69-71՝ «Աշուղ Վշտալիի գրույցը. հասաված «Ուստա Կարոյից» ենթավերնագրով՝ հետադասյում իր «Ուստա Կարո» վնասված ներառելու նպատակով: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 141-143, ԵՄ, 145-146, Եր II, 179-182, ԵԺ-II, 166-168, ՀԴԳ, 289-291:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐ (էջ 60, 243)

Գրել է, ըստ ինքնագրի, 1926 թ. հունիսի 27-ին Վենետիկում: ԳԱԹ, ԱԽՖ 9- II, 24-25-ում պահպանվում է ինքնագիրը՝ «Սրտանվերը [Սիրտը տվողը] . Ավանդավեպ» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ «Ընդարձակ օրացույց Ազգային հիվանդանոցի» հանդեսում, Կ.Պոլիս, 1927, էջ 70: Նույն տեքստը՝ ԸԵ II, 21, ԵԺ 2, 144, ԵՄ, 146, Եր II, 183, ԵԺ II, 207, ՀԴԳ, 312-313:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱԹԹԻԼԱՆ ԵՎ ԻՐ ՍՈՒՐԸ (էջ 61, 243)

Գրել է 1932 թ. Փարիզում: Ինքնագրի տեղը հայտնի չէ: ԳԱԹ, ԱԽՖ 23-Ի-ում պահպանվել է լեզենդի մեքենագիր օրինակի առաջին հատվածը (1-58-րդ տողեր)՝ «Աթթիլա (առասպել)» վերնագրով, վրիպակների հեղինակային շտկամաներով և վերջում՝ «1932. Փարիզ» նշումով: Նույն հատվածն առաջին անգամ տպագրվել է՝ ՀԿ, 1932, N 46, նոյեմբերի 12, էջ 1149: Նույն տեքստը՝ ԸԵ II, 33-36, ԸԵԵՄ, 175-178, ԵԺ 2, 145-148, ԵՄ, 146-148, Եր II, 184-189, ԵԺ II, 208-211, ՀԴԳ, 313-317:

Տպագրվում է ԵՄ-ից:

Աթթիլա-Աթիլա (ծննդ. թ. անհտ. - 453) - հոների առաջնորդ, որ նվաճեց Դանիայից մինչև Դանուբ ընկած երկրները, Արևելահռոմեական կայսրությունը, Գալիան, Հյուսիսային Իտալիան: Նրա օրոք հոների պետությունը հասավ իր հզորություն զազաթնակետին, իսկ նրա մահից հետո քայքայվեց:

ԱՎԳՈՒՍՏԻՆՈՍԻ ՏԵՍԻԼՔԸ (էջ 66, 244)

Գրել է 1932 թ. Փարիզում: Ինքնագրի տեղը հայտնի չէ: ԳԱԹ, ԱԽՖ 2232-II-ում պահվում է ՀԿ-ի տեքստը՝ հեղինակային ուղղումներով և 1932 թվագրումով: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀԿ, 1933, N1, հունվարի 7, էջ 9՝ «Սուրբ Ավգուստինոսի տեսիլքը» վերնագրով, ապա,

մի քանի փոփոխություններ՝ ԸԵ II, 32, ԵԺ 2, 149, ԵՄ, 148, ԵՐ II, 190-191, ԵԺ II, 212, ՀԴԳ, 317:

Տպագրվում է ԵՄ-ից:

Ավգուստինոս – Ավգուստինոս Երանելի Ավրելիոս (354-430) – քրիստոնեական աստվածաբան և փիլիսոփա, ավգուստինյանի հիմնադիրը, կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների սուրբ:

ՍԻՐԱՀԱՐ ՆԱԴՄՆ (էջ 67, 245)

Գրել է 1934 թ. Փարիզում: Ինքնագրի տեղը Հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԱԹ, 1937, N 23 (162), Հուլիսի 27՝ «Սիրահար Նադուն (քրդական մոտիվ)» վերնագրով, ապա, երկու փոփոխությամբ և տասը տողանոց հատվածի հավելումով՝ ԸԵ II, 41-43, ԵԺ 2, 150-152, ԵՄ, 148-149, ԵՐ II, 192-195, ԵԺ II, 213-215, ՀԴԳ, 317-320:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀՐԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ (էջ 70, 245)

Գրել է, ըստ ինքնագրի, 1935 թ. Հուլիսի 11-ին Փարիզում: ԳԱԹ, ԱԺՖ 282- II-ում պահպանվում է ինքնագրի տարբերակը՝ «Ըստ Թալմուդի» վերնագրով: Առաջին անգամ «Ըստ Թալմուդի (լեզենդ)» վերնագրով տպագրվել է՝ ՀՕԿ, 1935, N 5-6, մայիս-Հունիս, էջ 283, ապա, երեք փոփոխությամբ և «Հրեական առասպել» վերնագրով՝ ԸԵ II, 18, ԸԵԵՄ, 179, ԵԺ 2, 153, ԵՄ, 149, ԵՐ II, 196, ԵԺ II, 216, ՀԴԳ, 320:

Տպագրվում է ԵՄ-ից:

Յանվե – Եհովա – Հուդայականության, այնուհետև՝ 11-րդ դարից, Հրեական բոլոր ցեղերի գլխավոր աստվածը:

ՅԱՀՎԵԻ ՎՐԵԺԸ (էջ 71)

Գրել է, ըստ ինքնագրի, 1936 թ. Հունվարի 25-ին Փարիզում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԺՖ 3-II, 13-15՝ «Հրեական ավանդակեպ» ենթավերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ Ան, 1936, N 1-2, էջ 4-5, ապա, առանց փոփոխությունների՝ ԸԵ II, 19-20, ԸԵԵՄ, 181-182, ԵԺ 2, 154-155, ԵՄ, 150, ԵՐ II, 197, ԵԺ II, 217-218, ՀԴԳ, 321-322:

Տպագրվում է ԵՄ-ից:

Մովսես – մարգարե, Հրեական ցեղերի առաջնորդ, Հուդայականության հիմնադիր: Աստծո կոչով Հրեաներին ազատել է գերությունից՝ նրանց հասցնելու Ափետյաց երկիր՝ Պաղեստին: Այդ առաքելությունը նա իրականացրել է իր ժողովրդին չոր անապատներով քառասուն տարի պատեցնելուց և փորձությունների ենթարկելուց հետո միայն, որպեսզի այդ ընթացքում սերնդափոխված մարդիկ ազատվեն ստրկական հոգեբանությունից: և պատրաստ լինեն ընկալելու նոր՝ Հուդայականության գաղափարաբանությունը: «Ելից գրքում» ասվում է, որ նորածին Մովսեսը Նեղոսի ջրերում խեղդվելուց փրկվել է Եգիպտոսի փարավոնի քրոջ կողմից և որդեգրվելով մեծացել ու դաստիարակվել է փարավոնի պալատում՝ եգիպտական ոգով (Ելք. գլ. Բ, 1-10): Այնուհետև, իր հայրենակիցներին Ափետյաց երկիր հասցնելով, Աստծու կամքով չի կարողացել միանալ նրանց և մահացել է Պաղեստինի մատույցներում՝ Նեբո (Մովսեսի) լեռների մոտ (Երկրորդուցն օրինաց, գլ. ԼԴ, 4-6):

ՍՈԿՐԱՏԵՍԸ (էջ 73, 245)

Գրել է 1936 թ. Հոկտեմբերի 31-ին Աթենքում: Ինքնագրի տեղն անհայտ է: ԳԱԹ, ԱԻՖ 281- II-ում պահպանվում է լեգենդի սևագիր մի հատված (11-24-րդ տողեր): Առաջին անգամ տպագրվել է՝ ԽԳ, 1938, N 8-9, օգոստոս – սեպտեմբեր, էջ 48: Նույն տեքստը՝ ԸԵ II, 28-29, ԸԵԵՄ, 180, ԵԺ 2, 156-157, ԵՄ, 150-151, Եր II, 200-201, ՀԴԳ, 322-323: Գրության շարժառիթը 1936 թ. Հոկտեմբերի 31-ին Սոկրատի բանտախուց այցելության տպավորություններն են՝ կապված մեծ փրկիսոփայի կյանքի վերջին օրերի հետ: «Սոկրատեսի բանտից իջնում եմ դեպի Ակրոպոլի տակ և խորհում եմ վերջերս կարդացած այն դեպքի մասին, երաժշտագետի հետ, – մտորում է նա... – Այո՛, մահից առաջ, նույնիսկ ընդհուպ մահից առաջ պիտի սովորել չգիտեցածը, սովորել, անվերջ դիտել, կարդալ, լսել, թափառել՝ սովորելու համար, գիտենալու համար, կատարելագործելու համար իր միտքը, իմացականությունը, լայնացնել, տարածել մինչև անհունություն, անսահմանություն՝ աշխարհաճանաչումդ, իրականության ըմբռնումդ, տիեզերագիտությունդ... Ամեն ինչ գիտենալ և մեռնել, հոգ չէ: Ամենագիտությունամբ, անմնացորդ կերպով գիտենալ, այլևս բան չի մնում աշխարհում: Մեռնել հանգիստ մտքով, գոհ, կատարյալ» (Հ, 416):

Տպագրվում է ԵՄ-ից:

Սովորաբար – Սովորաբար (մ.թ.ա. 469-399) – Հուլյն փիլիսոփա:

ՀՈՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ (էջ 75, 246)

Գրել է 1937 թ. Հոկտեմբերի 7-ին Երևանում՝ Հավանաբար Ժողովրդական մի ավանդույթյան Հիման վրա՝ տպագրված՝ «Արարատ» Հանդես, 1895, էջ 356-357): Ինքնագրի տեղը Հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ ԽԳ, 1938, N 5, մայիս, էջ 99-100՝ «Հայ ժողովրդական առասպել» ենթավերնագրով, ապա, երկու փոփոխություն՝ ԸԵ II, 30-31: Նույն տեքստը՝ ԸԵԵՄ, 183, ԵԺ 2, 158-159, ԵՄ, 151-152, Եր II, 202-203, ԵԺ II, 225-226, ՀԴԳ, 326-327:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԺՈՂՈՎՐԴԻ ՔՆԱՐԸ (էջ 77)

Գրել է 1937 թ. Երևանում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 264-II (բացակայում է ինքնագրի երրորդ էջը)՝ «Սերբական լեգենդա XVIII դարի» ենթավերնագրով: Ինքնագրի վերջում Ավ. Իսահակյանի ձեռքով ջնջված և ուղղած նոր թվագրումն է՝ «1917. Ժընև»: Սկզբնաղբյուրը սերբական ժողովրդական «Գուսլարը» (“Le gouslar”)) երգն է, որ ղեկավար է Ավ. Իսահակյանի անձնական գրադարանում պահվող սերբական պոեզիայից թարգմանած ֆրանսերեն մի ժողովածուում (M-me Genina Clapier. La Serbie Légendaire. Puise dans le tresor des légends, de la poesie et de l’histoire. Paris, 1918) Է Լեգենդի գրության թվագրման փոփոխության կապակցությամբ Գեղամ Սարյանն իր հուշերում գրում է, որ 1937 թ. գարնանը Ավ. Իսահակյանն այդ լեգենդը, որ ավարտել էր նախորդ օրը, կարդացել է իր մոտ՝ նշելով, որ ժամանակի խառն իրավիճակի պատճառով դիտավորյալ փոխելու է լեգենդի թվագրումը: Բացի դրանից, լեգենդի գրության թվականի և փոփոխման շարժառիթների մասին գրել է գրականագետ Աշ. Հովակիմյանը՝ «Ավետիք Իսահակյանի 1937 թվականի ստեղծագործությունների հետքերով» (ՊԲՀ, 1989, N 4, էջ 55-65), որտեղ նույնպես ճշտված է գրության թվականը՝ 1937: Առաջին անգամ տպագրվել է՝ ԳԹ, 1940, N 9, մարտի 30՝ «Սերբական լեգենդա 18-րդ դարի» ենթավերնագրով: Նույն տեքստը՝ ԸԵ II, 37-40, ԸԵԵՄ, 171-174, ԵԺ 2, 127-129, ԵՄ, 140-141, Եր II, 161-165, ԵԺ II,

221-224, ՀԴԳ, 323-326: Բոլոր հրատարակություններում լեզենդն ունի «Սերբական լեզենդ 18-րդ դարի» ենթավերնագիրը, բացի ԸԵ II-ից («Սերբական լեզենդա 19-րդ դարի»), որ հատորի վրիպակների բաժնում ուղղված է: Լեզենդի 20-րդ տողի Պոմայ ձևը ԵՄ-ում դարձել է Պոմայ:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՌԱՎՆԵՐ

ԱՌԱԿ (Աստվածաշնչից) (էջ 82, 246)

Գրել է 1906 թ. Ղազարապատում աստվածաշնչյան մի առակի (Գիրք Դատաւորաց, գլ. Թ, Թիւք 8-15) հիման վրա: Ինքնագիրը պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԽՖ 279-II՝ «Եղի՛ր Թագավոր (առակ)» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ Եր, 1906, N 37, նոյեմբերի 12 (ԳԱԹ, ԱԽՖ 2213-II-ում պահվում է առակի տպագրված տեքստի կտրոնը), այնուհետև, որոշ փոփոխություններով՝ ԱՏ, 1912, էջ 78-79՝ «1911 թ., Հոկտեմբերի 4, Կ.Պոլիս» թվագրումով, որ, ինչպես նշում է Ա. Ինճիկյանը, ԱՏ-ի խմբագրությանն ուղարկած նամակի գրույթյան թվականն է, ապա, աննշան փոփոխություններով՝ ԱԾ, 23-24 և մի քանի փոփոխությամբ՝ Փն, 1926, N7, էջ 277: Վերջնական մշակումը՝ ԸԵ II, 126-127: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 163-164, ԵՄ, 155, Եր II, 207-208, ՀԴԳ, 329-330:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀԱՅՆ ՈՒ ՎՐԱՑԻՆ (էջ 84)

Գրել է, հավանաբար, 1906 թ. Թիֆլիսում: Ինքնագիրը չի պահպանվել: Առաջին անգամ «Ստեղծարանական» խորագրի տակ տպագրվել է՝ Խբ, 1906, N 25, էջ 207, Avis ստորագրությամբ, այնուհետև՝ ԳԹ, 1998, N 10 (2580), 1-15 հոկտեմբեր (հրապարակումը՝ Յու. Հովհաննիսյանի):

Տպագրվում է Խբ-ից:

ՄՈԼԼԱՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ (էջ 85, 247)

Գրել է 1910 թ.: Ինքնագրի տեղը հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ Ագ, 1922, N 9, սեպտեմբեր, էջ 524, այնուհետև, երկու փոփոխություններ՝ Ըն II, 108: Վերջնական մշակումը՝ ԵԺ 2, 165: Նույն տեքստը՝ ԵՄ, 155, Եր II, 209, ԵԺ II, 233, ՀԴԳ, 330:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՀԱՅՈՒՅՔՆ ՈՒ ՄԱՀԸ (էջ 86, 247)

Գրել է 1910 թ. Ղազարապատում «Հայամավուրբի» «Պատմութիւն Յովասափու և Բարեղամու» զրույցի հիման վրա, որ մշակել են Ֆրիլը և Առաքել Բաղդեցիներ: Խառակյանն այն ներառել է նաև իր «Ուստա Կարո» վեպում: Այս առակի վերաբերյալ Ա. Ինճիկյանը մեջբերում է 1930-ական թվականների առաջին կեսին արված Ավ. Խառակյանի մի գրառումը, որ չի պահպանվել. «Ինչքան խմատում է «Յայամավուրբի» լեգենդան... Ճիշտ որ՝ սերը, հաճույքը այն քաղցր հյուսիս է, որի ծծողը մոռանում է աշխարհը, մահը: Երբ մարդ սիրահարված է կամ մեծ գործի, նպատակի վրա է, կյանքը դառնում է հրապուրիչ, և ջնջվում է մահը. նա մոռացնել է տալիս մահի գոյությունը: Մահ չկա: Ոգևորված երիտասարդի և մանավանդ պատանու, երեխայի համար մահ չկա...»: Ինքնագրի տեղը հայտնի չէ: ԳԱԹ, ԱԻՖ 2207-II-ում պահպանվում է Ազ-ի տեքստը՝ Հեղինակային ուղղումներով: Առաջին անգամ տպագրվել է՝ Ազ, 1912, N1004, սեպտեմբերի 20՝ «Առակ (Հայամավուրբից)» վերնագրով և թվագրված՝ 1912 թ. սեպտեմբեր, Յյուրիխ, ապա, որոշ փոփոխություններով՝ ԱԾ, 25-27: Վերջնական մշակումը՝ «Հաճույքն ու մահը (Հայամավուրբից)» վերնագրով Ըն II, 128-129: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 166-167, ԵՄ, 156, Եր II, 210, ԵԺ II, 234-235, ՀԴԳ, 331-332:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԳԱՅԼՆ ՈՒ ՍՈՒՍԱԿԸ (էջ 88, 249)

Գրել է 1915 թ. Ժնևում: Ինքնագիրը պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 2 րդ. (Ա Ինքնագիր): Մի անթվակիր տարբերակ (Բ Ինքնագիր) պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 272-II: Առակի թվագրության վերաբերյալ Ա. Հո-

վակինյանը մեղքերում է գրականագետ Լ. Կարապետյանի առաջադրած վարկածը, ըստ որի՝ առասկը գրված է 1930-ական թթ., քանի որ ինքնագրի «ուղղագրությունը մաստնում է, որ առակի գրություն թվականը կասկածելի է: Մյուս ինքնագիրը հաստատում է կասկածը, որովհետև գրված է 1931 թ. օրացույցի մաքուր էջի վրա և ունի «1938 թ. 18 սեպտ. երևան» թվագրությունը» (Ա. Հովակիմյան, Ավետիք Իսահակյանի 1937 թվականի ստեղծագործությունների հետքերով, ՊԲՀ, 1989, N 4 (127), էջ 56): Նշենք, որ օրացույցի թերթիկի վրա գրված ինքնագիրը գտնել մեզ չհաջողվեց, մինչդեռ Բ ինքնագրի ուղղագրության քննությունից պարզվում է, որ այն 1922 թ. ուղղագրական բարեփոխումների կանոններին չի համապատասխանում (երգ, երգիչ, ոչ, բնութեան և ոչ՝ յերգ, յերգիչ, վոչ, բնություն) և գրված է ավելի վաղ, ուստի հիմք չունենք չհավատարուել՝ «1915, Ժնև»: Հավելենք, որ գրողը սովորություն է ունեցել հետազայում երբեմն գրի առնել իր ստեղծագործությունները մշակված ու ավարտուն տեսքով և նշել գրառման (և ոչ գրության) թվականը: Այդ է վկայում նաև Ա ինքնագրի՝ Ավ. Իսահակյանի թվագրումը՝ 1935 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳԱ, 1955, N1, հունվար, էջ 10, ապա՝ ԵՄ, 156, Եր II, 213, ԵԺ II, 236, ՀԴԳ, 332:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՌԱԿ ԱՂՎԵՍԱԳՐՔԻՑ (էջ 89, 250)

Գրել է, ըստ ինքնագրի, 1922 թ. ապրիլի 28-ին Վենետիկում Վարդան Այգեկցու «Կատու և մկունք» առակի հիման վրա (Ն. Մառ, Ժողովածույք առակից Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, ՌՅԽԻ, էջ 64-66): ԳԱԹ, ԱԻՖ 9-II, 3-ում պահպանվում է ինքնագիրը՝ «Կատուն կարգավոր (առակ Աղվեսագրից)» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ Ագ, 1922, N 6, էջ 333, այնուհետև, մեկ փոփոխությամբ՝ ԵԺ 2, 170: Նույն տեքստը՝ ԵՄ, 157, Եր II, 217, ԵԺ II, 238, ՀԴԳ, 334:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՎԱՐԱԶՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ (էջ 90)

Գրել է 1922 թ. օգոստոսի 14-ին Վենետիկում՝ Վարդան Այգեկցու «Վարազ և աղուէս» առակի հիման վրա (Ն. Մառ, Ժողովածույք առակից

Վարդանայ, մասն բ, Ռ-ՅԽԴ, էջ 76): Պահպանվում է ԳԱԹ, ԱԽՖ 6-III: Առաջին անգամ տպագրվել է՝ ԱՏ, 1923, 144-145՝ «Առաջիկա «Աղվեսագրքից» վերնագրով, այնուհետև, առանց փոփոխությունների՝ ԸԵ II, 115, ԵԺ 2, 114, ԵՄ, 157, ԵՐ II, 215-216, ԵԺ II, 239, ՀԴԳ, 334:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԹՈՒՐՔՆ ՈՒ ԵՎՐՈՊԱՆ (էջ 91)

Գրել է, Հավանաբար, 1922 թ. Վենետիկում: Ինքնագրի տեղը Հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀԶ, 1922, N 24, էջ 8, այնուհետև՝ Ոգ, 1991, N 12 (884), ապրիլի 30, «Շատ սիրելի Վարդանի քիչ Հայտնի առակներից» խորագրի ներքո (Հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի):

Տպագրվում է ՀԶ-ից:

ՄԻ ՀԱՐՑՈՒՄ (էջ 92, 250)

Գրել է 1922 թ. Վենետիկում: Պահպանվում է առակի երկու անթվակիր տարբերակ՝ ԳԱԹ, ԱԽՖ 179-II (Ա ինքնագիր) և 280-II (Բ ինքնագիր՝ վերից վար ջնջված): Առաջին անգամ տպագրվել է՝ Ագ, 1922, N 5, մայիս, էջ 275՝ «Հայկական առակ» ենթավերնագրով, ապա, մեկ փոփոխությամբ՝ ԸԵ II, 214: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 168, ԵՄ, 157, ԵՐ II, 214, ԵԺ II, 237, ՀԴԳ, 333:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԿՅԱՆՔԻՑ ԹԱՆԿ ԲԱՆԸ (էջ 93, 251)

Գրել է, ըստ ինքնագրի, 1924 թ. փետրվարի 20-ին Վենետիկում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԽՖ 5-III (Ա ինքնագիր): Առաջին մի անթվակիր հատված (վերջին երեք քառասորը) պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԽՖ 179-II (Բ ինքնագիր): Առաջին անգամ տպագրվել է՝ Հք, 1924, N 9, էջ 10: Նույն տեքստը՝ ԸԵ II, 109, ԵԺ 2, 171, ԵՄ, 158, ԵՐ II, 218-219, ՀԴԳ, 335-336:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՐՋՆ ՈՒ ՕՁԸ (էջ 94, 251)

Գրել է 1927 թ. Երևանում հավանաբար Վարդան Այգեկցու «Աղուէս եւ աւձ» առակի հիման վրա (Ն.Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, ՌՅԽԴ, էջ 130): Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 277-II: Առաջին անգամ տպագրվել է՝ Փն, 1931, պր. 165, էջ 295, այնուհետև, որոշ փոփոխություններով՝ ԸԵ II, 110-111: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 172-173, ԵՄ, 158, ԵՐ II, 220-221, ԵԺ II, 241-242, ՀԴԳ, 336-337:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՔԱՂՅԱԾ ՀԱՎԸ (էջ 96, 251)

Գրել է, ըստ ինքնագրի, 1932 թ. սեպտեմբերի 16-ին Փարիզում հավանաբար «Անոթի հավը երազում կորեկ է տեսնում» ժողովրդական ասացվածքի հիման վրա (Ա. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1951, էջ 169 ա-բ): Պահպանվում է առակի երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԱԻՖ 9-II, 30 (Ա ինքնագիր) և 67-II, 1 (Բ ինքնագիր): Առաջին անգամ տպագրվել է՝ ԸԵ II, 107, ապա, առանց փոփոխությունների՝ ԵԺ 2, 174, ԵՄ, 159, ԵՐ II, 222, ԵԺ II, 249:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՂՔԱՏ ՄԱՐԴՆ ՈՒ ԱՍՏՎԱԾ (էջ 97, 251)

Գրել է, ըստ ինքնագրի, 1932 թ. հոկտեմբերի 3-ին Փարիզում, իսկ մտահղացումը գրի է առել 1920-ական թվականների սկզբին (ինքնագիրը չի պահպանվել): ԳԱԹ, ԱԻՖ 3-II, 7-8 և 9-II, 32-35-ում պահպանվում են առակի բազմաթիվ տարբերակներ, վերջինը՝ գրված ուղիղ երեք տարի անց՝ 1935 թ. հոկտեմբերի 3-ին Փարիզում: Բ տարբերակում առական ունի «Աղբատ մարդու աղոթքը» վերնագիրը: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍՀ, 1954, N1, հունվար, էջ 20: Նույն տեքստը՝ ԵՄ, 162, ԵՐ II, 235, ԵԺ II, 250, ՀԴԳ, 341:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՊԱՐԾԵՆԿՈՏԸ (էջ 98, 258)

Գրել է, ըստ ինքնագրի, 1932 թ. Հոկտեմբերի 14-ին Փարիզում՝ Հավանաբար «Մեծախոս մարդը» ժողովրդական առակի հիման վրա (Ստ. Նազարյան, «Հանդես նոր Հայախոսություն», մաս 1, Մոսկվա, 1857, էջ 51), որտեղ գործողությունը տեղի է ունենում Հոռոտա (Ռոդոս) կղզում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԽՖ 274-Ո՛՝ «Հեռու տեղում թռչողը» վերնագրով: Առաջին անգամ տպագրվել է՝ «Հոկտեմբերիկ» ամսագիր, Եր., 1940, N12, դեկտեմբեր, էջ 5-6: Նույն տեքստը՝ ԵՄ, 165, Եր II, 246-247, ԵԺ II, 251-252, ՀԴԳ, 242:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՄԱՐԴՆ ՈՒ ՏԱՐԵՐՔԸ (էջ 100, 258)

Գրել է, ըստ ինքնագրի, 1932 թ. Հոկտեմբերի 23-ին Փարիզում: Ինքնագիրը և մի տարբերակ պահպանվում են՝ ԳԱԹ, ԱԽՖ 275-Ո՛: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳԱ, 1945, N 12, դեկտեմբեր, էջ 16: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 181, ԵՄ, 161, Եր II, 234, ՀԴԳ, 343:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԿԱՔԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ (էջ 101)

Գրել է 1932 թ. Փարիզում՝ Հավանաբար Երեմիա Արևելյու «Աղուէսագրքի» մի առակի հիման վրա (Օրթագյուղ, 1829, էջ 93: Տե՛ս նաև Ն.Մուռ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, էջ 58): Ինքնագրի տեղը Հայտնի է: Առաջին անգամ տպագրվել է՝ ԸԵ II, 121-122, ապա, առանց փոփոխությունների՝ ԵԺ 2, 175-176, ԵՄ, 159, Եր II, 223-224, ԵԺ II, 243-244, ՀԴԳ, 335-336:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԷՇՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ (էջ 103)

Գրել է 1932 թ. Փարիզում: Ինքնագրի տեղն անհայտ է: Առաջին անգամ տպագրվել է՝ ԸԵ II, 116-117, ապա, առանց փոփոխությունների՝ ԵԺ 2, 177-178, ԵՄ, 159-160, Եր II, 225-227, ՀԴԳ, 338-340:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՂԲԱՏՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԸ (էջ 105)

Գրել է 1932 թ. Փարիզում: Ինքնագրի տեղն անհայտ է: Առաջին անգամ տպագրվել է՝ Ըն II, 119-120, ապա, առանց փոփոխությունների՝ ԵԺ 2, 179-180, ԵՄ, 160, Եր II, 228-229, ԵԺ II, 247-248, ՀԴԳ, 340-341:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՄԻ ՄԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (էջ 107, 259)

Գրել է 1933 թ. Փարիզում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 278-11՝ անսպարտ, առանց վերջին էջի, Ա. Ինճիկյանի նշումով՝ «Սոֆյա և Վիգեն Խաչակյաններին գրած նամակների միջից»: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀՕԿ, 1934, N 11, նոյեմբեր, էջ 661-662, ապա, մեկ փոփոխությամբ՝ Ըն II, 123-125: Նույն տեքստը՝ ԵՄ, 160-161, Եր II, 230-233, ԵԺ II, 254-256, ՀԴԳ, 343-345:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԹԱԳԱՎՈՐԻՑ ՓԱԽՉՈՂԸ (էջ 110, 259)

Գրել է, ըստ ինքնագրի, 1935 թ. օգոստոսին Թուրքիա-Փարիզում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 3-II, 11-13: Առաջին անգամ «Առակ» խորագրով տպագրվել է՝ Ապ, 1936, N 60, Հունվարի 26, ապա, վեց տողի կրճատումով և որոշ փոփոխություններով՝ Ըն II, 112-113 և ԵԺ 2, 182-183: Վերջնական տեքստը՝ ԵՄ, 162, Եր II, 236-237, ԵԺ II, 257-258, ՀԴԳ, 346-347:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՔԼՈՐՆԵՐԻ ՎԵՃԸ (էջ 112)

Գրել է 1935 թ. Փարիզում՝ Լոխմանի «Երկու աքաղաղ» առակի մոտիվներով (տե՛ս 30-ական թվականների ծոցատետրը): Այս առակը զետեղված է նաև Վարդան Այգեկցու ժողովածուում (Ն.Մառ, Ժողովածույք

առևտրայ Վարդանայ, մասն բ, ՌՅԽԴ, էջ 24): Ինքնագրի տեղն անհայտ է: Առաջին անգամ սուպագրվել է՝ ԸԵ II, 118 և, առանց փոփոխությունների՝ ԵԺ 2, 184, ԵՄ, 162-163, Եր II, 238-239, ՀԴԳ, 347-348:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՌԱԿ ԸՍՏ ԼՈՍՄԱՆԻ (էջ 113, 260)

Գրել է, ըստ ինքնագրի, 1938 թ. սեպտեմբերի 18-ին Ծաղկաձոր-Երևանում: ԳԱԹ, ԱԻՖ 3-II, 40 (Ա ինքնագիր) և 38-ում (Բ ինքնագիր) պահպանվում է առակի երկու տարբերակ՝ «Մարդը՝ դայլ» վերնագրով: Համաձայն Արամ Ինճիկյանի՝ Ավ. Խաչակյանը «Նախապես մտադիր է եղել մշակել այդ առակի Հայկական տարբերակը՝ «Գառն ու դժնիկը», որի բովանդակության զրոտումը կատարել է 20-ական թվականներին. «Փոթորիկից ազատվելու համար դառնուկը պատասխարվեց մի դժնիկի թռախի տակ: Երբ փոթորիկն անցավ, դառնուկը, չնորհակալ լինելով, ուզեցավ հեռանալ դժնիկից. դժնիկը բռնեց նրա բուրդից ու բայց չթողեց: Եվ մեծ փրկանք պահանջեց: Խնճճ դառնուկ, փոթորիկից ազատվելիք, բայց դժնիկի ճանկն ընկար»:

Կրկին վերադարձել է այս առակին 30-ական թվականների սկզբներին (այդ մասին են վկայում առակի բովանդակության մի նոր զրոտումը և Գաբրիել վարդ. Նախապետյանի՝ 1932թ. մարտի 2-ի նամակը Խաչակյանին)»: Առաջին անգամ սուպագրվել է՝ ԵՄ, 163: Նույն տեքստը՝ Եր II, 240-241, ԵԺ II, 260, ՀԴԳ, 348:

Տպագրվում է ԵՄ-ից:

Լոխման – արաբական առասպելական իմաստուն, առակախոս: Ապրել է աստվածաշնչյան Դավթի օրոք: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ հանդես է եկել որպես հրաշագործ բժիշկ:

ԱՅԾՆ ՈՒ ԳԱՅԼԸ (էջ 114)

Գրել է, ըստ ինքնագրի, 1939 թ. հուլիսի 27-ին Ծաղկաձորում Վարդան Այգեկցու «Այծ և դայլ» առակի հիման վրա (Ն.Մառ, Ժողովածոյք առևտրայ Վարդանայ, մասն բ, էջ 242): Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 271-II: Առաջին անգամ սուպագրվել է՝ ԸԵ II, 130: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 185, ԵՄ, 163, Եր II, 242, ԵԺ II, 261, ՀԴԳ, 349:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԳԱՅԼՆ ՈՒ ԵՂՆԻԿԸ (էջ 115, 261)

Գրել է, ըստ ինքնագրի, 1939 թ. հուլիսի 28-ին Մաղկաձորում: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 273-11: Առաջին անգամ տպագրվել է՝ ԸԵ 11, 131: Նույն տեքստը՝ ԵԺ 2, 186, ԵՄ, 164, Եր 11, 243, ԵԺ 11, 262, ՀԴԳ, 349-350:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱԶՐԱՅԻԼ, ՄԱՀՎԱՆ ՀՐԵՇՏԱԿ (էջ 116, 261)

Գրել է, ըստ ինքնագրի, 1940 թ. մարտին Երևանում: Պահպանվում է երկու ինքնագիր՝ ԳԱԹ, ԱԻՖ 3-11, 45-46՝ թվագրված 1940 թ. մարտի 5 (տարբերակ) և 3-11, 47-48՝ թվագրված 1940 թ. մարտի 8: Վերջինս ունի հեղինակի հետևյալ ծանոթությունը. «Այս գրվածքս կրոնական ֆակտուրա ունի և չա՛տ»: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳԱ, 1955, N 1, հունվար, էջ 11: Նույն տեքստը՝ ԵՄ, 164, Եր 11, 244-245, ԵԺ 11, 263, ՀԴԳ, 350-351:

Տպագրվում է ԵՄ-ից:

Ազրայիլ – չարի մարմնացում. Թալմուդում նույնական է սաստանային և, ընդհանրապես, չար դիտավորությունը:

Ջիբրայիլ – Գաբրիել – Հրեշտակապետ: Նոր Կտակարանում ավետում է Հովհաննես Մկրտչի և Հիսուս Քրիստոսի ծնունդը:

ՍԱՏԱՆԱՆ ՈՒ ԻՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ (էջ 117, 262)

Գրել է, ըստ ինքնագրի, 1945 թ. հունվարի 18-ին Երևանում՝ «Միջնադարյան հայ առակ» վերնագրով, «Սատանայ եւ եօթն դասերը» հայկական ժողովրդական առակի հիման վրա: Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ 276-11: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳԱ, 1945, N 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 4: Նույն տեքստը՝ ԵՄ, 165-166, Եր 11, 248, ԵԺ 11, 265, ՀԴԳ, 351-352:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽՈՍՔ (էջ 118, 263)

Գրել է 1945 թ. Երևանում: Ինքնագրի տեղը Հայտնի չէ: ԳԱԹ, ԱԻՖ 276- 11-ում պահպանվում է առակի՝ վերից վար ջնջված սևագիր տարբերակը՝ գրի առնված 1945 թ. Հունվարի 18 թվագրումով «Սատանան ու իր լաղջիկները» առակի հաջորդ երեսին: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍՀ, 1954, N 1, Հունվար, էջ 20: Նույն տեքստը՝ ԵՄ, 166, Եր 11, 249, ՀԴԳ, 351:

Տպագրվում է ԵՄ-ից:

ԻՄԱՍՏՈՒՆ ԳՈՀԱ (էջ 119)

Գրել է 1952 թ. Հունվարի 27-ին Երևանում: Ինքնագրի տեղը Հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳԱ, 1954, N 2, փետրվար, էջ 4: Նույն տեքստը՝ ԵՄ, 166, Եր 11, 250-251, ԵԺ 11, 266, ՀԴԳ, 352:

Տպագրվում է ԵՄ-ից:

Գոհա – առակախոս:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԵԶ

«ԼՈՒՍԱԴԵՄԻՆ ՎԱՐԴ ՔԱՂԵԼՈՒ...» (էջ 122, 263)

«ԳԻՆԻՆ՝ ԶԵՌ-ՔԻՍ, ՎԱՐԴԷ՝ ԿՐԾՔԻՍ...» (էջ 122, 264)

Ավետիք Իսահակյանը հաճախ է առնչվել պարսկական միջնադարյան գրականությանը և բանահյուսությանը՝ ստեղծագործական ազդակներ ստանալով բանավոր և գրավոր այդ հարուստ գրականությանից: Մասնավորապես պարսկերենից կատարած նրա թարգմանությունների կապակցությամբ հայ գրականագիտության մեջ խոսվել է պարսից մեծ քնարերգու Հաֆեզի երեք բանաստեղծությունների վերաբերյալ՝ «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...», «Լուսադեմին վարդ քաղելու...» և «Ո՛վ առավոտ, իմ նազելուց...» սկսվածքներով: Բանաստեղծի Երկերի ժողովածուի 2-րդ հատորի (Եր., 1974) ծանոթագրությունների բաժնում Ա.

Ինճիկյանը այս առիթով մեջբերել է Իսահակյանի վկայությունը, ըստ որի՝ նրա Հետաքրքրությունը պարսից մշակույթի և քնարերգության նկատմամբ սկսվել է դեռևս 1892 թվականից. «...ևս մեր հարևան պարսիկ գյուղի մի բնից պարսկերեն դասեր էի առնում և հաճախ թարգմանում էի նրա տված դասերը, որոնցից տպվել են իր ժամանակին «Տարազ»-ում («Մշակ», 1917, 68)»: Այս ընթացքում Իսահակյանը թարգմանել է Հաֆեզի մի քանի բանաստեղծություն՝ առանց, նույնիսկ, ծանոթ լինելու պարսիկ հեղինակին կամ նրա ասեղծագործությունների ուղև թարգմանչին: Պարզվում է, սակայն, որ պատանի Իսահակյանը, չբավարարվելով մեկ ուսուցչից ստացած գիտելիքներով, դիմել է նաև Շիրակի մարզում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող պարսկական ծագումով թաթերին, որոնք, ըստ գրականագետ Ա. Մուշեղյանի, նրա համար բառացի թարգմանել են Հաֆեզի բանաստեղծությունները (տե՛ս Ա. Մուշեղյան, Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները, ՄԳ, 1980, N 6, էջ 120): «Վերը հիշատակված առաջին երկու բանաստեղծություններում, - նշում է գրականագետ Ա. Վարդանյանը, - առկա են Արևելքի շունչը, կենսափրկիսոփայությունը և, վերջապես, այն երեք հիմնայունները՝ գինի, վարդ ու սոխակ և սիրած կին, որոնց վրա հիմնականում խարսխված է պարսից միջնադարյան քնարերգությունը» (Ա. Վարդանյան, Ավետիք Իսահակյանի ասեղծագործության աղբյուրները պարսից միջնադարյան քնարերգության հետ, ԳՀ, ԺԱ-ԺԲ. 2010-2011, Եր., 2011, էջ 309): Մինչդեռ «Ո՛վ առավոտ, իմ նազելուց...» սկզբնատողով բանաստեղծությունը, ինչպես իրավասիրորեն նշել են գրականագետներ Ա. Ինճիկյանը (Ավ. Իսահակյան, ԵԺ II, 323-324), Ա. Մուշեղյանը (ՄԳ, 1980, N 6, էջ 120) և Ավիկ Իսահակյանը (Ավ. Իսահակյան, ԵՀԺ I, 677, Ավիկ Իսահակյան, Բարև՛, Վարպետ, Եր., 2008, էջ 348-349), ժողովածուից ժողովածու մշակվել է ու բյուրեղացել՝ հետագայում ներառվելով բանաստեղծի գրական ժառանգության մեջ որպես ինքնուրույն բանաստեղծություն՝ «Քնքուշ հովիկ, իմ նազելուց...» սկզբնատողով, և կրում է Իսահակյանի գեղարվեստական անհատականության կնիքը:

Թարգմանել է 1893 թ.: Առաջին երկու բանաստեղծությունները պահպանվում են՝ ԳԱԹ, ԱԻՖ 2-III, 90, իսկ ԳԱԹ, ԱԻՖ 154-II-ում պահվում է «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...» բանաստեղծության նախնական մշակումը, որն ավելի շուտ թարգմանության արձակ շարադրանք է: Առաջին անգամ տպագրվել են՝ Տգ, 1893, N 31, օգոստոսի 15, էջ 490-491՝ «Պարսկական մոտիվներ (Հատվածներ Հաֆիզից)» ընդ-

Հանուր խորագրով: «Լուսադեմին վարդ քաղելու...» բանաստեղծություն թարգմանությունը աննշան փոփոխություններով այնուհետև տպագրվել է՝ Ըն 1, 303: Նույն տեքստը՝ եժ 2, 191, եՄ, 169, եր II, 255, եժ II, 269: «Գինին՝ ձեռքիս, վարդը՝ կրծքիս...» բանաստեղծության թարգմանությունը, լիովին վերամշակված, տպագրվել է՝ Բ 1, 98: Նույն տեքստը՝ եՎ II, 171, Ըն 1, 303-304, եժ 2, 192, եՄ, 169, եր II, 256, եժ II, 270:

Տպագրվում են եՄ-ից:

Հաճեզ Շամսեդդին Մուհամմեդ (1325-1389) - պարսիկ մեծ բանաստեղծ:

Ս. ՅԱԿ. ՆԱԴՍՄԸ

«ՆՈՐԻՑ ՄԵՆԱԿ եՄ, եՎ ՇՈՒՐՋՍ ՆՈՐԻՑ...» (էջ 124, 265)

Նադսոնի "Над свежей могилой" բանաստեղծության թարգմանությունն է՝ կատարված 1893 թ.: Ավ. Իսահակյանը որպես բանաստեղծության վերնագիր ընտրել է հեղինակի անվանումը՝ «Նադսոնից»: Բանաստեղծությունն արձագանքում է պատանի Իսահակյանի հոգեկան ապրումներին և բնագրի լեզվով ամբողջությամբ մեղքերված է 1893 թ. մարտի 28-ին էջմիածնից Շ. Մատակյանին հղած նամակում: Միանգամայն համամիտ Նադսոնի բանաստեղծության վերջին երկու տողերի մտքին՝ "Мне больше некого любить, / Мне больше некому молиться!...", բանաստեղծը դառնությունը գրում է. «Այո՛, քույրիկ, այո՛, ես էլ ո՛չ ոքին չեմ սիրում, ո՛չ ոքի համար էլ չեմ աղոթում...» (եժ VI, եր., 1979, էջ 13): Իսկ Հաջորդ տարվա դեկտեմբերի 12-ին արված գրառման մեջ, բարձր գնահատելով Նադսոնի զգացական ներաշխարհը, Իսահակյանը մտորում է. «...ձեռքս սրտիս կիսոստովանիմ, որ միայն բարոյական մարդիկ կկարողանան սիրել Նադսոնի պես, իսկ ոչ շատ բարոյականները՝ Պրատոնի պես: Պրատոնի սիրո մեջ դեպի աղջիկը համբույր կա, իսկ Նադսոնի սիրո մեջ – արցունք, վիշտ» (Հ, 130-131): Ինքնագրի տեղը Հայտնի չէ: Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1893, N 3, հունվարի 17, էջ 39-41: Ժողովածուններում չի գետեղել: Ըստ գրականագետ Ավիկ Իսահակյանի՝ «Թարգմանությունն նման բարձր որակը ցույց է տալիս, որ Իսահակյանը ոչ թե սոսկ Նադսոնի գործը փոխադրել է Հայերենի, այլև այդ սքանչելի գործի օգնությամբ ինքնարտահայտվել է» (ԱԻՌԳ, 404):

Տպագրվում է Տգ-ից:

Նադսոն Սիմեոն Յակովլևիչ (1862-1887) – ռուս բանաստեղծ:

ՖՐ. ՆԻՑՇԵ
ԻՄԱՍՏՈՒՆԸ ԿԽՈՍԵ (էջ 125)

Բանաստեղծությունը բնագրից թարգմանել է 1895 թ. Լայպցիգում: Պաշտոնապես է՝ ԳԱԹ, ԱԽՖ 121-Ի: Առաջին անգամ տպագրվել է՝ ԵՎ 1, 41՝ իբրև «Իմ օրագրից» շարքի բնաբան, ապա՝ ԱԻԳԿ, 317: Գերմանացի փիլիսոփայի գաղափարներով տարված երիտասարդ բանաստեղծը եւ ծրագրում է ամեն գնով օգտակար լինել իր ժողովրդին: «Օ՛, եթե կարողացա, - գրում է նա 1895 թ. սեպտեմբերի 25-ին, - վերջը կչաչեմ ժողովրդի վրայով - արևի ու ամպի նման... Այժմ կգնամ ժողովրդի վրայով à la Nietzsche. Այսպես - ես կմտնեմ հայ ժողովրդի մեջ՝ մարդկային մեծ գաղափարներով տոգորված... կկռվեմ, կմեռնեմ...» (2, 190):

Տպագրվում է ԵՎ Ի-ից:

Նիցշե Ֆրիդրիխ (1844-1900) - գերմանացի իդեալիստ փիլիսոփա, որը մեծ ազդեցություն է թողել երիտասարդ Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման վրա, մանավանդ նրա առաջադրած գերմարդու կերպարի առումով, ինչը շատ հարազատ է եղել Ավ. Իսահակյանին:

ՍՊԱՆԱԿԱՆ ՄԻ ԵՐԳԻՅ (էջ 126)

Թարգմանել է, հավանաբար, 1899 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ Տգ, 1900, N 1, հունվար, էջ 6: Նույն տեքստը՝ ԵԺ II, 273:

Տպագրվում է Տգ-ից:

Կ. ԲՅՈՒՍՍԵ

«ԱՅՍ ԼԵՌՆԵՐԻՅ ՀԵՌՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ...» (էջ 127, 265)

Թարգմանել է գերմաներենից 1900 թ. դեկտեմբերին Յյուրիխում: Ինքնագրի տեղն անհայտ է: ԳԱԹ, ԱԽՖ 11-II, 30-ում պաշտոնապես է բանաստեղծության մի անթվակիր տարբերակ (Ա ինքնագիր): 1900 թ. դեկտեմբերի 2-ին Յյուրիխից Զավահիր (Զավո) Ներսիսյանին (Լ.Շանթի ապագա կինը) ուղղած նամակում մեջբերում է այս բանաստեղծության թարգմանություն մի նախնական մշակում (Բ տարբերակ)՝ գրելով. «Այսօր գերմաներեն մի լավ ոտանավոր կարգացի. թարգմանեմ, տես, որքա՜ն

ծիշտ է արտահայտում մարդու սիրտը. հեղինակն է նոր բանաստեղծ K. Busse: ...Վա՛յ ինձ, — շարունակում է Իսահակյանը, — ո՞վ գիտե, դուցե ես էլ եմ երազում, որ այստեղից հեռո՛ւ, հեռո՛ւ, մեր սարերում բախտն է ապրում, և գնամ ու արցունքոտ աչքերով... հետ դառնամ... ո՞ր... Շատ լավ ուսանավոր է, մանավանդ բնագիրը հրաշալի է» (ԵԺ VI, 31): Առաջին անգամ տպագրվել է՝ ԸԵ 1, 310, այնուհետև՝ ԵԺ 2, 193, ԵՄ, 169, Եր II, 257, ԵԺ II, 272:

Տպագրվում է ԵՄ-ից:

Բյուսահ Կարլ (1872-1918) — գերմանացի բանաստեղծ:

Բ. ԲՅՈՐՆՍՈՆ

ԱՊՐԻԼ (էջ 128)

Գերմաներենից թարգմանել է, հավանաբար, 1901 թ.: Առաջին անգամ լույս է տեսել նորվեգացի գրող և դրական—հասարակական գործիչ Բյորնսոն Բյորնստեդենին (1832-1910) նվիրված «Բյորնսոն» գրքույկում (Ալեքսանդրապոլ, 1901), այնուհետև՝ ԳԺ, 1984, N 29, «Մուսցված էջերից մեկը» խորագրով՝ Մ. Նարյանի հրապարակմամբ: «Բանաստեղծության ծնունդը, — գրում է Մ. Նարյանը, — կապված է մի հետաքրքրական փաստի հետ: Գրավաճառներից մեկը օրացույցի հավելված կազմելիս ուզում է այդ հատվածում գետնից տարվա տասներկու ամիսներին նվիրված բանաստեղծություններ: Դիմում է տասներկու բանաստեղծի և խնդրում գրել ընտրված ամսի համար բնորոշ մի բանաստեղծություն»: Բ. Բյորնսոնի ըմբոստ ու հախուռն ոգուն առավել հարազատ էր ապրիլը՝ որպես նոր արշալույսի ու զարթոնքի առհավատչյա, ինչը և համահունչ էր Ավ. Իսահակյանի խռովահոգ յերաշխարհին:

Տպագրվում է ԳԺ-ից:

Ա. ԿԱՄՊԻՄԻ

ՔԱՂՅԱԾ ԳԱՅԼԵՐ (էջ 129)

Փոխադրել է, հավանաբար, 1901 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Դրոշակ», Ժնև, 1901, N 2, փետրվար, էջ 35՝ «Ա. Կամպիոնից» ենթագրով և Հայ—Գուգան ստորագրությամբ, այնուհետև հետմահու

«Հայդուկի երգեր», Բելյուսթ, 1960, էջ 37-38 և ԱԽ-11, 208 (1-8 և 17-24-րդ տողեր):

Տպագրվում է «Դրոշակից»:

Կամպիոնի Ա. - 19-րդ դարի իտալացի ռոմանտիկ բանաստեղծ:

Ի. Ս. Նիկիտին

«Հին Կոնիդալնի ՎՐԱ, ԴԱՇՏՈՒՄ ԱՄԱՅԻ...» (էջ 131)

Թարգմանել է 1905 թ.: Ի. Ս. Նիկիտինի "Хозяин" (1861) բանաստեղծության մի հատվածն է (112-119-րդ տողեր): Առաջին անգամ տպագրվել է՝ ՀՕԿ, 1933, N 3, մարտ, էջ 22, «Ռուսաստանի Պավլովիչի երազը» պատմվածքում: Նույն տեքստը՝ ԸԵ 1, 309, եթ 2, 194, ԵՄ, 170, ԵՐ 11, 258, եթ 11, 274: «Այնքան եմ սիրում այս բանաստեղծությունը, - մի առիթով ասել է Ավ. Իսահակյանը, - որ երբեմն նույնիսկ մոռանում եմ, որ Թարգմանություն է, թվում է, թե ես եմ հեղինակը» (Գ. Հովնան, Ավետիք Իսահակյան, Եր., 1976, էջ 115):

Տպագրվում է ԵՄ-ից:

Նիկիտին Իվան Սավվիչ (1824-1861) - ռուս բանաստեղծ, գրական-մշակութային գործիչ:

ԱԿԻՀԻՐՈ ՏՈՍԻՆԱՐԻ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԻՇՏԸ (էջ 132, 266)

Թարգմանել է 1907 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ ԽՐ, 1907, N 28, օգոստոսի 5՝ («Ճապոն բանաստեղծ XII դարում») հեղինակային ծանուցմամբ, ապա, երեք փոփոխություն՝ ԸԵ 1, 301: Նույն տեքստը՝ եթ 2, 197, ԵՄ, 171, ԵՐ 11, 262, եթ 11, 275:

Տպագրվում է ԵՄ-ից:

ՎՐԱՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ (էջ 133, 266)

Թարգմանել է 1907 թ.: Ինքնագրի տեղը հայտնի չէ: ԳԱԹ, ԱԻՖ 7- 11, 4-ում պահպանվել է Թարգմանության մի տարբերակ՝ թվագրված 1904, Հոկտեմբերի 9, Թիֆլիս, լուսանցքում շեղակի նշումով՝ վրացերեն: Առաջին անգամ տպագրվել է՝ ԽՐ, 1907, N 34, օգոստոսի 12, ապա, որոշ

փոփոխություններով և առանց վերնազրի՝ ԱԾ, 16: Նույն տեքստը՝ ԸԵ 1, 306, ԵԺ 2, 199, ԵՄ, 171, Եր II, 265, ԵԺ II, 276:

Տպագրվում է ԵՄ-ից:

Գ. ՀԵՌՎԵԳ

ՍՈՆԵՏՆԵՐ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ (էջ 134, 266)

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ (էջ 134, 267)

